# ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

9(566)
L-38

ՍՏԱՑՎԱԾ է 1961 թ.

ԼԷՕ

# ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(ՈՒՐԱՐՏՈՒ)

A 6849
6066

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Ադամեանցի, Պօլիս. 7.
1915



Վանի լճի տեսա

Թոփրաք-Կալէ, եռևում Սիփան.

1915 թ. մայիսի 6-ին ռուսական զօրքը գրաւեց Վան քաղաքը։

Պատմական այս խոշոր դէպքին և նրա հերոսներին եմ ես ձօնում այս գիրքը, որ մի գլուխ է իմ ընդարձակ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ աշխատութեան առաջին հատորից։

1915, յուլիս

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

# 1. ՎԱՆ

Վանի հայ ժողովուրդն ասում է. «Վանն այս աշխարհում, արքայութիւնն այն աշխարհում» [1]։ Այս ասացուածքը տեղային սնապարծութիւն չէ։ Գեղեցիկ է, իրաւ, շատ գեղեցիկ է Վանի լճի արևելեան ափի այն մասը, ուր գետեղուած է Վան քաղաքը։ Լինչը, բազմահմուտ անգլիացի մի հեղինակ, վկայում է թէ մարդու համար բնութիւնը ստեղծել է այս վայրը որպէս զի երկրային դրախտ դառնայ։

Ընդարձակ մի տափարակ է Վանի տեղը, ընկղմուած այգեստանների մէջ։ Այդ հարթութեան վրայ ցցուած են

[1] Х. Ф. Б. Линчъ—„Арменія", т. II, Тиф. 1910 с. 49։

ահագին ժայռեր—Միջնաբերդը, որի առջև փռուած են Հայկական Բարձրաւանդակի զարդերը կազմող մի քանի աքանչելի տեսարաններ.—արևելքում՝ Վարագի ծաղկաւէտ լեռները, արևմուտքում՝ գեղեցիկ լիճը, որի արևմտեան եզերքներում վեհ ու փառապանծ ցցւում են դէպի երկինք երկու հանգած հրաբուղխներ— Սիփան և Նիմրուդ։ Հիւսիսից էլ, հարաւից էլ հայկական լեռնապարերի հուժկու պատուարներն են նայում Վանի առջև փռուած լճի կապուտակ հարթութեան։

Մեղմ ու բարեխառն են կլիմայական պայմաններն այդ դրախտանման վայրերում։ Հողը արգաւանդ է, տալիս է հարուստ պտուղներ։ Երկիրը կարևոր աշխարհագրական դիրք ունի Առաջաւոր Ասիայի արևմտեան մասում։ Գտնւում է հաղորդակցութեան մեծ ճանապարհների վրայ, առևտրական նշանակութիւնից աւելի ռազմական առաջնակարգ կարևորութիւններ է ներկայացնում հարաւային երկիրների համար։

Այս բոլոր յատկութիւնները ցոյց են տալիս թէ Վանի լճի այս ափը բնութիւնից նշանակուած է կուլտուրական և քաղաքական աշխի ընկնող կենտրոն դառնալու համար։

Հայաստանի մակերևոյթը այսպիսի կենտրոններ ստեղծելու մի քանի յարմար շրջանակներ է ներկայացնում։ Այսպէս են, օրինակ, Արարատեան, Խարբերդի դաշտերը։ Բայց ամենից առաջ Վանի լճի այս ափին էր ուր ճոխացաւ մի նշանաւոր կուլտուրա և կազմակերպուեց մի մեծ պետութիւն։ Երևան եկաւ մի իսկապէս մեծագործ ժողովուրդ, որին կարծես վիճակուած էր մի խոշոր և երկարատև դեր համաշխարհային պատմութեան մէջ, բայց որ ենթարկուեց մի տարօրինակ ճակատագրի։ Կորցնելով իր անկախութիւնը Քրիստոսից մօտ 600 տարի առաջ, նա բոլորովին անյայտացաւ, չը թողնելով իր անունն անգամ պատմութեան մէջ։ Յոյն մատենագիրները ոչինչ չէին գրել այդ ժողովրդի մա-

սին, ուստի և նա թաղուեց կատարեալ և անթափանցելի խաւարի մէջ։

Սակայն մնաց այդ կորած ժողովրդի մայրաքաղաքը—Վանը։ Եւ մնացին այդ ժողովրդի գրութիւնները Վանի միջնաբերդի ժայռերի վրայ։ Զարմանք էին պատճառում այդ գրութիւնները, բայց ոչ ոք, ի հարկէ, չէր հասկանում նրանց։

Դարեր անցան։ Վանի լճափին նոր ժողովուրդ կազմակերպուեց, որ կարողացաւ պահպանել այդ երկրում գոյութիւն ունեցած պատմական մեծ զրոյցների և աւանդութիւնների շատ թոյլ, հեռաւոր արձագանգները միայն, որոնց առաջին անգամ գրի առնողը մեզանում եղել է Մովսէս Խորենացին։

Մեր պատմահայրը, նկարագրելով Վանի դիրքը, հիացմունքով է խօսում ալևոր հնութիւնից իր ժամանակներին հասած պատմական յիշատակարանները. մեծ ջրանցքը, քարակոփ շինութիւնները, ապարանքները։ Եւ խօսք չը գտնելով դրանց թողած տպաւորութիւնը պատկերացնելու համար, գրում

է. «Այլ ասեմք միայն թէ ամենայն թագաւորականաց գործոց, որպէս լուաք, առաջին և վերջագոյն համարեալ»։ Պակաս զարմացած չէ նա և միջնաբերդի ժայռի վրայ և ասում է. «Զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեաց, ոյց հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ»։ Եւ այսպիսի զարմանալի գրութիւն ոչ միայն Վանում։ «Այլև ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր» [1])։

Բայց ո՞վ էր այդ գրողը, ո՞վ էր այդ բոլոր զարմանալի ձեռնարկութիւնների հեղինակը։ — Մի անձ միայն, պատասխանում է Խորենացին և այդ անձը — Ասորեստանի հռչակաւոր թագուհի Շամիրամն էր։

Այսպէս էր ասում աղճատուած աւանդութիւնը։ Եւ նա կիսատառասպե-

[1]) Գ. Ա. գլ. ԺԶ.

լական Շամիրամին յատկացրեց այն ամենը, ինչ ստեղծուել էր Վանում մօտ 300 տարուայ ընթացքում, մեծագործ սերունդների մի ամբողջ շարքի ձեռքով։ Քաղաքն անուանուեց Շամիրամակերտ, հռչակաւոր ջրանցքը՝ Շամիրամի գետ (այժմ ևս—Շամիրամ-սու)։ Այսօր էլ դեռ կայ Վանում Շամիրամի թաղ։

Մնում էր որ հազարամեայ գերեզմանի մէջ թաղուած ազգութիւնն ինքը յարութիւն առնէ և պատմէ աշխարհին ճշմարտութիւններ իր մասին։

Այդ յարութիւնը տեղի ունեցաւ մեր օրերում և այսօր էլ դեռ շարունակւում է։

## 2. ԽՕՍՈՒՄ ԵՆ ՄԵՌԱԾ ԼԵԶՈՒՆԵՐԸ

ԺԹ դարի անագին գիտական շարժումները, որոնք մարդկային մտքի հոյակապ նուաճումներն էին բազմացնում կեանքի բոլոր շրջաններում, ի միջի այլոց, կարողացան նաև կենդանութիւն տալ Արևելքի հին, վաղուց մեռած լեզուներին։

Եգիպտոսում, Սիրիայում, Հայաստանի լեռներում, Իրանի հարաւ-արևմտեան մասերում քարէ յուշարձանների և ժայռերի վրայ գծագրուած զանազան ձևի նշաններ էին մնացել հնութեան անյիշելի դարերից։ Այդ լուռ յուշարձանների առջև դարեր էին թաւալուել, պատմական անաւոր շարժումներ և կերպարանափոխութիւններ էին տեղի ունեցել, սերունդների եր-

կար շարքեր էին եկել-գնացել, ազգեր էին իրար յաջորդել, բայց ոչ ոք չէր կարողացել հասկանալ թէ ինչ են այդ նշանները, խօսե՞լ են նրանք երբ և ինչ մարդկային լեզուով։ Հին ժամանակների մի առեղծուած՝ նրանք շատ շատերին են հիացրել, ինչպէս և մեր Խորենացուն, բայց եղել են միշտ մի խոր, անթափանցելի խորհրդաւորութիւն, գերեզմանի գաղտնիք։

ԺԹ դարն էր որ բաց արաւ այդ գաղտնիքը, խօսեցնել տուեց բազմադարեան լռութեան մատնուած յիշատակարանները։ Սակայն այս մեծ գործը միանգամից, հրաշքով չը կատարուեց։ Պէտք եղաւ ահագին դժուարութիւններ յաղթահարել։ Պէտք եղաւ բազմաթիւ գիտնականների միահամուռ գործակցութիւնը։ Աշխատանքը սկսուած էր ԺԹ դարից առաջ։ Եւ Իրանն էր, որ սկսել տուեց այդ աշխատանքը, հետը գաղտնիքը լուծելու բանալին էլ տուեց։

ԺԷ դարում կաթոլիկ հոգևորականութիւնը առաքելութիւններ հիմնեց

Իրանում (մասնաւորապէս Սպահան և Նոր Ջուղայ, հայերի համար)։ Այդ միսիոներները ուշադրութիւն դարձրին երկրի հնութիւնների վրայ, սկսեցին նկարագրել նրանց։ Ամենից շատ ուշադրութիւն գրաւում էր մի շատ նշանաւոր, թէև միանգամայն աւերակ հնութիւն։

Շիրազից 12 մղոն հեռու մի բարձրութեան վրայ գտնւում է Իստահր գիւղը։ Նրանից ցած, դաշտի վրայ, փռուած են աւերակներ, որոնց մէջ բարձրանում են աւերակ շինութիւնների բարակ սիւներ։ Յայտնի էր որ սա հին Պերսեպոլիս քաղաքն է, ուր հաստատուած էր Աքեմէնեան թագաւորների գահը։ Այստեղից էին Դարեհները, Քսերքսէսները հրամայում իրանց ստեղծած Իրանին, որ պարունակում էր իր մէջ այն ժամանակուայ քաղաքակիրթ աշխարհի մեծագոյն մասը, սկսած Յունաստանի սահմաններից և Եգիպտոսից մինչև Հնդկաստան։ Աքեմէնեանների այդ պետութիւնը և այդ մայրաքաղաքը Ա-



A 6842

լէքսանդր Մակեդոնացու ձեռքն անցան։ Մի գինեխմութեան ժամանակ Ալէքսանդրը, յոյն մի հարճի թելադրութեամբ, իր ձեռքով հրդեհեց Աքեմէնեանների պալատը՝ իբրև վրէժ այն արշաւանքի համար, որ այդ պալատի տէրերից մէկը, Քսերքսը, կատարել էր դէպի Յունաստան[1])։ Աւերակները չը կենդանացան այն ժամանակից, մայրաքաղաքը անբնակ դարձաւ և ներկայացնում էր մի քարակոյտ։

Ժէ դարի այցելուները, միսիոներներ և ճանապարհորդներ (նշանաւոր Շարդէնը), ուշադրութիւն դարձրին որ այդ աւերակների վրայ կան քանդակներ, որոնք ներկայացնում են սեպի ձև ունեցող գծեր զանազան դիրքերով (ուղղաձիգ, թեք, հորիզոնական), որոնք խմբեր են կազմում։ Ի՞նչ էին դրանք։ Առաջին անգամ իտալացի Պիետրո Դելլա-Վալլէն էր (1620 թ.) որ տեղն ու տեղը ուսումնասիրելով այդ նշանները, կարծիք

[1]) Joachim Ménant—„Les Achéménides", Paris, 1872, p. 31.

յայտնեց, որ դրանք տառեր են և պէտք է կարդացուին ձախից դէպի աջ [1]։ Սակայն Եւրոպայում այդ նշանագրերը առանձին հետաքրքրութիւն չը զարթեցրին, և մի դար անցած՝ անգլիացի Թոմաս Հէյտը, որ արևելագէտի համբաւ ունէր, ասում էր իր մի աշխատութեան մէջ՝ թէ չարժէ էլ ուշադրութիւն դարձնել դրանց վրայ, քանի որ դրանք իսկապէս գրեր չեն, այլ քանդակագործ վարպետի խաղեր։ Մի տեսակ զարդեր են դրանք, որոնք հարկաւոր են եղել նկարի բաց տեղերը լցնելու համար։

Սակայն այս իրը թէ գիտնական վճռով իրանական նշանագրերի բախտը ընդ միշտ չէր որոշւում։ 1765 թուին աւերակներն այցելեց դանիացի Նիբուրը, որ նշանաւոր գործ կատարեց, մանրամասն ուսումնասիրելով նշանագրերի բնաւորութիւնը, դասաւորութեան եղանակը։ Նա էր, որ ցոյց տուեց թէ սեպագիր արձանագրու-

[1]) Voyages de Pietro Della Vallé dans la Turque, l'Egypte, la Perse, Paris 1765, t. 5. p. 319.

թիւնները երեք խմբերի են բաժանւում, որովհետև գրուած են երեք տարբեր լեզուներով։ Գրութեան օրէնքները գտնուած էին։ Մնում էր կարդալը։ Ահա այդ էր ամենադժուարը։

Մինչև այդ՝ նոյն ժը դարում տեղի ունեցաւ մի ուրիշ նշանաւոր գիւտ։ Գտնուեց հին պարսկական լեզուն և այս գիւտը շատ նպաստեց բևեռագրերի վերծանութեան։

Ինչպէս յայտնի է, երբ արաբները նուաճեցին Իրանը (է դար), բոլոր այն պարսիկները, որոնք չը կամեցան իրանց կրօնից հրաժարուել և իսլամն ընդունել, հարկադրուած եղան հեռանալ իրանց հայրենիքից։ Նրանք տարան իրանց հետ իրանց պաշտամունքը, իրանց սրբազան գրքերը։ Սկզբում այդ զրադաշտականները կամ գեաբրները բնակութիւն հաստատեցին Օրմուզ կղզում և ապա անցան Հնդկաստան։ Այստեղ էլ նրանք երկար դարեր տաճարանքներ էին կրում, տեղից տեղ

անցնելով ու իրանց համար ապահով մի ապաստարան որոնելով [1]։

Հնդկաստանում էր որ գեաբրները հանդիպեցին եւրոպացիներին, որոնք և ծանօթացան նրանց կրօնին և արարողութիւններին։ Նոյն իսկ նրանց սրբազան գրքերի մի քանի կտորներն անցան եւրոպացիների ձեռքը, որոնք Եւրոպա փոխադրեցին այդ կտորները։ Հետաքրքրութիւն ծագեց, զրադաշտական կրօնի մասին շատ վայրիվերոյ, կցկտուր տեղեկութիւններ էին մնացել հին յունական գրականութեան մէջ։ Ուսումնասիրել այդ կրօնը նրա իսկական աղբիւրներով — ահա ինչ ցանկութիւն էին յարուցանում Հընդկաստանից բերած կտորները։

Այդ ցանկութեամբ վառուեց մի երիտասարդ ֆրանսիացի, Անքէտիլ Դիւպերրոն անունով։ 1754 թուին նա ճանապարհուեց Պարիզից Հնդկաստան՝ զրադաշտական գրքերը որոնելու համար։ Նրան աջողուեց իր որոնածը

[1] D. Menant—„Les Parsis, Histoire des communautés Zoroastriennes de l'Jnde" Paris 1898. ch. I.

գտնել, բայց ութ տարուայ տառապանքների գնով։ Սուրաթ քաղաքի շրջականերում ապրող գեաբրների մօտ նա գտաւ Զենդ-Աւեստան։ Սակայն իրանք գեաբրները համարեա այլ ևս չէին հասկանում այդ գրքի լեզուն, զենդերէնը։ Ինչ որ գիտէին այդ լեզուից, սովորեցրին Դիւպերրոնին և սա, թանկագին գիւտը վերցրած, արկածալից ճանապարհորդութիւն սկսեց՝ հայրենիք վերադառնալու համար։

Այստեղ նա թարգմանեց Զենդ-Աւեստան, բայց միանգամայն անյաջող էր այդ թարգմանութիւնը, որովհետև Անքէտիլի ծանօթութիւնը զենդերէն լեզուի հետ չափազանց անբաւարար էր և սխալ։ Զենդերէն լեզուն այստեղ Եւրոպայում, պիտի նոր յայտնագործուէր։ Իսկ այս բանը վերապահուած էր արդէն ԺԹ դարին։

Բայց նոյն ԺԸ դարին պատկանում է և մի այլ նշանաւոր նախապատրաստութիւն։ Դարի վերջերում ֆրանսիական զօրքերը, Նապոլէօնի հրամանատարութեամբ, գրաւեցին Ե-

գիպտոսը։ Փարաւոնների երկրի հին մեծ յիշատակարանների առատութիւնը հիացնում էր ամենքին, սկսած գլխաւոր հրամանատարից։ Այս արշաւանքը մի առիթ էր որ եւրոպացիները, գլխաւորապէս ֆրանսիացիները, իրանց ուշադրութիւնը կենտրոնացնեն եգիպտական հնութիւնների վրայ։ Ամենից շատ հետաքրքրողը, ի հարկէ, եգիպտական գրութիւնն էր, որով ծածկուած էին յիշատակարաններից շատերը։ Այս արդէն իրանական սեպագրութիւն չէր, այլ գրութեան մի ուրիշ ձև, որ միտքը արտայայտում է գաղափարանշաններով, զանազան առարկաների պատկերների միջոցով։ Այդ ձևը կոչւում է «մեհենագրոշմ» (հիերոգլիֆ)։

Լուսանում է ԺԹ դարը, և լոյս է գցում այս բոլոր հին առեղծուածների վրայ։ 1802 թ. սեպտեմբերի 4-ին գերմանացի երիտասարդ գիտնական Գէորգ-Ֆրիդրիխ Գրետէֆէնդը կարդում էր Գեօտինգենի ակադեմիական ժողովում իր զեկուցումը աքեմենեան

սեպագրութիւնների մասին։ Նա գտել էր այդ գրութիւնը կարդալու սրամիտ միջոցը։ Առաջին քայլն արուած էր։ Բևեռագիտութեան հիմքը դրուած էր։ Բայց Գրեթէֆէնդը արեւելեան լեզուների մասնագէտ չէր և նրա նշանաւոր գիւտը ամբողջացած չէր։ Նրա գծած ուղղութեամբ սկսեցին աշխատել նշանաւոր արևելագէտ Մէն-Մարտէնը, Լասսէնը և ուրիշները։ Բայց վախճանական լուծումը վերապահուած էր ֆրանսիացի միւս նշանաւոր արևելագէտ Էօժէն Բիւրնուֆին (1801—1852)։

Սա էր որ գտաւ զենդ լեզուի օրէնքները և կազմեց նրա քերականութիւնը, թարգմանեց Զենդ-Աւեստայի մի քանի գրքերը։ Զենդերէնը Աքեմէնեանների լեզուն էր, նրանց արձանագրութիւնների լեզուն էր։ Տալով նրա ճիշտ ուսումնասիրութիւնը, Բիւռնուֆը թէ այդ և թէ սանսկրիտ լեզուների օգնութեամբ գտաւ սեպագիր արձանագրութեան և այն կէտերը, որոնց վրայ այնքան աշխատանք էին

վատնել գիտնականները և որոնք մը-նացել էին անվերծանելի [1]։

Մինչդեռ Եւրոպայում բևեռագի-տութիւնը այսպիսի քայլեր էր անում, անգլիացի Սըր Հենրի Ռաուլինսոնը անկախ կերպով նոյն գործի վրայ աշ-խատում էր Պարսկաստանում։ Նա զինուորական և դիւանագիտական գործիչ էր, բայց պակաս ընդունա-կութիւն չը ցոյց տուեց հնագիտու-թեան և լեզուագիտութեան մէջ։ Հընդ-կաստանի անգլիական բանակում էր ծառայում, երբ նշանակուեց պարս-կական զօրքերի հրահանգիչ։ Իր այս պաշտօնի գործերով երկար ժամանակ մնաց Քիրմանշահ քաղաքում, բոլորո-վին կտրուած քաղաքակիրթ աշխար-հից։ Այդտեղ, այն հին մեծ ճանա-պարհի վրայ, որ բանակների անցքն էր Իրանից դէպի Միջագետք, բարձ-րանում է Բիսիւթուն սարը, որի ժայռերի վրայ փորուած էր Դարեհի հռչակաւոր մեծ սեպաձև արձանա-

[1] Joachim Menaut—„Les Langues perdues—Perse", Paris 1885, p. 101—133.

գրությունը։ Ռաուլինսոնը ընդօրինակեց նրան և երկար աշխատելով ինքնաբերաբար գտաւ նրան կարդալու միջոցը այնպէս, ինչպէս գտնուած էր Եւրոպայում։ 1836 թուին նա սկսեց իր այդ գիտական աշխատութիւնները մաս մաս ուղարկել Լօնդօնի Ասիական Ընկերութեան։ 1843 թուականին պարսկական սեպագրութիւնները արդէն կարդացուած ու թարգմանուած էին։

Ճշտուեց առաջին ուսումնասիրողների այն դիտողութիւնը, որ արձանագրութիւնները երեք լեզուով են գրուած։ Կարդացուեց նախ պարսկերէն (գենդ) լեզուն։ Մնացած երկու լեզուներից մէկը անուանեցին մեդական կամ մարական (աւելի ճիշտ՝ ելամական)։ Իսկ երրորդը ասորական լեզուն էր։ Գտնելով պարսկականի բանալին, այնուհետև դժուար չէր գտնել և ասորականի բանալին։ Կենդանանում էր և մի ուրիշ մեծ պատմական լեզու։

Բայց մինչև այդ՝ վերծանելի դարձան Եգիպտոսի մեհենագրոշմ արձա-

նագրութիւնները։ Այստեղ արդէն հարկաւոր չեղան դարերի դիտողութիւններ։ Ֆրանսիացի գիտնական Ժան-Ֆրանսուա Շամպօլլիոնը 1814-ին գնաց Եգիպտոս՝ տեղն ու տեղը ուսումնասիրելու նրա հնութիւնները, և 1822-ին յայտնեց գիտնական աշխարհին իր անմահ գիւտը, որով մեհենագրոշմի ընթերցումը դառնում էր իրականութիւն։ Ծնւում էր ընդարձակ մի գիտութիւն, որ և կոչուեց եգիպտագիտութիւն։ Այնուհետև Եգիպտոսը դարձաւ զանազան երկիրներում կազմակերպուած գիտական արշաւախմբերի մանրակրկիտ հետազօտութիւնների վայր. կառավարութիւնները միջոցներ չը խնայեցին ընդարձակ պեղումներ կատարելու համար և եւրոպական թանգարանները լցուեցին եգիպտական հնութիւններով։ Դուրս եկան բազմաթիւ նոր արձանագրութիւններ քարերի վրայ և գրութիւններ «պապիրուս» անուանուած թղթի վրայ։ Եւ ամենախորին հնութեան ծոցից (Քրիստոսից 4—5 հազար տարի առաջ) լոյս աշ-

խարհ եկաւ մի ամբողջ մեծ պատմութիւն, մի քաղաքակրթութիւն, որի չափերի մասին հասկացողութիւն անգամ չէին ունեցել մինչև այդ։ Եգիպտագիտութիւնն ստեղծեց մի ահագին գրականութիւն։ Նրա ասպարէզում գիտնական հռչակի փայլ ստացան շատերը, ինչպէս Լեպսիուս և Բրիւգշ գերմանացիները, դը-Ռուժէ, Մարիէտ, Մասպերո, դը-Մորգան ֆրանսիացիները։

Փարաւոնների հայրենիքը հնութիւնների մի անհուն շտեմարան է։ Այժմ էլ նոյն եռանդով շարունակւում են ուսումնասիրութիւնները և Եգիպտոսի հին կեանքը, հազարամեակների պատմութիւնը գնալով աւելի և աւելի ընդարձակ չափերով է լոյս հանում իր բոլոր մանրամասնութիւնները։

Եգիպտոսից յետոյ հերթը գալիս էր այն հռչակաւոր դաշտավայրին, որ տարածուած է Եփրատ և Տիգրիս գետերի մէջ և հանում է Պարսից Ծոցին — Միջագետք և Քաղդէա։ Այս

դաշտի վրայ հազարաւոր տարիների փառաւոր կուլտուրա, ուժեղ քաղաքական կեանք կային հաստատուած։ Բայց այստեղ պայմանները ուրիշ էին։ Քար ու ժայռ չը կայ այս երկրում։ Եւ հնութեան յիշատակարանները չէին երևում հողի մակերևոյթի վրայ։ Աղիւսն էր շինութիւնների ամենագլխաւոր նիւթը. քարը հեռուից էր բերւում և մասնաւոր գործածութիւն ունէր։ Աւերակները ծածկուած էին հողով, ներկայացնում էին անյայտ բլուրներ դաշտի վրայ։ Ճանապարհորդները մի քանի կտորներ էին գտել այդ կողմերում և տարել Եւրոպա։ Դրանք միայն ցոյց էին տալիս եռանդուն և լուրջ, բազմածախս որոնումների անհրաժեշտութիւնը։

Եւրոպական կառավարութիւններն էին որ սկսեցին այդ գործը։ Եւ ամենից առաջ ֆրանսիական կառավարութիւնը։ 1842 թուականին նա Մոսուլում հաստատեց փոխ-հիւպատոսութիւն՝ յատկապէս այն նպատակով, որ նա դառնայ հնագիտական աշխա-

տանքների կայարան։ Այդ պաշտօնը յանձնուեց Ալէքսանդրիայի հիւպատոս Բոտտային, որ և իսկոյն գործի կպաւ, ձեռքի տակ ունենալով կառավարութեան կողմից նշանակուած յատուկ գումարները։

Մօսուլից էր սկսւում գործը, որովհետև այդ քաղաքի մօտ պիտի լինէր հռչակաւոր Նինուէ մայրաքաղաքը, որ կործանուել էր 625 թ. Ք. առաջ և կործանուել էր այնպէս, որ մի երկու հարիւր տարի յետոյ ոչ ոք չը գիտէր Ասորեստանի այդ մեծ քաղաքական կենտրոնի տեղն անգամ։ Բոտտան պեղումներ սկսեց Կույունջիկ գիւղում, բայց շուտով դադարեցրեց աշխատանքը, որովհետև մի գիւղացի ցոյց տուեց թէ Խորսաբադ գիւղի բլուրը շատ հնութիւններ է պարունակում։ Եւ իրաւ, Բոտտայի պեղումներն այդտեղ բաց արին մի ամբողջ արքունական պալատ։ Աշխատանքները շարունակուեցին մօտ երկու տարի։ Երևան հանուեց մի բոլորովին նոր աշխարհ — ասորական կուլտուրան իր հարուստ ա-

բուեստով, իր արձանագրութիւններով։ Հնութիւններից ինչ որ կարելի էր տեղափոխել, ուղարկուեց Պարիզ։

Բոտտայի պեղումների ժամանակ Ասորեստանի կողմերում ճանապարհորդում էր երիտասարդ անգլիացի Սըր Հէնրի Լայարդը։ Նա էլ լցուեց այդպիսի գործեր կատարելու ցանկութեամբ։ Եւ Կ. Պոլսի անգլիական դեսպան Սըր Ստրատֆորդ Կաննինգի աջակցութեամբ և հայթայթած դրամական միջոցներով նա 1845-ին սկսեց պեղումներ կատարել։ Նրա անսովոր եռանդը, տոկունութիւնը, վառվռուն սէրը դէպի հնագիտութիւնը յաղթեցին բոլոր տեղական դժուարութիւններն ու արգելքները։ Պեղումները նա սկսեց այնտեղ, ուր կիսատ էր թողել Բոտտան, Կույունջիկ գիւղում [1]։ Այդտեղ նրան սպասում էր մի մեծ պատիւ։ Բոտտայի բաց արած պալատը Նինուէն չէր։ Լայարդի պեղումներն էին որ Կույունջիկի թումբի տակից

[1] Joachim Menaut—„Les Laugues perdias—Assyrie". Paris, 1886 p. p. 45—71.

լոյս հանեցին տիեզերահռչակ Նինուէն։

Անգլիական կառավարութիւնը հովանաւորեց երիտասարդ հնաբերին, առատ միջոցներ դրեց նրա տրամադրութեան տակ։ Եւ փոխարէնը լի ու լի վարձատրուեց։ Լայարդը շարունակեց իր աշխատանքները և ուրիշ տեղերում։ Նա ընդհատումներով գործեց մինչև 1852 թուականը և այնուհետև անցաւ Բաղդէա՝ այնտեղ ևս շարունակելու պեղումները։ Եւ նրա անխոնջ աշխատանքներով Բրիտանական Մուզէոնը լցուեց ասորա-բաբելական հնութիւններով։ Ասորեստանում Լայարդին յաջորդեցին Ռաուլինսօնը և ուրիշները։ Անգլիական և ֆրանսիական կառավարութիւնների մէջ մի ազնիւ մրցակցութիւն տեղի ունէր հնագիտական ուսումնասիրութիւնների վերաբերմամբ։ Թէև մեծ բաժինը Անգլիային էր ընկնում, բայց ֆրանսիական կառավարութիւնն էլ մի ամբողջ գիտական արշաւախումբ ուղարկեց Բաբելոնն ուսումնասիրելու

համար։ Պեղումները նորանոր յայտնագործութիւններ էին անում։

Այս բոլոր աշխատութիւնները գիտական աշխարհին անհուն նիւթեր հայթայթեցին։ Բևեռագիտութեան այն ճիւղը, որ վերաբերում է բաբելա-ասորական աշխարհին, ընդարձակուեց, անգին ծաւալ առաւ և ստացաւ «ասորագիտութիւն» անունը։ Ասորական բևեռագրութիւնների ընթերցանութիւնն էլ միանգամայն հաստատուն գիտական հիմքերի վրայ դրուեց։ Եւ երկու հռչակաւոր երկիրների—Քաղդէայի և Ասորեստանի հին կեանքն էլ լուսաբանուեց ամենայն մանրամասնութիւններով։ Թէ ինչ տեսակ հարստութիւն էին ներկայացնում գետնի տակից փորուած նիւթերը, կարելի է հասկացողութիւն կազմել այս մի փաստից, որ Լայարդի պեղումները, ի միջի այլոց, բաց արին ասորական վերջին թագաւոր Ասուր-Բանի-Պալի պալատը, որի մէջ գտնուեց մի ամբողջ մեծ մատենադարան։ Ասորեստանցիները գրում էին աղիւսների վրայ, ո-

րոնց երկու երեսը ծածկում էին մանր սեպագրութիւններով։ Նինուէի այդ մատենադարանում գտան մօտ տասը հազար այդպիսի աղիւսներ։ Մատենադարանը բաղկացած էր վեց բաժանմունքներից. պատմութիւն, իրաւաբանական վաւերագրեր, բնական գիտութիւններ, կախարդութիւն, դաւանանքներ, առասպելներ [1]։

Ներկայումս էլ դեռ շարունակւում են ոչ միայն սեպագրութիւնների ուսումնասիրութիւնները, այլ և պեղումները։ Այսպէս, 1889 թուականից ֆրանսիական կառավարութիւնը մի քանի անգամ գիտական արշաւախմբեր ուղարկեց, հնագէտ Ժ. դը Մորգանի առաջնորդութեամբ, յատկապէս Շօշի աւերակները (հարաւային Իրանում, հին Քաղդէային սահմանակից) ուսումնասիրելու համար։ Նշանաւոր եղան այդ արշաւախմբերի պեղումներն ու հետազօտութիւնները, երեան հանուեց հին Ելամը, մի ինքնուրոյն քա-

[1] Joachim Menant—«La Bibliotheque du palais de Ninive», Paris, 1880.

զաքակրթութիւն, որ շատ նշանաւոր պատմական դեր է կատարել հին աշխարհում։

Առհասարակ բնեռագիտութեան և մասնաւորապէս ասորագիտութեան մէջ իրանց գիտական աշխատութիւններով հռչակ են ստացել Ժիւլ Օպպերտ, Ժոախիմ Մէնան, Սմիթ, Սէայս, Հինքս, Ֆրանսուա Լենորման, Շէյլ և ուրիշները։

Այս բոլոր գիտնական մշակների ջանքերով էր որ յարութիւն առան հին, մեռած լեզուները, որոնք և միանգամայն կերպարանափոխեցին Արևելքի հին պատմութիւնը։ Հայաստանը, մի մասնիկ այդ Արևելքի, իր բաժին լոյսերն ստացաւ այդ նոր ու մեծ գիւտերից՝ իր հնագոյն պատմութիւնը խաւարի միջից դուրս հանելու համար։ Դարերի գերեզմանից դուրս եկաւ մի խոշոր եղելութիւն։ Այն ժամանակ, երբ այժմեան հայ ժողովուրդը դեռ չէր հաստատուել հայկական լեռնաստանում, Ասորեստանի թագաւորները ստիպուած էին յաճախ արշաւանքներ

գործել դէպի այդ լեռնաստանը՝ այստեղի ըմբոստ և ազատասէր իշխողներին նուաճելու համար։ Թագաւորները իրանց այդ արշաւանքները նկարագրել են սեպաձև արձանագրութիւնների մէջ։ Եւ ահա այդ գրութիւններն էլ դառնում են արտաքին կամ օտար աղբիւրներ Հայաստանի նախահայկական շրջանի պատմութեան համար։

Ասորական արձանագրութիւնները, տարաբախտաբար, միայն որոշ ժամանակամիջոցներ են լուսաբանում Հայաստանի պատմութիւնը իրանց տեղեկութիւններով։ Առաջին անգամ Հայկական Բարձրաւանդակը յիշատակողը Ասորեստանի Սալմանասար Ա. Թագաւորն է (իբր 1330—1310 թ. Քրիստոսից առաջ)։ Այնուհետև գալիս է 200 տարուայ անյայտութիւն, որից յետոյ երևան է գալիս Թիգլաթ Պալասար Ա. (1108—1080) իր արշաւանքներով։ Նորից գալիս է 200 տարուայ անյայտութեան մի շրջան։ Բայց դրան յաջորդում է տեղեկութիւններով առատ մի շրջան, որ Թ դարի սկզբից տևում է

մինչև է դարը։ Այս ժամանակի ասորական թագաւորները, որոնք արձանագրութիւններ են թողել Հայաստանի մասին, հետևեալներն են. Թեգլաթ—Ադար Բ. (889—885), Ասսուր-Նազիրպալ (885—860), Սալմանասար Բ. (860—825), Շամսի-Ռամման Բ. (825—812), Ռամման-Նիրարի Գ. (812—783), Թեգլաթպալասար Գ. (745—727), Սարգոն (722—705), Սեննաքերիբ կամ Սեննեքերիմ (705—682), Ասարհադդոն (682—668), Ասսուր-Բանիպալ (668—իբր 638) և Ասորհոդդոն Բ. (635—626) [1]։ Ասորական արձանագրութիւնները միայն Ասորեստանի զանազան վայրերում չեն գտնուած. նրանից մի քանիսը փորագրուած են և Հայաստանի սահմաններում, ժայռերի վրայ։

Բայց նախահայկական Հայաստանը միայն արտաքին աղբիւրներով չը պիտի հանդէս բերէր իր պատմութիւ-

[1]) Յովսէփ վ. Սանտալճեան—«Ասորեստանեայ և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք», Վիեննա 1891.

նը։ Երկիրը իր սեփական մեռած լեզուն էլ ունէր, իր պատմութեան ներքին, ազգային աղբիւրներն էլ ունէր, որոնք սեպաձև գրերով գրոշմուած էին ժայռերի վրայ։ ԺԹ դարը այս մեռած լեզուն էլ կենդանացնելու մեծամեծ ջանքեր արաւ և կարողացաւ այնքան յաջողութիւն ձեռք բերել, որ Հայաստանի ժայռերն էլ ընդհատեցին իրանց դարաւոր լռութիւնը և խօսել սկսեցին, առատ նիւթեր տալով հնախոյզներին։

## 3. ՎԱՆԵԱՆ ՍԵՊԱԳԻՐՆԵՐ

Տեղական, ազգային արձանագրութիւնները մեծագոյն մասամբ Վան քաղաքի շրջանում են կենտրոնացած և ստացան դիտութեան մէջ «Վանեան» անունը, որ միաժամանակ թէ տեղն էր արտայայտում և թէ այն պետութիւնը, որ դրանց հեղինակն էր հանդիսանում։ Յետոյ, երբ արձանագրութիւններ գտնուեցին և ուրիշ շատ տեղերում, այդ անուան հետ սկսեց յաճախակի գործ ածուել և «Ուրարտական» անունը։

Առաջին եւրոպացի գիտնականը, որ գնաց Վան՝ յատկապէս սեպաձև արձանագրութիւններն ուսումնասիրելու համար, պրոֆէսոր Շուլցն էր, ո-

ին ուղարկել էր ֆրանսիական կառավարությունը 1827 թուին։ Հետևեալ տարին, 1828-ին, Շուլցն ընդօրինակեց 38 արձանագրություն, որոնցից 18-ը Վանի մէջ և նրա արուարձաններում, 1 արձանագրություն Լէզք (Կալաջիկ) գիւղում, 2-ը՝ Շուշանց, 2-ը՝ Արտամէտ, 1-ը՝ Սըղգա գիւղերում, 9-ը՝ Վարագի լեռան գանագան կողմերում, 1-ը՝ Աղթամար կղզում, 1-ը՝ Մանազկերտում, 2-ը՝ Արճէշում, 1-ը՝ Կէլիշին գիւղի մօտ, թիւրք-պարսկական սահմանի վրայ։ Այդ ընդօրինակումները նա ուղարկեց Պարիզ, բայց ինքն այլևս չը կարողացաւ վերադառնալ Եւրոպա։ Նոր ձեռնարկությունը, որ ահագին գիտական հետաքրքրություն պիտի շարժէր և նոր հորիզոն բաց անէր մարդու մտքի առջև, կարծես զոհ էր պահանջում առաջին և եթ քայլում։ Շուլցը այդ նոր գիտության նահատակը դարձաւ, սպանուելով մի քուրդ ցեղապետի ձեռքով։

Շուլցի ընդօրինակությունները հրա-

տարակուսեցին 1840 թուին Պարիզի «Journal Asiatique» ուսումնաթերթի մէջ։ Նոյն այդ միջոցին գերմանացի մի սպայ, Միւլբախ, գտաւ մի սեպաձև արձանագրութիւն Մալաթիայում [1]), մի գիւտ, որ ցոյց էր տալիս թէ միայն Վանի մէջ և նրա շրջականերում չը պէտք է որոնել Վանեան՝ դեռ անծանօթ յիշատակարանները։

Շուլցի մեծ գիւտը դրդիչ հանդիսացաւ, որ Հայաստանի սեպաձև արձանագրութիւնները Եւրոպայում առաջացնեն աչքի ընկնող հետաքրքրութիւն։ Ասորեստանում և Բաբիլոնում աշխատող ասորագէտները յատուկ ճանապարհորդութիւններ կատարեցին Հայաստանում՝ այդտեղի արձանագրութիւնները գիտելու համար։ Նոյն 1840-ական թուականներին ֆրանսիացի դը-Սոլոք գիտնականը մի սեպաձև արձանագրութիւն գտաւ Բասենում, Հասան-Կալէի մօտ [2]), իսկ մեզ քաջա-

[1]) S. Guyard—«Mélanges d'Assyrologie» Paris 1883 p. 113.

[2]) H. Hyvernat—«Notices sur la Céographie et l' Historie ancienne de l'Arménie et les Inscriptions

ծանօթ Լայարդը 4 արձանագրութիւն Վանում արտագրեց և մի հատ էլ Պալուի մօտ, Եփրատի վրայ։ Հետաքրքրութիւնը հաղորդուեց և այն ժամանակուայ ամենաձեռնհաս հայ հիմնարկութեան — Վենետիկի Մխիթարեան միաբանութեան, որի «Բազմավէպ» ամսագիրը սկսեց մի մի անգամ տեղեկութիւններ տալ սեպագրութիւնների մասին։ Միաբանութեան անդամներից մէկը, Հ. Ներսէս Սարգիսեանը 1840-ական թուականներին իր կատարած ճանապարհորդութեան միջոցին ընդօրինակեց Վանի սեպագրութիւններից 8 հատ, որոնք տպուեցին յետոյ [1]։

1860-ական թուականներից բեհոտաձև արձանագրութիւններ երևան են հանուում և Ռուսական Հայաստանի սահմաններում։ Այս գիւտերի պատիւը պատկանում է Էջմիածնի միաբան-

Cunelformes de Bassin de Van» (SEu P. Muller—Simons—«Du Caucase au Golfe Persique», Paris 1892 p. 552).

[1]) «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս», Վենետիկ 1864, եր. 258—263։

ներից մէկին, Մեսրոպ վարդապետ (յետոյ արքեպիսկոպոս) Սմբատեանին, որ չունենալով ոչ մի մասնագիտական պատրաստութիւն, նոյն իսկ փոքր ի շատէ ընդարձակ կրթութիւն, այլ լինելով լոկ հնութիւններ սիրող, ուշադրութեան առարկայ է դարձնում սեպաձև արձանագրութիւնները և հետզհետէ, տասնեակ տարիների ընթացքում, գտնում է այդպիսի արձանագրութիւններ և հաղորդում գիտնականներին։ Առաջին արձանագրութիւնը նա գտել է Երևանից Դիլիջան տանող խճուղու Էլար իջևանում 1862 թուականին։ Տեղացի քահանան պատմում է նրան թէ այդտեղ կայ մի հին բերդ, որի եռևում, ժայռի վրայ, փորուած են ինչ-որ տարօրինակ նշաններ—ծաղիկներ արդեօք թէ նշանագրեր—ոչ ոք չէ կարողանում բացատրել։ Մեսրոպ վարդապետը տեսնում է ցոյց տուած ժայռը և որովհետև կարդացած էր Վենեսիկի «Բազմավէպ» ամսագրի մէջ մի քանի յօդուածներ սեպագրի մասին, իսկոյն

ըմբռնում է որ Էլառի այս արձանագրութիւնն էլ սեպաձև է։ Եւ ընդօրինակելով արձանագրութիւնը, ուղարկում է Մոսկուա Մսեր մագիստրոս Մսերեանցին, որ և հրատարակում է «Համբաւաբեր Ռուսիոյ» հայերէն շաբաթաթերթի մէջ [1]։ Այնուհետև Սմբատեանն արտագրեց, նոյն 1862-ին, մի մեծ սեպաձև արձանագրութիւն (20 տող), որ փորագրուած էր Սևանի լճի հարաւային ափին ցցուած մի ժայռի վրայ, Ալիչալու գիւղի մօտ։ Այդ աշխատանքը հեշտ չը կատարուեց, քանի որ պէտք էր նաւակով մօտենալ այն ժայռին, որի վրայ փորուած էր արձանագրութիւնը [2]։ Մի ուրիշ արձանագրութիւն էլ գտնուեց Ադամխան գիւղի մօտ, նոյն լճի հարաւարևմտեան անկիւնում։ Այս երկու արձանագրութիւններն էլ հրատարակուեցին «Համբաւաբեր Ռուսիոյ» թերթի մէջ։

[1]) 1863 № 53, 7 դեկտեմ.

[2]) Մեսրոպ արքեպիս.—«Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի», Վաղարշապատ 1895, եր. 232—235։

1864 թուին ակադեմիկոս Կեսանեբը իր ճանապարհորդութեան միջոցին երկու սեպագիր արձանագրութիւններ գտաւ. մէկը Ալէքսանդրապոլից 7 վերստ հիւսիս, Ղանլիջա գիւղի մօտ, միւսը՝ Մեծ Մասիսի ստորոտում, Տոշբուրուն գիւղի մօտ։ Այդ արձանագրութիւնները հրատարակուեցին Պետերբուրգի Ակադեմիայի պաշտօնական հրատարակութիւնների մէջ[1]։ Մի քանի տարուց յետոյ, այն է՝ 1869-ին, Մեսրոպ վարդապետ Սմբատեանը սեպաձև արձանագրութիւն գտաւ Արարատեան երկրի մի ուրիշ վայրում—Սարդարաբադի գաւառում, Արաքսի ձախ ափին, Թափադիրի հայ գիւղի մօտ, այն բլուրի վրայ, ուր ենթադրւում է թէ գտնւում էր Արմաւիր քաղաքը։ Արձանագրութիւնը մի կտոր քարի վրայ էր, որ փոխադրուեց Էջմիածին, իսկ նրա ընդօրինակութիւնը տպագրուեց «Արարատ» ամսագրի մէջ[2]։ Ապագան

[1]) «Bulletin de l'Académie Imperiale des Sciences de S. Pétersbourg», t. V p. 428—435, t. VII p. 275—181.

[2]) 1869 թ. № 6, եր. 138։

ցույց տուեց որ այս տեղը նախահայկական շրջանում մի շատ կարևոր կենտրոն է եղել։ Մեսրոպ եպիսկոպոսը զանազան ժամանակ գտաւ այդտեղ նորանոր սեպագիր արձանագրութիւններ, ընդամենը 12 հատ [1])։

1878 թուին Ա. Երիցեանը մի սեպագիր արձանագրութիւն գտաւ Սարիղամիշում, Կարսի մօտ, որ ուղարկուեց Թիֆլիսի թանգարանը։

1883 թուականին դարձեալ Սևանի լճի եզերքներում, այն է Օրդակլու (հիւսիս-արևմտեան կողմ) և Զաղալու (հարաւ-արևելեան) գիւղերի մօտ, երևան հանուեցին երկու արձանագրութիւն, իսկ հետեւեալ 1889-ին՝ մի նոր արձանագրութիւն, այս անգամ արդէն Արագած սարի հիւսիս-արևմտեան կողմում, Ղուլիջան գիւղի մօտ [2]). 1886-ին երկու նոր արձանագրութիւն գտնուե-

---

[1]) 12-րդ արձանագրութիւնը տես «Աֆարաց» 1896 թ. եր. 512։

[2]) Արձանագրութիւն գտնողն էր տեղացի Ներսէս Յարութիւնեանը, որ և հաղորդեց Մեսրոպ եպիսկոպոսին։

ցին Ծաշբուբուն գիւղում, այնտեղ, ուր, հայ հնաստէրների կարծիքով, հին Ցոլակերտ բերդն էր գտնուում։ Այս բոլոր արձանագրութիւնները Մեսրոպ եպ. Սմբատեանի ձեռքով հրատարակուեցին «Արարատ» ամսագրի մէջ։

1870-ական թուականների վերջում վերսկսուեցին հնագիտական խուզարկութիւնները Թիւրքաց Հայաստանում, գլխաւորապէս Վանի շրջանում։ Վանի անգլիական հիւպատոս կապիտան Ֆրէյարն և անգլիացի ասորագէտ Հորմուզդ Ռասամ, որ առաջներում Լայարդի օգնականն էր եղել Նինուէի պեղումների ժամանակ, 1879—1880 թուականներին ձեռնարկեցին պեղումների՝ նախահայկական հնութիւններ երևան հանելու համար։ Պեղումները կատարուեցին այն բարձրութիւնների վրայ, որ գտնուում է Վանի հիւսիս-արևելեան կողմում և կոչուում է Զըմփ-զըմփ-դաղ և որի գագաթի վրայ եղած աւերակները կոչուում են Թոփրակ-կալէ (Հողէ բերդ)։ Որ այս հնութիւնը պէտք է լինէր մի նշանա-

ւոր նախահայկական կենտրոն, այդ ցոյց էր տալիս և նոյն Զրմփ-զրմփ-



Վան. — Մհերի դուռը

դաղի արևելեան ծայրում գտնուող Մհերի դուռ (Մհեր կափասի) ժայռը

որի վրայ մի շատ մեծ սեպագիր արձանագրութիւն է փորուած։ Երկու անգլիացիների պեղումները նշանաւոր հետևանքներ տուին, սակայն նրանց անփութութեան շնորհիւ՝ հողի տակ գտնուած իրերի մեծ մասը յափշտակեցին բանուորները [1]։ Այնուամենայնիւ, մի մասը եւրոպական թանգարանների (օր. Լոնդոնի և Բերլինի) սեփականութիւն դարձաւ։ Նախահայկական կուլտուրայի վերին աստիճանի հետաքրքրական յիշատակարաններ էին այդ պեղումներից հանուած իրերը։ Հորմուզդ Ռասսամը բացի դրանից գտաւ և ընդօրինակեց մինչև 14 հատ նոր սեպաձև արձանագրութիւններ, որոնցից 1-ը՝ Վանի մէջ, 2-ը՝ Ծրվստան գիւղում, 3-ը՝ Շուշանց գիւղում, 2-ը՝ Վարագում, 2-ը՝ Սըղդա գիւղում, 2-ը՝ անյայտ տեղերում և 1-ը՝ Արճէշի մօտերքը։ Այս արձանագրութիւնները հրատարակեց մեծանուն աստղագէտ պրոֆէսոր Սէյսը (Օքսֆորդի համալսարան) նախահայկական արձանագրու-

[1]) Линчъ—«Арменія», т. II, С. 19.

թիւնների շարքի մէջ [1]։ Իսկ հիւպատոս Ֆլէյտրնը մի սեպաձև արձանագրութիւն գտաւ 1881-ին Մուշի դաշտում։ Յաջորդ տարին պրոֆէսոր Յովսէփ Վունշ մի արձանագրութիւն երեւան հանեց Վանի մօտ գտնուող Սալխան գիւղի արեւելեան կողմում. 1885-ին մի արձանագրութիւն ուղարկուեց Խոշաբի Աստուածաշէն գիւղից Վանի վաճառական Տէվկանցին։ Դոկտոր Պոլակը ընդօրինակեց նրան։ Այս երկու արձանագրութիւնը հրատարակեց դոկտոր Դ.—Հ. Միւլլէրը Վիեննայում 1886-ին [2]։

1888—1889 թուականներին երկու ֆրանսիացի կրօնաւորներ, Միւլլէր-Սիմօնի և աբբայ Հիվերնա Վանում տեղեկութիւններ հաւաքելով, պարզեցին որ դեռ շատ կան անծանօթ մնացած սեպագրութիւններ։ Կաթոլիկ միսիոնար Դիւպլանը տուեց նրանց երկու արձանագրութիւնների (մէկը Վանի,

[1]) H. Hyverned, p. 542—560.

[2]) J. Sândalgian—«Les Inscriptions Cuneiformes Urartiques», Venise 1900 p. 218.

միւսը Բաղնոցի մէջ գտնուած) ընդօրինակութիւնները, մի արձանագրութիւն էլ տուեց ամերիկացի միսիոներ Ռէյնոլդսը։ Աբբա Հիվերնա կարողացաւ մի արձանագրութիւն ընդօրինակել Եափ-Քիլիսէ տեղում և եօթ հատ հատակոտորներ Վանում [1]։ 1891-ին Ժ. դը-Մօրգանը Կելիշինի սիւնի վերայ, բացի արդէն ծանօթ արձանագրութիւնից, գտաւ և մի ուրիշը, որ աննկատելի էր մնացել մինչև այդ [2]։ Մի և նոյն տարին Վանի անգլիական հիւպատոս Դէվէյը գտաւ և ընդօրինակեց մի նոր արձանագրութիւն [3]։

Դարձեալ 1891 թուականին գերմանացի ուսումնական դոկտոր Վոլդեմար Բէլքը, որ քիմիկոսի պաշտօնով ծառայում էր Գետաբէկի պղնձահանքում, մի երկար ճանապարհորդութիւն կատարեց Գանձակի և Երևանի նահանգներում և Ասիական Թիւրքիայի

[1]) Hyvernat, p. 560.

[2]) De Morgan—«Mission Scientifique en Perse» t. IV, I partie, Paris 1896, p. 266.

[3]) Sandalgian, p. 55.



Կելիշինի արձանագր.

Վանի և Էրզրումի վիլայեթներում յատկապէս սեպաձև արձանագրութիւններ ուսումնասիրելու համար։ Անդրկովկասի սահմաններում նա առանձին յաջողութիւն չունեցաւ։ Կամենալով ճշտել ուրարտական արձանագրութիւնների տարածման հիւսիսային սահմանները, հնախոյզ գերմանացին մանրակրկիտ որոնումներ արաւ Կուր և Արաքս գետերի մէջ բարձրացած լեռնաշխարհում, բայց նոր բան չը գտաւ և բաւականացաւ արդէն յայտնի մի քանի արձանագրութիւններ նորից արտագրելով։ Անհամեմատ արդիւնաւոր հանդիսացան Բէլլի հնախուզութիւնները թիւրքաց Հայաստանի սահմաններում։ Այստեղ նրան յաջողուեց գտնել, գլխաւորապէս զանազան մասնաւոր տներում, դեռ անյայտ 7 հատ սեպագրութիւններ [1]), որոնցից 4 հատ

[1]) Sandalgian, p. 50 et suiv. ինքը Բէլլը հաշուում էր իր գտած արձանագրութիւնների թիւը 31, բայց այս թուի մէջ, երևի, մտնում էին և արդէն յայտնի արձանագրութիւնների նոր, աւելի ճիշտ ընդօրինակումները (Տ. Հանդէս Ամսօրեայ» Վիեննա, 1893 եր. 23)։

Արտամէտ, 1 հատ Իշխանագոմ գիւղերում, 1 հատ Վանում և 1 հատ Քէշիշ-Գեօլ տեղում, Վանի մօտ, Վարագի լեռների սահմանում։ Միաժամանակ դոկտոր Բէլքը մի քանի հնագիտական հետախուզութիւններ արաւ ուրարտական հնութիւնների շրջանում, և ցոյց տուեց գիտնական աշխարհին թէ անհրաժեշտ է աւելի ընդարձակ ուսումնասիրութիւններ կատարել տեղն ու տեղը, մանաւանդ շարունակել եռանդով որոնել սեպագրութիւններ, որոնցից, ինչպէս հաւատացած էր նա, դեռ շատ պիտի գտնուէին։

Եւ այս միանգամայն ճիշտ էր։ Նոյն այդ տարին Երևանի հանդում, Գանլիթափա (Արնաբերդ) տեղում, սեպագիր արձանագրութեամբ ծածկուած մի քար գտաւ Նորքեցի Նազար Մատթէոսեանը [1]։ 1892-ին մի նոր սեպաձև արձանագրութիւն գտնուեց դարձեալ հին Արմաւիրի մօտերքը, Սարդարաբատ գիւղում, Էջմիածնի միաբան Գա-

[1]) Մեսրոպ արքեպիս.—«Գեղարքունիք», եր. 177.

լուսատ Տէր-Մկրտչեանի ջանքերով [1]։

Դոքտոր Բէլքի, ինչպէս և սրանից առաջ Հիվերնայի և Միւլլէր-Սիմօնիի կատարած ուսումնական ճանապարհորդութիւնները, որոնց մի մասը, ինչպէս տեսանք, տեղի ունեցաւ Ռուսական Հայաստանի սահմաններում, դրդիչ հանդիսացան որ ռուս գիտնականներն էլ առանձին ուշադրութիւն դարձնեն գոնէ իրանց պետութեան սահմաններում եղած արձանագրութիւնների ուսումնասիրութեան վրայ։ Մոսկվայի Ռուսաց Կայսերական Հնագիտական Ընկերութեան յանձնարարութեամբ 1893-ի ամառը Անդրկովկաս ուղևորուեցին նրա անդամներից երկուսը՝ Մ. Նիկոլսկի և Ա. Իւանովսկի, որոնք մանրամասն ուսումնասիրութիւնների ենթարկեցին Կարսի և Երևանի նահանգներում գտնուած սեպագրութիւնները, վերցրին նրանց ճիշտ ընդօրինակութիւնները և պարզեցին շատ պատմական և աշխարհագրական հանգամանքներ, որ ցոյց էին

[1]) «Արարատ» ամսագիր, 1892, եր. 423 և 554.

տալիս արձանագրութիւնների տեղերը։ Այդ հետազօտութիւնները հրատարակուեցին 1894—1896 թուականներին և բարձր գնահատութիւն գտան եւրոպական մասնագէտ շրջանների մէջ[1]։ Մինչև այս աշխատութեան հրատարակումը, 1895-ին, մի նոր արձանագրութիւն էլ գտնուեց Արաքս գետի աջ ափին, Արմաւիրից ոչ հեռու, Կարակալա անունով աւերակների մօտ։ Այդ արձանագրութիւնը էստամպաժով ընդօրինակեց Մեսրոպ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Տէր-Մովսիսեանը[2]։ Նոյն այդ տարին էլ Բաղնոց գիւղի (Թիւրքաց Հայաստան) եկեղեցում մի արձանագրութիւն գտաւ Դոմինիկեան կաթոլիկ կրօնաւոր, մի և նոյն ժամանակ և յայտնի բեւեռագէտ Շէյլը[3]։

Բայց նախահայկական հնագիտու-

[1]) Матеріалы по археологіи Кавказа Вып. V. Клинообразныя надписи Закавказья, изслѣдованіе М. В. Никольскаго, М. 1896. Вып. VI.—По Закавказок. А. Ивановскаго. М. 1911.

[2]) Никольскій, с. 57.

[3]) Sandalgian, p. 168.

թեան տարեգրութիւնների մէջ առանձնապէս պէտք է շեշտել 1898 և 1899 թուականները, երբ գերմանացի երկու գիտնականներ, մէկը մեզ արդէն ծանօթ դոկտոր Վոլդեմար Բելք և միւսը՝ պրոֆէսոր Լէման-Հաուպտ, մասնագիտութեամբ ասորագէտ, երկար ճանապարհորդութիւններ կատարեցին Անդրկովկասում, Պարսկաստանում և Ասիական Թիւրքիայում, նպատակ ունենալով «ծանօթանալ Մարդեան (Վանեան, Ուրարտեան) բևեռագիր արձանագրութիւնքը կրկին համեմատել, նոյն կարգի ուրիշ բևեռագրութիւններ փնտռել և միանգամայն իրենց անցած երկիրներն ըստ կարելիութեան և պիտոյից՝ աշխարհագրօրէն ուսումնասիրել»[1]։ Ուսումնական արշաւանքը գրական առատ նպաստներ ստացաւ. դրանց մէջ էին և Վիլհելմ կայսրի, գիտութիւնների Ակադեմիայի և այլ հաստատութիւնների նպաստները։ Եւ այդ ուղևորութիւնն

[1]) Հ. Յ. Տ.—«Տեղեկագիր քննական ուղևորութեան մ ի Հայս Վ. Բելքի և Կ. Յ. Լէմանի» «Հանդէս Ամսօրեայ», 1899, եր. 281.

ընդհանրապէս մեծ նշանակութիւն ստացաւ նախահայկական պատմութիւնն ուսումնասիրելու համար. մասնաւորապէս մեծ էին նրա արդիւնքները Թիւրքաց Հայաստանում և յատկապէս Վանում, ուր, չը նայած նախորդ այցելուների խուզարկութիւններին, գերմանացի գիտնականները գտան բազմաթիւ նոր արձանագրութիւններ։ Մինչև այդ գտնուած և հրատարակուած էին մօտ 80 արձանագրութիւններ. Բէլքն ու Լէմանը դրանցից 70 հատ նորից համեմատեցին և ստուգեցին և բացի դրանից գտան մօտ 60 հատ նոր արձանագրութիւններ, որոնցից, սակայն, 10 հատի նկարագրութիւնն են տուել, մնացածների մի մասը հատակոտորներից է բաղկացած։ Գլխաւոր արձանագրութիւններից մէկը, ասորական լեզուով, գտնուած է Կոչանլու գիւղի մօտ, Մանազկերտից ոչ հեռու, և մի մի հատ Վանի բերդի ժայռերի վրայ, Վանի «Գուրշուն» մզկիթում, ս. Մահակ և երկուսը ս. Պօղոս եկեղեցինե-

րում, Խարակոնիս գիւղի մօտ, Արճակ լճի ափին, երեք հատ Արճէշի շրջանում, մի հատ էլ Քէշիշդեօլի մօտերքը։ Նշանաւոր է և այն արձանագրութիւնը, որ գտնւում է Ուրմիայի լճի հարաւային կողմերում, Ռվանդուզի Սէդկան գիւղի մօտ, Կիլիշէից ոչ հեռու։ Ցայտնի էր որ կայ այդպիսի մի արձանագրութիւն, բայց Բէլքն ու Լեմանն էին, որ առաջին անգամ, անագին դժուարութիւններով ընդօրինակեցին արձանագրութիւնը, որ ցոյց է տալիս Ուրարտական իշխանութեան տարածման հարաւային ծայրը։ Երկու գիտնականները նոյնպէս պեղումներ կատարեցին մեզ ծանօթ Թուփրաք-կալէի աւերակների մէջ, և առանձնապէս հետամուտ եղան նախայրերի կուլտուրայի ուսումնասիրութիւնը նորանոր հետաքրքրական փաստերով հարստացնելու համար։

Գիտնական այս մեծ արշաւանքի տարին (1899) Մարգար Եաղուբեան անունով հայը, աշակերտ Խարբերդի ամերիկական կոլէջի, գտաւ մի սե-



Ֆոնդուկ-կամարը վերջերսին

պագրութիւն Կիզիլ-գալա գիւղի կողքին, Խարբերդի մօտ [1]), իսկ հետևեալ տարին, 1900 ին, մի մեծ սեպաձև արձանագրութիւն երևան հանեց Խաչիկ վարդապետ Դադեանը Էջմիածնի մօտ, Զուարթնոց եկեղեցու աւերակների մէջ [2]։ Տասը տարուց յետոյ (1910) մի արձանագրութիւն գտաւ գերմանացի կոմս Կունից Մակուի խանութեան մէջ։ Այդ արձանագրութիւնը հրատարակել է և թարգմանել պրոֆէսօր Սէյսը 1912-ին [3])։ Նոյնպէս 1910 ին էր, որ Էջմիածնի միաբանութեան անդամ Յուսիկ արքեպիսկոպոսի ջանքերով արտագրուեցին և «Արարատ» ամսագրի մէջ հրատարակուեցին երկու սեպագրութիւններ, որոնք գտնուել էին թիւրքական Բասենի և Ալաշկերտի սահմաններում, Դէլի-Բաբա և Եազլի-դաշ գիւղերում։

[1]) Կ. Բասմաջեան—,,Հայկական նորագիւտ բեւեռագիր մըն ալ'' (,,Բանասէր'' ուսումնաթերթ, Պարիզ, 1899, եր. 289—292)։

[2]) ,,Արարատ'' ամսագիր, 1900, եր. 380։

[3]) Յ. վ. Սանդալճեան—,,Նորագիւտ Ուրարտեան սեպագիր արձանագրութիւնք'' (,,Հանդէս Ամսօրեայ'' 1913, էջ 407։

Գտնողը և արտագրողը Կ. Տէր-Աղէքսանդրեանն էր։ Առաջինը, բաղկացած 9 տողից, Դէլի-Բաբայի հայ եկեղեցու պատի մէջ է գտնւում։ Երկրորդը բաղկացած է մի տողից [1])։

Այս է ութսուն և երկու (1819—1910) տարիների ընթացքում հաւաքուած սեպագրական և հնագիտական մթերքը, որի վրայ գլխաւորապէս պիտի կառուցուի Հայաստանի պատմութիւնը նախաՀայկական շրջանում։ Բայց հաւաքելը բաւական չէր։ Աւելի դժուար խնդիր էր դրւում մասնագէտ եւրոպացի գիտնականների առջև—արձանագրութիւնների վերծանութիւնը։ Այս ուղղութեամբ երկար աշխատած, բայց արդիւնքի չը հասած եւրոպացի գիտնականներից կը յիշատակենք Էդուարդ Հինքսին (1848)։ Ամենադժուար հարցն այն էր թէ ինչ լեզուով են գրուած այդ սեպաձև արձանագրութիւնները։ Առաջին հայեացքից աւելի քան հաւանական էր թւում թէ այդ

1) „Արարատ" ամսագիր, 1910, եր. 189, 576։

լեզուն պիտի լինի հայերէնը։ Այսպէս յայտարարեցին Վենետիկի Մխիթարեան վարդապետները դեռ 1845-ին, երբ նոր էին հրատարակուել Շուլցի ընդօրինակած արձանագրութիւնները։ Գիտնական վարդապետների համար այս հանգամանքը պարզ էր այն պատճառով, որ Խորենացու վկայութեամբ Վանի արձանագրութիւնները գրել է Շամիրամ թագուհին. իսկ Շամիրամը գրելով ժողովրդի համար, պիտի, ի հարկէ, գործածէր նրա լեզուն։ Եւ որովհետև հայկական տառերի գիւտի պատմութիւնն ասում է թէ առաջներում էլ հայերի մէջ գոյութիւն ունէր գրութեան ձև, ուստի հեռանեցնում էին թէ այդ հին գրութիւնը պիտի լինէր սեպաձևը [1]։

Այս ուղղութեամբ սկսեց աշխատել սեպագրութիւնների վրայ գերմանացի դոկտոր Մօրդմանը, յայտնի արևելագէտ, որ գերմանական հիւպատոսի պաշտօն ունէր Կ. Պոլսում։ Համոզուելով որ Վանեան սեպագրութիւնների

[1]) ,,Բազմավէպ'' Վենետիկ, 1845, եր. 46։

մէջ խօսում է հին հայերէն լեզուն, գրաբարը։ Մորդմանը սկսեց հայերէնի միջոցով էլ թարգմանել այդ արձանագրութիւնները[1]։ Մասնաւոր փորձերից անցնելով ընդհանուրին, Մորդմանը 1871 թուականին գերմանական թերթերից մէկում տպեց մի ընդհանուր յօդուած Վանեան արձանագրութիւնների մասին, դնելով նրա մէջ իր ընթերցումներով լուսաբանուած մի քանի արձանագրութիւններ[2]։ Այս նախափորձին հետևեց մի ընդարձակ աշխատութիւն, որ տպուեց 1882-ին և որի մէջ Մորդմանը տուեց մինչև այդ յայտնի բոլոր սեպաձև արձանագրութիւնների թարգմանութիւնը։ Բայց գերմանացի արևելագէտի այս անխոնջ ջանքերը վերջ ի վերջոյ դուրս եկան ապարդիւն։ Նա առհասարակ թոյլ ծանօթութիւն ունէր բևեռագիտութեան

[1]) Տ. օրինակ, Ղանլիջայի արձանագրութեան թարգմանութիւնը ,,Բազմավէպ'', 1865, եր. 232։

[2]) Թարգմանել և հրատարակել է Գէորգ Աբդուլլահեան—,,Հայ բևեռաձև արձանագրութիւնք, լուսաբանեալ ի Մորթմանայ'', Կ. Պոլիս, 1873. Տ. և ,,Արարատ'' ամսագիր, 1872, № 4—6։

հետ և բոլորովին անծանօթ էր ասորական լեզուին։ Եւ այս պատճառով էր որ Վանեան արձանագրութիւններից մէկը, գրուած ասորական լեզուով, նա բացատրեց դարձեալ իբրև հայերէն լեզուով գրուած [1])։ Մորգմանի աշխատութիւնը գիտական արժէք չը ստացաւ։

Միաժամանակ առաջացաւ և աւելի հաւանական ընդունուեց դրան բոլորովին հակառակ մի կարծիք։ Անգլիացի բեռոագէտ Ռաուլինսոնը առաջինն էր, որ սկսեց պնդել թէ ուրարտացիները ոչինչ նմանութիւն չեն ունեցել հայերին և թէ Վանեան արձանագրութիւնների լեզուն ոչ մի ազգակցութիւն չունի հայերէնի հետ։ Նոյն այս կարծիքն ունէր և Ֆրանսուա Լենորմանը, որ և առաջին անգամ յայտնեց այն միտքը թէ Վանեան արձանագրութիւնների լեզուն աւելի մօ-

[1]) М. Никольскій—„Клинообразныя надписи Ванскихъ царей, открытыя въ предѣлахъ Россіи" («Древности Восточныя», т. I, вып. III, Москва 1893 с. 376).

ոիկ է վրացերէնին, հետևաբար կարելի է ասել թէ նախահայերը արիացիներ չէին, այլ վրացիների հետ միասին պատկանում էին կովկասեան ցեղերի ընտանիքին [1]։ Թէև այդ միջոցին սեպագրութիւնների վերծանութեան բանալին իսկապէս դեռ չէր էլ գտնուել, բայց ֆրանսիացի նշանաւոր արևելագէտը իր այդ ցուցմունքով առաջին հեռքերն էր բաց անում բազմադարեան անթափանցելի գաղտնիքը բաց անելու համար։ Ապագայ հետազօտութիւնները պիտի ցոյց տային միայն այն, որ Լընորմանը իսկապէս մի երևելի գիւտ էր արել։ Մի գիւտ, սակայն, որ դեռ հարցի վերջնական լուծումը չէր։ Հարցի լուսաբանութեան էր ծառայում և անուանի հայագէտ պրոֆէսոր Քերովբէ Պատկանեանի հակաճառութիւնը Լընորմանի այս գիւտի առիթով։ Պատկանեանը չէր ընդունում որ սեպագրութիւնների լեզուն վրա-

[1]) Fr. Lenormant—„Lettres Assyriologiques", Paris 1871 t. I (Lettre 2—Sur l'Histoire dé l'Arménie avant les Achéménides), 124—126).

ցերէնի ազգակից լինի, բայց միանգամայն անսխալ չէր գտնում և Մորդմանի սիստեմը։ Իր կողմից նա առաջ էր բերում մի նոր տեսութիւն.—արձանագրութիւնների հեղինակները անշուշտ հայերն էին, բայց նրանց այն ժամանակուայ գործածական լեզուն կորել է, թողնելով շերտաւորումներ հին հայերէնի մէջ, շերտաւորումներ, որոնք հայոց արիական լեզուի մէջ մի ինչ-որ անծանօթ, ոչ-արիական տարր են կազմում [1]։ Այս հակաճառութիւնը չէր հերքում Էրնորմանի գիւտը, այլ միայն լրացնում էր։

1880-ական թուականների սկզբում Վանեան սեպագրութիւնների վերծանութեան գործը ամուր գիտական հիմքերի վրայ դրուեց շնորհիւ Ֆրանսիացի արաբագէտ և ասորագէտ Ստանիսլաս Գիլյեարի մի քանի ցուցմունքների, որոնք կարողութիւն էին տալիս նոյն իսկ շօշափել անծանօթ լեզուի քերա-

[1]) К. Патканов—„Ванскіе надписи и значеніе ихъ для Исторіи передней Азіи", СПб. 1881, с.с. 15, 32.

կանական ձևերը[1]։ Այդ ցուցմունքներով առաջնորդուելով, անգլիացի գիտնական Սէյսը սկսեց և մեծ հմտութեամբ վերջացրեց բոլոր Վանեան արձանագրութիւնների վերծանութեան և թարգմանութեան գործը։ Օքսֆորդի համալսարանի մեծանուն պրոֆէսորը իր այդ բազմամեայ աշխատութիւններով կենդանացրեց Հայաստանի նախահայկական ժամանակների պատմութիւնը և դարձաւ մի պատկառելի հեղինակութիւն այս շրջանի գրաւոր աղբիւրների վերաբերմամբ[2]։

Թէև խորհրդաւոր սեպագրութիւնները կարդացւում և հասկացւում էին,

---

[1]) „Journal Asiatique„, Paris, 1880, p. 540—543. Տ. և Stanislas Guyard—„Les Inscriptions de Van (Mebauges d'Assyriologie", Paris, 1883).

[2]) Սէյսը իր աշխատութիւնները հրատարակել է գլխաւորապէս Լոնդոնի „Journal of the Royal Asiatic Society" ուսումնաթերթի մէջ. 1880-ական թուականների սկզբում այստեղ լոյս տեսան մինչև այդ հրատարակուած արձանագրութիւնների թարգմանութիւնը։ Այնուհետև նոր գտնուած արձանագրութիւնների ընդօրինակութիւնները ուղարկւում էին նրան և նա թարգմանում էր ու տպագրում նոյն ուսումնաթերթում կամ ուրիշ հրատարակութիւնների մէջ։

բայց նրանց լեզուի հարցը, այնուամենայնիւ բաց մնաց։ «Զարմանալի երևնալու չէ—գրում է հայ բանասէրներից մէկը—թէ ինչպէս կրնան բևեռագիրներ կարդացուիլ և նաև մեկնուիլ, ասենցմէ ազգի մ'ամբողջ պատմութիւնը հանուիլ, և սակայն լեզուին՝ որով գրուած են՝ ինչ կարգի ըլլալուն նկատմամբ տարակոյսներ ունենալ։ Ընթերցման մասին որ և է խնդիր չկայ։ Վասն զի հայկական բևեռագիրները—նշանները գրեթէ բոլորովին նոյն են նոր ասորեստանեայ բևեռագիրներու նշանաց հետ, ուստի պէտք են այնպէս կարդացուիլ ինչպէս միւսները։ Իմաստն ալ մեկնելու մեծ դիւրութիւն կուտան գաղափարանիշները..., այսինքն այլ և այլ գաղափարներ յայտնող որոշ բևեռաձևեր։ Ասենք որ ծանօթ էին ասորեստանեան արձանագրութիւններէն՝ կը գտնենք հայկականաց մէջ ալ. այնպէս որ նշաններուն իմաստը ծանօթ է, բայց կրնայ վիճելի ըլլալ թէ ինչ կը կարդար արդեօք նախահայ մ' այս

նշանը տեսնելով։ Օրինակի համար։ «Աստուած» և «Որդի» գաղափարները նշանակելու համար որոշ նշաններ կան՝ որոնք ասորեստանեայ լեզուի մէջ ilu և ablu կթ հնչուին. նոյները կան հայկականաց մէջ ալ, բայց ինչ կը կարդացուէին արդեօք՝ կրնայ խնդրական ըլլալ։ Միւս կողմանէ բազմաթիւ արձանագրութիւններ համեմատելով՝ յաճախ ճիշտ նոյն տողերն ու խօսքերը, երբեմն ամբողջ արձանագրութիւններ նոյնութեամբ կը գրուին։ Մտադիր աչք մը դիւրաւ կը գտնէ արդ, որ յաճախ տեղ մը որուն իմաստը ծանօթ էր գաղափարանիշներէն, ուրիշ համեմատական տեղ մ՝ ամբողջ կամ բեւեռատառերով գրուած է, որ է ըստ այսմ գաղափարանիշին հընչումը, և ահա գտնուեցաւ բառ մը, խօսք մը այն անծանօթ լեզուին։ Եւ այսպէս շարունակելով, մանաւանդ օգնութեամբ ասորեստանեայ արձանագրութեանց, որոնցմէ բաւական բառ անփոփոխ առնուած քանդակուած կը գտնենք, հասած է այժմ գիտութիւնն

այն տեղն, որ քիչ շատ ամէն նախահայ բևեռագիր գոնէ մերձաւորապէս կրնայ թարգմանուիլ» [1]։

Ընդհանրապէս եւրոպացի գիտնականների մէջ, լեզուի վերաբերմամբ, ամենահաւանականը ընդունուած է Լընորմանի տեսութիւնը։ Բայց հայ բանասէրների մէջ կան այնպիսիները, որոնք կարծում են թէ Վանեան սեպագրութիւնները բուն ազգային, հայկական են։ Այսպիսիներից մէկն է Յովսէփ վարդապետ Սանտալճեանը, որ 1900 թուականին տպագրեց ֆրանսերէն լեզուով մի ստուար աշխատութիւն [2], որ ներկայացուած է ֆրանսիական Ակադեմիային (արձանագրութիւնների)։ Այդ աշխատութեան մէջ Սանտալճեանն ասում է թէ ուրարտական բարբառը, հարկաւ, ուրիշ բան չէ և չէ կարող լինել, բայց միայն նախնական հայերէնը։ Ապա հայերէնի

[1]) Հ. Յ. Տ.—,,Փոքր մը լեզուի Վանեան բևեռագրութեանց'', (,,Հանդէս Ամսօր.'' 1899, եր. 16—17)։

[2]) ,,Les Inscriptions Cunéiformes Urartiques'', Venise, 1900, I. t. 506 p. p.

օգնութեամբ թարգմանելով բոլոր մինչև այդ հրատարակուած արձանագրութիւնները, հեղինակը վերջացնում է իր այդ գործը մի ամբողջ մեկնաբանական բառգրքոյկով։ Այս աշխատութիւնը թէև եւրոպական գիտութեան մէջ կարծիքների փոփոխութիւն չառաջացրեց, բայց, տնկասկած, նոյնպէս ունի իր ծանրակշիռ արժէքը լեզուի հարցի մէջ։ Նա ցոյց է տալիս անհրաժեշտութիւնը որոնելու հայերէն լեզուի մէջ նախա-արիական տարրեր, որոնք պիտի նպաստեն Վանեան լեզուն մի օր գտնելուն։ Այսպիսով Սանտալճեանը աւելի լայնացնում էր Պատկանեանի տեսութիւնը, թէև միւս կողմից մնում էր այն սխալի մէջ որ Վանեան լեզուն, գլխաւոր առմամբ, արիական է։

Պրոֆէսոր Պատկանեանի ցոյց տուած իրողութիւնը, այն է՝ ոչ-արիական շերտերի գոյութիւնը հայերէն լեզուի մէջ եռանդուն ուսումնասիրութիւնների առարկայ դարձրեց նրա աշակերտը, ակադեմիկոս Մառ, որի արդէն բազմաթիւ հետազօտութիւններն այս ուղղու-

թեամբ, ըստ երևոյթին, ապագայում բաւարար լուծում պիտի տան Վանեան լեզուի հարցին։ Մինչև այժմ այս գիտնականը առաջացրել է և պաշտպանում է հետևեալ հիպոթեզը։ Հայաստանում հին ժամանակներից գոյութիւն են ունեցել երկու լեզու. ազնուականների լեզու, որ մենք անուանում ենք «գրաբառ» և որին Մառը տալիս է «հայոց» (hАйскій) անունը և ռամիկների լեզուն, այն, որ մենք անուանում ենք «աշխարհաբար» և որին ռուս գիտնականը տալիս է «արմէնական» (армянскій) անունը։ Այս երկու լեզուներն էլ զուտ արիական չեն և ունին իրանց մէջ այնպիսի տարրեր, որոնք ցոյց են տալիս նրանց մօտիկ ազգակցութիւնը «յաբեթական» լեզուների հետ [1])։ Իսկ «յաբեթական» անունը ակադեմիկոս Մառը տալիս է Կովկասեան ազգերի (վրացիների, մինգրելների, լազերի, սվանների և այլն) լեզուներին։ Այս ազգերը համարւում են մնացորդներ այն

[1]) Н. Марръ—„Грамматика Чанскаго (Лазскаго) языка", Пет. 1910 с. X—XI.

ազգերի, որոնք բռնած էին ամբողջ Փոքր Ասիան մինչև Կասպից ծովը և որոնք ընդհանուր առմամբ եւրոպական գիտութեան մէջ կոչւում են «հեթիթական» ցեղեր։ Այդ ցեղերին էր պատկանում և այն ժողովուրդը, որի լեզուով գրուած են Վանի սեպագրութիւնները։

Ակադեմիկոս Մառի գծած այս ուղղութիւնը դեռ եւրոպական գիտութեան կողմից դիմադրութեան է հանդիպում։ Ապագայ ուսումնասիրութիւններին է պատկանում վճռական խօսք արտասանել այս առիթով։ Մառի գործադրած քննական մեթոդները գիտական են և դրանց առաջնորդութեամբ գիտութիւնը գուցէ մի օր գտնէ Վանեան լեզուի բանալին հէնց այն ոչ արիական տարրերի մէջ, որոնք պահպանուել են հայոց լեզուի մէջ։

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԵՐԿԻՐԸ ԵՒ ՄԱՐԴԻԿ


Սեւ ծով

Հայք
բազմաբնակ բնակեալ:

## ԳԼՈՒԽ Ա.

# ՍԵՊԱԳԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ասորեստանի հին արձանագրութիւնների մէջ, որոնք վերաբերում են ԺԱ դարին Ք. ա., Հայկական Բարձրաւանդակի մի նշանաւոր մասը կոչուած է Նաիրիի երկիրներ։ Այս անունը, ինչպէս կարծում են, Միջագետքի հովտում տրւում էր Ասորեստանից դէպի հիւսիս գտնուող բոլոր երկիրներին, բայց անկասկած է, որ նա ունէր և իր յատուկ նշանակութիւնը, իբրև անուն այն լեռնային երկիրների, որոնք տարածուած են Վանի լճի չորս կողմերը։ Նաիրի նշանակում է «գետեր»։ Եւ իրաւ ասորեստ-

տանցիների արշաւանքները տեղի ունէին գլխաւորապէս Արևելեան Եփրատի (Արածանի) և Արևելեան Տիգրիսի (Բոհտանսու) մէջ ընկած տեղերում։ Այս երկու գետերը, որոնցից Արածանին սեպաձև արձանագրութիւնների մէջ կոչուած է Արզանի, կարելի է համարել Նաիրիի հիւսիսային և հարաւային սահմանագծերը. արևմուտքում սահմանագիծ ընդունել կարելի է Եփրատ գետը, իսկ արևելքում՝ Ուրմիայի լիճը, որին ասորեստանցիները տալիս էին «Նաիրիի ներքին ծով» անունը «Նաիրիի վերին ծով» անունը Վանի լճին էր յատկացրած)։

Նաիրի—մի երկիր էր ընդհանուր առմամբ, իր տեղագրական և ազգագրական ընդհանուր հանգամանքների պատճառով։ Բայց այդ ընդհանուր անունը քաղաքական միապաղաղութիւն չէր ցոյց տալիս։ Նա պարունակում էր իր մէջ բազմաթիւ գաւառներ, որոնք և քաղաքական առանձին կազմակերպութիւններ էին ներկայացնում։ Ասորեստանի թագաւորները

կռուել են այդ գաւառական առանձին կազմակերպութիւնների դէմ և այս պատճառով իրանց յիշատակարանների մէջ պահել են նրանց անունները, որոնք ամբողջ ցուցակներ են կազմում։ Այսպիսով հնագոյն գրաւոր յիշատակութիւնները բաց են անում մեր առջև Հայկական Բարձրաւանդակին յատուկ և բնորոշ կերպարանքը — բազմաթիւ գաւառական անկախութիւններ կամ գուցէ կիսանկախութիւններ, միացած մի ընդհանուր կազմակերպութեան մէջ։ Նաիրին, ուրեմն, լեռնային մանր իշխողների մի դաշնակցութիւն էր։ Այդ դաշնակիցների թուի մասին մերձաւոր հասկացողութիւն տալիս են Թիգլաթպալասար առաջինի արձանագրութեան հետևեալ խօսքերը. «Նաիրի երկիրներուն ամբողջ 23 թագաւորք իրենց երկիրներուն մէջ պատերազմիկ կառքերնին և զօրքերնին ժողովեցին, պատերազմ ու ճակատ տալու յառաջացան։ Հզօր զինուցս սաստկութեամբ զանոնք ճնշեցի» [1]։

[1]) Ց. վ. Մանտալենան — «Ասորեստանեայ և պարսիկ արձանագրութիւնք», Վիեննա, 1901, եր. 99.

Բայց այս բոլորը չէ. բացի այս 23 թագաւորներից՝ «զ60 թագաւորս Նաիրեայ երկրաց՝ ընդ այնոսիկ որք անոնց օգնութեան եկած էին իմնիզակովս մինչև ցծոփն վերին հալածական տարի» [1]։ Այս յաղթողից մօտ երկու դար յետոյ Ասուրնազիրապալը իր արձանագրութեան մէջ հաւատացնում է թէ «Նաիրի երկիրներուն մէջ 250 քաղաք իրենց զօրաւոր պարիսպներովն աւերեցի, քանդեցի» [2]։ Եթէ այս թուանշանների մէջ ասորական սնապարծութիւն չը կայ կամ քիչ կայ, այն ժամանակ մենք պիտի ենթադրենք, որ, ուրեմն, իւրաքանչիւր ձոր, իւրաքանչիւր լեռ այդ երկրում անկախ էր և կազմում էր առանձին թագաւորութիւն։ Սակայն շատ պարզ է որ յաղթողները չափազանցնում էին իրանց կատարած գործերը։ 250 քաղաքները, եթէ ճիշտ որ Ասուրի ծառան այսքան տեղ վերցրել է, պարզապէս ամրացրած գեղակներ են եղել, թագաւորների, իշխողների

[1]) Անդ, եր. 100.
[2]) Անդ, եր. 122.

ամբոցներ։ Այսպէս էլ ընդունելով հանդերձ՝ մենք ստանում ենք այս անծանօթ երկրի վերին ասիճանի հետաքրքրական տեսարանը։

Ահա և այն յատուկ անունները, որ պահել են Ասորեստանի արձանագրութիւնները. 23 նուաճուած թագաւորութիւնները հետևեալներն են. Նեմմէ, Տունուբէ, Տուալի, Քինաբի, Ուզուլա, Ունգամունի, Անդիաբէ, Պիլաքինի, Աթուրգինի, Կուլիբարգինի, Շինիբիրնի, Հիմուա, Պախաերի, Ուիրամ, Շուրուրիա, Աբաենի, Ադաենի, Կիրինի, Ալբաա, Ուգինա, Նագաբիա, Աբարսիունի, Դաիաենի։ Մի ուրիշ ասորական թագաւոր, Շամսի-Ռամման, բերում է իր արձանագրութեան մէջ Նաիրիի երկիրների և նրանց առաջին իշխանների հետևեալ ցանկը.

Բաբարուրա (իշխանը՝ Սիրաաշմէ), Հարմիշանդա (իշ. Ամահար), Պարսանի (իշ. Զարիշու), Հունդուբ (իշ. Զարիշու), Կիպաբարուտակա (իշ. Սանաշու), Ուշտաշշա (իշխ. Արդարաա), Կինուկա (իշ. Շումաա), Գինգիբիր

(իշ. Տաատայի), Արիմա (իշ. Բիսիբաին), Կիպարուշա (իշ. Պարուուշտա), Ուիլա (իշ. Աշպաաշտաատաակ), Կինգիշտիլենգա (իշ. Ամամաաշ)յ Մասիբաուշ (իշ. Տարսիհու), Լուկսա (իշ. Մամանիիս), Գիմամոս (իշ. Զաանզար), Սիմգուրի (իշ. Սիրաաշու), Արգանա (իշ. Գիիշտա), Ասատի (իշխ. Ադադանու), Գինհուհտու (իշ. Ուրսի), Գինզինա (իշ. Բաարա), Կինդուտաուշ (իշ. Առուա), Կիբրու (իշ. Դիիրնակուուշ), Զուզարուբա (իշ. Զաբանու), Գինզիրդա (իշ. Իրտիսատի), Տաուրլա (իշ. Բաարզուտա), Նանի (իշ. Շուուա), Սատիբիա և Արտասիբարի [1]։

Այս երկու ցուցակի մէջ յիշուած անուններից մի երկու հատի տեղերն են միայն, որ այսօր կարելի է որոշել փոքր ի շատէ հաւանական ճշտութեամբ։ Այսպէս, 23 երկիրների ցանկում յիշատակուած Դաիաենի երկիրը

[1] Դր. Մաքսիմիլիան Շարէք—«Հայաստան, Քրդաստան և Արևմտեան Պարսկաստան Բաբելական-Ասորեստանեայ սեպագրերու համաձայն, թարգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան, Վիէննա, 1904, եր. 8—9։

Նաիրիի հիւսիս-արևմտեան ծայրն էր, այժմեան Երզնկայից էրզրում և Բասեն։ Մնացածները, ինչպէս երևում է, կազմում էին Նաիրիի ներքին զանգուածի ցանցը։ Սակայն այդ զանգուածի շուրջը բոլորող երկիրների (նահանգ, գաւառ) մասին մենք ունենք և մի քանի որոշ տեղեկութիւններ։ Դրանց տեղը որոշելու համար լաւագոյն միջոցն է վերցնել Վանի լիճը, որ Նաիրիի կենտրոնավայրը կարող է համարուել և ցոյց տալ թէ այդ լճի որ կողմի ուղղութեամբ էին տարածուած այդ երկիրները։

Հիւսիս-արևելեան և արևելեան ուղղութեամբ։ Մաննա։ Սա իսկապէս երկիրների մի հաւաքական անուն էր։ Երկիրների, որոնք տարածւում էին Ուրմիայի լճի հարաւային ափերից մինչև Արաքս գետը, ասել է՝ այժմեան Խոյ և Սալմաստ գաւառները, աւելացնելով դրանց վրայ և Շատախ, Բաշկալէ և Խոշապ գաւառները։ Ենթադրում են, որ Մաննայի ժողովուրդները Նաիրիի ժողո-

վուրդների հետ ազգակցություն չունեին և այս կողմերը գաղթել էին արևելքից[1]։ Մաննայի գլխավոր երկիրներն էին. Ման, Ուիշտիշ, Զիկիրտու, Միսիանդի, Բիտ-Դաիուկկի։

Հարավ-արևելեան — Մուզասիր։ Գրվում էր Վանի և Ուրմիայի լճերի մէջ ընկած այն լեռնաշխարհը, որ այժմ հիւսիսային Քրդիստանն է, այն է՝ Հէքիարրի գաւառից մինչև Ուրմիայի լճի հարաւ-արևմտեան կողմերը (Ռէվանդուզ)։ Գլխաւոր քաղաքը ասորական վաւերագրերի մէջ նոյն անունն է կրում—Մուզասիր։ Նաիրեան ցեղերին պատկանող մի ժողովուրդ էր բնակւում այնտեղ, որ սերտ կապված էր հարևան և ցեղակից Ուրարտուի հետ։ Նրա մայրաքաղաքումն էր գտնւում Խալդ աստուծու հռչակաւոր տաճարը։

Հարաւային ուղղութեամբ. 1) Հուբուշկիա կամ Խուբուշկիա՝ Տիգրիսի բազուկները կազմող

[1]) Վ. Բելը—«Մաննացոց Տէրութիւնը». («Ազգագրական Հանդէս», Գիրք Ա. 1895, եր. 32—33)։

երկու Զաբերի մէջ տեղը, անմիջապէս սահմանակից Ասորեստանին։ Համարւում էր Նաիրիի երկիրներից մէկը[1])։ Իր դիրքով կարևոր տեղ էր բռնում։ Ասորեստանից Իրանի սարահարթը դուրս գալու ճանապարհներ կային այստեղ և ժամանակի ընթացքում ասորացած երկիր էր։ 2) Գիլզանի, Արզանա, որոնցից առաջինը համապատասխանում է այժմեան Խիզանին[2])։

Հարաւ-արևմտեան ուղղութեամբ. 1) Կաշիարի և Նիրբու, լեռնոտ դժուարակոխ երկիրներ։ «Անեղ լեռներ», «դժուարին երկիր» — այսպէս են վկայում ասորական արձանագրութիւնները։ Այս երկիրներում գտնւում էին հետևեալ քաղաքները. Իշտիլիբրիա, Մարիթու, Տելա։ Վերջինիս նկատ-

[1]) Ս. Հ. Մէյս—«Սեպագիր արձանագրութիւնք Վանայ» («Բանասէր» հանդէս, Պարիզ 1899, եր. 372։

[2]) Г. Халатьянцъ—„О нѣкоторыхъ географическихъ названіяхъ древней Арменіи въ связи съ данными Ванскихъ надписей“ („Древности Восточныя“, т. II, вып. II, М. 1901, с. 126).

մամբ հաւանական են համարում, որ նա գտնուում էր այն տեղը, ուր Բիթ-լիսի գետը թափուում է Տիգրիսի մէջ։ Եթէ այս ճիշտ է, այն ժամանակ այս երկու երկիրները պէտք է համարենք տարածուած արևմտեան Քրդիստանից դէպի Դիարբէքիր։ Եւ իրաւ, ինչպէս ենթադրուում է, այս լեռնային աշխարհի գագաթներից մէկն էր որ հին յունական աշխարհագրութիւնների մէջ անուանուած է Մասիուս, մի լեռնաշղթայ, որ բաժանում էր Նաիրիի երկիրները Միջագետքից։ Եւ եթէ այս բոլորը հաւանական է, այն ժամանակ պիտի ասենք որ այս երկիրներից դէպի հիւսիս էին գտնուում Մուշկի երկիրը և Սասու սարը, որոնց համապատասխանող կարելի է համարել այժմեան Մուշ և Սասուն[1]) անունները. 2.—Բիտ-Զամանի։ Արևմտեան Տիգրիսի վրայ տարածուած գաշտային երկիր, որի քաղաքներից մէկը, Ամետ անունով (Ամիթ, այժմ

[1]) Անդ.

և Տիգրանակերտ, Դիարբէքիր) պարզ որոշում է նրա տեղը։ Բացի Ամիդից, Բիտ-Զամանի երկրին էին վերաբերւում և Դամդամուսա և Սինաբու քաղաքները։ Բայց Նաիրիի երկիրների համար աւելի կարևոր քաղաքական կենտրոն էր Տուշհա քաղաքը։ Եւ այս՝ շնորհիւ այն շատ կարեւոր դերի, որ խաղում էր առհասարակ Բիտ-Զամանի երկիրը։ Ասորեստանի բանակները Տիգրիսի հովտով էին բարձրանում Նաիրիի սարահաթը, երբ հարկաւոր էին համարում արևմուտքից յարձակուել այդ երկրի վրայ։ Տիգրիսի արևմտեան ճիւղի կիրճերը դուրս էին բերում Ամիդի դաշտավայրը և այստեղից ասորական զօրքերը շարունակում էին իրանց առաջխաղացումը։ Այս բնական դռների ռազմական նշանակութիւնը հասկացուեց շատ վաղուց, ուստի և այստեղ հիմնուեցին քաղաքներ և հաստատուեցին ասորական գաղութներ։ Այսպիսի տեղերից մէկն էր Տուշհան, ասորական մի բերդ, որի դերն էր

հակել Նաիրիի երկիրների վրայ։ Այդտեղ էին Նաիրիի բազմաթիւ թագաւորներն ու իշխանները յանձնում իրանց հարկերն ու տուրքերը ասորի կուսակալին։ Եւ որովհետև այդ հարկերի մեծագոյն մասը բաղկացած էր ցորենից և այլ արմտիքներից, ուստի ասորական կառավարութիւնն այդտեղ կառուցել էր մեծամեծ շտեմարաններ[1])։ Առհասարակ այստեղ, այս սահմանապահ ամրութեան մէջ էին տեղի ունենում Ասորեստանի և Նաիրիի յարաբերութիւնները. Բիտ-Զամանի, ինչպէս և նրա սահմանակից Շուպրիա և Ուրումէ երկիրները արամէական ցեղերին էին պատկանում, հետևաբար ներկայացնում էին Նաիրի երկիրների ազգաբնակութեան հետ ոչինչ առնչութիւն չունեցող ազգագրական տարրեր։

Արևմտեան ուղղութեամբ։ Կիրհու երկիր—որ պարունակում էր իր մէջ Դիւայ և Արբակի երկիրներն ու Նիպուր-Գադատա լեռ-

[1]) Շարէբ, եր. 20։

նագաւառը։ Կիրհու երկրի մէջ էր Էնզիտ, որ համապատասխանում է հին Հանձիթ գաւառին (այժմ Խարբերդ)։ Այս գաւառի մէջ էր Ասորեստանի թագաւորներով հռչակուած Սուբնատը, այսինքն այն գետը, որ ասորիները համարում էին Արևմտեան Տիգրիսի ակունքը և որ այժմ կոչւում է Զէբէնէ-սու։ Գետը անցնում է մի նեղ կիրճով, որ ասորական բանակների ճանապարհն է եղել։ Այստեղ, այս կիրճի մէջ, մի այրում, ասորական չորս թագաւորներ գծագրել են տուել իրանց գործերը պատմող արձանագրութիւններ և իրանց պատկերները։

Հիւսիսային ուղղութեամբ։ Ուրարտու։ Այս անունը Ասորեստանի արձանագրութիւնների մէջ երևան է գալիս միմիայն Թ դարի (Ք. ա.) սկզբից։ Այդ ժամանակ մի փոքրիկ թագաւորութիւն էր Ուրարտուն։ Բոլոր եւրոպացի գիտնականները կարծում են թէ նա տարածուած էր Արզանիա (Արածանի) գետի վերին



Սուքցաս գետի այրը

մասերում, ասել է՝ այժմեան Ալաշկերտի հովտում։ Ռուս հետազօտող Նիկոլսկին աւելի դէպի արևելք է տանում այդ թագաւորութեան սահմանները Արաքսի այն հովիտով, որ կոչւում է Արարատեան դաշտ[1]), մինչև Նախճաւանի կողմերը[2])։ Այս սահմաններում էլ գնում են այն մի քանի ուրարտական քաղաքները, որոնց անունները մնացել են նոյն ասորական արձանագրութիւնների մէջ։ Արգասկուն[3]), Արամալի և Սուգունի[4])։ Կարծում են որ Ուրարտուն, մեծանալով ու զարգանալով Արածանիի և Արաքսի վրայ, շարժուեց դէպի հարաւ, դէպի Վանի լճի արևելեան

[1]) „Клин. над. Зак.“ с. 3.

[2]) „Древности Восточныя“, т. I, вып. III, М. с. 396.

[3]) Յ. վ. Սանտալճեանը կարծում է թէ այս անունը համապատասխանում է Արծն քաղաքին, Կարբինից հարաւ-արևելք, մինչդեռ Ֆրանսիայի գիտնականների համար այդ քաղաքը Արճէշն էր կամ նրա մօտ էր գտնւում, Վանի ծովի հիւսիսային ծայրում։

[4]) Նիկոլսկին, չը գիտենք ինչ հիման վրայ, համարում է այդ քաղաքը Նախճաւանը։

ափերը, ուր և հաստատեց իր մայրաքաղաքը Տուսպա անունով։

Սակայն այս բացատրությունները խախուտ հիմքերի վրայ են դրված։ Գլխավոր փաստը այսպէս պնդողների համար այն է, որ Ուրարտու համանիշ է Արարատ անուան, իսկ Արարատը, ինչպէս յայտնի է, Մասիսի լեռան անունն է և նրա առջև փռուած դաշտն էլ կոչւում է Արարատեան դաշտ։ Սակայն պրոֆէսոր Պատկանեանը վաղուց է ցոյց տուել թէ Արարատ անունը համեմատաբար յետին ժամանակներում է յատկացուել Արաքսի հովտի Մասիս սարին և թէ այն երկիրը, որ սեմական ցեղերը (և յատկապէս Ասորածաշունչը Ջրհեղեղի պատմութեան մէջ) անուանում էին Արարատ, գտնւում էր Վանի լճի շրջականներում և հայոց մատենագրութեան մէջ էլ յայտնի է Արարադ անունով։ Հանդուցեալ անուանի գիտնականը պնդում էր թէ սեպագրութիւնների Ուրարտուն հէնց այդ հա-

բաւային Արարատն է[1]։ Միևնոյն միտքը յայտնեց և Սէյսը[2]։ Հաստատուած է որ հարաւից հիւսիս փոխադրուել է ոչ միայն Արարատ անունը, որ երկրի անուն էր, սարի անունն էլ[3], այլ նոյն իսկ և այն հին աւանդութիւնները, որոնք կապուած են եղել այդ հարաւային տեղերի հետ[4]։

Թէ այս փաստերը և թէ պատմական մի շարք հաւաստիացումներ աւելի հաստատուն են դարձնում այն ենթադրութիւնը, որ Ուրարտուն գտնուում էր Վանի լճի շրջականերում, հաւանօրէն նրա արևելեան ափերին և տարածւում էր Վերին Զաբի ակունքների շուրջը[5], այսինքն Վանի լճից մինչև այժմեան Կոթոր։ Ուրար-

[1]) Ванскія надписи, 76, 89, 104.

[2]) A. H. Sayce—„Les Hétéens, histoire d'un empire oublie", Paris 1891 p. 50.

[3]) Г. Халатьянцъ—„Очерки исторіи Арменіи", М. 1910 с. 122.

[4]) Ս. Կանայեան—„Անյայտ գաւառներ Հին Հայաստանի", Էջմիածին 1914, եր. 72—88.

[5]) Б. Тураевъ „Исторія Древняго Востока", ч. II, Пет. 1913 с. 47.

տուի հետ սերտ կապված էր Մուզասիրը, որի գլխաւոր քաղաքը ասորական արձանագրութիւնների մէջ նոյնպէս Մուզասիր է կոչուած, մինչդեռ Վանեան արձանագրութիւնների մէջ նա անուանուած է Արդինի, հոչակուած Խալդ աստուծու հարուստ տաճարով [1]։

Հետաքրքրական է որ ասորական արձանագրութիւնների Ուրարտուն Վանեան արձանագրութիւնների մէջ Բիայնա է կոչուում (այս անունից է Վան անունը)։ Բայց այս չէ նշանակում թէ Բիայնայի բնակիչները երբէք չէին գործածում Ուրարտու անունը, իսկ ասորեստանցիներին միանգամայն անծանօթ էր Բիայնա անունը։ Սէյսը կարծում է թէ Ասորեստանի արձանագրութիւնների մէջ եղած Բիթանու անունը կարող է ներկայացնել Բիայնայի ձևը [2]), իսկ Նիկոլսկին Զախալուի Վանեան արձանագրութեան մէջ կարդացել է Ուրարտուի յիշատակութիւնը [3])։

[1]) Ibid.
[2]) „Բանասէր" 1899 եր. 377։
[3]) „Клин. надписи Закав.", с. 177.

Վանի թագաւորների արձանագրութիւններն էլ հաղորդում են մեզ աշխարհագրական անունների մի երկար շարք։ Այսպէս, Վանի «Մհերի դուռ» անուանուած ժայռի մեծ արձանագրութեան մէջ, բացի Տուսպայից, յիշատակուած են և հետևեալ քաղաքները, որոնք Բիայնայի թագաւորութեան մէջ էին գտնում. Արդինինա, Քումենունա, Արձուինիս, Երիդիաս, Ուիսինի, Իրդիյա, Նիսիադուրի, Զուինի և երկիրներ՝ Ատքանան և Բարանի [1]։ Դժբախտաբար, մինչև այժմ անկարելի է եղել որոշել այս քաղաքների և երկիրների տեղերը։ Նոյն վիճակի մէջ է ուրարտական քաղաքների այն ցանկը, որ գտնւում է Ասորեստանի աղբիւրներից մէկի, այն է Թիգլաթ-Պալասար Գ-ի (745—727 թ. Քրիստոսից առաջ) արձանագրութեան մէջ։ Ահա այդ ցանկը. Կաստիրա, Պարիսու, Տաշուխա, Մանտուուր, Շարդավրիի, Բաբուտտա,

[1] Sandalgian—„Les Jnscriptions" p. p. 189—215.

Լուսիա, Կասսիա, Միկիբաա, Ասուրդա, Ուսուրնու, Ուսուրրա, Սասսու (Սասուն?), Լուբ, Լուքի, Քուտա, Ուրրա, Արանա, Տաբա, Ուալլիա[1]։

Աւելի բախտաւոր վիճակ ունեն Բիայնա—Ուրարտուի հիւսիսային գաւառները, որովհետև այստեղ արձանագրութիւնները գտնւում են այն կողմերում, որոնք յիշատակուած են նրանց մէջ։

Մենք տեսանք, որ ասորական արձանագրութիւնների մէջ Դաիաեանի անունով էին կոչւում այժմեան Կարինի, Բասենի գաւառները. Ուրարտական արձանագրութիւնների մէջ այդ անունն է Դիահինի, ինչպէս ցոյց է տալիս Դէլի-Բաբայի սեպագրութիւնը։ Արաքսի ակունքներից մեծ ռազմական ճանապարհը մտցնում էր այժմեան Կարս-չայի ակունքների երկիրը (Վանանդ գաւառ)։ Այդ երկիրը անուանւում էր Էտիունի և նրա գլխաւոր քաղաքի անունն էր Ախու-

[1]) Սանտալճեան—«Ասոր. և Պար. Արձ.» եր. 160—161.

բեանի, շինուած Կարս-չայի վրայ. այդ անունը հայ գրականութեան մէջ պահուել է անաղարտ—Ախուրեան գետ։

Արարատեան դաշտում ծայրագոյն հարաւային երկիրը, Մասիսի հիւսիսային ստորոտում, կոչւում էր Էրիդուախի և նրա քաղաքը՝ Լուխիուինինի, որ յետոյ կուչուել է Մենուախինիլի (Տաշբուրուն)։ Արագածի հարաւային ստորոտներից մինչև Արաքս (հայոց Արագածոտն գաւառը) տարածւում էր Ազանի երկիրը, որ յետոյ ստացաւ Արգիշտինինա անունը, երբ և նրա գլխաւոր քաղաքը կոչուեց Արգիշտիհինիլի։ Սա հայկական աւանդութիւնների մէջ էլ հռչակաւոր դարձած Արմաւիրն էր, որ մի շատ կարևոր կրօնական կենտրոն էր Արաքսի հովտում և յետոյ առանձին կարևորութիւն ստացաւ և իբրև քաղաքական ու ռազմական դիրք, ուստի և դարձաւ Վանեան թագաւորների երկրորդ մայրաքաղաքը։

Նոյն Արագածի հիւսիսային ստորոտներում գտնւում էր Կուլիաինի

երկիրը, որի քաղաքն էր Դուրուբանի (Ղուլիջան)։ Իսկ այստեղից հիւսիս-արևմուտք ուղղութեամբ, Արփաչայի վերին մասերում, Իշկազուլու երկիրն էր, որի քաղաքն էր Իրդանիունի, այժմեան Ալէքսանդրոպոլի հիւսիսային կողմերում։ Ալէքսանդրապոլից հարաւ, Արփաչայի ձախ կողքին ընկած էր Էրիահի երկիրը (արևելեան Շիրակ)։

Հրազդան (Զանգու) գետի ստորին հովտում գտնւում էր Երիաինի երկիրը (Երևան), միջին հովտում՝ Ուլուանի երկիրը, որի քաղաքն էր Դարանի (Էլիատ)։ Այստեղից մինչև Սևանի լճի հիւսիս-արևմտեան ծայրը տարածւում էր Կիեհունի (Գեղաքունի) երկիրը, որի քաղաքն էր Իշտիքունի։ Նոյն լճի հարաւ-արևմտեան կողմում գտնւում էր Ուդուրիեատինի երկիրը՝ Տուլիխունի քաղաքով։ Իսկ հարաւ-արևելեան կողմում գտնւում էր Արքուքինի երկիրը, որ կազմում էր Ուրատինի երկրի մասը։ Այս անունը—Ուրատինի—հետազօտողներից մէկը[1]) համա-

[1]) Никольскій,—„Клин. над. Закав.", с. 177.

բում է Ուրարտու անուան տեղական ձև։

Սևանի լճից դէպի արևելք և հարաւ տարածւում էին երկիրների խումբեր, որոնք իրանց առանձին անուններով հետ ունէին և ընդհանուր խումբական անուններ։ Առաջին խմբի անունն էր Սուինիա, որ համապատասխանում է Սիւնիք անուան։ Ենթադրւում է որ Սուինիա, իբրև հասարակ անուն, ուրարտական լեզուի մէջ նշանակում էր պարզապէս «լիճ». նա էլ յատուկ անուն դարձաւ Սևանի լճի, ապա և այն երկիրների համար, որոնք տարածուած են դէպի արևելք և կազմում են այժմեան Գանձակի նահանգի մի մասը (Ղարաբաղ և Զանգեզուրի գաւառ)։ Սիւնիքի բաղկացուցիչ մասերից սեպաձև արձանագրութեան[1]) մէջ յիշատակուած են. Աղահունի, Ուելիդա, Կումերունի և վերոյիշեալ Արքուքինի։ Միւս խումբը անուանւում էր Ռիդուանի և բաղկա-

[1]) Ալիշանի կամ Քեօլանի—Գրլանի, Նիկոլսկու վերծանութեամբ։

ցած էր հետևեալ 19 գաւառներից. Ուբիմենի, Շանատուաինի, Տերիուիշաինի, Բիշուաինի, Զուաինի, Ակուանի, Ամանինի, Իրկիմաինի, Ելաինի, Երիելտուաինի, Աիդամանիուինի, Գուրիաինի (Գառնի?), Ալգիրանի, Պիրուաինի (Ապարան?), Մելաինի (Մուղնի?), Ուշեդուինի (Ուշական?), Առաղաինի, Երիաինի (Երևան), Ազամերուինինի։

Դիմելով այժմ աշխարհագրական ուրիշ տեսակ անուններին, մենք հանդիպում ենք լեռների հետևեալ անունները (ասորական արձանագրութիւնների մէջ). Ելամա, Ամադանա, Ելիթիշ, Շէրաբէլի, Տարհունա, Տիրկահուլի, Կիսրա, Տարհանաբէ, Ելուլա, Հաշտարաէ, Շահիթիշարա, Ուբերա, Միլիադրունի, Շուլիանգի, Նուբանաշէ, Շէշէ[1]։ Այսքանը միայն գիտենք այս լեռների մասին, որ նրանք գտնուում էին Նաիրիի երկիրների արևմտեան մասում։ Բիտ-Զամանիի և Նաիրիի սահմանների վրայ գտնուում

[1]) Շարէք, եր. 7.

էին Զիմդանուի և Միրխուի լեռները։ Յիշատակեցինք արդէն Կաշիարի լեռնաշղթան, որ համապատասխանում էր յունական աղբիւրների Մասիուս լեռներին, Նաիրիի հարաւ-արևմտեան կողմում[1]։

Գետերի անուններից արդէն յիշատակեցինք Արզանին (Արածանին) և Սուբնատ (Արևմտեան Տիգրիս Զէրէնէ-սու)։ Եփրատը ասորական լեզուով Ֆրատ էր կոչւում, իսկ Տիգրիսը— Դիկլաթ։ Մի արձանագրութեան մէջ[2]) յիշւում են Կալլաբ և Սուկուր գետերը, որոնց տեղը, սակայն, չէ ճշտուած։ Նիկոլսկին ենթադրութիւն է յայտնում թէ հին ուրարտական Երիահի աշխարհագրական անունը[3]) ոչ միայն Արաքսի հովտի մի մասի անունն էր, այլ գուցէ և հէնց իր Արաքսի անունն էլ[4])։

[1]) Ըստ Սանտալճեան վարդապետի բառարանի («Inscriptions» և այլն, եր. 395) Վանեան լեզուի «մաշիս» կամ «մասիս» բառը համապատասխանում է հայկական «սեծ» բառին։ Եթէ այս ճիշտ է, այն ժամանակ կարելի է ենթադրել որ Արարատ սարի հայկական «Մասիս» անունը ծագում ունի Վանեան այս բառից, որ պահուել է ամբողջութեամբ։

[2]) «Բանասէր» 1899 եր. 383.

[3]) Ղանլիջայի արձանագրութեան մէջ.

[4]) „Клин. над. Зак.“ с. 88.

ԳԼՈՒԽ Բ.

# ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Աշխարհագրական այս հարևանցի տեսությունը ցույց է տալիս թէ որ աստիճանի մանրութեան էին հասնում Նաիրի—Ուրարտու երկրի քաղաքական բաժանումները։ Ուղղակի անթիւ կարելի է անուանել այդ «թագաւորությունները», «իշխանությունները», որոնք խիտ ցանցի պէս ծածկում էին Հայկական Բարձրաւանդակի՝ համեմատաբար փոքր մակերևոյթը։ Մի և նոյն տեսարանը կը ներկայանայ մեզ, եթէ մի հայեացք գցենք այդ Բարձրաւանդակի շրջականները կազմող երկիրների վրայ։ Հարց է՝ ինչ տե-

սակ ժողովրդից կամ ժողովրդներից էր կազմուած այս անթիւ անկախութիւնների, կէս-անկախութիւնների ազգաբնակութիւնը։

Որոշել այս հարցը գրականապէս դեռ չէ կարողանում գիտութիւնը իր ձեռքի եղած միջոցներով, ուստի աւելի ենթադրութիւններով ու հաւանականութիւններով է առաջնորդուում քաղմադարեան այս թանձր մթութեան մէջ։ Յատկապէս Նաիրիի ազգաբնակութեան վերաբերմամբ ենթադրուում է թէ դա միատարր մի զանգուած էր, այսինքն միևնոյն ծագման տէր մի ժողովուրդ էր, բաժանուած մանր մանրիկների, ցեղերի[1]։ Բայց այս կարծիքին հարկադրուում է բոլորովին հակառակ մի միտք, այն՝ որ ազգաբնակութիւնը շատ խառն էր, որովհետև Առաջաւոր Ասիայի վրայով անցնող գաղթականութիւնները հատուածներ էին թողում հայկական լեռներում[2]։

[1]) F. Lenormant et E. Babeln—„Histoire Ancienne de l'Orient», t. IV Paris 1885 p. 246.

[2]) G. Maspero—«Histoire Ancienne des Peuples de l'Orient Classique», t. III, Paris 1897 p. 55.

Այս երկրորդ ենթադրութիւնը, այսինքն խառն ազգաբնակութեան թէորիան, աւելի հաւանական է երևում, քանի որ այնպիսի աշխարհագրական դիրք գրաւող մի երկիր, որ ոտնակոխ էր լինում դարերից ի վեր, հազիւ թէ կարողանար անխառն, միատարր ազգաբնակութիւն ունենալ։ Եթէ այսպէս է, ապա ուրեմն հարցը պէտք է ձևակերպել այն իմաստով թէ ինչ ծագում ունէր, ինչ տեսակ ժողովուրդ էր ազգաբնակութեան մեծամասնութիւնը։

Փաստ է, որ վաղ ժամանակներից ամբողջ Փոքր Ասիան, Սիրիան, Պոնտոսի (Սև ծովի) հարաւային կողմերը, Հայաստանը, Կովկասը մինչև Կասպից ծովը և Իրանի սարահարթը, ինչպէս նաև Միդիան (Մարաստանը), Կորդուքների լեռնաստանը (Քրդիստան), Ելամը (Շօշ, Պարսից Ծոցի մօտ) բնակեցրած էին մի ընդհանուր ծագում ունեցող, իրար հետ ցեղակից կամ քոյրաթիւ ազգերով։ Նրանք բազմաթիւ բաժանումներ էին ներկայացնում և

չէին պատկանում սեմական ցեղին։ Բայց ո՞րն էր նրանց հայրենիքը։

Մի ժամանակ գիտութեան մէջ տիրում էր այն թէորիան թէ բոլոր այդ ոչ-սեմական ազգերն ունէին թուրանական ծագում, ուրեմն և նրանք համարւում էին եկուորներ, գաղթականներ Միջին Ասիայից։ Հետազօտողներից ոմանք, թուրանցի անունը չը գործածելու համար, ստեղծեցին այդ բոլոր ազգերի համար մի ընդհանուր անուն, այն է՝ սպիտակ այլատոհմիկներ (blanc allophyl)։ Բայց վերջը գիտութիւնը կանգ առաւ այն տեսութեան վրայ, որ այդ բոլոր ազգերը ընիկներ էին։ Իսկ դրանց մի ընդհանուր անուն տալու համար մի քանի առաջարկութիւններ եղան։ Ֆ. Լընորմանի առաջարկութեամբ մի ժամանակ գործ էր ածւում Ալարոդեան ցեղ անունը, քանի որ Արարատի ստորոտների մօտ ապրող ժողովուրդը (ուրարտացիները) յայտնի էր Հերոդոտին «ալարոդ» անունով։ Յետոյ աւելի լաւ համարուեց վերց-

նել այդ ընդհանուր ընտանիքին պատկանող մի այլ նշանաւոր ազգի անունը և տարածել ընտանիքի միւս անդամների վրայ։ Այդ այն ազգն էր, որ Ասորեստանի արձանագրութիւնների մէջ կոչուած է Խաթթա կամ Խաթ, իսկ Եգիպտոսի արձանագրութիւնների մէջ՝ Խեթա կամ Խաթա[1]) անուններ, որոնք այժմ դարձել են հաթ, հեթիթ (Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան մէջ—Քեռացիք)[2])։ Հաթերը ապրում էին Պաղեստինի հարաւային կողմերում (Ներանք են շինել Երուսաղէմը), բայց առաւելապէս հիւսիսային Սիրիայում։ Նրանց բուն հայրենիքն էր Փոքր Ասիայի այն մասը, որ տարածուած է Ալէքսանդրէտի Ծոցի և Եփրատի մէջ[3])։ Արևելքի պատմութեան մէջ հաթերը կամ հեթիթները շատ նշանաւոր դեր են խաղացել թէ իրանց ուժեղ քաղաքական կազմակերպութեամբ և թէ

[1]) A. H. Sayce—«Les Hétéens, histoire d'un empire oublié», Paris 1891, p. 12.

[2]) Ծննդոց, ԻՀ. 34.

[3]) J. de Morgan—«Les Premières Civilisations», Paris, 1909, p. 282.




Աստվածաշնչի ժամանակ պետությունները

իրանց ինքնուրոյն քաղաքակրթութեամբ։ Գիտական հետազօտութիւնները բոլորովին ապացուցել են որ հեթիթները կազմում էին մի ճիւղը այն քոյրաթիւ ազգութիւնների, որոնք, ինչպէս վերև յիշատակեցինք, տարածուած էին Փոքր Ասիայից մինչև Կասպից ծովը, մինչև Պարսկաստան և Պարսից Ծոցը։ Այս պատճառով ազգերի այդ ամբողջ ընտանիքը կոչուեց հաթեան կամ հեթիթական ցեղ։

Ի հարկէ, այս անունը ցոյց է տալիս միայն ցեղական ծագումը, միութիւնը, բայց չէ նշանակում թէ այդ անունը կրող բոլոր ազգերը խօսում էին մի լեզուով։ Ինչպէս առհասարակ իւրաքանչիւր մեծ ցեղ, հաթեան ընտանիքին պատկանող լեզուները այնքան տարբերւում էին իրարից, որ նոյն իսկ կարող էին և անհասկանալի լինել միմեանց, ինչպէս են, օրինակ, արիական կամ սեմական լեզուները [1]։

[1]) Г. Винклеръ—„Западная Азія въ древнія времена" (S. Гельмольтъ—„Исторія Человѣчества", т. III,, Пет. 1903) с. 111.

վերջապէս, երրորդ մի անուն էլ ստացան այդ ազգութիւնները բոլորովին նոր ժամանակներում. ինչպէս վերևում տեսանք, ակադեմիկոս Մառը այդ ցեղերի լեզուին յատկացրեց «յաբեթական» անունը։

Այս երեք պայմանական անունների տէր ազգութիւնները արևմուտքից տարածուել են դէպի արևելք և հարաւ։ Պատմութիւնը պահել է և դրանցից մի քանիսի անունները. Իվերներ, Խալիբներ, Սասպիրներ, Մոսխեր, Թուբալ[1]։ Հայկական լեռնաստանի բնակիչներն էլ, Նաիրիի և Ուրարտուի ցեղերը, նոյնպէս պատկանում էին հեթիթական մեծ ընտանիքին[2]։ Այսպիսով նրանք ցեղակից են հանդիսանում կովկասեան կոչուող ազգութիւններին, որոնց ներկայացուցիչներից մէկն է այսօր քարթվէլ կամ վր-

[1]) De Moropu—„Les Prém, Civ.", p. 320.

[2]) Այս իրողութիւնն ընդունուած է գիտնականների մեծագոյն մասի կողմից, տ. Maspero—«Histoire», t. III, p. 55—56։

բացի ազգը։ Ֆրանսիացի գիտնական դը-Մորգանը գտնում է որ նախկին հեթիթական ցեղի մնացորդներն են Կովկասի գլխաւոր լեռնաշղթայի վրայ և երկու կողմերում ապրող ազգութիւնները. լեզգիները, չէչէնները և ուրիշները կազմում են հեթիթական լեզուի հիւսիսային ճիւղը, իսկ վրացական ցեղերը—հարաւային ճիւղը [1]։ Պէտք է ասել, որ բուն հաթերը թողել են քարերի վրայ փորագրուած մեհենադրոշմ արձանագրութիւններ, որոնց վերծանութիւնը մինչև այժմ չէ յաջողուել գիտնականներին [2]։

Բայց ալարոդեան, հաթեան կամ յաբեթական ծագում ունեցող այն ցեղերը, որոնք բնակւում էին Հայաստանի հողի վրայ, ինչ յատուկ ցեղային անուն ունէին։ Այս էլ մինչև այժմ մնում է պատմական մի առեղծուած։ Ասորեստանցիները այս

[1]) „Les prem. Civ.“ p. 281.

[2]) Գերմանացի գիտնական Ենսենի փորձը նոյնացնելու հաթերին հայերի հետ և կարդալու հաթեան արձանագրութիւնները հայերէնի միջոցով համարում է անյաջող։

ցեղերի մի մասին «Ուրարտու» անունն էին տալիս, յոյները՝ «ալարոդներ», որ միևնոյն բանն է համարում։ Սակայն միա բոլոր ցեղերն էլ միևնոյն անունն էին կրում։ Ցայտնի չէ։ Ուստի դարձեալ պայմանական անուններ են սահմանուել Հայաստանի հին ժողովուրդների համար։ Ամենից համապատասխան անունը, որ, սակայն, զուրկ է որոշակի արտայայտումի կարողութիւնից, նախահայ անունն է։ Վոլգեմար Բէլքը և պրոֆէսոր Էմանը առաջարկեցին անուանել նախահայերին Խալդեր։ Երկրի գլխաւոր աստուածը կոչւում էր Խալդի, որ և, թւում է, իր անունը տուել էր ամբողջ ժողովրդին. ապացոյց է համարում և այն, որ Սև ծովի հարաւային կողմերում մնացել է Խաղդիք անունով նահանգ և ժողովուրդ, մի անուն, որ պահպանել են թէ յոյն մատենագիրները և թէ հայոց գրականութիւնը [1]։ Սակայն այս առա-

[1] «Խալդեր» անունը Լ. Բաբայեանի («Ազգ. Հանդէս») Բ. գիրք 1897, եր. 300—306)։

ջարկութիւնը դուրս չը մղեց առաջին երկու անունները, այնպէս որ Հայաստանի հաթերին անխտիր անուանում են թէ «նախահայ», թէ «ուրարտացի» և թէ «խալդեր»։

Հեթիթական ցեղերի բուն հայրենիքը լինելով, ինչպէս ասացինք, Փոքր Ասիան, բնականաբար առաջանում է հետևողութիւն թէ Հայաստանի Բարձրաւանդակի վրայ և նրա հիւսիսային, արևելեան և հարաւային ուղղութեամբ գտնուող երկիրներում բնակութիւն ունեցած հեթիթական ցեղերը բնիկներ չէին այդ վայրերում, այլ գաղթել են Փոքր Ասիայից։ Տարաբախտաբար Նաիրիի բոլոր մանր պետութիւնների մասին մենք չունենք բաւարար տեղեկութիւններ։ Նրանցից մի քանի տասնեակները լոկ իրանց անուններն են թողել ասորական արձանագրութիւնների մէջ։ Համեմատաբար աւելի շատ ծանօթ է մեզ այդ ցեղերի մէկը—ուրարտացին։ Հնագիտական խուզարկութիւնները մինչև այժմ բերել են այն եզրակացութեան

թէ ուրարտացիների կուլտուրան (արուեստի ձևերը, պաշտամունքները) մօտ է Միկենեան կամ հին յունական քաղաքակրթութեան, իսկ լեզուն մօտ է միտանացիների լեզուին, այն ժողովրդի լեզուին, որ ապրում էր Փոքր Ասիայում։

Իսկ ե՞րբ պէտք է տեղի ունեցած լինի այդ գաղթականութիւնը։ Պրոֆէսոր Լէմանի կարծիքն է՝ թէ այդ գաղթականութիւնը տեղի է ունեցել ԺԱ—Թ դարերում Քրիստոսից առաջ[1])։ Եթէ ճիշտ լինի նրա ենթադրութիւնը այն մասին թէ ինչ պատճառներից առաջացաւ ուրարտացիների գաղթականութիւնը արևմուտքից արևելք, այն ժամանակ մենք հիմք կունենանք ասելու թէ միւս հաթեան ցեղերից շատերն էլ նոյն այդ գաղթականութեան հետ են առաջացել դէպի արևելք, մինչև Կասպից ծովը։ Գաղթականութիւնը կատարուեց ակամայ, անդիմադրելի ոյժի ստիպմամբ։ Այդ

[1]) C. F. Lehman. Haupt—„Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens", Berlin 1907 (S. „Բազմավէպ" 1998, եր. 443)։

ոյժը ներկայացնում էին Թրակիայից Հելլեսպոնտի և Բոսֆորի վրայով Փոքր Ասիա անցած հնդկա-եւրոպական կամ արիական ազգերը[1]), որոնք առաջ քշեցին տեղացիներին (հաթական ցեղերը) և գրաւեցին նրանց տեղերը։ Նշանակում է՝ այդ հեռաւոր ժամանակներում Առաջաւոր Ասիայի հիւսիս-արևմտեան մասերում տեղի ունէին ազգերի մեծ տեղափոխութիւններ արևմուտքից արևելք ուղղութեամբ։ Եւ եթէ ճիշտ որ այսպէս պէտք է ձևակերպել այդ հեռաւոր իրողութիւնը, ապա ուրեմն ուրարտացիները մենաւոր գաղթականներ չէին, այլ շարժւում էին արիունակից միւս ցեղերի հետ, որոնցով նոր հայրենիք։ Նրանք կանգ առան Վանի լճի աւազանում, մինչդեռ միւսները գնացին աւելի հեռուն, Կովկասի գլխաւոր շղթային սեղմուեցին, նրա վրայ բարձրացան, մտան Կուր գետի ստորին հովիտը[2])։

[1]) Այդ ազգերի մէջ էին և արմէնները (հայերը)։

[2]) J. de Morgan—„Mission Scientifique au Caucase, t. II—Recherches sur les origine du Caucase, Paris 1889 p. 106, 122.

Այս գաղթականութիւնների տարածման սահմանները մօտաւորապէս որոշելն անգամ դժուար է, քանի որ նրանցից չեն մնացել յիշատակարաններ հողի վրայ, իսկ հողի մէջ պահուածների որոնումներ շատ քիչ են եղել։ Արդէն մի քանի լուրջ աշխատանքներ ցոյց են տուել իրողութեան ազատ նշոյլները։ Այժմեան Գանձակի նահանգի մի քանի տեղերում, որոնք համապատասխանում են Հին Ուտի և Արցախ նահանգներին, հնագիտական պեղումները բաց են արել հին քարէ գերեզմաններ, որոնք ըստ վկայութեան Վ. Բելքի պատկանում են Վանի թագաւորների ժամանակին[1]։ Հնագէտ Իվանովսկին վկայում է, որ Մասիսի ստորոտում, ուրարտական մի բերդի պեղումների ժամանակ գտնուած կաւէ ամանները ճիշտ նոյն տեսակի են, ինչ նա գտել է Գանձակի նահանգի քարէ գերեզմաններում[2]։ Նոյն-

[1]) Никольскій—„Клин. над.“ с. 74.

[2]) А. Ивановскій—„По Закавказью“ („Матеріалы по археологіи Кавказа“ М. 1911 с. 44—45.

պէս և գերմանացի գիտնական Վիրխովը գտնում է, որ Գանձակի նահանգի գերեզմաններում գտնուած արուեստը որոշ չափով նման է Թոփրաք-կալէի (Վանի մօտ) ուրարտական աւերակների մէջ գտնուած արուեստին[1]։ Եւ այս նշանները, անշուշտ պէտք է մի ցուցմունք համարուեն թէ նոյն ցեղի հատուածներն էին ապրում Փոքր Կովկասի լեռներում։

[1]) „Ազգագրական Հանդէս" 1895, Հ. I, եր. 112։

ԳԼՈՒԽ Գ.

## ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՆ

Շնորհիւ այն հանգամանքի, որ Նախիջեւանի երկիրները յաճախ ենթարկուում էին ասորական արշաւանքներին, որ ասորական զինուորները պարծենում էին թէ նուաճած երկրից այս ու այն տեսակ աւար ու կողոպուտ են վերցրել, որ, վերջապէս, նախիջեւանցիները մշտական որոշուած հարկ էին տալիս Նինուէի տէրերին, մենք կարող ենք ընդհանուր մի գաղափար կազմել նախահայ ազգաբնակութեան կուլտուրայի և տնտեսական կացութեան մասին։ Ուրիշ տեղեկութիւններ դեռ չունինք։

Արդ՝ Ասորեստանի պատերազմական տարեգրությունների հայթայթած նիւթերը պարզ ցոյց են տալիս, որ Հայկական Բարձրաւանդակի ազգաբնակությունը Քրիստոսից 9—10 դար առաջ, այժմեանի պէս, գերազանցօրէն հողագործ և անասնաբոյծ ժողովուրդ էր։ Մենք հէնց նոր տեսանք որ Բիւ-Զամանի երկրի Տուշհա կարևոր բերդում կառուցուած էին պեսական մեծամեծ շտեմարաններ, ուր հաւաքւում էր Նաիրիից ստացուած պետական հարկը արմտիքներով։ Ասուրնազիրապալ թագաւորը (Թ. դար Ք. ա) իր յաղթանակները ցուցադրող խոշոր յաշողությունների թւում ասում է. «Նաիրիի հուձքը հնձեցի և իմ երկրիս օգտին համար զանոնք Տուսիայի, Դամդամուսայի, Աինաբուի ու Տիգուի մէջ համբարեցի» [1]։ Այս յայտարարության յոխորտալից եղանակը, ինչպէս նաև ամբարելու տեղերի ցուցմունքը ցոյց են տալիս թէ որ-

[1] Ռանտալենան—„Աս. և Ֆարս. սեպ. Արձ.“, եր. 124.

քան մեծ էր հունձի աւարը։ Հայկական սարահարթի արգաւանդ հովիտները արմտիքների այսպիսի մեծ պաշարներ միշտ կարող էին տալ նուաճողներին։ Բնորոշ յատկութիւն է, որ տուրքերի և աւարի մէջ յիշատակւում է և յարգը, մի բան, որ անշուշտ շատ կարևոր էր ասորական ձիաւոր զօրքերի և առհասարակ բեռնակիր անասունների համար։

Այգեգործութեան ճիւղերից զարգացած էր գինեգործութիւնը, ի հարկէ երկրի այն խոր հովիտներում, ուր խաղող էր հասնում։ Նաիրիի գինին այնքան յարգի էր, որ նոյն իսկ նրանով էլ հարկ էր վճարւում Ասորեստանի թագաւորներին։

Անասունների մեծաքանակ աւարներ էլ էր տալիս Նաիրիի լեռնաստանը։ Ինչպէս և այժմ, այդ լեռների գեղեցիկ արօտներում արածում էին բիւրաւոր չորքոտանիներ։ Եւ անա աւարառութիւնների ցուցակները լիքն են արջառների, կովերի, ոչխարների մեծ քանակութիւններով։ Սարգոն

թագաւորը 100,225 ոչխար քշեց տարաւ Մուսասիից[1]։ Արջառ, ձի եզ, էշ, ջորի հարիւրներով ու հազարներով են յիշւում։ Նաիրիի երկիրները հարկ տալիս էին 1200 ձի, 2000 եզ[2]։ Թէ այս ցուցակը և թէ ուրիշ այսպիսիները վկայում են թէ մանաւորապէս ձիաբուծութիւնը զարգացած էր Հայաստանում դեռ նախահայկական շրջանի մէջ և ձիերի հայկական ցեղի ազնուութիւնը, ուրեմն, յատուկ էր այս երկրին շատ հին ժամանակներից։

Սակայն երկրի հարստութիւնը միմիայն երկրագործական բերքերը և անասնապահութիւնը չէին։ Ինչպէս երևում է, շատ առաջացած էին և արհեստները, բայց մանաւանդ մետաղագործութիւնը։ Հարկերի ցուցակներում մենք տեսնում ենք ոչ միայն մետաղներ — անագապղինձ (բրոնզ), պղինձ, անագ, այլ մանաւանդ պղնձէ ամաններ — կաթսաներ, կոնքեր,

[1]) Շարէք, եր. 89.
[2]) Սանտալճեան, եր. 101.

պնակներ։ Թէ որքան կարևոր նշանակութիւն ունէին ասորեստանցիների համար Հայաստանի պղնձէ ամանները, ցոյց է տալիս այն, որ համարեա իւրաքանչիւր թագաւոր յիշատակում է այդպիսի ամանները աւարի կամ հարկերի թւում։ Բազմայաղթ Ասսուրնազիրապալը իր երկար արձանագրութիւնների մէջ բազմաթիւ անգամ յիշատակում է պղնձէ ամանները։ «Ջորիներու, արջառի, ոչխարներու, գինւոյ, պղնձի անօթներու հարկն ու տուրքը առաջուընէ աւելի բարձրացուցի», ասում է այդ յաղթողը։ Աւար առնուող պղնձի իրերից մէկը ցոյց է տալիս և այն, որ ձուլագործութիւնը նոյնպէս լաւ զարգացած էր նախահայերի մէջ։ Այդ առարկան «պղնձէ ցուլն» է, որ յիշւում է յաճախ։ Երևի այստեղ մենք գործ ունինք կրօնական պաշտամունքի մի առարկայի հետ, որ նախահայկական տաճարների մի պատկանելիքն էր կազմում։ Ազնիւ մետաղներն էլ—ոսկի, արծաթ—բաւական կային Նաիրիի եր-

Գաղամաքերտ

կիրներում։ Եւ եթէ նրանք նոյն այդ երկիրների հանքերից չէին ստացում, ապա ուրեմն ներմուծում էին ուրիշ երկիրներից առևտրի միջոցով։ Ահա Նաիրիի թագաւորներից կամ իշխաններից մէկի հարստութեան հետաքրքրական մի ցուցակը, որ պահուել է ասորական արձանագրութիւնների մէջ. «Սպառազինեալ կառքերը, զօրականաց կազմածը, երիվարները, 460 երիվար, կառուց ձիոց հարկերը, 2 տաղանդ արծաթ [1]), 2 տաղանդ ոսկի [2]), 200 տաղանդ անագ, 100 տաղանդ պղինձ, 300 տաղանդ երկաթ, 100 հատ պըղնձէ անօթներ, 3000 պղնձի սկաւառակ, 1000 հատ գոյնագոյն հիւսուած կտաւեայ զգեստներ, բաժակներ, նեցուկներ, փղոսկրէ և ոսկիէ աթոռներ, ...2000 զուարակ, 500 ոչխար, ասնոր (իշխողի) կինը՝ իր հարուստ օժտիւն, զդստերս աւագորերոյ նորա իրենց հարուստ օժիտներովն [3])։

Այս պատկերը, յամենայն դէպս,

[1]) 17187 ֆրանկ այժմեան դրամով։
[2]) 275000 ֆրանկ։
[3]) Սանտալճեան, եր. 122—123։

ապացոյց է որ գէթ տիրապետող տարրերը Նաիրիի երկիրներում զբաղուած չէին այն ժամանակուայ քաղաքակիրթ կեանքի մեծագոյն յարմարութիւններից, նոյն իսկ շքեղութիւնից։ Եթէ սրա վրայ աւելացնենք այն, որ երկիրն ունէր նշանաւոր քանակութեամբ քաղաքային ազգաբնակութիւն, այն ժամանակ պարզուած կը լինի որ Նաիրիի բարձրաւանդակում տնտեսական և կուլտուրական կեանքը շատ առաջացած էր։ Խօսելով քաղաքների մասին, մենք պիտի կրկնենք մեր՝ արդէն մի անգամ ասածը, այսինքն քաղաքների անհաւատալի մեծ քանակութիւնը։ Ասորեստանցի թագաւորները հաւատացնում են թէ իրանց այս կամ այն արշաւանքի ժամանակ քանդած և աւերած քաղաքների թիւը տասնեակներով էր, նոյն իսկ հասնում էր 100-ի, 200-ի և էլ աւել։ Եթէ այս թուերը միտումաւոր չափազանցութիւններ չեն, պէտք է ընդունենք ուրեմն որ քաղաք անունով հասկացւում էին և այն բեր-

դերը, ուր ապրում էին սովորական մի գիւղի բնակչութիւնից մեծ թուով մարդիկ։ Այս էլ, ի հարկէ, բաւական է՝ ցոյց տալու համար որ Նաիրիի երկիրների ազգաբնակութիւնը խիտ էր, խոշոր թուով համախմբուած լեռնային և դաշտային մասերում։

Նախահայկական քաղաքակրթութեան ամենաբարձր և առանձնայատուկ զարգացումը ներկայացրել են ուրարտացիները։ Այս քաղաքակրթութիւնը, սակայն, ուրարտական պատմութեան է վերաբերում և մենք նրա մասին կը խօսենք շուտով, երբ կը հասնենք այդ ընդունակ Նաիրեան ցեղի պատմութեան։

## ԳԼՈՒԽ Դ.

# ԿՐՕՆ

Կրօնական պաշտամունքներ մշակելու մէջ, ինչպէս երևում է, աշխատակցութիւն ունեցել են նախիրեան բոլոր ցեղերը։ Այդ պաշտամունքների մէջ երևան եկող աստուածների թիւը շատ մեծ էր։ Վանի Մհերի դուռ անունով ժայռի մեծ արձանագրութիւնը, որ պարունակում է իր մէջ կանոններ թէ որ աստուծուն ինչ զոհեր պէտք է բերել, տալիս է քառասուն և վեց աստուածների անուններ։ Եւ եթէ ենթադրենք թէ նախահայրերի պանթէոնը ամբողջովին յիշատակուած է այս արձանագրութեան մէջ, աս-

աստվածների այդ մեծ թիվը չը պիտի մեզ զարմացնէ, քանի որ այստեղ էր, ինչպէս և միւս տեղեր հին աշխարհում, ընդհանուր համազգային պանթէոնը ամփոփում էր իր մէջ տեղական աստուածութիւնները։ Երկիրը քաղաքականապէս ներկայացնում էր առանձին անկախութիւնների մի դաշնակցութիւն։ Այդպէս էր նա և կրօնական տեսակէտով. դաշնակցութեան մէջ էին ոչ միայն զանազան երկիրներ, այլ և նրանց աստուածները։

Հին աշխարհում իւրաքանչիւր առանձին քաղաքական կազմակերպութեան ամենաբարձր արտայայտութիւնը, մարմնացումը տեղային աստուածն էր։ Եւ երբ այդ առանձին կազմակերպութիւնները դաշնակցութեան մէջ էին մտնում մի ընդհանրութիւն կազմելու համար, պէտք էր, ի հարկէ, որ այդ դաշնակցութիւնն էլ մարմնաւորուի բոլոր տեղական աստուածների համախմբմամբ մի ընդհանուր պանթէոնի մէջ։ Այս հանրակեցութեան մէջ աստուածներն էլ ճիշտ այն տեղն

էին գրաւում, ինչ գրաւում էր նրանց ներկայացրած երկիրը կամ քաղաքը, նայած իր ոյժին և նշանակութեան։ Գլխաւոր աստուածը այն երկրի աստուածն էր, որ դաշնակցութեան գլուխ էր կանգնում։

Նախահայկական պանթէոնի մէջ գլուխ կանգնած էր մի երրորդութիւն, որի մէջ առաջին անձն էր Խալդ աստուածը։ Դա, ինչպէս կարծում են, երկնքի աստուածն էր, համայն ազգի, այսինքն բոլոր նաիրեան ցեղերի հովանաւորը, որ և տալիս էր իր անունը ամբողջ ազգին (խալդեր, խալդիացիներ)։ Նրա հետ էին՝ Տէիսբաս, ինչպէս կարծւում է, օդի աստուած և Արգինիս—արեգակ աստուած։ Այնուհետև նախահայկական պանթէոնի մէջ պաշտուող աստուածներն էին. Խուտուինի, Ուաս, Նալաինի, Սեբիտու, Անապա, Դիդուաինի, Սիէլարդիս[1]), Ատբինի, Քուեբա, Ելիպրի, Քալբաեանի, Ադարուտա, Իրմուսինի, Երինաս, Սինիբիս, Ունինա, Զուզումա-

[1]) Ըստ Մասպերոյի՝ Լուսին (Hist., t. III p. 60).

ատ, Խարա, Աբազաս, Զիկիդքունի, Ուբա, Արձիբեղիս, Առնիս, Արտուարաիրու, Սուբաս, Ելիաու, Ուաինա, Հարուբաինի, Բաբաս, Աուիս[1]), Աիաս[2]), Շարդի, Իպխարի, Արա, Ադիա, Աինա, Արդի, Ինուանա։ Բացի այս բոլորից, առանց յատուկ անուններին, յիշատակուած են «լեռների ասուած», «ցորենի տեղերը կողոպտող ասուած», «ուռնածից (կռան խփողների) ասուած», «տառապելոց ասուած», «փոնների ասուած», «ձիւնաբեր ասուած», «անձրևաբեր ասուած»[3])։

Ըստ երևոյթին, միայն մի հատ ասուածուհի կար այդքան ասուածների մէջ և կոչւում էր Շարիս թագուհի[4])։ Այս դիցուհին Բաբելոնի Նանա, Ասորեստանի Իսատար ասուածուհին էր։

Գլխաւոր ասուածը՝ Խալդին պաշտւում էր իբրև մաքրութեան ասուած և արձանագրութիւնների մէջ

[1]) Զրի ասուած (Անդ)։
[2]) Հողի ասուած (Անդ)։
[3]) Sandalgian p. p.—188—215.
[4]) Ibid. p. 220.

նրա անուան հետ անբաժան է «մաքրութիւն տուողի» յորջորջումը։

Միաժամանակ նա երկրի ոյժի, քաջութեան ներկայացուցիչն էր և հովանաւորում էր ձիաւորներին, պատերազմներին։

Մեզ յայտնի են խալդիական կրօնի միայն ծիսական մի քանի արարողութիւններ և գլխաւորապէս՝ զոհաբերութիւնները իւրաքանչիւր աստուծու համար սահմանուած էր զոհերի որոշ քանակութիւն։ Այսպէս, մենակ Խալդի աստծուն զոհ պէտք էր բերել 17 եզ և 34 ոչխար, իսկ այն երրորդութեան, որի մի անդամն էր նա—6 գառն[1])։ Զոհի կենդանիների մէջ յաճախ յիշատակւում է և վայրի եզ։ Աստուածներին նուիրաբերել կարելի էր և իւղ, գինի, միս, խոզ։ Թւում է որ խալդիական պաշտամունքին խորթ չէր և մարդկանց զոհաբերութիւնը[2])։

---

[1]) Ibid. p. 188—190.

[2]) Թոփրաք-կալէի պեղումների ժամանակ բացուած է տաճարի կողքին մի տեղ, ուր հողի տակ թաղուած էին մարդկանց և անասունների ոսկորներ։

Այս բազմաթիւ զոհաբերութիւնները արդէն ցոյց են տալիս մի շատ զարգացած և բարդ կրօնական սիստեմ։ Իսկ այս հանգամանքը մի վկայութիւն է, որ Մալդեան պաշտամունքին նուիրուած ժողովուրդը, ինչպէս և այն ժամանակների բոլոր ժողովուրդները, անուցանում էր իր մէջ քրմական մի մեծ դասակարգ, որ այս երկրում էլ, հարկաւ, կատարում էր կարևոր դեր։ Մոների Դուռ ժայռի արձանագրութիւնը, որ մանրամասն նկարագրում է թէ քանի զոհեր պէտք է մատուցանել իւրաքանչիւր աստուծուն, պատկանում է Վանի Իսպուինիս թագաւորին և նրա որդի Մինուասին։ Սա մի ցուցմունք է, որ թագաւորը այս երկրում միացնում էր քաղաքական իշխանութեան հետ և քրմապետի բարձր պաշտօնը։ Երկիրը, ուրեմն, կառավարւում էր աստուածապետական ռէժիմով։ Այսպէս էր կա-

Կարծւում է թէ այդտեղ էին թափւում զոհերի ոսկորները։ Տ. Լեմանի վերոյիշեալ «Materialien» և «Բազմավէպ» 1908 եր. 487։

ռավարութիւնը և ուրիշ երկիրներում։

Մայրական պանթէոնի աստուածները ունէին տաճարներ, ուր գտնուում էին նրանց պատկերները կամ արձանները։ Հաւանական է համարում որ նախահայերը իրանց աստուածներին ներկայացնում էին ոչ թէ մարդկային կերպարանքով, այլ մարդու մարմնի վրայ զանազան անասունների և գլխաւորապէս շան և կատուի գլուխ դնելով [1]։ Այդ տաճարներից մէկն ու մէկը կանգուն չէ մնացել մինչև այսօր, բայց Ասորեստանի բարձրաքանդակ նկարների մէջ մնացել է ասորական զինուորների ձեռքով կողոպտուող Նաիրեան մի տաճարի պատկերը։

Սա քառակուսի յատակի վրայ բարձրացած մի շինութիւն է, որի ծածքը վերջանում է բրգաձև նոճու նմանութիւն ունեցող մի սիւնով։ Ճակատը զարդարուած է չորս քառակուսի սիւներով, որոնց մէջ տեղը գտնուում է

[1]) Հ. Ն. Ա.—«Մհերի Դուռն—Տոսպեանց Կրօնը» («Հանդէս Ամս.» 1896, եր. 242)։



Դպիրքի (Մատաքարի) տաճար

մի փոքրիկ դուռ։ Սիւների վրայ կախուած են ուխտական (ընծայ մատուցուած) կոլոր ուռուցիկ վահաններ։ Դռների երկու կողմին բարձրանում են կայմեր, որոնց վերին ծայրերը նման են բրգաձև նոճիների։ Դրան ձախ կողմը նկարուած է մի կով, որ կաթ է տալիս իր հորթին. սա կրօնական նշանաբան էր Առաջաւոր Ասիայում։ Դրան առջև, եզան ոտների ձև ունեցող եռոտանիների վրայ, դրուած են երկու կոլոր աւազաններ, որոնց մէջ պահւում էր քաւութեան ջուրը[1])։ Տաճարի անօթները, որ կողոպտել են ասորական զինուորները, ներկայացնում են անուշահոտութիւնների բագինները կամ ծխարանները։

Սակայն այս պատկերը չէ կարող բաւարար համարուել նախնական Հայաստանի կրօնական ամբողջ եռանդը չափել—հասկանալու համար։ Երկիրը գիտէր և հոյակապ տաճարներով պա-

[1]) Lenormant—«Lettres Assyriologiques» p. 131.

Տաճարի անօրներ

տուել իր աստուածներին։ Թութրաք-Կալէի աւերակներում պեղուած է մի խալդեան տաճարի հիմքը, որ պրոֆէսոր Լէմանն անուանում է «շքեղ»[1]։ Այսպիսի կերտուածների հեղինակները թագաւորներն էին, որոնց ծախքով շարունակ զոհեր էին մատուցւում աստուածներին։ Կառուցանել տաճար, հասարակաշահ մի շինութիւն, նոյն իսկ մի պալատ համարւում էր աս-

[1]) «Հանդէս Ամս.» 1900, եր 246.

աստուածահաճոյ գործ և այդպիսի գործերը յայտարարուում էին կատարուած ի պատիւ խալդեան աստուածների։ Նոյն աստուածներն էլ պիտի պահպանէին այդ շինութիւնները. ուստի, ինչպէս և Քաղդէայում կամ ուրիշ տեղերում, անէծքներ էին փորագրուում շինութիւնների վրայ՝ շարագործ մարդկանց նրանցից հեռու պահելու համար։ Ահա մի նմուշ ուրարտական անէծքի. «Սարիդուրիս ասէ. որ ոք զշինուածն քանդէ, որ ոք զայս արձանագրութեան վէմ բառնայ, որ ոք հողով զայս տեղի ծածկէ, իւր սեպհականէ զողջոյն զքանդակն, որ ոք որիշ իւր սեպհականէ զոր ես շինեցի, քանդակաց պաշտպանք Մալդիս, Տէիսբաս և Արգինիս աստուածքն զնա հարուածեսցեն 4—4 անգամ առ օրին, զանուն նորա, զհայր և զորդեակս նորա, զբաղաքակիցս նորա զեռոց ջրովք ողողեսցեն»[1]։

---

[1]) Sandalgian, p. 235.

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ՆԱԽԱՎԱՆԵԱՆ ՇՐՋԱՆ

ԳԼՈՒԽ Ե.

## ՆԱԻՐԻ ԵՒ ՄԻՋԱԳԵՏՔ

Նաիրիի բարձրաւանդակի բազմաթիւ մանր իշխանութիւնները, ինչպէս տեսանք արտաքին մի քանի երևոյթներից, տեղական անկախութիւնների սիստեմն էին ներկայացնում, անկախութիւններ, որոնք, սակայն, ընդհանուր վտանգի դիմաց գիտէին միանալ, կազմել դաշնակցութիւններ։ Թէ ինչ փոխադարձ յարաբերութիւններ գոյութիւն ունէին այս մանր թագաւորութիւնների և իշխանութիւնների մէջ,—մենք համարեա ոչինչ չը գիտենք։ Չը գիտենք նոյնպէս թէ ինչ յարաբերութիւններ ունէր Նաիրին

այն ազգերի հետ, որոնք շրջապատում էին նրան արևմուտքից, հիւսիսից և արևելքից, որովհետև այդ կողմերը, ինչպէս և ինքը Նաիրին, թաղուած էին անգիր դրութեան խաւամէջ։

Միայն գերազանցօրէն քաղաքակրթուած հարաւն է պահել իր յիշատակարանների մէջ այնպիսի նիւթեր, որոնք բաւականաչափ լոյս են սփռում Տիգրիս-Եփրատեան հովտի և նրա հիւսիսում բարձրացած լեռնաշխարհի մէջ գոյութիւն ունեցած յարաբերութիւնների վրայ։

Մի քանի աղօտ տեղեկութիւններ ցոյց են տալիս, որ Քրիստոսից դեռ մօտ 3000 տարի առաջ Հայկական Սարահարթը ենթարկուած էր Քաղդէայի հզօր ազդեցութեան։ Բայց այս ազդեցութիւնը պէտք է որ բացառապէս խաղաղ-քաղաքակրթական լինէր, քանի որ այդ հին ժամանակներում Միջագետքի հարաւային ծայրն էր քաղաքական և քաղաքակրթական մեծ կենտրոնը, որ և այնքան հեռու էր

Հայաստանի լեռներից, որ հազիւ թէ քաղաքական շահերի խիստ ընդհարումների և բաղխումների հող մնար այդ երկու երկիրների մէջ։ Լեռնաստանի բնակիչները կարող էին Քաղդէայի քաղաքակրթութեան բարիքները վայելել, առանց թշնամական դիրք բռնելու կամ թշնամական գործողութիւնների առարկայ դառնալու։

Դրութիւնը փոխւում է այն ժամանակից, երբ հիւսիսային Միջագետքում, հայկական լեռների ստորոտներում, սկսում է կազմակերպուել ասորական ինքնակալութիւնը։ Քրիստոսից մօտ 1500 տարի առաջ էր, որ համաշխարհային պատմութեան ասպարէզում երևան եկաւ այդ գինուորական բռնապետութիւնը։ Համարեա նոյն այդ ժամանակներից էլ կարևոր քաղաքական յարաբերութիւններ են սկսւում Ասորեստանի և Նաիրիի մէջ։ Այս յարաբերութիւնների թելադրողն այն աշխարհագրական դիրքն էր, որ գրաւում էին այդ երկու հարևանները։ Ասորեստանը հիմնաւորւում և մե-

ծանում էր Միջագետքի դաշտերում, որոնց հիւսիսային սահմանների վրայ, միջնաբերդի պէս, բարձրացած էր Նաիրին։

Այդ տեղից էին գալիս Միջագետքի երկու մեծ գետերը, ճեղքելով լեռնաշղթաները և յարմար ճանապարհներ բաց անելով դէպի դաշտը։ Այդ ճանապարհներով ցուրտ ու աղքատ լեռների վաչկատուն ցեղերը իջնում էին Ասորեստանի հարուստ և բարեբեր տափարակները՝ կողոպուտով ձեռք բերելու համար այն ամենը, ինչ այնքան առատ էր դաշտային քաղաքակրթութեան մէջ և ինչ զլանում էր տալ լեռնային բնութիւնը։ Ահագին դժուարութիւններով էր կարող դաշտը պաշտպանուել լերան դէմ, որ մշտական վտանգ է սպառնում բաց ու դիւրամատչելի երկրին։ Եւ հասկանալի է որ Ասորեստանը չէր կարող արհամարհել իր թիկունքի ետեւում բարձրացած մեծ միջնաբերդը։

Իր քաղաքակրթութիւնը փոխ առնելով Քաղդէայից, Ասորեստանը ամե-

նից առաջ նրա դէմ դարձրեց իր զէնքը, որպէսզի նրա քաղաքական ժառանգն էլ հանդիսանայ։ Ապա նա պիտի հաշիւ տեսնէր Եփրատից դէպի արևմուտք գտնուող երկրների հետ։ Այդտեղ էին Սիրիայի արամէական և Փոքր Ասիայի հեթիթական ցեղերը, որոնք պատկառելի ոյժ էին ներկայացնում։ Եւ արիւնահեղ պայքարը հարաւի ու արևմուտքի հետ փոփոխակի յաջողութեամբ տևում էր դարեր։

Այսպիսի հանգամանքների մէջ ասորական պետութիւնը չէր կարող անուշադրութեան մատնել Նաիրիի լեռնաստանը, որ ամբողջապէս պատկանում էր դարձեալ հեթիթական ցեղերին։ Պատերազմ մղելով այդ ցեղերի դէմ արևմուտքում, անկարելի էր հանդիստ թողնել նրանց ցեղակիցներին հիւսիսային լեռնաստանում։ Միջագետքի տէր կարող էր դառնալ նա, ով ուժեղ կերպով հաստատուած էր Հայաստանի Բարձրաւանդակում։ Եւ ահա այստեղից առաջանում էր պետական առաջնակարգ անհրաժեշտու-

թիւնը անվնաս դարձնել այդ բարձրաւանդակը, այն է՝ նուաճել նրան, հպատակեցնել կայսրութեան։ Եւ այս մեծ անհրաժեշտութիւնն է պատճառ որ Ասորեստանը, գրեթէ որքան ժամանակ որ գոյութիւն ունէր, նկատում էր Նաիրին որպէս մի երկիր, որ պէտք էր հարուածել՝ հնազանդութեան մէջ պահելու համար, իսկ Նաիրին էլ մշտապէս այն ընթացքն ունէր իր հարաւային ահեղ հարևանի վերաբերմամբ որ պէտք է կռուել նրա դէմ ամեն յարմար միջոցում։ Այս դարաւոր պայքարը մի երևոյթն էր այն ահաւոր մրցութեան, որ տեղի ունէր երկու մեծ աշխարհների, այն է՝ սեմական և հեթիթական ցեղերի մէջ [1])։ Հայաստանը հեթիթական աշխարհի գրաւած ռազմական դիրքերի ձախ թևն էր կազմում։

Ասորեստանի թագաւորներից Սալմանասար Ա. է (Ք. ա. մօտ 1330—1316), որ առաջին անգամ յիշատակում է իր արձանագրութեան մէջ թէ

[1]) Винклеръ, с. 125.

տիրեց Նիրիի (Նաիրիի) երկիրներին[1]։ Արշաւանքը Ասորեստանից Տիգրիսի գետահովտով ուղևորուեց այժմեան Դիարբէքիրի դաշտը և այնտեղից դէպի հիւսիս, ուր Սուբնատ գետի (այժմ Զեբենէ-սու) նեղ անցքում փորագրեց իր արձանը իբրև նշան իր յաջողութիւնների և իբրև ուղեցոյց յետագայ արշաւող բանակների։ Այս նեղ անցքը, որ փորել է գետը ժայռերի մէջ, մի դուռն էր, որ մտցնում էր Նաիրիի երկիրները[2]) արևմտեան կողմից։ Անցնելով այդ դռները, Սալմանասարը իր դէմն ունէր Նաիրիի իշխողներին, որոնց և յաղթեց։

Այսպէս է ասորական առաջին արձանագրութիւնը Հայաստանի մասին։ Բայց նախ մենք պէտք է պարզենք մեզ համար թէ ասորական աղբիւրները առհասարակ ինչ պատմական արժէք են ներկայացնում մի երկրի վերաբերմամբ, որ պատերազմող կողմ է եղել, թշնամի, ըմբոստ։

---

[1]) Մանտալճեան—«Ասոր. և Պարս. Արձ.» եր. 84.

[2]) Hyvernat, p. 501.



Նոր. Երաճաղրոսիից Սուրբաս գեղի կիրճում

Պէտք է իմանալ որ շատ յաճախ ասորական արձանագրութիւնների վեր հանած իրողութիւնները չեն համապատասխանում այն ճշմարտութեան, որ հէնց նոյն այդ գրութիւնների տողամէջերից կարելի է հանել։ Իւրաքանչիւր արշաւանք, ըստ այդ արձանագրութիւնների, վերջանում է ասորական զէնքի կատարեալ յաղթանակով և թշնամու կատարեալ ոչնչացմամբ, մինչդեռ իրապէս այդ յաջողութիւնները այսքան վճռական չեն և այնպէս չեն փոխում իրողութիւնը, ինչպէս ներկայացւում է Միջագետքի գոռոզ տէրերի պատմութեան մէջ։ Եւ այս հասկանալի կը լինի, եթէ մենք աչքի առաջ բերենք թէ ինչ էր ասորական թագաւորը, առաջին մարդը այս աշխարհում աստուածներից յետոյ, անսահման տէրն ու հրամայողը։ Այսպիսի մի մեծութիւն, ինչպիսին էր ոյժի այդ ահեղ ներկայացուցիչը, ի հարկէ, չէր զիջի ասելու իր հպատակներին թէ ինքը անյաջողութեան է հանդիպել այս ինչ պատերազմի մէջ

կամ գէթ շատ չնչին յաջողութիւն է ձեռք բերել։ Իր ուժով, իր դաժանութիւններով յոխորտալը ասորական թագաւորների փառքն ու պարծանքն էր, ուստի և իւրաքանչիւր յաջողութիւն ներկայացւում էր չափազանցրած, անզուսպ պարծենկոտ ձևով։ Ահա այս պատճառով էլ չը պէտք է բառացի մտքով հասկանալ Սալմանասարի յայտարարութիւնը թէ ինքը տիրել է Նաիրիի երկիրներին։ Այդ տիրապետութիւնը, յամենայն դէպս, այնպէս չէր եղել, որ Ասորեստանը իրան ապահովուած համարէր հիւսիսային լեռների կողմից։ Ապացոյց՝ նոյն Սալմանասարը ստիպուած էր, ինչպէս պատմում է յետագայ ժամանակների (Թ դար Ք. ա.) մի արձանագրութիւն, ասորական, գաղթականութիւններ հիմնել հիւսիսային սահմանների վրայ «Նաիրիի դէմ»[1]։

Այս հանգամանքը պարզում է ասորա-նաիրեան յարաբերութիւնների մի կարևոր և բնորոշ կողմը։ Միջա-

[1] Անդ. եր. 86.

գետքի համար հիւսիսից պաշտպանուելու լաւագոյն միջոցն էր զինուորական գաղթականութիւններով ու ամրոցներով գոտեւորուելը։ Այս ռազմական սիստեմին դիմողը միմիայն Սալմանասար Ա. չէր, այլ և նրանից յետոյ նոյն միջոցները գոյութիւն ունէին դարերի ընթացքում։ Այսպիսի սիստեմի դիմելու կարիք չէր լինի, եթէ Ասորեստանի թագաւորներին յաջողուէր միանգամայն ընկճել և ընդ միշտ հպատակական երկիւղի մէջ պահել Նաիրիի բնակիչներին։ Հիւսիսային վտանգը Տիգրիս-Եփրատեան հովտի աշխարհակալ կայսրութեան համար շատ զգալի էր հէնց այն պատճառով, որ Նաիրիի լեռներում ապրող ժողովուրդները, ճիշտ է, մանր մասերի էին բաժանուած, բայց անկախութեան ոգին նրանց մէջ չէր պակասում և ասորական քաղաքակրթութեան շատ ուժեղ ազդեցութիւնը այդ երկիրներում ապազգայնացում չէր առաջացնում։

Այդ ազգային անշէջ ինքնազգա-

ցումը, այդ անկախութեան ոգին ընդ-
վզումներ էր հանդէս հանում ամեն
յարմար առիթով, որ ներկայացնում
էր հարաւային ասիական բռնակալու-
թիւնը։

Երբ Ասորեստանը անկարող թա-
գաւորների շնորհիւ մատնւում էր
թուլութեան, Նաիրին, ինչպէս մէկը
այն բազմաթիւ երկիրներից, որոնք
ենթարկուած էին ասորական լուծին,
համարեա միշտ ջանք էր անում ա-
զատուելու այդ լուծից և ամեն ան-
գամ Ասորեստանի բանակները բար-
ձրանում էին անհնազանդ լեռները՝
նրանց նուաճելու համար։

Ասորական բանակները քանդել,
ոչնչացնել և անզուսպ գազանութիւն-
ներով սարսափ ու ահաբեկում տա-
րածել գիտէին գերազանցօրէն և աշ-
խարհի մէջ ոչ ոք չէր կարող մրցել
նրանց հետ այդ կողմից։ Բայց որքան
և ահեղ լինէր փոթորիկը, նրա անց-
նելուց յետոյ աւերակների մէջ նո-
րից բարձրանում էր տեղական անկա-
խութեան ոգին, որ և գործում էր

մինչև ասորական նոր արշաւանքը։

Բայց Նաիրիի ճակատագիրը Միջագետքի հարուածների տակ հասկանալու համար մենք չը պէտք է մոռացութեան տանք և այն կարևոր հանգամանքը, որ բնորոշում է հին մեծ կայսրութիւնների (եգիպտական, քաղդէական, ասորական, ապա և պարսկական) տիրապետութիւնը։ Այդ կայսրութիւնների համար նուաճել մի երկիր չէր նշանակում միանգամայն ոչնչացնել նրա ազգային-կուլտուրական ինքնուրոյնութիւնը և նուաճողը սովորաբար բաւական էր համարում հարկի ենթարկել գրաւած երկիրը. այս հարկատուութիւնն էլ հպատակութեան երաշխիք էր համարւում։ Պետական այս սիստեմը, որ յատուկ էր հին Արևելքին, նոյնպէս շատ էր նպաստում որ Նաիրիի մանր անկախութիւնները միանգամայն չոչնչանան ասորական զինուորների ոտների տակ։ Իրանք, այդ անկախութիւնները, որքան էլ ընդհանուր վտանգի դիմաց գիտէին միանալ, չէին կարող, ի հարկէ, աստ-

բական կուռ բանակների դէմ հանել այնպիսի մի մեծ ոյժ, որից ընկճուէր թշնամին։ Պատերազմը Նաիրիի լեռներում սովորաբար լեռնային, պարտիզանական բնաւորութիւն ունէր և յենւում էր ոչ այնքան զօրքերի բազմութեան, որքան լեռնային բնութեան հայթայթած ամրութիւնների վրայ։ Եւ ասորական թագաւորների համար իրանց յաղթական արձանագրութիւնների մէջ պարծանքի առարկայ էր դառնում բարձր, անմատչելի լեռներ բարձրանալը և այստեղ ամրացած արքայիկներին ու իշխաններին յաղթելը։ Մի դաշտեցի ժողովրդի համար, հարկաւ, լեռնային դժուար պատերազմը կարող էր մեծագործութիւնների կարգը դասուել, ուստի և արձանագրութիւնների մէջ, ինչպէս կը տեսնենք, մշակւում է յատուկ, նոյն իսկ բանաստեղծական ոճ լեռներն ու նրանց կատարներին մղած պատերազմները նկարագրելու համար։

Սալմանասարի որդի Թեգլաթ-Ադար Ա. թագաւորը (1310—1270 Ք.

ա.) զբաղուած էր երկարատև պատերազմներով Քաղդէայի դէմ, իր տիրապետութիւնը հաստատեց Բաբելոնում, բայց այդ զբաղմունքների մէջ էլ, ինչպէս երևում է, ժամանակ գտաւ Նաիրիի հարաւային երկիրները (Կորդուաց աշխարհը) արշաւելու համար։ Սակայն հարաւում մղած երկարատև պատերազմները սպառեցին Ասորեստանի ոյժը և Թեգլաթ-Ադարի մահից յետոյ Միջագետքի նորակազմ կայսրութիւնը ստիպուած էր իր ինքնապաշտպանութեան մասին հոգալ, մանաւանդ որ Թեգլաթ-Ադարի յաջորդներն էլ թոյլ թագաւորներ էին. Նաիրին համարեա թէ մոռացւում է։ Թէև կարծւում է թէ Նինիբ-պալասար (1190—1170), և Ասսուրբրիսիսի (1130—1108) թագաւորները գրաւած են կամ, աւելի ճիշտ, յետ խլած են Նաիրիի մի քանի կորցրած հողերը[1]), բայց այդ գործողութիւնները այնքան խոշոր դէպքեր չէին և մանաւանդ անյայտ

[1]) Սանտալճեան, եր. 23—24.

են մնացել իրանց մանրամասնութիւն-ներով։

Ասորական առաջին կայսրութեան վերջին ներկայացուցիչն էր Թեգլաթ-պալասար Ա. (1108—1080 Ք. ա.), որի ժամանակ Ասորեստանը նորից ձեռք բերեց զինուորական մեծ պետութեան հմայքը։ Արևելքի ուժեղ աշխարհակալներից մէկն էր դա, որ արշաւանքներ սկսեց դէպի հիւսիս-արևմտեան երկիրները, Եփրատի միւս կողմում։ Այդտեղից էին առաջանում հեթիթական ազգերը, այդտեղ կար ծաղկած քաղաքակրթութիւն և առևտրական մեծ ճանապարհների վրայ կարելի էր հարուստ աւար ձեռք բերել։ Եւ երբ գործողութիւնները այդ ուղղութեամբ էին առաջ տարւում, անկարելի էր, ի հարկէ, անտես անել հեթիթական երկիրների այն մասը, որ Նաիրին էր։

Իր արշաւանքները դէպի այս երկիրները Թեգլաթ-պալասարը պատմել է մի քանի արձանագրութիւնների մէջ, որոնցից մէկը գտնւում է նոյն Սուբ-

նատ (Զէբէնէ-սու) գետի նեղ ձորում, ժայռերի վրայ, ուր նա էլ, հետեւելով Սալմանասարի օրինակին, փորագրել տուեց իր պատկերը։ Այդ փոքրիկ արձանագրութեան մէջ ասուած է. «Օգնականութեամբ Ասսուրայ, Շամասայ, Ռամմանայ աստուածոց մեծաց՝ իմ տէրանցս, ես Թեգլաթ-պալասար՝ Ասորեստանի թագաւոր, որդի Ասուրբիսիսեայ արքային Ասորեստանի, որդւոյն Մուտակկիլ (Նուսկուի) արքային Ասորեստանի, աշխարհակալ ի մեծ ծովէ արեւմտից մինչեւ Նաիրիի ծովն, 3 անգամ Նաիրիի վրայ արշաւեցի»[1]։

Նախ քան բուն Նաիրի մտնելը, Թեգլաթ-պալասարը երկար պատերազմական գործողութիւններ էր մղում Կումմուխ երկրում, որի տեղը որոշում է այժմեան Դիարբէքիր քաղաքը և որ տարածւում էր մինչեւ Մուշ քաղաքը։ Իսկ Նաիրիի մէջ եղած գործողութիւնները հետեւեալ պատմութիւնն ունին։

[1]) Անդ, եր. 107.

«Հեռաւոր թագաւորաց երկիրներուն վրայ՝ Վերի Ծովուն [1]) եզերքը, որոնք հպատակութիւն չէին ճանչնար, Ասսուր տէրն խրկեց զիս և ես խաղացի գնացի։ Դժուարին նուրբ շաւիղներէն և կիրճերէն՝ զորոնք յառաջագոյն երբէք թագաւոր մը չէր տեսած, սեպ ճամբաներէն, զառիվերերէն՝ որոնք չէին բացուած՝ զօրաց խաղալ գնալ տուի... 16 ահագին լեռները կոխեցի անցայ, դիւր տեղուանքը՝ իմ մարտակառքիս մէջ, իսկ դժուարին տեղուանքը պղնձի բրիչներով ուղղեցի։ Լերանց ուրումի ծառերը մէկդի վերցուցի. կամուրջս վանն խաղացից զօրաց իմոց շինել ետու, Եփրատի [2]) վրայէն անցայ, Նիմմէ երկրին թագաւորն, Տունուբէ երկրի թագաւորին, Տուալի երկրին թագաւորն, Քինտարի երկրին թագաւորն, Ուզուլա երկրին թագաւորն, Ունզամունի երկրին թագաւորն, Անտիաբէ երկրին թագաւորն, Պիլաքինի երկրին թագաւորն, Աթուրգինի երկրին թագաւորն, Կուլիբարզինի երկրին թագաւորն, Շինիբիրնի երկրին թագաւորն, Հիմուա երկրին թագաւորն, Պախտերի երկրին թագաւորն, Ուիրամ երկրին թագաւորն, Շուրուրիա երկրին թագաւորն, Արաեանի երկրին թագաւորն, Ա-

[1]) Հաւանական է համարում որ այս անունով կոչուած է Վանի լիճը։

[2]) Հաւանականաբար՝ Արածանի։

դաեանի երկրին թագաւորն, Կիրինի երկրին թագաւորն, Ալբաա երկրին թագաւորն, Ուգինա երկրին թագաւորն, Նազաբինա երկրին թագաւորն, Արարաիունի երկրին թագաւորն, Դաիաեանի երկրին թագաւորն, Նաիրիայ երկիրներուն ամբողջ 23 թագաւոր՝ իրենց երկիրներուն մէջ պատերազմիկ կառքերնին և զօրքերնին ժողովեցին, պատերազմ ու ճակատ տալու յառաջացան։ Հզօր զինուցս սաստկութեամբն զանոնք ճնշեցի. անոնց բազմաթիւ զօրաց մէջ Ռամմանայ ամպրոպի նման՝ աւերում ձգեցի։ Իրենց պատերազմողաց դիակները լերանց բարձանց վրայ և առ երի քաղաքաց նոցա շուշմայի (լկնջիթ բոյս) պէս սփռեցի։ Իրենց պատերազմիկ կառքերէն 120-ը ճակատամարտի մէջ խորտակմամբ խորտակեցի։ Ջ60 թագաւորս Նաիրեայ երկրաց՝ ընդ այնոսիկ որք անոնց օգնութեան եկած էին, իմ նիզակովս մինչև ցծոմն վերին տարի։ Իրենց մեծամեծ քաղաքներուն տիրեցի։ Անոնցմէ բռնած գերիներն, անոնց ինչքն ու ստացուածքը առի տարի. անոնց քաղաքները հրով այրեցի, աւերեցի, քանդեցի, փլատակներու բլուր ու խոպան երկիր դարձուցի։ Երամակս բազմաթիւ ձիերու, ջորիներու, մոգիներու և զինչս նոցա երկրագործականս անթիւս առեալ տարի։ Ջամենայն թագաւորս Նաիրեայ երկիրնե-

րուն իմ ձեռքս կենդանւոյն գերի բռնեցի։ Այս թագաւորաց շնորհս շնորհեցի. անոնց կեանքը խնայեցի. գերի ընկած ու շղթայի զարնուած ըլլալովնին, Շամուշայ [1]) իմ տեառս առջև անոնց ազատութիւն տուի. աստուածոց մեծաց առջև ապագային համար և վասն աւուրց մնացելոց հպատակութիւն պահելու զանոնք երդուընցուցի։ Անոնց արքայորդիները պատանդ առի։ 1200 ձի, 2000 եզ անոնց վրայ հարկ դրի և զանոնք թողուցի որ իրենց երկիրներն երթան։ Զմինի՝ Դաիաինեայ թագաւորը, որ Ասուրայ՝ իմ տեառնս՝ չէր հպատակած, գերի և շղթայակապ իմ քաղաքս յԱսուր տարի և թողութիւն շնորհեցի անոր։ Իմ Ասուր քաղաքէս՝ իբր ծառայ աստուածոց մեծաց ծառայելու և ապրելու աղագաւ զանի թողուցի որ երթայ։ Երկրաց Նաիրիայ լայնածաւալաց՝ բովանդակ տարածութեամբն՝ տիրեցի և անոնց բոլոր թագաւորները ինձի հպատակ կացուցի»[2])։

Այս մանրապատում ասորական նկարագրութիւնը պարզապէս այն է ցոյց տալիս որ Նաիրի երկիրներում Թեգլաթ-պալասարի տարած յաղթութիւն-

[1]) Ասորական Աստուած (արևի)։
[2]) Անդ, եր. 98—101.

ները այն աստիճան փայլուն և վճռական չէին, ինչպէս ինքն է աշխատում ցոյց տալ։ Երկրի քաղաքական կազմակերպութեան մէջ այդ յաղթութիւնները տակնուվրայութիւններ չը մտցրին։ Բոլոր թագաւորները նորից իրանց իշխանութեան մէջ էին, խոստանալով հարկ տալ իբրև հպատակութեան նշան։ Նշանակում է՝ որ այդ թագաւորները միանգամայն խորտակուած ու մոխիր դարձած չէին, այլ յայտնի պայմաններով հաշտութիւն էին կնքել Թեգլաթ-պալասարի հետ։ Միայն Դահեանիի Սինի թագաւորն էր, որ շղթայակապ գերի տարուեց Ասորեստան, երևի այն պատճառով որ նա էր Նաիրիի դաշնակցութեան գլուխը և դիմադրութեան ղեկավարը։ Սակայն նա էլ Ասորեստանում չը սպանուեց կամ ընդ միշտ չարգելուեց, այլ դարձեալ դաշնադրական պայմանների միջոցով վերադարձաւ իր երկիրը իր թագաւորութիւնը շարունակելու համար։

## ԳԼՈՒԽ Զ.

# ՆԱԻԻԻԻ ԱՆԿՈՒՄԸ

Թեգլաթ-պալասարից յետոյ երկու հարիւր տարուց աւել մի ժամանակամիջոց Նաիրիի երկիրների բախտը անյայտութեան մէջ է մնում։ Զը նայած, սակայն, փաստերի պակասութեան, կարելի է պնդել որ Նաիրին այդ ժամանակներում դարձեալ ձեռք էր բերել իր անկախութիւնը և Ասորեստանի հարուածների վտանգին չէր ենթարկուած։ Այս իրողութեան վկայութիւնն այն է, որ Ասորեստանը Թեգլաթ-պալասարից յետոյ անկման մէջ էր գտնուում, երբ նա կորցրեց այդ հուժկու թագաւորի զէնքով նուա-

ճուած բոլոր երկիրները և զինուորական մեծ պետութեան աստիճանից իջաւ երկրորդական պետութեան վիճակին։

Թուլացած պետութիւնը նորից իր նախկին դիրքը բռնելու ջանքեր սկսում է ցոյց տալ Թեգլաթ-Ադար Բ. Թագաւորի (889-885 թ. Ք. ա.) ժամանակ։ Սակայն սրան վիճակուած էր թագաւորել միայն հինգ տարի և այդ ժամանակամիջոցում նա կարողացաւ արշաւել Նաիրիի վրայ հիւսիս-արևմտեան ուղղութեամբ, Սալմանասարի և Թեգլաթ պալասարի ճանապարհով։ Դարձեալ Սուբնաս գետի կիրճում է ուր Թեգլաթ-Ադար Բ. փորագրել է մի համառօտ արձանագրութիւն, որի մէջ ասում է. «Թեգլաթ-Ադար, արքայ մեծ, արքայ հզօր, արքայ ժողովրդոց, արքայ Ասորեստանի... Օժանդակութեամբ աստուածոց մեծարանաց իւրոյ հոն գնաց, ահագին լեռներ՝ ի ծագմանէ արևումինչև ցմուտս արեգական՝ նուաճեց։ Բուռն, անպարտելի... հոն գնաց

կայծակի նման, գետեր... առաթուր կոխեց»[1]։

Թեգլաթ-Ադարին յաջորդեց նրա աւագ որդի Ասուրնազիրաբալը (885—860 թ.)։ Ասորեստանը հարեան երկիրներում այլ ևս ոչ մի հպատակ ազգութիւն չունէր. միայն Նաիրիի հարաւային մի քանի կտորներն էին, որոնք դեռ մնում էին Նինուէի տիրապետութեան տակ[2]։ Ասուրնազիրաբալը իր ստացած վտիտ ժառանգութիւնը մեծացնելու համար թագաւորութեան առաջին տարուանից սկսեց անագին եռանդով աշխարհակալական արշաւանքներ պատրաստել և իր պատերազմական խոշոր տաղանդով հանդիսացաւ Թեգլաթպալասարի արժանաւոր յաջորդ, նոյն իսկ աւելի ևս բարձրացրեց Նինուէի կայսրութեան փայլը ամբողջ Առաջաւոր Ասիայում։ Նորից արևմտեան աշխարհը, Բաբելոնից մինչև Եփրատի արևելեան ճիւղը, մինչև Միջերկրական ծովը, զգաց ասորական

[1]) Սանտալճեան, եր. 108։—[2]) Maspero Hist. t. III, p. 6։

արշաւանքների ամբողջ սոսկումը։ Ասսուրնազիրաբալը մեծ նուաճող էր, միևնոյն ժամանակ և արիւնարբու մի գազան։ Նրա գործադրած սիստեմատիք գազանութիւնները, աւերանքները ճիշտ որ ընդունակ էին աւելի մեծ սարսափ տարածելու, քան նրա ճակատամարտերը։ Իր յետնորդները գերազանցեցին նրան ոչ միայն նուաճողական թափի, այլ և գազանային արարքների նրբութիւնների և բազմազանութեան մէջ։

Ծանր կացութիւն վիճակուեց մանաւանդ Նաիրիին։ Ասսուրնազիրաբալը ամենից առաջ առանձին մեծ եռանդով գործում էր մանաւանդ այս երկրի դէմ և իր թագաւորութեան ընթացքում չորս անգամ արշաւեց նրա վրայ, սոսկալի աւերանքների ու կոտորածների ենթարկելով երկիրը։ Նա շատ լաւ գիտակցել էր այս լեռնաշխարհի կարևոր նշանակութիւնը իր ապագայ գործունէութեան տեսակէտից և ամենից առաջ, ու ամենից շատ աշխատում էր իրականացնել Նաիրիի

կատարեալ նուաճումը։ Առաջին անգամ 884 թուականին էր որ նա յարձակուեց Վերին Արածանիի կողմերում Նումմի երկրի վրայ և այդ տեղից արշաւելով դէպի Ուրմիայի ծովը, վերահաստատեց ասորական տիրապետութիւնը Խուբուսկիա և այլ հարեան երկիրներում։ Զարմանալին այն է, որ ահեղ աշխարհակալի ոյժը վհատութիւն և լքում չէր առաջացնում այն երկիրներում, որոնց վրայ դնում էր նա իր թաթը։ Կան երկիրներ, որոնք ապըստամբւում են նրա դէմ։ Ապստամբուողների թւում են նախ և առաջ այն ասորական գաղութները, որոնք հաստատուած էին Տիգրիսի և Եփրատի մէջտեղերում (Դիարբէքիրի կողմերը) և պաշտպանում էին դէպի Ասորեստան տանող լեռնային անցքերը։ Հնազանդեցնելով ապստամբներին, Ասուրնազիրաբալը առանձնապէս ամրացնում է Տուշհա քաղաքը, որ, ինչպէս տեսանք, շատ կարևոր դեր էր խաղում սահմանագլխի վրայ։

Իսկ յաջորդ տարին, 883-ին, աս-

բական թագաւորը մտնում է Նաիրիի երկիրները արևմտեան կողմից, այսինքն Տիգրիսի հովտով։ Նաիրեան դաշնակցութիւնը արդէն առաջուայ պէս ուժեղ չէ, բայց և այնպէս, Ասուրնազիրաբալը առանց դժուարութիւնների չէր որ նուաճեց բոլոր այդ երկիրները։ Նա սահմանում է հարկային նոր սիստեմ։ Բայց կայ աւելի վատը, որ արդէն լուրջ սպառնալիք է տեղային թագաւորների անկախութեան— թագաւորը կուսակալներ և կառավարիչներ է նշանակում երկրի զանազան կողմերում։ Երրորդ արշաւանքը տեղի ունեցաւ 880-ին, իսկ չորրորդը՝ 867-ին։ Այս արշաւանքների մանրամասնութիւնները ամենից լաւ կարող է պատմել ինքը այդ արշաւանքների հրամանատարը։ Ուստի խօսքը տանք Ասուրնազիրաբալին։

... Ասուրնաձիրաբաղ՝ հզօր թագաւոր, ... արքայ բոմանդակութեան չորից կողմանց աշխարհի...

Կառավարութեանս առաջին տարին... պատերազմիկ կառքերս ու զօրքս ժողուեցի, արշաւեցի սեպ ճամբայներէն, դժուարին

լեռներէն, որոնք գնացից կառացս ու զօրացս անյարմար էին։ Նումմի երկրին վրայ գնացի. Գուբբի՝ իրենց բերդաքաղաքին, Սուբրա, Աբուքու, Աբուրա, Աբուբի ամուր քաղաքներուն՝ որոնք Ուրինի, Աբունի, Իտինի կոչուած ահագին լեռներուն մէջ կը գտնուին՝ տիրեցի, զպատերազմողս նոցա բազմաթիւս սպանի, աւարնին, ինչքերնին, արջառնին յափշտակեցի. զօրքն փախաւ, դժուարին լերան մը վրայ ամրացաւ։ Լեռն կարի դժուարին էր. անոնց եռևէն փութով հետամուտ չեղայ. լերան գագաթն երկաթի դաշունի մը ծայրին պէս կը բարձրանար, և երկնից թեաւոր թռչուն մ'անոր չը մօտենար։ Նման բունոյ ուղինի (թռչնոյ) իրենց ամրութիւնը նոյն լերան վրայ շինած էին։ Ուր որ իմ հարցս մէջէն և ոչ մի թագաւոր մտած էր, երեք օրուան մէջ դիւցազնն մագլելով (*) լերան վրայ ելաւ՝ քաջասրտութեամբ կռուոյ ցանկանալով։ Վեր ելաւ, իւր ոտքերովն լեռը կոխկռտեց, անոնց բոյնը ջախջախեց, բանակնին խորտակեց։ Անոնց պատերազմողներէն 200-ը զէնքով յերկիր կործանեցի. անոնց մեծաքանակ աւարը՝ ոչխարաց երամակներու պէս առի տարի։ Անոնց արեամբը՝ լեռն ասրի նման ներկեցի. իրենց մեացորդները լերանց ծորձվրներու և անձուկներու (*) մէջ ոչնչացուցի. անոնց քաղաք-

ներն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։

Նումմի երկրէն ելայ, Կիրբուրի երկիրը վար իջայ։ Հարկս Կիրբուրի, Սիմիսի, Սիմիրա, Ուլմանիա, Ադաւս, Խարգա ու Խարմասա երկիրներէն ձիեր, ջորիներ (՞) արջառ, ոչխարներ, գինի, պղնձի անօթներ իբր իրենց հարկն ընդունեցայ։ Անոնց վրայ կողմնակալներ դրի։ Մինչդեռ (զօրքս) Կիրբուրիի մէջ կը գտնուէր, Ասուրայ՝ իմ տեառնս՝ պայծառութիւնն զԿիրզանացին և զԽուբուսկացին յերկիր կործանեց։ Ձիեր, արծաթ, ոսկի, կապար, պղինձ, պղնձի ամաններ ի սակ հարկի առջեւս բերին։ Կիրբուրիէն ճամբայ ելայ, Խուլուն քաղաքին կրճին մէջ մխեցայ, որ Կիրխի երկրին դիմացն է։ Խատու, Խատարու, Նիստուն, Իրբիդի, Միտքիա, Արձանիա, Տիլա, Խալուա քաղաքներուն՝ որոնք Կիրխի երկրին Ուսու, Արուա, Արարդի ահագին լեռներուն մէջ կը գտնուէին՝ տիրեցի. անոնց բազմաթիւ զօրքը սպաննեցի. աւարնին և ինչքերնին առի տարի։ Զօրքն փախաւ, Նիստունի դիմացը դուրս ցցուած լեռնային ժայռ մը բռնեց, որ երկնից ամպի մը նման՝ երկնքէ դէպ ի վար կը հակէր։ Ուր որ թագաւորաց իմ հարցս մէջէն և ոչ մէկն մտած էր, իմ զինուորներս թռչնոց պէս անոնց վրայ խոյացան։ Անոնց պատերազմող զօրքէն 260-ը գէնքով դիաթաւալ կա-

ցուցի, գլուխնին կտրեցի. անոնցմէ սիւն մը կառուցի։ Անոնց մնացորդն թոչնոց պէս լերան գագաթան վրայ իւր բոյնը շինեց։ Անոնց աւարն ու ինչքը լերան մէջէն վար բերել տուի քաղաքները՝ որ ի մէջ ահագին ու թաւուտ լերանց էին, աւերեցի ու քանդեցի, հրով այրեցի։ Մարդիկն՝ որչափ բազմութեամբ որ զինուցս երեսէն փախած էին, վար իջան, ոտքերուս փարուեցան։ Անոնց վրայ տուրքեր, հարկեր ու վերակացուներ դրի։ Նիստունի քաղաքապետը՝ Բուբայի որդին՝ զԲուբու Աբբաթլի մէջ մորթազերծ ըրի, պատի մը մէջ հիւսեցի։ Նոյն ատեն իմ անձինս պատկերը շինեցի. իմ կարող զօրութիւնս անոր վրան գրեցի, Իքի լերան վրայ՝ Ասուրնաձիրապլու քաղաքին մէջ՝ աղբերական տեղը՝ զայն կանգնեցի։

Նոյն անուանակիր տարւոյն մէջ Աբ ամսոյն 24-ը օրն ըստ հրամանի Ասուրայ և Իստարայ աստուածոցն մեծաց՝ տերանց իմոց՝ Նինուէէն ելայ, Նիբուր և Պաձատու ահագին լեռներուն ոտքը գտնուող քաղաքաց վրայ արշաւեցի։ Ատկուն, Ուսխու, Պիլազի վիճակներուն մէջ 20 քաղաքի տիրեցի. անոնց բազմաթիւ պատերազմողները սպաննեցի. աւարնին և ինչքերնին առի տարի. քաղաքները հրով այրեցի։ Մարդիկն՝ որչափ բազմութեամբ որ իմ զինուցս երեսէն փախած էին՝ վար իջան, ոտքերուս

փարուեցան. անոնց վրայ տուրքեր դրի։ Նիրուբ ու Պաձատու լերանց ստորոտներն եղող քաղաքներէն ելայ, Տիգրիսի վրայէն անցայ, Քումմուխի մօտեցայ։

... Նոյն անուանակիր տարին և իմ Նինուէ գտնուած առենս բերին լուր թէ արք Ասորեստանեայք և Խուլաի՝ անոնց քաղաքապետն, զորոնք Սաղմանասար Ասորեստանի թագաւորն՝ ինծմէ առաջ թագաւորող իշխան մը Խալդիդիպխայի մէջ բնակեցուցած էր, ապստամբեցան, իմ թագաւորական քաղաքս զԴամդամուսա առնելու համար յառաջ խաղացին։ Ասուրայ, Շամասայ և Ռամմանայ՝ իմ վստահութեանս աստուածոց՝ հրամանաւն, ժողուեցի իմ պատերազմիկ կառքերս և զօրքս։ Սուրնատ գետոյն աղբերակունքը՝ տեղի պատկերաց թագաթփաղսարայ և թագաթաղարայ Ասորեստանի թագաւորաց՝ իմ հարցս, իմ արքայական անձինս մէկ պատկերը շինեցի, և զայն անոնց քովը կանգնեցի։ Նոյն առեն Իձալա երկրէն ի սակ հարկի արջառ, ոչխարներ և գինի ընդունեցայ։ Յառաջ խաղացի դէպ ի Կասիարի, Կինաբուին, Խուլաիայ բերդաքաղաքին մօտեցայ։ Զօրացս յարձակմամբն, բուռն ճակատամարտիւս խոյացայ, քաղաքին տիրեցի։ Անոնց պատերազմողներէն 600-ը գինուբ յերկիր կործանեցի. 3000 գերի կրակի մէջ այրեցի.

իբր պատանդ՝ անոնցմէ և ոչ մէկը կենդանի թողուցի։ ԶԹուլաի անոնց քաղաքապետը կենդանւոյն ձեռք ձգեցի։ Անոնց դիակներն ի ցից հանեցի. մանչ ու աղջիկ տըղաքնին խարուկի մէջ այրեցի։ ԶԹուլաի անոնց քաղաքապետը մորթազերծ ըրի. Դամդամուսայի պարսպին մէջ դանի հիւսեցի. քաղաքն աւերեցի, քանդեցի հրով այրեցի։ Մարիրու քաղաքին և իւր վիճակին տիրեցի. անոնց պատերազմողներէն 50-ը զինուք յերկիր կործանեցի. անոնցմէ բռնուած 200 գերիները կրակի մէջ այրեցի։ 332 զինուորս երկրին Նիբրուայ՝ դաշտին մէջ կոուելով սպաննեցի. աւարնին, արարջառնին և ոչխարնին առի տարի։ Նիբրու երկիրն՝ որ Ուխիրա լիրան ստորոտն է, դաշնակցութիւն մ'ըրած ըլլալով՝ իրենց Տիլա ամրոցին մէջ քաշուած էին։ Կինաբուէն ելայ, Տիլային մօտեցայ. քաղաքն խիստ ամուր էր. 3 պարիսպ դանի կը շրջապատէր։ Մարդիկն իրենց հզօր պարիսպներուն և բազմաթիւ զօրացը վրայ վստահացան. վար չեկան, ոտքերուս չփարուեցան։ Կռուով և ճակատամարտիւ քաղաքին վրայ յարձակեցայ, տիրեցի։ Անոնց 3000 պատերազմող մարդիկը զինուք յերկիր կործանեցի. անոնց աւարը, ինչքը, արջառը, անոնց ոչխարներն առի. շատ մը գերիներ կրակի մէջ այրեցի. շատ մը մարդիկ կենդան-

ւոյն ձեռք ձգեցի. ոմանց ձեռքերը և թեւերը (*) կտրեցի. ոմանց քիթը (*) ականջները, (թեւերը*) կտրեցի. շատ մը մարդոց աչքերը բրեցի. կենդանի եղողներէն աշտարակ (*) մը կանգնեցի. մէկ մ՚ալ կառափներէն կանգնեցի։ Ծառերու վրայ՝ իրենց քաղաքին վիճակին մէջ՝ անոնց գլուխները վարեցի. իրենց արու տղայքը, աղջիկ տղայքը կրակի մէջ այրեցի. քաղաքն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի, ոչընչացուցի։ Նոյն ատեն Նիրբի երկրին քաղաքները, անոնց ամուր պարիսպներն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ Նիրբիէն ելայ, Տուսխային մօտեցայ։ Տուսխան նորէն գրաւեցի, անոր հին պարիսպը կործանեցի. տեղը մաքրեցի, հիման հասայ։ Նոր պարիսպ մը ի հիմանց մինչև ցկատարն կանգնեցի, աւարտեցի, (գեղեցիկ կերպով) կարգի դրի։ Իմ արքայական բնակութեանս համար հոն պալատ մը հիմնեցի. դրան թեւերն աւարտեցի, զանոնք իրենց դրան վրայ կանգնեցի։ Նոյն պալատը կանգնեցի ի հիմանց մինչև ցատնիս. զանի աւարտեցի. պիլի շողուն քարէ իմ անձին պատկերը շինեցի, զկարողութիւն շքեղագոյն գործութեանս՝ ու Նաիրիի երկիրներուն մէջ կատարած դիւցազնական գործոց պատմութիւնն անոր վրան գրեցի, զանի Տուսխայի մէջ կանգնեցի։ Տախտակ մը գրեցի, անոր պարսպին վրայ

գետեղեցի։ Վատթարեալ Ասորեստանեանները՝ որոնք կարօտութեան և քաղցի պատճառաւ ի լերինս յայլս դէպ ի Սուպրի ելած էին, ետ բերի, Տուսխայի մէջ հաստատեցի։ Նոյն քաղաքն իմ վերագոյն իշխանութեանս տակ դրի։ Նիրբու երկրէն ընդեղէններ ու յարդ հոն դիզեցի. Նիրբուին մնացորդներն՝ որոնք իմ զինուցս երեսէն փախած էին, վար իջան, ոտքերուս փարուեցան։ Իրենց քաղաքներուն ու գեղեցիկ շէնքերուն մէջ զանոնք բնակեցուցի։

... Նաիրիի երկիրներուն վրայ կողմնակալներ դրի։ Նաիրիի երկիրներէն դառնալուս առեն՝ Նիրբու երկիրն՝ որ ի մէջ Կասիարի լերինն՝ ապստամբած էր. իրենց քաղաքներէն 9 հատ թողած էին, իրենց Իապիլիբրիա ամրոցին և դժուարին լերան վրայ կը վստահէին։ Լերան գագաթներուն վրայ յարձակեցայ, տիրեցի. անոնցմէ լեռներու մէջ անոնց պատերազմողները սպաննեցի. անոնց արեամբն ասրի պէս լեռը ներկեցի։ Մնացեալները լերան ծործորներուն և անձուկներուն մէջ ոչնչացուցի։ Անոնց աւարն և ինչքը՝ առի, անոնց պատերազմոզաց կաղապարները կտրեցի. անոնց կաղապարներուն սիւն մը կանգնեցի. մանչ ու աղջիկ տղաքնին խարուկի մէջ այրեցի։ Բուլիանի քաղաքին կրճին մէջ մտայ, Լուքիա գետոյն եզերքը հասայ. Յառաջ խա-

դալուս առեն՝ կրճին մէջ եղող Կիրխի երկրին քաղաքներուն տիրեցի, անոնց բազմաթիւ պատերազմողները սպաննեցի. անոնց կողոպուտն առի. քաղաքները կրակով այրեցի։

... Խուրուսկացիներն և Կիրզանացիներն երկիւղն վեհափառութեան Ասուրայ՝ տեառն իմոյ, նկուն ըրաւ. արծաթ, ոսկի, ձիեր, գործուած զգեստներ, արջառ, ոչխարներ, գինի ի սակ հարկի և արոց իմ առջեւ բերին։

. . . . . .

Իստարատի երկրին մխեցայ. Կիպակի քաղաքին մէջ բանակեցայ, արջառ, ոչխար, գինի, պղնձի ամաններ ի սակ հարկի Կիպակիէն ընդունեցայ։ Կիպակիէն ելայ, Մատիատի քաղաքը մօտեցայ. Մատիատուին՝ իւր գերեզմանաց քաղաքաւն՝ տիրեցի. անոր պատերազմողներէն 2800-ը գինուք յերկիր կործանեցի. անոնց մեծաքանակ աւարն առի տարի։ Որչափ մարդիկ որ գինուցս երեսէն փախած էին՝ ոտքերուս փարուեցան։ Զանոնք իրենց քաղաքներուն մէջ բնակեցուցի. հարկ ու տուրք եւ «ուրասիա» պաշտօնեայ մը՝ զոր զօրացուցի, անոնց վրայ դրի։ Անձինս պատկերը շինեցի. հզօր զօրութիւնս անոր վրան գրեցի։ Մատիատի մէջ կանգնեցի։ Կասիարի անապին լեռներուն մէջ վեց օր անցուցի. դը-

ժուարագնաց երկիր մը՝ որ պատերազմիկ կառքերու և զօրաց յառաջ խաղացման յարմար չէր։ Երկաթի ըրիչներով լեռը ճեղքեցի. անագապղնձի թիերով զանի հարթ հաւասար ըրի. կառքերն և զօրքը յառաջ խաղացուցի։ Կասիարի լերան մէջ եղող դաշտին (*) քովի քաղաքներուն մէջ արջառ, ոչխարներ, գինի, պղնձի անօթներ, պղնձի կաթսայներ ընդունեցայ։ Կասիարու լեռը կտրեցի անցայ. երկրորդ անգամ Նաիրիի երկիրներուն վրայ իջայ։ Սիգիսա քաղաքին մէջ բանակս դրի։ Սիգիսայէն ելայ, Մադարա քաղաքին մօտեցայ, որ Տուրուզիի որդւոյն Լապտուրիի ամրոցն էր։ Քաղաքն խիստ ամուր էր. 4 պարիսպ զանի կը բոլորէին։ Յարձակելով քաղաքն առի. հզօր գինուցս առջև զարհուրեցան. անոնց ինչքը, անոնց ստացուածքը, անոնց տղայքը իբր փրկանք (*) անոնցմէ առի յաղաղութիւն անոնց կենաց։ Անոնց թողութիւն շնորհեցի։ Հարկ ու տուրքեր, «ուրասի» պաշտօնեայ մը անոնց վրայ դրի։ Քաղաքն աւերեցի, քանդեցի, աւերած ու խոպան երկիր դարձուցի։ Կասիարի լերան ստորոտը՝ Տուրուզիի որդւոյն Լապտուրիին 60 քաղաքները, ամրոցները, աւերեցի, քանդեցի, փլատակաց կոյտ ու խոպան երկիր դարձուցի։ Վատահացեալ յԱսուր՝ իմ տէրս, թեթև (*) մարտակառքերով և լաւագոյն հեծեալնե-

բովս Տուսխանէն ճամբայ ելայ։ Լաստերով Տիգրիսի վրայէն անցայ. բոլոր գիշերը խաղացի գնացի. Դիրբացւոց ամրոցն Պիտուրային մօտեցայ։ Քաղաքն իւիսա գըժուարամատոյց էր. 2 պարիսպ գանի կը շրջապատէին. պատուարն լերան մը գագաթան պէս բարձր էր։ Ասուրայ՝ իմ տեառնս՝ բարձր օժանդակութեամբն, զօրացս յարձակմամբն և յուզեալ ճակատամարտիւս անոնց հետ պատերազմեցայ։ Օդոյ դից Ռամմանի նման՝ 2 օր մինչև արևու ծագումն անոնց վրայ որոտացի։ Անոնց վրայ կրակ անձրևեցի. սաստկութեամբ և զօրութեամբ՝ զօրքս թուշնոց խուռնընթաց բաղմութեան (*) նման անոնց վրայ սրացան։ Քաղաքին տիրեցի. անոնց մարտիկներէն 800-ը զէնքով յերկիր կործանեցի. անոնց կառափնները կտրեցի. կենդանի մնացող շատ մը մարդիկ գերի բռնեցի. մնացեալները կրակի մէջ այրեցի։ Անոնց ձոխ կողոպուտն առի։ Կենդանի մնացողներէն և կառափունքէ կոթող մը քաղաքին դռան առջև կանգնեցի, 700 մարդիկ իրենց քաղաքին դրան քով ցիցերու վրայ վարսեցի, քաղաքն աւերեցի, քանդեցի, աւերած ու խոպան երկիր դարձուցի։ Անոնց մանչ տղայքը, աղջիկ տղայքը կրակի մէջ այրեցի։ Մատնի լերան կրճին բերանը գտնուող Կուկունու

քաղաքին տիրեցի. 700 պատերազմող նը-
կուն ըրի զինուք. անոնց ճոխ կողոպուտն
առի։ Դիրա երկրին մէջ 50 քաղաքի տի-
րեցի. անոնց պատերազմողները սպաննե-
ցի. աւարնին առի տարի։ 50 մարդ կեն-
դանւոյն գերի բռնեցի. անոնց քաղաքներն
աւերեցի, քանդեցի, կրակով այրեցի. ա-
նոնց վրայ իմ ճոխութեանս պայծառու-
թիւնը սփռեցի։ Բիտուրայէն ելայ, հանդի-
պակաց Կիրխի երկրին Արբակի քաղաքին
վրայ իջայ։ Իմ արքայական վեհափառու-
թենէս զարհուրեցան. իրանց քաղաքներն
և զօրաւոր պարիսպները թողուցին. կեան-
քերնին ազատելու համար՝ Մատնի անա-
գին լերան վրայ ելան։ Անոնց հետամուտ
եղայ. դժուարագնաց լեռներու մէջ անոնց-
մէ 1000 պատերազմող մարդ խորտակեցի.
անոնց արեամբն լեռը ներկեցի. անոնց
դիակներովը ձորձորս և ձանձուկս լերանց
լցուցի։ 200 մարդ կենդանւոյն գերի բռնե-
ցի. ձեռքերնին կտրեցի. 2000 հոգի գերի
տարի. անոնց արջառն և ոչխարները ան-
համար թուով առի տարի։ Արբակի քաղա-
քին, Իյայա և Սալանիրա ամրոցներուն
տիրեցի, (անոնց) պատերազմողները սպան-
նեցի, կողոպուտնին առի։ Նարի երկիրնե-
րուն մէջ 250 քաղաք իրանց զօրաւոր պա-
րիսպներովն աւերեցի, քանդեցի, աւերած
ու խոպան երկիր դարձուցի։ Անոնց երկ-

բին հունձքը հնձեցի, ցորեն ու յարդ Տուսխայի մէջ համբարեցի[1]։

Այս բոլոր հարուածներով ասորական դաժան աշխարհակալը պատրաստում վերջացնում է իր հիւսիսային մեծ ծրագիրը։ Ապահովուել Նաբրիի կողմից, հաստատուն կռուան դարձնել այդ լեռնաշխարհը արևմուտքում գործողութիւններ սկսելու համար—այս է այդ ծրագիրը։ Եւ երբ Նաբրին արդէն բոլորովին խաղաղացրուած և հաւատարիմ հպատակութեան մէջ վերահաստատուած էր, այդ ժամանակ Ասորնագիրաբալը ձեռնարկեց արևմտեան երկիրների նուաճման։ Նրան յաջողուեց այդ ծրագիրը, որովհետև նրա յենակէտը ամուր էր։ Նաբրիի բարձրութիւններից էր նա վճռում Սիրիայի, Պալեստինի և Փիւնիկէի ճակատագիրը։ Եփրատի արևմտեան կողմում ապրող հեթիթական ազգերը թուլացած էին և չէին կարող կանգնեցնել նոյն այդ ազգերի պաշտպանողական գծի ձախ թևի (Նաբրիի) վրայ

[1]) Մանդալեան, եր. 108—122.

յենուած և այդտեղից առաջացող Ասորեստանը։ Ասուրնազիրաբալը առաջինն էր իր երկրի թագաւորներից, որ նուաճեց Սիրիան, Փիւնիկէի քաղաքները և իր զէնքը ընկղմեց Միջերկրականի ջրերի մէջ։ Եւ թւում էր թէ հեթիթական աշխարհը վերջնականապէս տեղի էր տալիս սեմական աշխարհին, խոստովանելով իր կատարեալ անուժութիւնը։

## ԳԼՈՒԽ Է.

# ՈՒՐԱՐՏՈՒ

Բայց դեռ վաղ էր այդպիսի մի վիճակի հասնելու համար։ Ասսուրնազիրբաբալի այս ահեղ շարժումների ժամանակ, նույն այդ Նաիրիի աշխարհում, գլուխ ճկած և պարտության մատնուած այդ ազգաբնակութեան մէջ, նկատւում է մի կենսունակ երևոյթ, մէկը մարդկային կեանքի այն շարժումներից, որոնք իրանց անակնկալ արտայայտութեամբ, իրանց զարմանալի յաջողակութեամբ և խոշոր հետեւանքներով հրաշքի նմանութիւն բերող բաներ են։ Ամբողջ հեթիթական աշխարհի համար, ինչպէս տեսնում

ենք, դրուած էր կեանքի և մահուան հարց։ Ցեղը կենսունակութիւն ունի՞ ասորական ահաւոր ոյժի դիմաց ապրելու, ինքն իրան պաշտպանելու համար։

Եւ նրան պատասխանելու համար դուրս է գալիս մի փոքրիկ երկիր, որ թէև Նաիրիի դաշնակցութեան է պատկանում, բայց ունի իր յատուկ անունը։ Ասորական սեպագրութիւնների մէջ Ասսուրնազիրաբալի մասին ասուած է. «Սուբնատ գետոյն աղբերակունքէն մինչև Ուրարտի իւր ձեռքովն տիրեց»[1]։ Առաջին անգամն է այսպիսի մի անուն հրապարակ գալիս —Ուրարտի կամ յաճախագոյն՝ Ուրարտու։ Թեգլաթ-պալասարը չէ ճանաչում այդպիսի մի երկիր Հայկական Բարձրաւանդակում։ Եւ այս հանգամանքը իրաւունք է տալիս ենթադրելու որ Ուրարտուն կազմակերպուել է Թեգլաթ-պալասարից յետոյ, ասել է ԺԱ—Թ դարերի արանքում։

Ահա այս փոքրիկ երկիրն է, որ պատ-

[1] Անդ, եր. 129.

մութեան ասպարէզ է իջնում մի մեծագործ առաքելութեամբ—միացնել հիւսիսային ազգերը Ասորեստանի դէմ։ Նրպատակը ինքնապաշտպանութիւնը չէ միայն։ Եթէ լոկ ինքնապաշտպանողական լինէր այդ խիզախ առաջխաղացումը, Ուրարտուի դերը կը լինէր տեղական, մասնաւոր։ Բայց Ուրարտուն մօտ հարիւր տարի ահեղ մրցութեան մէջ էր Ասորեստանի դէմ և Ասորեստանը մի քանի անգամ հասաւ կորստեան ծայրին։ Այստեղ է ահա Ուրարտուի այն դերը, որ արդէն տիեզերական պատմութեանն է պատկանում։ Այդ պայքարը համաշխարհային տիրապետութեան համար էր։ Հեթիթական աշխարհը Ուրարտուի միջոցով պայքար էր մղում այն մասին՝ թէ ի՞նչ պիտի լինի Արևմտեան Ասիան—հեթիթակա՞ն թէ սեմական[1])։

Այս զարմանալի ընդունակ ցեղը իր զարգացման ճանապարհն էր մտել ամենայն թափով, երբ նրան դուռ և

[1]) Никольскій—„Клинооб. над. Ванскихъ царей, отк. въ пред. Россіи", с. 390.

բաց արաւ Ասսուրնազիրաբալի որդին և յաջորդը, Սալմանասար Բ. (860—825 Ք. ա.)։ Ինչպէս ասացինք վերևում, ենթադրւում է որ մօտաւորապէս այդ ժամանակները կամ դրանից առաջ ուրարտացիները, գաղթելով արևմուտքից, մտել էին Նաիրիի ազգերի շարքը։ Ամեն ինչ դեռ պարզ չէ այս ժողովրդի պատմութեան մէջ։ Մենք տեսանք (եր. 89—94) թէ ինչ ենթադրութիւններ գոյութիւն ունեն ուրարտացիների սկզբնական շրջանի, նրանց բնակած երկրի մասին և թէ այդ ենթադրութիւններից որն է աւելի հաւանականը։

## ԳԼՈՒԽ Բ.

# Ա Բ Ա Մ Է

Սալմանասար Բ-ի ժամանակ Ուրարտուն սկսում է իր վերին աստիճանի կարևոր քաղաքական դերը։ Սալմանասարը իր երկարատև թագաւորութեան մածագոյն մասը անց կացրեց պատերազմական արշաւանքների մէջ։ Միայն Եփրատի միւս կողմում իր հօրնուաճած երկիրները հնազանդութեան մէջ պահելու համար նա ամեն տարի իր բանակը անց էր կացնում այն կողմերը և այդպիսի արշաւանքներից նա յականէ յանուանէ յիշում է 21 հատ։ Այս թիւը բաւական է ցոյց տալու համար թէ որքան

յամառ դիմադրութիւն էր ցոյց տալիս հեթիթական աշխարհը Ասորեստանի անաւոր ոյժին։ Այդ դիմադրութեան մեծապէս նպաստում էր Ուրարտուն, ուր Սալմանասարի ժամանակ թագաւորում էր Արամէ անունով մէկը։

Մենք տեսանք որ ասորական բանակները Նաիրիի բարձրաւանդակի վրայ յենուելով պիտի յարձակուէին արևմտեան աշխարհի վրայ։ Ուրարտուն ոչ միայն վտանգի է ենթարկում այդ պատերազմական յենարանը, այլ և իր գործողութիւնները միացնում է արևմտեան աշխարհի գործողութիւններին, այնպէս որ երկու կողմերի՝ այն է Ուրարտուի և հեթիթական երկրի գործողութիւնները միաժամանակ և փոխադարձաբար իրարից էին բղխում և իրար պահպանում [1]։ Սալմանասարը ստիպուած էր պարբերաբար իր զէնքը դարձնել Ուրարտուի դէմ՝ ոչնչացնելու համար այնտեղ կազմակերպուող քաղաքական խոշոր կենտրոնը, որ միացնում էր հիւսիսային

1) Никольскій, с. 395.

ազգերը։ Այս ուղղութեամբ գործած նրա արշաւանքների թիւը չորս էր։

Առաջին անգամ Սալմանասարը արշաւեց Ուրարտուի դէմ իր թագաւորութեան առաջին տարին (860)։ Ինչպէս և Ասուրնազիրաբալը, նա այս անգամ գնաց հիւսիս-արևելեան ուղղութեամբ, դէպի Ուրմիայի լիճը, ուր աւերեց և ասպատակեց Մուբուշկիա երկիրը, որ, պէտք է ենթադրել, մրցունում էր Ուրարտուի գլխաւորութեամբ կազմուած դաշնակցութեան մէջ։ Արշաւանքը դժուարին էր, լեռնային անցքերը մեծամեծ խոչնդոտներ էին հանում բանակի առջև։ Մուբուշկիան գրաւելուց յետոյ ասորական թագաւորը մտաւ Ուրարտուի սահմանները։ Այսպէս է ինքը թագաւորը նկարագրում այդ արշաւանքը.

Թագաւորութեանս սկիզբն, կառավարութեանս առաջին տարին արքայական գահոյս վրայ մեծ վայելչութեամբ նստայ, պատերազմիկ կառքեր և զօրք դուսարեցի, Սիմիսի երկրին կրճին մէջ մխեցայ, յԱրիդի ի բերդաքաղաքն Նինոյի մօտեցայ, քա-

Նաիրցիների դիմադրությունը

դաքը յարձակմամբ առի. անոր տիրեցի, անոր բաղմաթիւ պատերազմողները սպանեցի, անոր արջառն առի տարի։ Անոր քաղաքին դիմացը կառափունքէ կոթող մը կառուցի. անոնց մանչ ու աղջիկ տղայքը խարուկի մէջ այրեցի։ Մինչդեռ անոնք տակաւին Արիդիի մէջ կը կենային, դնարկն Խաբգացւոյն, Խարմասացւոյն, Սիմիսացւոյն Սիմիացւոյն, Սիրիսացւոյն և Ուլմանացւոյն՝ ձիեր, հարկիք ձիոց, արջառ, ոչխարներ, գինի՝

Umjetničarska kuća Fuj parčevalinof k umrp

ընդունեցայ։ Արիդիէն ելայ. սեպ նուրբ շաւիղներ, դժուարին լեռներ՝ որոնք երկաթի դաշոյնի մը սայրին պէս դէպ յերկինս վեր կանգնուած են, պղնձի և անագապղնձի թիերով խորեալ պեղեցի, կառքերուն և զօրքին քալել տուի։ Խուրուշկիա քաղաքին մօտեցայ։ Խուրուշկիա քաղաքն և իր վիճակէն 100 քաղաք հրով այրեցի։ Կակիա՝ Բաբիրի թագաւորն և իւր զօրաց մնացորդներն զինուցս սաստկութենէն զարհուրեցան և ահագին լեռներ բռնեցին։ Անոնց ետևէն լեռներուն վրայ ելայ. լերանց մէջ անոնց հետ սաստիկ ճակատամարտ տուի. անոնց վրայ յաղթութիւն կատարեցի։ Լեռներէն կառքեր, զօրքեր, ձիեր, ձիերու հարկիք առի տարի։ Սարսափն վեհափառութեան Ասուրայ՝ իմ տեառնս՝ զանոնք նկուն ըրաւ. վար իջան, ոտքերուս փաթուեցան. անոնց վրայ հարկ ու տուրք դրի։ Խուրուշկիա քաղաքէն ելայ, Ուրարտացի Արամէի[1]) բերդաքաղաքն Սուգունիայի մօտեցայ, քաղաքին վրայ յարձակեցայ, անոր տիրեցի։ Անոր զօրքերէն շատերն սպաննեցի. կողոպուտնին առի տարի. անոր քաղաքին դիմացը կառափներէն կոթող մը շինեցի։ Իւր երկրէն 14 քաղաք հրով այրեցի։ Սուգունիայէն ելայ, դէպի Նաիրիի ծովն վար իջայ. զէնքերս ծովուն մէջ մխրճեցի։ Աս-

[1]) Կարդացուում է և Արամի։



Սարգսապարի զանգարեցոցը վանքի դռան վերև գտնվող քանդակներից

տուաձոցս զոհեր մատուցի։ Նոյն ժամանակ իմ անձինս պատկերը շինեցի, Ասսուրայ՝ պերճափայլ տեառն, իմ տեառնս համբաւն և իմ կարող զօրութիւնս անոր վրան գրեցի, ծովուն քով կանգնեցի»[1])։

Սալմանասարը այնքան մեծ նշանակութիւն էր տալիս իր այս արշաւանքին, որ նրա մանրամասնութիւնները զանազան տեսարաններով ներկայացնել տուեց իր պալատի բրօնզէ դռների վրայ (Բալավարամ) բարձրաքանդակներով։ Այդ տեսարանները անգնահատելի պատմական և ազգագրական վաւերագրեր են։ Նրանց վրայ մենք տեսնում ենք ուրարտացիների տիպը։

Սակայն ինչ պէտք է հասկանալ Սալմանասարի արձանագրութեան այն կտորից, որ վերաբերւում է Ուրարտուին։ Բոլոր հետազօտողներն այն կարծիքի են, որ Ուրարտուի մէջ ասորական բանակը յաջողութիւն չունեցաւ։ Ճիշտ է, Սուգունիան վերցուեց, բայց Սալմանասարը, ինչպէս երևում

[1]) Սանտալճեան, եր. 140—142։

Նոմերին վերջերը.

է, չը կարողացաւ առաջ խաղալ Ուրարտուի երկրի մէջ և շտապեց հեռանալ այնտեղից, իջնելով Վանի ծովի ափը։ «Ակներև է—ասում է Նիկոլսկին—որ այդ արշաւանքը, չը նայած ամրացրած քաղաքի գրաւման, իրապէս լուրջ հետևանքներ չունեցաւ»[1]։ Արամէ թագաւորի զօրութիւնը խորտակուած չէր։

Երեք տարուց յետոյ (857) Սալմանասարը նորից արշաւեց դէպի Ուրարտու, այս անգամ արդէն հարաւարևմտեան ուղղութեամբ։ Անցաւ Եփրատը, հաթերի երկրում վերանորոգեց մի բերդ, որ պիտի պաշտպանէր նրան թիկունքից և իր անունով կոչեց այդ բերդը Կար Սալմանասարի։ Ապա նորից անցաւ Եփրատը և նուաճելով Նաիրիի մի քանի երկիրներ, դուրս եկաւ Արածանիի վերին մասերը։ Ահա թէ ինչպէս է նա ներկայացնում իր այդ արշաւանքը.

«Բիտ-Զամանի երկրին վրայ իջայ։ Բիտ-Զամանիէն ելայ, Համգանա, Միլիխու

[1]) C. 396.

երկիրները կարեցի անցայ, սեպ նուրբ շաւիղներ, լերինք դժուարագնացք, որոնք դաշունի մը սայրին պէս դէպ յերկինս վեր կը բարձրանան, անագապղնձէ թիերով փորեցի. պատերազմիկ կառքերն ու զօրքը խաղացուցի գնացուցի։ Իջի յերկիրն Ինդիտի[1]), երկրին Խուայ։ Ինդիտիի բոլոր տարածութեամբն՝ ձեռքս տիրեց։ Անոնց քաղաքներն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ Անոնց անհամար կողոպուտը, ինչքը, գոյքը առի տարի։ Թագաւորութեանս մէկ յաղթ պատկերը շինեցի, Ասսուրայ՝ մեծի տեառն՝ կարողութիւնն և իմ հզօր զօրութիւնս վրան գրեցի։ Զանի Սալուրիի մէջ կանգնեցի, որ ընդարձակ գնացքի տեղ մըն է։ Ինդիտէն ելայ, Արզանիայինն վրայէն անցայ, Սուխմի երկրին մօտեցայ։ Անոր բերդաքաղաքն Ուասատալին տիրեցի. զՍուխմի՝ բովանդակ տարածութեամբն՝ աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ ԶՍուա՝ անոնց քաղաքին տէրը՝ իմ ձեռքովս բռնեցի։ Սուխմիէն ելայ, Դախանի երկրին վրայ իջայ։ Դախանիին՝ իւր բովանդակութեամբն՝ տիրեցի. անոր քաղաքներն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ Անոնց ճոխ կողոպուտը, ինչքը, գոյքն առի։ Դախանիէն ելայ, Ուբարտացի Արամէին թագաւորական քա-

[1]) Հանձիթ, այժմ Խարբերդ։

զաքին Արզակուին [1]) մօտեցայ։ Ուրարտացի Արամէն հզօր զինուցս ասատկութենէն և ուժգին ճակատամարտէս զարհուրեցաւ, իւր քաղաքը թողուց, Ադդուրի երկիրն, լերանց վրայ ելաւ։ Անոր եռանէն լերանց վրայ ելայ. լերանց մէջ սատիկ պատերազմ տուի, 3400-ի նորա պատերազմողաց զինուք նկուն ըրի. Ռամմանի նման՝ անոնց վրայ փոթորիկ տեղացուցի, անոնց արեամբն լեռն ասրի պէս ներկեցի, անոր բանակատեղն առի. անոր մարտակառքերը, հեծեալները, ձիերը, ջորիները, որթերը, գոյքը, կողոպուտն և հարուստ ինչքը լեռներէն առի տարի։ Արամէ առ ի զերծուցանել զիւր կեանս՝ դժուարին լեռան մը վրայ ելած էր։ Իմ առնի զօրութեամբս իւր երկիրը վայրի ցլոյ մը պէս առաթուր կոխեցի, իւր քաղաքներն աւերակ դարձուցի. զԱրզասկու՝ քաղաքօք իւրոյ վիճակին՝ աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ Անոր դրան առջևը կառափունքէ կոթող կանգնեցի։ Զոմանս կենդանւոյն գերաններէն կախեցի և զոմանս գերաններուն բոլորտիքը ցիցերու վրայ վարսեցի։

[1]) Կարդացուում է և Արզասկուն, Արզասկունու։ Ուրարտական այս մայրաքաղաքի տեղը որոշել դժուար է։ Մինչդեռ Մասպերոն գնում է նրան Արածանի գետի և Վանի լճի մէջ տեղ (Histoire, III, p. 55), Նիկոլսկին կարծում է թէ նա շինուած էր Արարատի վրայ, Մեծ Մասիսի մօտ (c. 397)։

Արդասկուէն չուեցի ի լեառն Իրիտիայ ելայ. թագաւորութեանս մէկ մեծ պատկերը շինեցի. Ասսուրայ՝ իմ տեառնս՝ կարողութիւնը և Ուրարտիի մէջ իմ ի գործ դրած հզօր զօրութիւնն անոր վրան գրեցի, Իրիտիա լերան վրայ կանգնեցի։ Իրիտիաէն չուեցի, Արամալի [1]) քաղաքին մօտեցայ. անոր քաղաքներն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ Արամալիէն ելայ, Զանզուինա քաղաքին մօտեցայ... իմ ճակատամարտէս վախցաւ, ոտքերուս փարուեցաւ։ Ձիեր, հարկիք ձիոց, արջառ, ոչխարներ անկէ ընդունեցայ. անոր թողութիւն շնորհեցի... Յընթացս արշաւանացս՝ ի ծոցն Նաիրիի իջայ. Ասսուրայ հզօր զէնքերը ծովուն մէջ մխրճեցի, զոհ մատուցի, թագաւորութեանս մէկ պատկերը շինեցի. զկարողութիւն Ասսուրայ՝ մեծի տեառն, իմ տեառնս, իմ դիւցազնական քաջագործութեանս պատմութիւնն և զօրեղ գործերս վրան գրեցի»[2])։

Վանի լճի ափից Սալմանասարը Ասորեստան է իջնում Կիրզանի և Խուբուշկիա երկիրների վրայով, ո-

[1]) Արամալի նշանակում է Արամի բնակարան։ Նիկոլսկին ենթադրում է որ այս մայրաքաղաքը գտնուած պիտի լինէր այն տեղը, որ յետոյ ստացաւ Արմաւիր անունը։

[2]) Մանտալճեան, եր. 143—145։

ոնց նորից ենթարկում է իր իշխանութեան։ Նաիրիի երկիրներում և յատկապէս Ուրարտուի դէմ գործելու համար Սալմանասարը իր երրորդ արշաւանքը կատարում է մէկ էլ 12 տարուց յետոյ (844-ին)։ Այս արշաւանքը նա նկարագրել է արդէն շատ համառօտ կերպով.

«Կառավարութեանս 15-րդ տարին դէպի Նաիրիի երկիրը քալեցի։ Տիգրիս գետոյն աղբերականց վրայ՝ լերան քարաձերպի մը մէջ՝ անոր աղբերական բազկին ծագման տեղն իմ արքայական պատկերս շինեցի։ Կարող զօրութիւնս և զպատմութիւն իմոյ դիւցազնական քաջութեան անոր վրայ գրեցի։ Տունիբունի երկրին մըտից—կրճին մէջ մտայ։ Ուրարտացի Արամէին քաղաքները՝ մինչև ցգլուխ ջրոյն Եփրատայ [1]) աւերեցի, քանդեցի, հրով այրեցի։ Եփրատայ աղբերակունքը գնացի, աստուածոցս զոհեր մատուցի։ Հոն Ասուրայ զէնքերը փառաւորեցի[2])։ Ասիա, Դիա-

[1]) Արածանի, արևելեան Եփրատ։

[2]) Տիգրիսն ու Եփրատը մեծ, սրբազան նշանակութիւն ունէին Միջագետքի բնակիչների համար։ Այս պատճառով էր, երևի, որ ասորական թագաւորները չէին կարողանում անտարբեր անցնել այդ եր-

նի երկրին թագաւորն ոտքերուս փարուեցաւ. ի սակ հարկի բազմաթիւ ձիեր ընդունեցայ։ Թագաւորական պատկերս շինեցի, անոր քաղաքին մէջ տեղը կանգնեցիւ»[1]։

Այսպէս են ներկայանում Ասորեստանի յարաբերութիւնները ուրարտուի հետ ասորական արձանագրութիւնների մէջ։ Սալմանասարի պատմուածքները, ընդհանուր առմամբ, նպատակ ունին հասկացնելու թէ նա խորտակեց Ուրարտուն, յաղթեց ու իր իշխանութեան ենթարկեց Արամէ թագաւորին։ Մենք տեսանք որ առաջին արշաւանքի հետևանքները չեն համապատասխանում ասորական թագաւորի հաւաստիացումներին։ Այսպէս էին և հետևեալ երկու արշաւանքները։ Ճիշտ է, քաղաքներ քանդուեցին, մարդիկ կո-

կու գետերի ակունքների մօտով։ Սուքնատ գետի կիրճը համարւում էր Տիգրիսի ակունք. և այդտեղ թագաւորները իրանց պատկերներն են թողնում։ Սալմասասարը, հասնելով Եփրատի ակունքին (այժմեան Դիադին), գտներ մատուցեց այդտեղ։ Ցայտնի է որ Եփրատի այս ակունքը սրբազան նշանակութիւն ունի հայ ազգաբնակութեան համար և այժմ։

1) Սանտալճեան, եր. 149.

տորուեցին, բայց և այնպէս, կատարեալ և վերջնական յաղթանակ տեղի չունեցաւ։ Զը նայած իր զուռզ ինքնագովութիւններին, Սալմանասարը, այնուամենայնիւ, չէ կարողանում ասել թէ գերիներ է վերցրել, իր ձեռքն է գցել երկրի իշխողներին, մեծամեծ աւար է տարել և հարկեր է դրել ընկճուածների վրայ։ Իսկ այս բոլորը, ասորական արձանագրութիւնների լեզուն և ոգուն լաւ ծանօթ մարդկանց ասելով, նշանակում է եթէ ոչ պարտութիւն, գէթ աննշան մի յաջողութիւն։

Նաիրիի թագաւորները այժմ իւրացրել էին նոր ռազմական սկզբունք։ Առաջուայ նման նրանք այլ ևս չէին կենտրոնացնում իրանց ոյժերը թշնամու դէմ ճակատամարտերի մէջ, այլ մղում էին մանր պատերազմ, լեռնային ամրութիւնների մէջ փակուած և այսպիսով յոգնեցնում էին թշնամուն, որ ստիպուած էր բազմաթիւ ամրութիւններ վերցնել զէնքով։ Մեծ յաջողութիւններ այս սիստեմի պատ-

ճառով չէր կարող վաստակել ասորական բանակը, և երկրի քաղաքական կազմակերպութիւնը, մեծագոյն մասամբ, ծնում էր անաղարտ։

Այս սիստեմը գուցէ Արամէ թագաւորի գործն էր։ Սա սովորական թագաւորներից չէր։ Սալմանասարը անդադար նրա անունն է տալիս և վկայում է, որ նա բազմաթիւ զօրքեր ունէր։ Այսպիսով Ուրարտուն արդէն մի ուժեղ թագաւորութիւն էր, այնքան ուժեղ, որ յատկապէս նրան նուաճելու համար ասորական բանակները այնքան երկար արշաւանքներ էին սկսում։ Թէև Ուրարտուն Նաիրիի միջին և հիւսիսային կողմերն էր գրաւում և Ասորեստանից բաժանուած էր Նաիրիի ուրիշ երկիրներով, բայց այս հանգամանքը չէր կարող հանդստացնող ընաւորութիւն ունենալ Նինուէի կառավարութեան համար, որ տեսնում էր թէ ինչպէս փոքրիկ Ուրարտուն արագ կազմակերպւում է, դառնում ուժեղ թագաւորութիւն։

կազմակերպողը, պետական միութիւն ստեղծողը Արամէ թագաւորն էր։ Հեթիթական մանր ազգակից ցեղերի այն բազմաթիւ իշխանութիւնները, որոնք ծածկում էին Արաքսի վերին և միջին հովիտները, այն նիւթն էին, որից գոյանում էր նոր պետութեան զանգուածը։ Կուլտուրայով, լեզուով ու սովորութիւններով միանման էին այդ ցեղերը և դրանց էլ Արամէն հաւաքեց, ինչպէս կարելի է ենթադրել, ոմանց զէնքի ոյժով, ոմանց՝ խաղաղ դաշնագրական համաձայնութիւններով։ Աւելի մեծ գործ տեսնում էին խաղաղ համաձայնութիւնները և այստեղ Ուրարտուն հանդիսանում էր ոչ միայն զինուորական ազգու ոյժ, որ թելադրում էր իր հետ միանալու օգուտները, այլ և կուլտուրական մի այնպիսի միջավայր, որ անհամեմատ բարձր էր միւսներից և, ուրեմն, կարող էր նրանց բոլորին ձուլել իր մէջ։ Կուլտուրայով գօրեղանալու, կուլտուրայով յաղթահարելու և տիրելու մեծ գաղափարը Ուրարտուն

սկսեց գործադրել Արամէի ձեռքով և սրա ժամանակ, ինչպէս կը տեսնենք, երկիրը աշակերտում էր Ասորեստանին, սովորում էր նրա լեզուն, նրա գրութիւնը։ Ասորական գէնքը ոչնչացնել այդ ընդունակ և մեծագործ թագաւորին չը կարողացաւ։ Ուրարտուն և նրա կազմակերպած դաշնակցութիւնը շուտ էին բուժում իրանց ստացած վէրքերը և պետական շինարարութեան գործը առաջ էր գընում եռանդով։

«Արամէին — ասում է Նիկոլսկին — մենք պէտք է համարենք ուրարտական հզօրութեան իսկական հիմնադիր։ Նա ոչ միայն երեք անգամ յաղթականօրէն յետ մղեց իր երկրի դէմ ուղղած ասորական երեք արշաւանքները, բայց և մի շարք վճռական գործողութիւններով և միջոցներով իրանից կախում ունեցող հարևան երկիրների մէջ ստեղծեց մի անմատչելի պաշտպանութիւն Ասորեստանի դէմ, որի շնորհիւ ասորեստանցիների ներս խուժումը Ուրարտու ապագա-

յում դարձաւ ընդ միշտ անկարելի։ Ասորական տարեգրութիւնները, ի հարկէ, ոչինչ չեն ասում մեզ այն մասին թէ ինչի մէջ էր կայանում այդ թագաւորի ներքին և ակտիւ գործունէութիւնը, բայց եթէ մենք ունենայինք նրանից (Արամէից) սեփական արձանագրութիւններ, մենք անշուշտ կիմանայինք թէ որքան ջանքեր, որքան մրցութիւն էր պէտք նրան՝ լայնացնելու համար իր պետութիւնը մինչև Եփրատ և վասսալական հպատակութեան ենթարկելու համար իր հզօր հարևաններին. մենք տեսնում ենք, որ նա պայքարում է Ասորեստանի դէմ ոչ թէ իրրև մէկը դաշնակիցներից, այլ ինչպէս միապետ մի մեծ պետութեան, անձամբ իր անունից, և այստեղ մենք այլ ևս չենք հանդիպում տասնեակ այնպիսի ազգերի անուններին, որոնք իրրև ամբոխ դուրս էին գալիս ասորիների դէմ և ցրւում էին փոշու նման։ Սա մի կազմակերպուած քաղաքական և զինուորական սիստեմ էր, որ կար-

*գապանութիւն և հնազանդութիւն էր մտցնում բաժան բաժան ազգերի զանգուածի մէջ և որ անաւոր էր Ասորեստանի համար»*[1]։

---

[1]) Никольскій—„Клинообразныя надписи Ванскихъ царей, отк. въ Россіи" („Древности Восточныя", т. I в. III, с. 399).

# ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

## ՎԱՆԵԱՆ ՇՐՋԱՆ

ԳԼՈՒԽ Թ.

## ՇԱՐԴՈՒՐԻ Ա.

Չորրորդ անգամ ասորական բանակը Ուրարտու արշաւեց 832 թուականին։ Այս անգամ նրան Ուրարտուի մէջ հանդիպողը այլ ևս Արամէն չէ, այլ Սեդուրի անունով թագաւորը։ Որպէս զի իմանանք թէ ով է սա, պիտի դիմենք պատմական այն աղբիւրներին, որոնք նոյն այս ժամանակներից են սկիզբ առնում, այն է՝ Վանեան սեպաձև արձանագրութիւններին։

Այդ արձանագրութիւններից հնագոյնը, որ գրուած է ասորական լեզուով, պատկանում է Սարդուրի թագաւորին։ Եւ սա, ինչպէս ապացուցել

է Սէյսը, նոյն Սեղուրին է, որ յիշատակուած է Սալմանասար Բ-ի արձանագրութեան մէջ իբրև Ուրարտուի թագաւոր։ Ուրեմն, 832 թուին Արամէի թագաւորութիւնը գտնուում էր Սարդուրիի ձեռքին։

Իր արձանագրութեան մէջ Ուրարտուի այս թագաւորը իրան անուանում է Լուտիբրիի որդի։ Ի՞նչ յարաբերութիւն ունէր նա Արամէի հետ։ Ճիշտ տեղեկութիւններ չեն մնացել, իսկ գիտնականների կարծիքները այստեղ հակառակ ուղղութեամբ են ընթանում։ Սէյսը կարծում է թէ Արամէն, սասաիկ պարտութիւն կրելով Սալմանասարից, կորցրեց հեղինակութիւնն իր ժողովրդի մէջ. տեղի ունեցաւ յեղափոխութիւն, որ և առաջացրեց մի նոր հարստութեան հաստատումը ուրարտական գահի վրայ։ Եւ այդ դինաստիայի հիմնադիր պէտք է համարել Սարդուրիին։ Ուրիշները (օր. Նիկոլսկին, Սանտալճեան) հակառակն են պնդում, այսինքն թէ Սարդուրին Արամէի ժառանգներից էր

և ոչ մի հիմք չը կայ ենթադրելու թէ դինաստիաների փոփոխութիւն է առաջացել, քանի որ Արամէն ոչ միայն պարտուած չէր, այլ մեծ հեղինակութիւն ունէր ժողովրդի մէջ իբրև Ուրարտուի հզօրութեան հիմնադիր և հիւսիսային ազգերի միութեան հեղինակ։ Որ Սարգուրին Արամէի որդին չէ, այլ Լուտիբրիի, այս բոլորովին չէ նշանակում թէ նա, ուրեմն, չէր կարող Արամէի ուղիղ ժառանգը լինել։ Լուտիբրին կարող էր թագաւորած լինել Արամէից յետոյ կարճ ժամանակ։

Մի ուրիշ նշանաւոր հանգամանք, որ ներկայացնում է Սարգուրի թագաւորը, այն է որ նրա ձեռքով Ուրարտական թագաւորութեան կենտրոնը տեղափոխուած է հարաւ, Վանի լճի արևելեան ափը, այն երկիրը, որ յետագայ թագաւորների արձանագրութիւնների մէջ պիտի հռչակուի Բիայնա անունով և այն քաղաքը, որ ստանում է Տուսպա կամ Տուշպա անունը։ Սարգուրին իր արձանագրութեան մէջ, որ փորագրուած է քարի

մի մեծ կաորի վրայ և գտնուած է Վանի միջնաբերդի ստորոտում, հայոց ս. Յովհաննէս եկեղեցու աւերակների մէջ, ասում է թէ Ալնիունայ քաղաքում ինքը բերդ շինեց[1]։ Ենթադրում են որ Տուսպա (Վան) քաղաքի ամենահին անունն է այս։ Հետևաբար, Սարդուրին էր որ առաջին անգամ Վանի բնական ամրութիւնների վրայ ուշադրութիւն դարձրեց և թագաւորութեան կենտրոնը այդ մեծ ժայռի վրայ հիմնաւորեց։

Ի՞նչ նկատառումներով էր ղեկավարուել Սարդուրին, ձեռնարկելով այդպիսի մի գործի։ Վանի աշխարհագրական դիրքը Միջագետքի վերաբերմամբ առաջին իսկ հայեացքից միանգամայն հասկանալի է դարձնում Սարդուրիի այդ ընտրութիւնը։ Լաւագոյն դիրք հարաւից դէպի հիւսիս շարժուող պետութեան հարուածները ոչնչացնելու համար չէր էլ կարելի գտնել։ Մոտենալ մի կողմից լճով և միւս կողմից լեռնային շղթայով պաշտպանուած

[1]) Sandalgian, p. 2.

այդ ամրութեան կարելի էր երկարաձգել ծանր աշխատանքով, որ պիտի կատարուէր Տարոսի և Զագրոսի լեռների միջով։ Ահա ինչպէս է Նիկոլսկին գնահատում Վանի նշանակութիւնը նորակազմ պետութեան համար.

«Ինչ վերաբերում է Բիայնա երկրին, որի մէջ գտնուում էր այս քաղաքը (Վան), նա ամենահին ժամանակներից կարող էր եղած լինել մի երկիր, որ անբաժան կերպով կապուած էր Արաքսի վրայ գտնուող Ուրարտուի հետ և նոյն իսկ նրա համար կենտրոնական տեղի դեր կատարել մի որ և իցէ պատճառով։ Կարելի է հաւանականօրէն ենթադրել, որ առաջներում Բիայնայի ոչ թէ քաղաքական պայմանները, այլ կրօնական պաշտամունքի նշանակութիւնը տալիս էր նրան առաջնակարգ դիրք Ուրարտուի երկիրների մէջ։ Բիայնա երկրում կամ նրանից մօտ մի տեղ, շատ հաւանական է որ գտնուում էր ուրարտական պաշտամունքի կենտրոնը, այն է Խալդի աստուծու, ուրար-

տական աստուածությունների մէջ ամենակարևոր այս աստուծու, բնակության տեղը[1]։ Բիայնա անուան հետ մի շարքում մենք հանդիպում ենք մի ուրիշ անուան, որ նոյն երկրին էր պատկանում, այն է՝ Մալդինա, այսինքն Մալդի աստուծու երկիր։ Այս սրբազան երկիրը ուրարտական ժողովրդի համար միայն մի առանձին նահանգ էր Բիայնա երկրում և շատ կարելի է, որ հեռաւոր ժամանակներից Ուրարտուի թագաւորները ոտնձգութիւններ ունէին կրելու այս քաղաքականապէս անկարևոր երկրի տիտղոսը ազգային-կրօնական պատճառներով։ Բայց, ի հարկէ, այս կրօնական նկատառումները չէին որ հարկադրեցին Ուրարտուի թագաւորներին փոխադրել իրանց պետութեան ծանրութեան կենտրոնը հիւսիսից հարաւ, այլ զուտ ռազմագիտական նկատառումները, որոնք ներշնչում էին այն եռանդուն քաղաքականութեամբ, որ վարում են

[1]) Մենք արդէն տեսանք որ այդ տեղը Մուզասիր (Աբդինի) քաղաքն էր՝ Վանի լճի ափանին պատկանող Մուզասիր երկրում...

Ասորեստանի վերաբերմամբ Ուրարտուի թագաւորները Արամէի նախաձեռնութեամբ։ Փոխադրելով իրանց պաշտպանողական գիծը Արաքսից և Արարատից Եփրատի [1]) վրայ, նրանք կարիք զգացին պաշտպանութեան ուժեղութեան և յարմարութեան համար հարաւ փոխադրել և իրանց մայրաքաղաքը և ստեղծել նրանից մի նոր յենակէտ Ասորեստանի դէմ։ Տեղը շատ յաջող կերպով ընտրուած եղաւ անմատչելի մենաւոր ժայռի վրայ, որ մօտիկ տարածութեան վրայ շրջապատուած էր լեռնային շղթաներով, իսկ արևմուտքից խոնարհուած էր դէպի ծովը։ Ուրարտուի թագաւորը, ընակութիւն հաստատելով Վանում, դրանով պարզ նշմարում էր իր նպատակը — ամրապնդել հարաւում իր հզորութիւնը և դրա հետ միասին լինել հիւսիսի տէրը և համարել իրան անմերձենալի՝ որ և իցէ կողմից յարձակում լինելու դէպքում»[2])։

---

[1]) Արևելեան։

[2]) Ibid c. 401.

Այս շարժումները, հիսախում աճող այս քաղաքական միտումները իրանց արժանի ուշադրություն ու գնահատություն էին գտնում Միջագետքում։ Սալմանասարը հեռևեալ կերպով է նկարագրում 832-ի արշաւանքը. «Կառավարութեանս 27-դ տարին պատերազմիկ կառքերս և զօրքս գումարեցի, զԴաինասուր զՏուրասան (ընդհանուր սպարապետ) բանակին ստուար մասին հրամանատարն ի գլուխ զօրացս Ուրարտուի վրայ զրկեցի։ Իշաւ ի Բիտ-Զամանի և Ամմատուբիի կիրճին մէջ Արզանիային վրայէն անցաւ։ Ուրարտացի Սեղուրի այս բանիս լուրն առաւ, իւր մեծաթիւ զօրաց բազմութեանը վստահացաւ և պատերազմ ու ճակատ տալու համար ինձի [1]) դէմ քալեց։ Անոր հետ պատերազմեցայ, անոր

[1]) Թէև Սալմանասարը չէր դնում Ուրարտուի դէմ, այլ նրա զօրապետներից մէկը, բայց և այնպէս գործողությունները իր դէմքից է պատմում թագաւորը։ Այս անիրաւացի չէ, եթէ նկատի առնենք, որ զօրքը թագաւորինն էր, նրա գործողությունները թագաւորի համար էին և նրա դէմ կռուելը թագաւորի դէմ կռուել էր նշանակում։

յաղթեցի։ Իւր զօրացը դիակներովն ընդարձակ դաշտը լեցուցի» [1])։

Նկարագրութեան համառօտութիւնն ու անգունութիւնն անգամ բաւական համոզիչ են ցոյց տալու համար որ ասորական բանակը ոչինչ յաջողութիւն չէ ունեցել։ Ուրարտուի պաշտպանողական դիծը այս անգամ այլ ևս Բագրևանդը չէ, այլ հարաւային Արածանին։ Սարգուրին մենակ, առանց դաշնակիցների դուրս եկաւ ասորական բանակի դէմ և յաղթականօրէն դիմադրեց նրան, չը թոյլ տալով որ նա նոյն իսկ մտնէ Ուրարտուի սահմանները։ «Սնամէջ ասածը թէ «ես նրան յաղթեցի» ասորական արձանագրութիւնների լեզուով համազօր է «ես յաղթուեցի» խօսքերին, ասում է Նիկոլսկին [2])։ Սարգուրին հանդիսանում էր Արամէի արժանաւոր ժառանգը և նրանից ոչ պակաս մեծ թագաւոր։

Միայն «մեծաթիւ զօրքերի բազմութիւնը» չէր վստահութիւն ներշն-

[1]) Սանտալճեան եր. 136։

[2]) Ibid c. 348։

չում Ուրարտուի թագաւորին, այլ և այդ երկրի մէջ ծագած առաջադիմութիւնը։ Սարգսեանն իր ժողովրդի համար էր գրում իր արձանագրութիւնները (երկու հատ)։ Եւ երբ այս արձանագրութիւնների լեզուն ասորերէնն էր, այս արդէն ցոյց է տալիս թէ ասորական լեզուն, գրութիւնը, դրանց հետ և Միջագետքի կուլտուրան շատ էր տարածուած այդ երկիրներում։ Արևելքի պատմութիւնը վկայում է որ քաղդէական քաղաքակրթութիւնը ամենահին ժամանակներից էր իր հզօր ազդեցութիւնը տարածել շատ երկիրների, դրանց թւում և Հայկական Բարձրաւանդակի վրայ։ Իսկ յատկապէս ասորական ազդեցութիւնը պիտի հաստատուէր դարերի ընթացքում տեղի ունեցած շփումների միջոցով և մանաւանդ Աբրամէի ժամանակից, երբ Ուրարտացի ժողովուրդը արդէն մտաւոր-կրթական աշխատանքի մէջ է ցոյց տալիս իր եռանդը։ Նմանուել իր հզօր հակառակորդին — սա ուրարտացիների համար դատարկ ինքնասիրութիւն չէր,

այլ պետական-քաղաքակրթական նպատակ։ Եւ այս ուղղութիւնը պարզելու համար թանկագին նիւթեր են տալիս Սարգուրիի արձանագրութիւնները։

Այստեղ Սարգուրին գործ է ածում այնպիսի տիտղոսներ, որոնք յատուկ էին Ասորեստանի թագաւորներին. «Տախտակ Սարգուրեայ՝ որդւոյ Լուտիբրեայ, արքայի մեծի, արքայի հզօրի, արքայի բազմութեանց, արքայի Նաիրեայ, արքայի՝ որում ոսոխ նմա ոչ գտաւ, մարդկան հովուի սքանչելւոյ, որ չերկնչի յընդդիմութենէ, արքայի նուաճողի զանհնազանդս նմա։ Սարգուրի որդի Լուտիբրեայ, արքայ արքայից, յամենայն ի նոցունց թագաւորաց հարկս առի»[1]։ Այս բոլոր յորջորջումները նախ ցոյց են տալիս թէ իրօք ինչ ազդեցութեան և տիրապետական հեղինակութիւն էր հասել Ուրարտուի թագաւորը։ Աշխարհակալ նուաճողի տիպը, որ մշակուել էր Միջագետքի դաշտերում, տեղափոխուում էր հիւսիսային լեռնաշխարհը։ Ասորեստ-

[1]) Sandalgian p. 2.

տանի միապետը պարծենում էր «Շումիրի և Ակկարի արքայ» տիտղոսով, Ուրարտուի միապետը դրան հակադրում էր «Նաիրիի երկիրների թագաւոր» տիտղոսը։ Մնապարծութեան համար չէր այս հակադրութիւնը։ Զգում դէպի համաշխարհային տիրապետութիւն [1]) ահա ինչ պիտի ցուցադրէր այդ տիտղոսը. և ահա ինչ պիտի տար այն պայքարը Ասորեստանի դէմ, որ միացնում էր Նաիրիի թագաւորներին մի ընդհանուր գլխաւորի, մի շահնշահի (արքայից արքայի) գայիսոնի տակ։

Արամէի և Սարդուրիի ջանքերով Ուրարտուի սահմանները անմատչելի էին դարձել ասորեստանցիների համար։ Նրանց առաջացրած ազգային—քաղաքական շարժումները Նաիրիի անթիւ ցեղերին տուել էին ինքնագիտակցութեան և ոգևորութեան ուժեղ կռուաններ, այնպէս որ Ուրարտուի և Ասորեստանի մէջ բնակուած այդ ցեղերը արդէն կենդանի պատուարներ էին Ուրարտուն պաշտպանելու համար։

[1]) Никольскій с. 402.

ԳԼՈՒԽ Ժ.

# ԻՍՊՈՒԻՆԻ

Սարգուրի Ա.-ին յաջորդեց նրա որդի Իսպուինի, որից հասել են մեզ հինգ հատ սեպաձև արձանագրություններ։ Այդ յիշատակարանների մէջ Իսպուինին հանդէս է գալիս միայն իր անունով, բայց կան և չորս հատ արձանագրություններ, որոնց մէջ Իսպուինին իր որդի Մենուասի (կարդացւում է և Մենուա) հետ է գործում։ Այս վերջին հանգամանքը ենթադրել է տալիս որ իր թագաւորության վերջում Իսպուինին իր գահակիցն էր դարձրել որդուն, գուցէ սրան յանձնելով զօրքերի հրամանատարությունը, իսկ իրան վերապահելով ներքին կառավարությունը։

Տեսնենք նախ արտաքին յարաբերութիւնները, այսինքն Ասորեստանի վերաբերմունքը։ Սալմանասար Գ.-ին յաջորդեց նրա որդի Շամսի-Ռամմանը (825 – 812 Ք. ա.), որ իր 13 ամեայ թագաւորութեան ընթացքում նպատակ էր դարձրել ոչնչացնել Նաիրիի ոյժը, բայց յաջողութիւն չունեցաւ, որովհետև կար Ուրարտուն, որ գիտէր դեկավարել Նաիրիի ցեղերը։ Թագաւորութեան առաջին տարին Շամսի-Ռամմանը հիւսիս-արևմտեան կողմից յարձակուեց Նաիրիի վրայ, բայց չը կարողացաւ նոյն իսկ Արածանիին հասնել որպէս զի փորձէ ուրարտական հողը կոխել։ Նա պատերազմական գործողութիւններ էր մղում ընդարձակ տարածութեան վրայ, մինչև նոյն իսկ Կարխեմիշ քաղաքը։ Սակայն, ինչպէս երևում է, ստիպուած եղաւ թողնել այդ տեղերը և վերադառնալ Ասորեստան՝ այդտեղից դէպի հիւսիս-արևելք դիմելու համար, քանի որ պետութիւնը վտանգուած էր այդ կողմից։ Դէպի Ուրմիայի լճի և Կասպից

ծովի ուղղութեամբ գետեղուած երկիրները, ամենքն էլ ուրարտացիներին ցեղակից ազգաբնակութեամբ, ապստամբուել էին, և Նինուէի թագաւորին հարկաւոր եղաւ շատ հեռաւոր արշաւանքի ձեռնարկել՝ այդ շարժումները ճնշելու համար։

Իմանալու համար թէ ինչից էին ներշնչւում և ինչպէս էին առաջանում այդ ապստամբական շարժումները, մենք պիտի որոնենք վանեան արձանագրութիւններ։ Եւ ահա տեսնում ենք Իսպուինիի ու նրա գահակից Մենուասի արձանագրութիւնները Ուրմիայի լճի հարաւ-արևմտեան կողմում, Կելէշէնի և Սեռէկի մօտ, Ռէվանդուզ գաւառում։ Կելիշէնի կիրճը Զագրոս լեռների միջով տանող ամենայարմար ճանապարհն է, որ դուրս է բերում Տիգրիսի հովիտը և այս ճանապարհով Վանը Նինուէից մի քանի օրով էր միայն հեռու [1]։ Մեզ յայտնի չեն Իսպուինիի և Մենուասի այս

[1]) De Morgan «Mis. Scien. en Perse», t. IV p. 279.

շարժման մանրամասնությունները, բայց ռազմական այդ կարևոր կէտը, ուր նրանք կանգնեցին կոթող արձանագրությամբ, պերճախօս ապացոյց է որ Վանը ամենալուրջ կերպով սպառնում էր Նինուէին, միւս կողմից էլ վտանգաւոր շարժում էր մտցնում Ասորեստանի հպատակ այն ազգությունների մէջ, որոնք բնակուած էին Իրանի սարահարթի հիւսիս-արևմտեան կողմերում։ Այնպէս որ Շամսի-Ռամմանի գործողությունները աւելի ինքնապաշտպանողական բնաւորություն ունէին [1])։

Արտաքին այս փայլին համապատասխանում էր ներքին կուլտուրական փայլը, որ նորակազմ թագաւորությունը հանդէս բերաւ Իսպուինիի ժամա-

[1]) Իր արձանագրություններից մէկի մէջ Իսպուինին գործ է ածում «Շուրա և Նաիրի երկիրների թագաւոր» տիտղոսը։ Նիկոլսկին կարծում է թէ «Շուրա, անունը Աշուրայ անուան ուրարտական ձևն է, իսկ Աշուրան՝ Ասորեստանն էր։ Ռուս գիտնականը գտնում է որ այսպիսի մի տիտղոս Իսպուինին կարող էր գործածել, քանի որ նա իրապէս տիրում էր ասորական մի քանի երկիրների վրայ (Клин. Надп. եր. 407)։

նակից։ Ժողովրդի մէջ տեղի ունէին մեծամեծ քաղաքակրթական շարժումներ։ Մինչդեռ Սարդուրին ասորական լեզուն էր գործածում իր արձանագրութիւնների մէջ, նրա որդին կիրառութեան մէջ է դնում ասորական սեպագրութեան մի նոր սիստեմ, որ յատկապէս մայրենի լեզուի համար էր մշակուած։ Ուրարտական լեզուն այնուհետև դառնում է գրաւոր պաշտօնական լեզու։ Ոչինչ մանրամասնութիւն այս մասին չը գիտենք, բայց հսկայական գործը ինքն ըստ ինքեան թելադրում է ենթադրել ազգային ինքնագիտակցութեան մի եռանդուն և արդասաւոր շարժում։ Ասորական սեպաձև նշաններն իրրև նիւթ ծառայեցնել, վերլուծել ուրարտական լեզուի հնչիւնները և իւրաքանչիւրին յատկացնել առանձին նշան, մի խօսքով կատարել տառերի գիւտ—այսպիսի մեծագործութիւն գլուխ բերելու համար պէտք էր որ ստեղծուած լինէր ժողովրդի մէջ դաստիարակութեան և ազգային կրթութեան մեծ պահանջ, պէտք էր

որ լինէին ակադեմիական ծանր աշխատանք կատարելու ընդունակ գիտնականներ։

Եւ նորաստեղծ ազգային գրականութիւնը իսկոյն իր յուշարձանն է բարձրացնում Վանի ժայռերի վրայ։ Դա այն ընդարձակ սեպագրութիւնն է, որ փորագրուած է Մհերի դուռ ժայռի վրայ։ Արձանագրութիւնը 84 տող է և նրա բովանդակութիւնն էլ վկայում է որ Իսպուինիի և Մենուասի խաղաղ շինարարական գործունէութիւնը, բացի գրականութիւնից, տուեց երկրին նաև ազգային միացման այնպիսի մի խոշոր գործ, որպիսին էր սիստեմի վերածած կրօնական պաշտամունքը։ Ինչպէս տեսանք, Մհերի դրան արձանագրութիւնը մի առ մի յիշում է Բիայնա երկրի և նրա դաշնակից երկիրների և քաղաքների աստուածներին և կանոնադրում է թէ ինչ զոհեր և ընծաներ պիտի ստանայ իւրաքանչիւր աստուածութիւն այդ աւատական պանթէոնի մէջ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

# ՄԵՆՈՒԱՍ Ա.

Իսպուինիի մահից յետոյ մենակ սկսեց թագաւորել Մենուասը (շուրջ 800—780 թ. Ք. ա.)։ Կորովի, յաղթող, ընդարձակ ձեռնարկութիւնների, մեծագործութիւնների մարդ էր նա և աշխարհակալ մի թագաւոր։ Նա մի խոշոր օրինակ է տալիս արևելքի միահեծան նուաճող իշխանութեան, որ մի և նոյն ժամանակ աւելի շինարարական մեծամեծ աշխատանքներով է զբաղուած, քան իր յաղթական սրի համար պարծենկոտութեան նորանոր առիթներ որոնելով։ Իսկապէս Մենուասի ժամանակն է, որ Հայկական

Բարձրաւանդակի վրայ սկսում է կազմուել մի պետութիւն, որ ձգտում էր յենուել այդ երկրի բնական սահմանների վրայ։ Մինչև այդ՝ Հայկական Բարձրաւանդակի այս կամ այն մասն էր դառնում ուրարտական թագաւորութեան հողը։ Այդ դրութեան մէջ ոչ մի թագաւորութիւն դեռ չէր կարող իրան համարել ամբողջ Բարձրաւանդակի տէր, հետևաբար և բնական սահմաններով պաշտպանուած մի քաղաքական ամբողջութիւն։

Մենուասի պատերազմական գործողութիւնները արևելքում հասան Ուրմիա լճին. Մաննայի երկիրը, որ կռուածաղիկ էր Ուրարտուի և Ասորեստանի մէջ, ենթարկուեց առաջինին։ Իսկ արևմուտքում Մենուասը իր զէնքը մտցրեց հեթիթների երկիրը։ Գրաւելով Պուտերիոս (հաւանաբար այժմեան Պալու) քաղաքը, նա առաջացաւ դէպի Մելիդա (Մելիտինէ, Մալաթիա) քաղաքը և յաղթական պատերազմ ունեցաւ այդտեղի թագաւորի հետ։

Բայց աւելի նշանաւոր էր շարժումը դէպի հիւսիս։ Ուրարտուն սկզբից ձգտում ունէր տարածուելու հարաւից դէպի հիւսիս և մենք արդէն տեսանք, որ Արամէի ժամանակ նրա սահմանը հիւսիսում հասել էր Արզանի (Արածանի) գետի ակունքներին։ Մենուասը վերջնականապէս գրաւեց այդ գետի ամբողջ հովիտը մինչև նրա խառնուրդը արևմտեան Եփրատի հետ։

Այստեղից նա իր իշխանութիւնը տարածեց նաև Էրզրումի սարահարթի վրայ, ինչպէս ցոյց է տալիս Հասանկալէի սեպաձև արձանագրութիւնը, որի մէջ Մենուասը պատմում է թէ այդ կողմերում մի տաճար է վերանորոգել։ Մի անգամ մտնելով Արաքսի վերին հովիտը, Մենուասը շարժուեց դէպի արևելք նոյն հովիտով և Արաքսի աջ ափին, Մեծ Մասիսի ստորոտի մօտ, այժմեան Տաշրուրուն գիւղում թողեց արձանագրութիւն, որ վկայում է թէ նա նուաճեց Երիդուաինի երկիրը և նրա մայրաքաղաք Լուխիունինին և փոխելով վերջինիս անունը,

կոչեց իր անունով Մենուահինի[1]։ Ինչպէս ցոյց են տուել այստեղ կատարուած պեղումները, Մենուահինին եղել է մի բաւական խոշոր քաղաք, մի և նոյն ժամանակ և մի մեծ բերդ, որ շատ կարևոր դեր է կատարել[2], քանի որ գտնուում էր հաղորդակցութեան այն նշանաւոր ճանապարհի վրայ, որ Վանից Զինգիլի լեռնանցքով մտնում է Արարատեան դաշտը։ Յենելով այդ խոշոր ամրութեան վրայ, Մենուասը և նրա յաջորդները հետզհետէ առաջ տարան իրանց նուաճումները Արաքսի հովտում և այդտեղից հիւսիս, դէպի Փոքր Կովկասի լեռները։

Մեզ թւում է թէ այս խոշոր հանգամանքը շատ պարզ կերպով որոշում է, որ Ուրարտուն նախնապէս Արաքսի հովտում չէր գտնուում և որ ուրարտացիները այնտեղից չէր որ շարժուեցին դէպի հարաւ, դէպի Վան։

[1]) Никольскій—«Клинооб. Надписи Закавк.», с. 14—30.

[2]) Ивановскій—„По Закавказью", с. 54—61.

եթէ Արաքսի հովիտը լինէր ուրարտացիների բնագաւառը, պէտք չէր լինի որ նրանք նորից նուաճեն նրան՝ այդտեղից իրանց թագաւորութեան կենտրոնը հարաւ փոխադրելուց մի քանի տասնեակ տարի միայն անցնելուց յետոյ։ Նիկոլսկին զգացել է այս հակասութիւնը, որ տապալում է նրա թէորիան և այդ պատճառով Մենուասի և նրա յաջորդների՝ շարժումները դէպի հիւսիս փորձում է բացատրել նրանով թէ Արաքսի հովտում եղած իշխանութիւնները ինքնագլուխ էին դարձել և Վանի թագաւորները ստիպուած էին նորից նուաճել նրանց։ Այսպէս կարող էր լինել միայն այն ժամանակ, եթէ Արաքսի հովիտը հաստատուն ուրարտական հող չը լինէր, եթէ Վան տեղափոխուած թագաւորների հետ այստեղից հեռացած լինէր և ամբողջ ուրարտական ժողովուրդը, մի բան, որ, ի հարկէ, չէ կարելի ընդունել։ Ուրարտացիները չափազանց հասկացող և ընդունակ մի ժողովուրդ էին, որպէս զի բոլորովին

լքէին այնպիսի մի կարևոր և հարուստ երկիր, որպիսին է Արաքսի հովիտը։

Այս հանգամանքները նորից աւելի հաւանական են դարձնում ուրարտացիների շարժումը Վանի լճի աւազանից դէպի հիւսիս և ոչ թէ հակառակը։ Եւ Մենուասը, երևի, շարունակում էր Արամէի գործը։

Իսկ հաջաւում Մենուասը իր ձեռքը դցեց Տարօնի գաւառը, Մուշի դաշտը[1])։ Այսպիսով Վանի միջնաբերդից դեկավարող քաղաքական միութեան և մեծութեան գաղափարը ձգտում էր մի պետական շէնքի մէջ մտցնել ամբողջ Հայկական Բարձրաւանդակը՝ պարփակուած իր բնական սահմանների մէջ, ուրիշ խօսքերով՝ այն լեռնային կղզին, որի ամբողջութիւնը արտայայտւում է Հայաստան անունով։

Իսկ ինչ էր անում այս միջոցին Ասորեստանը։ Մենուասը թագաւորել է, ինչպէս երևում է, Շամսի-Ռամ-

---

1) Hyvernat, p. 529.

մանի և նրա յաջորդ Ռամման-Նիրարիի ժամանակ։ Սրանց օրով ասորական պետութիւնը դեռ այնքան թուլացած և ընկած չէր որ չը կարողանար իր հիւսիսային մրցակցի յաղթական քայլերը կանգնեցնելու փորձերը չանել։ Ասորեստանը պիտի չը թոյլ տար Մենուասի շարժումները մանաւանդ Եփրատի միւս կողմում, Մելեդի և առհասարակ հեթիթական երկիրներում։ Սակայն Մենուասը իմանում էր թէ ինչպէս պէտք է վախեցնել թշնամուն։ Ուրմիայի լճի հարաւ-արևմտեան կողմերը տիրապետութեան տակ ունենալով, նա սպառնում էր անցնել Զաբ գետի հովիտով՝ Ասորեստան արշաւելու համար։ Հարուածը այդ կողմից ամենից շատ էր վախեցնում ասորական թագաւորին։ Եւ նա ստիպուած էր միայն հանդիսատես լինել թէ ինչպէս է աստիճանաբար, քայլ առ քայլ մեծանում Ուրարտուն։

Մենուասից մնացած սեպագրութիւնների թիւը հասնում է յիսունի[1]։

[1]) „Հանդ. Ամս.", 1893 եր. 48.

Ուրարտական ոչ մի թագաւոր այսպիսի քանակութեամբ յուշարձաններ, ցրուած զանազան կողմերում, չէ տուել։ Եւ արձանագրութիւնների այդ քանակութեան մեծագոյն մասը պատմում է Մենուասի շինարարական գործերը—թէ որտեղ ինչ պալատ, տաճար և կամ այլ հասարակաշահ շինութիւններ կառուցեց։

Այդ բոլոր գործերի թագն ու պըսակն այն է, ինչ Մենուասն արել է Վանի մէջ և Վանի համար։ Առաջին անգամ նա է, որ յիշում է իր արձանագրութիւնների մէջ Դուսպա քաղաքը, ուր բնակւում է ինքը։ Այս մի ցուցմունք է թէ այդ քաղաքն էլ Մենուասի ձեռակերտն է։ Միջնաբերդը, ինչպէս գիտենք, կառուցել է Սարդուրի թագաւորը։ Մենուասի հիմնարկածը պէտք է համարել ժայռի ստորոտից դէպի արևելք ձգուող այգեստանների քաղաքը[1])։ Իսկ այգեստաններ գոյութիւն ստացան այն ժամանակ, երբ Մենուասը գլուխ բերեց իր

[1]) Линчъ—„Арменія", т. II, с. 92.

հսկայական, անօրինակ գործը—Վանի ջրանցքը։

Այդ հոյակապ ձեռնարկությունը գոյություն ունի և այսօր։ Բոլոր ժամանակներում նա հիացմունք է պատճառել տեսնողին։ Ժողովրդական աւանդությունը պատմում է թէ ինչպէս նա շինուեց, բայց մոռացել է մեծագործության հեղինակին և նրա տեղ յիշատակում է ասորական կիսաառասպելական թագուհի Շամիրամին։ Այսօր էլ այդ ջրմուղը կրում է այդ թագուհու անունը, մինչդեռ նրա եզերքներին փորագրուած սեպաձև արձանագրություններից երկուսը ասում են. «Խալդեայ հզօր որդւոց Մենուաս Իսպուինիի որդին այս պիլին (ջրմուղը) շինեց։ Մենուասայ ջրմուղ է անոր անունը» [1])։ Յայտնի է նոյն իսկ որ Մենուասը մենակ չէ այդ մեծագործությունը կատարել, այլ նրա

[1]) «Հան. Ամս.» 1893, եր. 50. Անկասկած են համարում որ «պիլի» ուրարտական լեզուով նշանակում էր «ջրմուղ»։ (Տ. Պ. Меерянцъ—„Къ интерпретаціи Ванскихъ надписей" М. 1897)

հետ է եղել և նրա մայր Տարիրիասը [1]։

Մենուասի պիլին և նրա մասին պատմող աւանդութիւնը Մովսէս Խորենացին ներկայացնում է հետևեալ գեղեցիկ նկարագրութեան մէջ։ «Հրաման տայ բիւրուց և երկու հազար արանց անարուեստից գործաւորաց յատորեստանեաց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք իցեն ի յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին, և գործն հաւասար հրամանին առնոյր գկատարուածն։ Եւ վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն խառնիճաղանճ գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն։ Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք

1) Անդ, եր. 86։ Արձանագրութիւնը այսպէս է թարգմանում. «Մենուասայ ժողովը Տարիրիասայ է այս յիշատակարանը Մենուասայ տեղի (?) կոչեց զայն։ Սէյսը կարծում է որ այս տիկնոջ անունն է ժողովրդական աւանդութեան մէջ գտնել Շամիրամ թագուհի։

և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալս. անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի։ Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն՝ այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթականս փախստեամբ ամրանան, իբրև ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք։ Եւ թէ զփորձ առնուլ դէպ ումեք լինիցի, և ոչ իբր պարսատակաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խլել ոք զօրեսցէ, թէև մեծաւ աշխատութեամբ ջանայցէ։ Եւ ի հեղուածս արուեստին՝ որ զքարամբք՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողաց երևեցուցանէ կարծիս [1]),

[1]) Խոր., Ա., ժզ., Ահա այս կտորի աշխարհաբար թարգմանութիւնը. «Հրամայեց իսկոյն փափագած տեղը տասն երկու հազար հաստակ գործաւորներ բերել Ասորեստանից և իր իշխած ուրիշ երկիրներից. և վեց հազար ընտիր արուեստաւոր գործաւորներ փայտի և քարի, պղնձի և երկաթի, որ ամենքն իրանց արուեստագիտութեան մէջ կատարեալ լինէին։ Եւ գործը կատարեցաւ նրա հրամանի համեմատ։ Շուտ բերուեցան բազմութեամբ խառնիճաղանճ գործաւոր-

Մեր օրերի տեխնիքական հրաշակերտութիւններին ընտանի մարդն անգամ Մենուասի այս «պիլիի» վրայ պակաս հիացմունք չէ արտայայտում։ Շամիրամի գետը (Շամիրամ-սու) նկարագրել են շատերը, բայց լաւագոյնն այն է, որ տուել է դոկտոր Վալդեմար Բելքը։ Ահա ինչպէս է նա ներկայացնում ուրարտական արուեստի այս փառահեղ յուշարձանը։

«Շամիրամ-սու ըսուածը՝ արուեստական ջրմուղ մըն է, որն որ Վանայ լճին հարաւային արևելեան կողմը՝

ներ և հանճարեղ, իմաստուն արուեստագէտներ։ Շամիրամը հրամայեց նախ գետի ամբարտակը շինել ապառաժներով և խոշոր քարերով և կրով ու աւազով միաւորել, անչափ լայնութեամբ և բարձրութեամբ, որ, ինչպէս ասում են, հաստատ կայ մինչև այսօր։ Եւ գետի այն ամբարտակի ճեղքերի մէջ այժմ, ինչպէս լսում ենք, փախչում ամրանում են այն աշխարհի աւազակ և թափառական մարդիկ, որպէս թէ ամրացած լինէին սարերի քարաբլուրների մէջ։ Եթէ մինին դէպք լինի փորձելու, այս ամբարտակի շինութիւնից պարսատկի համար մի քար անգամ հանել չի կարողանայ, որչափ մեծ աշխատութեամբ և ջանք։ Նայելով քարերը հարտարութեամբ միմեանց կապող աւազին ու կրին, նայողը կը կարծէ թէ հարպ լինի թափած» (Թարգմ. Մորէն եպ. Ստեփանէի, Պետր. 1897 եր. 44)։

Հայոց Զորի հարաւային սահմանը կազմող բարձրաբերձ ժայռոտ լերան մը ստորոտէն կը բղխէ և Վերին Մէշինկերտէն ու Խոշապ գետին վրայէն անցնելով՝ քանի մը գիւղեր ու քաղաքներ ոռոգանելէն ետև Վանայ լիճը կը թափուի համանուն քաղքէն քիչ մը վար։ Զրմուղին ակունքը հոկտեմբեր ամսոյն մէջ՝ ամենէն չոր ժամանակը մանրերկրորդ (վայրկեան) մը մէջ ապահովապէս 1500 լիտր ջուր կուտան, գարնան անշուշտ կրկինը պիտի տան։ Այս ջուրը, որն որ մեծ քանակութեամբ ածխոյ թթու կը պարունակէ, ժայռերու ճեղքուածներէն ելլելով՝ անմիջապէս գահավիժաբար ու մեծ շառաչիւնով ժայռոտ գետնի վրայ կը նետուի և ի սկզբան ուղղակի Խոշապ գետը կը թափուէր, որն որ ակունքէն 5 քիլոմետր հեռու է... Ետքէն ընդհանուր օգտին համար Զրմուղը շինուեցաւ ջուրը աղբիւրի քովէն դարձնելով և ուղղելով դէպի Վերին Մէշինկերտ, ուր մեծ աւազան մը շինուեցաւ զանոնք ժողովելու համար։

Հոս՝ ըստ հին աւանդութեան՝ ժամանակաւ մեծ քաղաք մը կար։ Վերին Մէշինկերտէն՝ Ջրմուղին յատակը բարձրացնելով Ջուրը տարուած է Ստորին Մէշինկերտ, և անկէ բարձրաբերձ ծառերու հաստ կոճղերով շինուած յաղթ խողովակով մը Խոշապ գետին վրայէն միւս կողմն անցուած է։ Խոշապէն անդին Ջրմուղը ցցուած ժայռերու և լերանստորոտին քովէն դէպի արևմուտք՝ Իշխանի Գոմ գիւղը կերթայ՝ Սէօլ պլասան, Կէմ, Քարավանց, Անգղ և Մաշիքբէք գիւղերը ոռոգանելով։ Իշխանի Գոմի քովը՝ լերան հիւսիսային ստորոտը դառնալով՝ կամաց-կամաց դէպի արևելք կուղղուի, կանցնի Խադամ, Քէօշկ, ս. Վարդան և Խարապաքէօյ գիւղերէն և կերթայ մինչև Արտամիտ։ Արտամիտի եռևէն, Ծրվստան գիւղէն Ջրմուղը կը շրջի դէպի հիւսիս և կը վազէ Վան քաղաքին հարաւային կողմն եղած դաշտերու մէջէն, ուր հաւանականաբար հին ժամանակները Վանայ հռչակաւոր բուրաստաններն ու տունները կը գտնուէին, բայց հի-

մա մեծաւ մասամբ անմշակ և խոպանացեալ երկիր մըն է։ Ըսինք որ Ջրմուղին ակունքը Վան քաղաքէն 70 քիլոմետր հեռու են, սակայն Ջրմուղին երկայնութիւնն՝ անոր կորութիւններն ալ հաշուելով՝ 80 քիլոմետրի կը հասնի։ Ջուրը Խոշապ գետին վրայէն անցնելէն ետև մինչև ս. Վարդան՝ Ջրմուղին շինութիւնը մեծ դժուարութեանց չէ հանդիպած, որովհետև մեծաւ մասամբ կակուղ երկրէ կանցնէր, բայց այնպէս չէ ս. Վարդանէն մինչև Արտամիտ՝ ուր գետինն ապառաժուտ է և խորին վիհերով պատառոտուած. հոս հարկ եղած էր ամենամեծ դժուարութեամբ վիհերուն եզերքը՝ յատակէն մինչև վեր 10—15 մետր և աւելի բարձր կիկլոպեան լայն պատեր շինել մեծ ու պզտիկ ժայռերու կտորներ առանց շաղախի վրայի վրայ դիզելով և Ջուրն անոնց վրայէն անցընել։ Եւ այս պատերը դեռ կեցած են։ Այս Ջրմուղին քովերը՝ վերէն մինչև վար զանազան տեղեր, գըլխաւորաբար ուր շինութիւնը դժուա-

ըութեանց հանդիպած է՝ ժայռերու վրայ սեպաձև արձանագրութիւններ գտնուած ենք[1]։

Այսքան մեծ մի գործ կարող էր կատարել միայն այնպիսի մի թագաւոր, որ շատ ուժեղ էր և հարուստ, ինչպէս այս տեսնում ենք Արևելքի և մասնաւորապէս Եգիպտոսի պատմութեան մէջ։ Աւանդութիւնը պատմում է թէ ջրմուղի վրայ աշխատում էին 12 հազար ասորեստանցի և այլ տեղացի մշակներ։ Գուցէ այս տեղեկութեան մէջ իրականութիւնն է պահուած, և այն ժամանակ կարելի պիտի լինէր ենթադրել թէ աշխատող ձեռքերի այդ ահագին բազմութիւնը պատերազմական գերիներ էին ասորի և այլ նուաճուած ազգերից։ Սակայն այդքանով բան չէր կարելի գլուխ բերել։ Ինքը Ուրարտուն էլ պիտի ինքնուրոյն մեծ աշխատանքն ունենար։ Ասորեստանի և Բաղդէայի մէջ, ճիշտ է, շատ ծաղկած էր ջրմուղներ շինելու արուեստը. բայց այդ կողմերի վարպետները, միշտ

[1]) «Հանդ. Ամս.» 1893, եր. 84—85.

գործ ունենալով փափուկ հողի հետ, հարթ տարածութիւնների վրայ, միանգամայն անկարող պիտի լինէին լեռնային մի ջրանցք շինելու մէջ։ Նուաճել անդունդները ահագին քարէ պատեր դարսելով, ժայռերի կտորներ պոկել և դնել իրար վրայ այնպէս որ անսասան մնան դարերի ընթացքում— այսպիսի գործ չէր կարող լինել Տիգրիս-Եփրատեան հովտում և այսպիսի հսկայական կերտուածներ, կիկլոպեան պատեր լեռնցու ձեռքից կարող էին դուրս գալ։ Եւ աւանդութիւնն ասում է թէ վեց հազար զանազան վարպետներ (փայտի, քարի, պղնձի և երկաթի), ամենքն էլ ճարտար և իմաստուն, դուրս հանուեցին, ջրանցքի գործի համար, «իր ընտրութեամբ», այսինքն՝ Մենուասի (ըստ աւանդութեան Շամիրամի)։

Այս հսկայական ձեռնարկութիւնը հսկայական ջանքերով գլուխ բերուեց պետութեան մայրաքաղաքը զարդարելու և շէնացնելու համար։ Երկիրը դուրս հանեց ինչ ունէր—և՛ տաղանդ,

և՛ գիտութիւն, և՛ ժողովրդական աշխատաւոր մեծ ոյժ։ Եւ հասկանալի է այստեղից թէ ինչպիսի գեղեցկութիւններ պիտի ունենար իր մէջ ինքը քաղաքը, Մենուասեան Դուսպան կամ Տուսպան։ Ոչինչ չէ մնացել այդ գեղեցկութիւններից։ Բայց եթէ աւանդութիւնը, Շամիրամին վերագրելով Ջրմուղի շինութիւնը, հաւանականաբար պահպանել է իր մէջ այդ շինութեան վերաբերեալ իրական փաստեր, նեբելի պէտք է լինի ուրեմն, ենթադրել որ նոյն աւանդութեան մէջ պահուել են հեռաւոր արձագանգները այն մանրամասնութիւնների, որոնք քաղաքի հիմնարկութեան են վերաբերում։ Խորենացին, պատմելով թէ ինչպէս Ջրմուղը բերուեց մինչև քաղաք, շարունակում է. «Անդ հրամայէ [1]) զամբոխն ի բազում դասս որոշել. և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել. և այնպէս ի սաստիկ ճգնու-

[1]) Խօսքը միշտ Շամիրամի մասին է, բայց իրապէս Մենուասն է կանգնած մեր առջև։

թեան պահեալ, յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամրագունիւք պարբսպօք հանդերձ դրամբք պղնձակերտիւք։ Շինէ և ընտիր ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս. և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս. և գեղեցիկ գունիւք և ընդարձակ փողոցիւք զկողմանն քաղաքին որոշելով։ Շինէ զչքնաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից ի միջոցաց քաղաքին լուսլիս։ Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ գնացուցանէ ի պէտս ամենայն պիտոյից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց և զայլն և զեղերք ծովակին յաջմէ և յահեկէ, քաղաքին և բովանդակ շրջակային յարբուցումն։ Եւ զամենայն արուեստս և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք և սաղարթիւք ծառոց վարսաւորաց՝ զանազանեալք ի պտուղս և ի տերևս. և բազումս բազմաբերս

և գիներբերս ի նմա տնկեաց ովիտս։ Եւ ամենայնիւ հոյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէր. և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ։ Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմանէ գործոյ հրաշակերտութիւնք, բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն։ Զորոց զպարսպեալ զգաղաթն՝ դժուարամուտս ոմանս և դժոխելանելիս ի նմա՝ յօրինէ շինուածս արքայանիստս, և ծածուկ իմն ահագին»[1])։

[1]) Մովսես. Ա. ժզ. «Այնտեղ Շամիրամը հրամայեց այն ամբոխը դաս-դաս որոշել և իւրաքանչիւր դասի վրայ վարպետ կարգել ճարտարներից ընտիրներին, և այսպէս պահելով նոցա մեծ աշխատութեամբ ամկաւ տարիներից յետոյ աւարտեց հրաշալի շինութիւնը, ամուր պարիսպներով և պղնձէ դռներով։ Քաղաքի մէջ շինեց պէս-պէս քարերից և գոյներից, զարդարուած կրկնայարկ և եռայարկ ընտիր-ընտիր տպարանքներ և յարմարութեան համեմատ առանձին վերնատներ։ Գեղեցկագոյն և ընդարձակ փողոցներով բաժանեց նա քաղաքի կողմերը։ Քաղաքի մէջ հարկաւոր տեղերում քանի մի չքնաղ և զարմանալի բաղանիքներ շինեց։ Գետի մի մասը բաշխեց քաղաքի մէջ ամենայն պիտոյքի համար, բուրաստաններ և ծաղկոցներ ջրելու, իսկ միւս մասը ծովակի աջ ու ձախ ափերի մօտ՝ քաղաքը և նրա բոլոր շրջակայքը ջրելու։ Եւ քաղաքի բոլոր արևելեան, հիւսիսային և

ԳԼՈՒԽ ԺԲ.

# ԱՐԳԻՍՏԻ Ա.

Մենուային յաջորդեց նրա որդի Արգիստին (կամ Արգիստիս, մօտ 780—755 թ. Ք. ա.)։ Սա Ուրարտուի թագաւորութիւնը հասցրեց մեծութեան գագաթնակէտին, հանդիսանա-

---

հարաւային կողմերը զարդարեց շինութիւններով և միմեանցից պտուղներով և տերևներով զանազանուող տերևալի ճիւղաւոր ծառերով, այլ և անկեց այնտեղ շատ բազմաբեր գինիներ որթեր։ Եւ այս պարսպուած քաղաքը տմեն կերպով հոյակապ և հռչակաւոր շինեց և մէջը մարդկանց անթիւ բազմութիւն բնակեցրեց։ Իսկ քաղաքի ծայրը և նրա մէջ եղած հրաշակերտ շինութիւնները շատերը չեն կարողացել հասկանալ-պատմելու կարողութիւն ևս չը կայ։ Քարաբլրի գագաթը պարսպելով, նրա մէջ թագաւորանիստ ծածուկ և ահագին շինուածներ շինեց, ուր մտնել և դուրս գալը սարսափելի է (Ստեփանէ, եր. 45—46)։

լով մի մեծ աշխարհակալ, մէկը այն անարկու նուաճողներից, որոնք անօրինում էին Ասիայի ճակատագիրը։ Արգիստին շատ քիչ արձանագրութիւններ է թողել զանազան շինութիւնների, կրօնական-կուլտուրական հաստատութիւնների մասին։ Դրա փոխարէն՝ արշաւանքներ և նուաճումներ պատմող արձանագրութիւնները շատ ընդարձակ են և պարզապէս ցոյց են տալիս որ Վանի այս թագաւորը ժամանակ չունէր ներքին շինարարական գործունէութեամբ շատ զբաղուելու, քանի որ իր թագաւորութեան մեծագոյն մասը անց է կացրել արշաւանքների մէջ։

Բայց որ պատերազմական դաշտի մեծ նուաճողը կարող էր մեծ նուաճումներ անել և խաղաղ աշխատանքի ասպարէզում, այդ վկայում է նրա՝ նմանը չունեցող մի յուշարձանը։ Վանի ժայռի կենտրոնական, ամենաբարձր կողմին գտնւում է մի քարայր, որ անուանւում է այժմ Մորխոր։ Քարայրը մուտք է ժայռի մէջ փորուած

մի շարք սենեակների, որոնք գարմանք են յարուցել ամեն ժամանակ, քանի



Վաճ՝ Միջնաբերդ—մեծ արձանագրութիւնը (խարխար) ձախ կողմում

որ նիւթը, այն է՝ քարը, շատ կարծր է։ Ով է շինել տուել այս սենեակնե-

ը—յայտնի չէ։ Նոյն հին աւանդութիւնը վերագրում է այս մեծագործութիւնն էլ առասպելական Շամիրամին։ «Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին,—ասում է նա—, որ և ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց»[1]։ Այդ զարմանալի քարայրի մուտքի ձախ կողմին և ճակատին փորագրուած է մի վիթխարի սեպաձև արձանագրութիւն, բաղկացած շուրջ 400 տողից,—մեծագոյնը այն բոլոր արձանագրութիւններից, որոնք երբ և իցէ փորուել են քարի վրայ։ Խորենացին պատմում է թէ այդ էլ Շամիրամի գործն է. «Իսկ զամենայն ե-

[1]) Անդ։ «Իսկ քարաբլրի արեգակի դէմ եղած կողմը, որի վրայ այժմ ոչ ոք չէ կարող երկաթով մի գիծ քաշել—այնքան պինդ է նիւթը—Շամիրամը զանազան պալատներ, սենեակներ, գանձատներ և երկար վիհեր հրաշակերտած է՝ ոչ ոք չը գիտէ ինչ նպատակի համար։

բեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթել, բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ»[1]։ Սակայն այսօր պարզ է որ այդ վիթխարի արձանագրութիւնը փորագրել է տուել Արգիստին, նրա մէջ իր արշաւանքներն ու նուաճումները պատմելու համար։

Թւում է թէ Վանի մեծ թագաւորը այդ գործը կատարել է իր թագաւորութեան վերջում[2]։ Արձանագրութիւնը ըստ բովանդակութեան բաժանւում է 15 մասի, որոնցից 14-ը արշաւանքներ են նկարագրում, իսկ վերջին մասը եզրակացութիւն է։ Ենթադրում են որ 14 արշաւանքները պէտք է կատարուած լինեն 14 տարուայ ընթացքում, սկսած թագաւորութեան առաջին տարուց։ Նրանք նկարագրուած են մեծ արձանագրութեան մէջ ժամանակագրական կարգով։ Արշաւանք-

[1]) Անդ։—«Իսկ քարի բոլոր երեսի վրայ, կարծես գրչով մոմի վրայ, շատ գրեր գրեց, որոնց տեսքը միայն զարմացնում է ամենքին» (Ստեփանէ, եր. 46)։

[2]) Hyvernat p. 537.

ները երեք գլխաւոր ուղղութեամբ են տարուել. դէպի հիւսիս և հիւսիս-արևելք, դէպի հարաւ-արևելք և դէպի հարաւ-արևմուտք։

Դէպի հիւսիսային երկիրները կատարած արշաւանքների ուղղութիւնները ցոյց են տալիս այն արձանագրութիւնները, որ Արգիստին թողել է զանազան կողմերում։ Մենք տեսանք որ Մենուասը, Արգիստիի հայրը, նուաճել էր Արաքսի վերին հոսանքը, ինչպէս այդ ցոյց է տալիս Հասան-Կալէի արձանագրութիւնը և այդտեղից էլ, Արաքսի հովտով, դուրս եկաւ Արարատեան դաշտը, ուր իր տիրապետութեան տակ ձգեց Արաքսի աջ ափը մինչև Մասիսի ստորոտները։ Այս արշաւանքը մի նախապատրաստական աշխատանք էր նրա յաջորդների համար։ Վանի թագաւորները, ինչպէս ասացինք, ձգտում էին իրանց թագաւորութիւնն ամփոփել այն բնական սահմանների մէջ, որ բնութիւնից ստացել է Հայկական Բարձրաւանդակը։ Եւ այդ ձգտումը նրանց տանում էր դէպի Փոքր

Կովկասի լեռնաշղթաները և դրանց մէջ բացուած անցքերով՝ դէպի Կուր գետի հովիտը։ Արգիստին, այս հիւսիսային սահմաններին հասնելու համար, բռնեց այն ճանապարհը, որ Արաքսի վերին հոսանքներից տանում է Ախուրեան գետի (այժմեան Կարս-չայի) ակունքները և այդտեղից, գետի հովտով, հասցնում է այժմեան Աբփաչայի հովիտը (Ալէքսանդրոպոլի գաւառավայրը)։ Այս այն չափազանց կարևոր ռազմական ճանապարհն է, որ տանում է Ալէքսանդրոպոլից, Կարսի վրայով, Էրզրում, մի ճանապարհ, որի նշանակութիւնը ըմբռնուած է եղել հին ժամանակներից։ Առաջ խաղալով այս ուղղութեամբ, Արգիստին նուաճեց Իշկիզուլու երկրի Իրգանիունի քաղաքը, որ համապատասխանում է այժմեան Ղանլիջային (Ալէքսանդրոպոլի շրջակայքը)։ Այս վայրը կազմում է հիւսիսային այն ամենահեռու կէտը, ուր Վանի թագաւորների շարժումը նշանակուած է արձանագրութիւններով[1])։

[1]) Այստեղից էլ հեռու դէպի հիւսիս-արևմուտք,

Բայց Արգիստիի համար աւելի մեծ գործ եղաւ Արաքսի միջին հովտի նուաճումը։ Իր հօր Մենուասի նուաճած երկրից (Մենուախինիլի քաղաքից) նա անցաւ Արաքսի ձախ ափը և այստեղ այն բլուրի վրայ, որ բարձրանում է դաշտի մէջ և որ յետոյ, հայկական հին պատմութեան շրջանում, դարձաւ մայրաքաղաք Արմաւիր անունով, իր համար մայրաքաղաք կառուցեց, այսինքն իր կայանի տեղը՝ պատերազմական գործողութիւնների ժամանակ և անուանեց այդ ձեռակերտը իր անունով—Արգիստիհինիլի, այն է՝ Արգիստիի քաղաք։ Ենթադրւում է թէ այս բլրի վրայ մինչև այդ էլ գոյութիւն ունէր մի քաղաք և Արգիստին միմիայն վերանորոգեց նրան, ինչպէս որ արձանագրութեան մէջ էլ ասում է թէ վերանորոգեց պարսպը [1]։

Զբլդբբ լեռի ափին Իվանովկին գտել է մի ուրարտական բերդ, սակայն, հակառակ սովորականի, առանց արձանագրութեան (По Закав. с. 82)։

[1] Նիկոլսկին ենթադրում է թէ այդ հին քաղաքը պիտի եղած լինի Արամէ թագաւորի շինած Արամալի քաղաքը։ Բայց այս ենթադրութիւնը ոչ մի ապացոյց չունի։

Թէ որքան կարևոր նշանակութիւն ստացաւ Արգիստիհինիլին ուրարտական պատմութեան մէջ, այդ ցոյց է տալիս այն հանգամանքը, որ այստեղ գտնուել են մինչև այժմ 12 սեպաձև արձանագրութիւններ։ Ենթադրւում է որ այս քաղաքը մինչև Արգիստիի ձեռքը ընկնելը կարևոր կրօնական նշանակութիւն ունէր, որովհետև նա արձանագրութիւնների մէջ կոչւում է Խալդի աստուծու երկիր։ Այդ նշանակութիւնը նա պահպանեց և Վանի թագաւորների սեփականութիւնը դառնալուց յետոյ. և այստեղ էլ, ինչպէս Վանում, կար մի արձանագրութիւն, որ սահմանում էր աստուածներին մատուցելիք զոհերի թիւը։

Արգիստին բարձրացրեց իր քաղաքի քաղաքական և ռազմական նշանակութիւնը։ Նա առաջաւոր մի դիրք էր այն ռազմական գործողութիւնների համար, որոնք թելադրւում էին Աբաքսի հովտի և նրա հիւսիսային կողմերը եղերող լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով։ Այդ տեղից հեռու

չէին Քասախ և Հրազդան (Զանգու) գետերի հովիտները, որոնք բնական ճանապարհներ էին դէպի հիւսիս։ Մեծ նուաճողը առանձին ուշադրութիւն դարձրեց Արագած լեռան վրայ, որի հարաւային ստորոտները մանաւանդ ներկայացնում էին մի գեղեցիկ և արգաւանդ երկիր։ Այդ երկիրը, որ հայկական աշխարհագրութեան մէջ յայտնի է Արագածոտն անունով, Արգիստին իր անունով կոչեց Արգիստինա և Արգիստիհինիլի (Արմաւիր) քաղաքը դարձաւ այդ գեղեցիկ գաւառի կենտրոնը։ Քասախ գետի հովտում այսօր էլ երևում են նշանաւոր հին բերդեր և ժայռերի մէջ փորուած տներ (Ամբերդ և Բիւրական)։ Մնթագրում են որ դրանք ուրարտական թագաւորների ժամանակներից են[1]։ Արգիստին Քասախի հովտով և Աբարանի կիրճով հասաւ Արագածի հիւսիսային ստորոտին, ուր նուաճեց Կուլիսինի երկիրը (այժմ Ղուլիջան)։ Արագածի հիւսիսային և

[1]) Никольскій Клинобразныя Над. Закавк. с. 70—88.

հարաւային ստորոտներին տիրելով միայն կարելի էր ամուր կերպով հաստատուած լինել Արաքսի հովտում։ Արգիստին, այս ռազմական ծրագիրը գլուխ բերելուց յետոյ, մտաւ միւս նշանաւոր լեռնացքը, որ Արաքսի հովտից Զանգուի հովիտով տանում է Կուրի հովիտը։ Այս ուղղութեամբ արշաւելիս Արգիստին արձանագրութիւններ է թողել Երևանի մօտ, Ղանլի-թափա տեղում, Էլառի կիրճում և հասել է Սեւանի լճի հարաւ-արևմտեան ծայրին, ուր այսօր էլ Օրդակլու գիւղի սեպագիր արձանագրութիւնը յիշատակում է հռչակաւոր թագաւորի անունը։

Այդտեղից նրան ճնում էր իջնել Դիլիջանի կիրճը, որպէսզի Աղստափա գետի հովտով դուրս գար Կուրի հովիտը։ Արդեօք կարողացաւ նա կամ նրա յաջորդները կատարել այսքան նշանաւոր մի յառաջխաղացութիւն։ Մասպերօն կարծում է որ ուրարտական թագաւորները կարողացան իրանց իշխանութիւնը հաստատել նաև Կուրի հովտում և մինչև իսկ կասպիական տա-

փարակների մի մասում [1]։ Եթէ այս ճիշտ է, այն ժամանակ պէտք կը լինի որոնել այն ճանապարհը, որով այդ թագաւորները դուրս եկան Փոքր Կովկասի և Մեծ Կովկասի մէջ տարածուած մեծ դաշտը։ Եթէ ոչ Արգիստին, գոնէ նրա ժառանգները նուաճեցին նաև այն երկիրները, որոնք Սևանի լճի հարաւ-արևելեան ծայրի ուղղութեամբ էին գտնւում։ Այստեղից կարելի է իմանալ թարթար գետի հովիտը, որ Արցախի լեռների միջով տանում հանում է ուղիղ Կուր գետի աջ ափը։ Ամենակարճ ճանապարհն այս է։ Տարաբախտաբար, այս ուղղութեամբ հետազօտուած չէ երկիրը։ Եւ ո՞վ գիտէ, գուցէ ժամանակը երբ և իցէ երևան կը հանէ արձանագրութիւններ, որոնք ցոյց կը տան թէ վանեան բանակները քայլել են այս կողմերով էլ, ուղևորուելով դէպի Աղուանից մեծ դաշտավայրը։

Եւ այսպէս, Արգիստին իր քաջարի գործողութիւններով միացրեց իր ձեռքի տակ այն բազմաթիւ մանր անկա-

[1]) Maspero t. III p. 34.

խութիւնները, որոնք գտնուում էին Արաքսից դէպի հիւսիս, սկսած գուցէ Զըլդըր լճից մինչև Սևանի լճի հիւսիս-արևմտեան ծայրերը։

Այս մի ընդարձակ ձեռնարկութիւն էր այն մեծ ծրագրի մէջ, որ պետական շինարարութիւնը ամբողջացնելու ձգտումն ունէր։ Բայց այդ ծրագրի մեծագոյն մասը պէտք էր իրագործել Ուրմիայի լճի արևմտեան և հարաւ-արևմտեան կողմերում։ Արգիստին յիշատակում է բազմաթիւ արշաւանքներ դէպի Մաննայի երկիրը, արշաւանքներ, որոնք վերջանում էին կատարեալ յաջողութեամբ և յաղթողի ձեռքն էին տալիս ահագին քանակութեամբ գերիներ, աւար և այլն։ Այս պատերազմական գործողութիւնները չափազանց կարևոր նշանակութիւն ունէին Ուրարտուի համար. նրանցով էր լուծուում պատմական մի մեծ պայքար և Վանի թագաւորութիւնը իր գոյութեան խնդիրներն էր արծարծում պատերազմական դաշտերում։

Տեղային իշխանութիւնները ընկ-

ճելու հոգսը չէր միայն, որ հարկադրում էր Արգիստիին այնքան մեծ եռանդով գործողութիւններ կատարել Ուրմիայի լճի շրջականերում։ Այդտեղ նրա դէմ կանգնած էր դարաւոր ոսոխը—Ասորեստանը։ Եւ այդ տեղերում էլ վճռւում էր թէ ով պիտի լինի Առաջաւոր Ասիայի տէրը։

Այսպիսի մի մեծ պայքարի մէջ Արգիստիին հովանաւորում էին մի քանի նպաստաւոր հանգամանքներ և ամենից շատ—Ասորեստանի դրութիւնը։ Ռամման-Նիրարի թագաւորից յետոյ ասորական պատմութեան մէջ գալիս է մօտ 38 տարուայ մի շրջան, որից մանրամասն արձանագրութիւններ չեն մնացել։ Իսկ սա արդէն նշանակում է քաղաքական ոյժի անկում։ Այս մի ժամանակ էր, երբ Ասորեստանն ունեցաւ իրար յաջորդող երեք թոյլ թագաւորներ, երբ նա այլ ևս չէր կարողանում յարձակուել ուրիշների վրայ և երբ, ուրեմն ուրիշները պիտի յարձակուէին նրա վրայ[1]։

[1]) Винклеръ, с. 63.

Միայն ասորական համառօտ տարեգրութիւններն են որ տեղեկութիւններ են տալիս այս անկման մասին։ Ռամման-Նիրարիի յաջորդն էր Սալմանասար Գ. (783—733), իսկ սրան յաջորդեց Ասսուր-դան (773—755)։ Արգիստին այս երկու թագաւորների ժամանակակիցն է համարւում [1])։ Համառօտ տարեգրութիւնը Սալմանասար Դ-ի թագաւորութեան 6 տարին նշանակում է «դէպի Ուրարտու» խօսքերով։ Սա պիտի նշանակէ թէ այդ թագաւորը արշաւանքներ է գործել դէպի Ուրարտու։ Բայց Արգիստիի մեծ արձանագրութիւնը Վանի ժայռի վրայ բացատրում է որ, ընդհակառակն, Արգիստին իր թագաւորութեան 5, 6, 8 տարիներում յատուկ արշաւանքներ է ունեցել Ասորեստանի դէմ, իսկ 9, 10, 12 և 13-րդ տարիները արշաւել է Մաննայի երկիրը, որ «համարեա համանիշ է—ասում է Նիկոլսկին—Ասորեստանի վրայ յարձակուելուն»։ Սալմանասարը, այսպիսով, լոկ պաշտ-

[1]) Ibid. c. 127.

պանողական դիրք էր բռնած, այն էլ առանց որ և է յաջողութեան, քանի որ Արգիստին վճռական հարուած հասցրեց Միջագետքի մեծ պետութեան և իջեցրեց նրան երկրորդական աստիճանի։ Մեծ պետութիւն դարձել էր Ուրարտուն։ Վանի մեծ արձանագրութեան մէջ երեք տեղ Արգիստին գրում է թէ ինքը նուաճել է Ասորեստանի երկիրները[1])։ Տարաբախտաբար պակասում են մանրամասնութիւններ և մենք գուցէ միայն ենթադրաբար ասենք թէ Արգիստին իր յաղթական բանակը մտցրել է բուն Ասորեստանի սահմաններից ներս։ Այս տեսակ մի ենթադրութեան հիմք տալիս է արձանագրութեան մի նախադասութիւնը, ուր Արգիստին շնորհակալութիւն է յայտնում աստուածներին որ Ասորեստանի երկիրը պարգևեցին իր ժառանգներին։ Այս առիթով Նիկոլսկին գրում է. «եթէ Վանի թագաւորի այն արտայայտութիւնը թէ աստուածները այս կամ այն երկիրը տուել են պար-

[1]) Sandalgian, p.p. 77, 83, 93.

գև իր ժառանգներին՝ պէտք է հասկանալ այն մտքով թէ նուաճուած երկիրները պարտաւոր էին հարկ տալ, այն ժամանակ մենք պէտք է ընդունենք թէ և մեծ Ասորեստանը պարտաւորուած էր հնազանդուել Ուրարտուին հարկ տալու ստորացուցիչ վիճակին»[1]։ Եւ բոլորովին անհնարին չէր որ Ասորեստանը այնքան ստորանար, քանի որ նրա դրութիւնը այդ միջոցներին շատ էր դժբախտ։ Երկրի մէջ տիրում էր անիշխանութիւն. քրմական դասակարգը ապստամբութիւններ յարուցեց իր կորցրած իրաւունքները վերականգնելու համար։ Դա մի կատարեալ յաղթանակ էր, որ տաճարը տանում էր զինուորական դասակարգի վրայ։ Բացի դրանից սաստիկ երկիւղ և լքում տարածեց արեգակի խաւարումը 763 թուին։ Նա համարուեց մի վատ նշան ապագայ դժբախտութիւնների։ Եւ իրաւ, 759 թուին երկրում տարածուեցին համաճարակ հիւանդութիւններ։ Հասկանալի

[1]) «Клин. над. Ван. царей», с. 409.

է որ այս վիճակի մէջ ընկած մեծ պետութիւնը չը պիտի կարողանար դիմանալ Ուրարտուի հուժկու բաղխումներին։

Եւ Արգիստին, ձգտելով միանգամայն տիրանալ իր յաղթութիւններով ստեղծուած դրութեան, չը մոռացաւ այն ճանապարհը, որ գծել էր իր հայր Մենուասը հարաւ-արևմտեան ուղղութեամբ։ Անցնելով Եփրատը, նա մտաւ հաթերի երկիրը, նուաճեց նոյն իսկ Մալաթիա քաղաքը և այլ ամրութիւններ[1])։ Ո՞ւր էր տանում այդ ճանապարհը Վանի թագաւորին։ Հաստատուելով հիւսիսային Սիրիայում, ուրարտական զէնքը կարող էր այդտեղից առաջանալ դէպի Պաղեստին և ապա ձախ թևի վրայ շարժում գործելով, նոյն իսկ մտնել Քաղդէա, ուր Վանի թագաւորը կը գտնէր պատրաստ իր համար Շումմիրի և Ակկարի թագաւորի տիտղոսը, որ պարդարում էր Ասորեստանի թագաւորներին։ Առաջ

[1]) Seyce—«Les Hétéens», p. 51.

բերելով այս հաւանականութիւնները, Նիկոլսկին ասում է.

«Ուրարտական հզօր թագաւորութիւնը հիւսիսում բաւականաչափ ուժեղ կը լինէր հակադրելու համար արիացի թափառականների, այն է՝ կիմմերացիների, սկիւթացիների և ուրիշների շարժումներին և համաշխարհային պատմութեան տեսքը այն ժամանակ բոլորովին այլ կը լինէր»[1]։

Այս բանը, սակայն, տեղի չունեցաւ։ Եւ այս՝ ոչ թէ Արգիստիի պատճառով։ Նա մեռաւ փառքի գագաթնակէտին հասած և մինչև մահը նուաճողի բախտը չը դաւաճանեց նրան։

Մեզ մնում է ընորոշել այդ նուաճողին նրա արձանագրութիւնների տուած նիւթերով, տեսնել թէ ինչպէս էր նա արշաւանքներ գործում։ Ահա մի կտոր նրա մեծ արձանագրութիւնից. «Նուաճեցի զերկիրն Սերիաջեայ, զքաղաքս այրեցի, զպալատս խարխարել եմուս։ Տիրացեալ վիճակի քաղաքին Պուտեայ, զաղջկունս երկրին Բիս-

[1]) Никольскій—«Клин. над. Ван. цар.», с. 410.

տու և երկրին Խուսանեայ փոխադրեցի ընդ պատանիս երկրին Տարիուսայ։ Արշաւեալ յերկիրն Զաբախանեայց, նուաճեցի զերկիրն Զաբախեցւոց վիճակին։ Տիրեցեալ վիճակի քաղաքին Հուզի-Նաբիդունայ, բոլոր երկրին Շիրիմուարայ և երկրին Բաբանեայ, զպատանիս քաղաքին Մաքալուսի և երկրին Ագասեանց՝ փոխադրեցի։ Ասպատակեալ Երիասայ որդւոց յերկիրս, արշաւեալ յերկիրն Արասացւոց, նուաճեցի զքաղաքն Ուրիէնուս՝ զքաղաքն արքայական և ի քաջագարմից 19,255 տղայս, 10,146 զինուորս դերիս, 23,280 կանայս, ընդ ամենայն 5 բիւր 2695 խառվարարս, զնոսա զամենեսին կենդանւոյն կալայ, զամենեսին գերի տարայ, 1104 երիվարս վարեալ բերի, 35,016 եզինս, 10 բիւր 1829 (101829) ոչխարք»[1]։

Այս պատմութիւնը ամենից առաջ վկայում է, որ Վանի նուաճողները նմանւում էին Ասորեստանի թագաւորներին։ Այրել, քանդել, ամայաց-

[1] Sandal. p. 59—62.

նել — այս գործողութիւններն են յաղթական պարծենկոտութեան առարկաները։ Բայց և այդպէս, տարբերութիւնը ուրարտացիների և ասորիների մէջ նոյնպէս աչքի ընկնող է և այս հանգամանքի մէջ խօսում է, անշուշտ, ցեղերի հոգեբանութիւնը։ Արգիստիի և ուրիշ թագաւորների արձանագրութիւնների մէջ չը կայ այն յղիացումը գազանական արարքներով, որ այնպիսի մանրամասնութիւններով հանդէս է գալիս ասորական պատմուածքների մէջ։ Ուրարտացիները, ինչպէս երևում է, աշխատում էին աւելորդ ապանութիւններից խուսափել և յայն չափերով գործադրում էին գերեվարութիւնը։ Գերիները փոխադրում էին մի երկրից միւս երկիրը։ Միտ դնելով այն հանգամանքին, որ գերի էին վերցնում մեծագոյն մասամբ կանայք և երեխաներ, կարելի է ենթադրել որ ստրկութիւնը Ուրարտուի մէջ պակաս զարգացած չէր, քան հին աշխարհի ուրիշ երկիրներում։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

# ՍԱՐԴՈՒՐԻ Բ.

Մեծ Արգիստիից յետոյ Ուրարտուն սկսում է արագ իջնել քաղաքական ոյժի բարձրութիւնից։ Եւ այս անկումը չէ կարելի համարել հետեւանք Արգիստիի յաջորդների անկարողութեան։ Նրա որդի Սարդուրի Բ. (մօտ 755—730 թ. Ք. ա.) իր հօրից պակաս յաջողակութեամբ չէր պատերազմական գործողութիւններ մղում հարաւ-արեւելքում, հարաւ-արեւմուտքում և հիւսիս-արեւելքում, ուր նրա արշաւանքները նշանակուած են Սեւանի լճի հարաւային ափերում ճեռացած սեպաձեւ արձանագրութիւններով։ Նա

իրան անուանում է «թագաւորների թագաւոր», «հզօր թագաւոր», «թագաւոր Սուրասի»[1]), և Մաննայի երկրում, ինչպէս և հեթեթների մօտ, Մալաթիայի դէմ մղած պատերազմները և նուաճումները նկարագրում է ճիշտ իր հօր նման, պատմելով մէկիկ մէկիկ թէ որքան աւար է վերցրել, թէ քանի կանայք և երեխաներ է գերի տարել։ Սարգուրին այսպիսով հանդիսանում էր իր հօր արժանի ժառանգ։ Գուցէ նոյն իսկ յաջողուէր նրան հօր կատարեալ օրինակը ներկայացնել, եթէ չը պակասէր մի հանգամանք, որ Արգիստիի և Ուրարտուի բախտի ատաղն էր, այն է՝ Ասորեստանի թուլութիւնը։

Երբ Սարգուրին գահ բարձրացաւ, Ասորեստանում թագաւորում էր Աշշուր-նիրարին, որի կարճատև գահակալութիւնը խառնակութիւնների մի ժամանակամիջոց էր։ Մենք տեսանք, որ յաղթել էր քրմական յեղափոխութիւնը և նրան ենթարկուել էր զինուո-

[1]) Hyvernat, p. 587.

բական ոյժը։ Աշշուր-Նիրարիի թագաւորութիւնը համառօտ ժամանակագրութեան մէջ նշանակուած է «տանը» խօսքով, այսինքն թէ ասորական թագաւորութիւնը արտաքին արշաւանքներ չէր կատարում։ Այսպիսի մի թագաւորի ժամանակ Վանի Սարդուրին կարող էր իր զէնքի յաղթանակները տօնել։ Բայց Ասորեստանը դեռ զառամեալ մի պետութիւն չէր, որպէս զի չը կարողանար դուրս գալ անկման և մահանման քնի դրութիւնից։ Նորից տեղի ունեցաւ յեղափոխութիւն և այս անգամ յաղթողն արդէն զինուորականութիւնն էր։ Թագաւորող տոհմին չը պատկանող մէկը գահի յափշտակիչ հանդիսացաւ և սկսեց թագաւորել Թեգլաթ-պալասար Գ. անունով (745—727)։ Նրա հետ սկսւում էր ասորական երրորդ կայսրութիւնը, որ ասորական ոյժը ամենաբարձր աստիճանին պիտի հասցնէր, որպէս զի յետոյ կործանէ. այդ մեծ պետութիւնը։

Թեգլաթ-պալասարի առաջնորդու-

թեամբ ասորական բանակը նորից սկսեց յաղթական արշաւանքներ սրփռել Արևմտեան Ասիայում։ Թագաւորը յարձակուեց Միդիայի (Մարաստանի) վրայ, հասաւ Կասպից ծովի հարաւային երկիրներին։ Բայց գլխաւորն այդ չէր. ձգտումը դէպի Միջերկրական ծովի ափերը, դէպի այն հարուստ երկիրները, որոնք ծաղկած էին այդտեղ, թագաւորի առաջ դնում էր մեծ և անաւոր հարցը — Ուրարտուի հարցը։ Ընդհարումը այդ պետութեան հետ անխուսափելի էր ոչ միայն այն պատճառով, որ վերանորոգուած Ասորեստանը պիտի վրէժ հանէր իր ուժեղ թշնամուց նախկին պարտութիւնների և ստորացման համար, այլ մանաւանդ այն պատճառով, որ միայն այդ պետութիւնը խորտակելուց յետոյ կարելի էր ազատօրէն գործողութիւններ սկսել Միջերկրականի ափերի վրայ։ Գահ բարձրանալու օրից Թեգլաթ-պալասարը յարմարութիւն էր որոնում Սարդուրիի հետ չափուելու։ Ջեռնարկութիւնը չափազանց վտանգաւոր էր,

բաւական էր որ Ասորեստանը մի անգամ էլ պարտութիւն կրէ Ուրարտուի կողմից և նրա ճակատագիրը վերջնականապէս վճռուած կը լինէր։ Ուստի պահանջւում էր առանձին զգուշութիւն և կանխատեսութիւն։

Եւ Ասորեստանի նոր թագաւորը մեծ իմաստութեամբ լուծեց իր առջև դրած ծանր հարցը։ Նա վճռեց հանդիպել Սարդուրիին ոչ թէ նրա երկրում, ուր պայմանները աննպաստ էին ասորական զօրքերի համար, այլ հիւսիսային Սիրիայում, հեթիթական այն երկրներում, որոնք նուաճուած էին Վանի թագաւորների ձեռքով և նրանց վասսալներն էին։ 743 թուականի գարնանը նա անցաւ Եփրատը և պաշարեց Արպադ բերդը, որ բաց արաւ իր դռները նրա առջև։ Սարդուրին օգնութեան հասաւ մի շատ ստուար բանակով, որ թուով գուցէ մեծ էր ասորական բանակից։ Ուրարտական բանակում էին գտնւում և Սարդուրիի հզօր վասսալները—Ագունիի թագաւոր Մատիլու, Կումմուխի

թագաւոր Կուշտաշպի, Մալաթիայի թագաւոր Սուլումալ, Գամգումի թագաւոր Թարխուլարա։ Այսպիսով ուրարտական և հեթիթական իշխանների մի միութիւն էր, որ դուրս էր եկել Ասորեստանի դէմ։

Ճակատամարտը տեղի ունեցաւ Կումմուխի մէջ, ոչ հեռու Եփրատից։ Նա տևեց մի ամբողջ օր, որի ընթացքում երկու թագաւորները իրար հանդիպեցին կռուի դաշտի վրայ, զեկավարելով կռիւը։ Իրիկնապահին վերջապէս, ուրարտական կառախմբերը և այրուձին ցրուեցին և սկսուեց խառնաշփոթութիւնը։ Ցաղթող ասորիները խուժեցին ուրարտական բանակը, փախչողների ետևից։ Սարդուրին թողեց իր կառքը, բայց միայն մի մատակ ձի գտաւ իրան փրկելու համար և հեծաւ այդ ձին, չը նայած որ դեռ այն ժամանակից Արևելքում յարգաբեկ, անպատիւ մի բան էր համարւում այդպիսի մի հեծանելի գործածելը։ Ամբողջ գիշերը ձիավարելով՝ Սարդուրին, որին քայլ առ քայլ հա-

լածում էր ասորական մի հեծեալ զօրաբաժին, դժուարութեամբ հասաւ Եփրատի կամուրջին։ Այդտեղ սեպացած եղբին, կանգ առան հալածողները և Ուրարտուի թագաւորը ողջ առողջ մտաւ իր երկիրը։ Նա կորցրել էր մօտ 73,000 մարդ, մեռած թէ գերի, իր կառքերը, իր ամբողջ ծանրոցքը։ Նրա վրանը, որի մէջ գտնուում էին թագաւորական զարդերը, մահճակալը, շարժական գահը, բարձերը, պատգարակները, ամբողջովին ընկաւ թշնամու ձեռքը։ Թեգլաթ-պալասարը այդ բոլորը այրեց տեղն ու տեղը, ի պատիւ աստուածների, որոնք նրան նրպաստել էին այսքան նշանաւոր չափով. նա պահեց միայն թագաւորի մահճակալը և իբրև պատերազմի յաղթանակ տուեց Իշտար աստուածուհուն[1])։

Սարսափելի էր ուրարտական միութեան կրած պարտութիւնը։ Բայց դա դեռ չէր նշանակում հիւսիսային այդ մեծ ոյժի կատարեալ ոչնչացում։ Թեգ-

[1]) Maspero, t. III, p. 146.

լաթ-պալասարը չը կարողացաւ օգտուել իր տարած յաղթանակի արդիւնքներից։ Ուրարտուն նրա համար դեռ նշանաւոր ոյժ էր, ուստի նա սիրտ չարաւ անմիջապէս մտցնել իր բանակը Ուրարտուի ներսը և շարունակել մի անգամ սկսած գործը։ Իրան էլ թուլացած գտնելով, նա վերադարձաւ տուն, բայց, ի հարկէ, չէր մոռանում որ Ուրարտուն դեռ շարունակում է մեծ սպառնացող մի ոյժ, որ յարմար րոպէին դարձեալ կարող է վերանորոգել իր պայքարը համաշխարհային տիրապետութեան համար։

Սարդուրի հետ նորից չափուելու յարմար առիթ ասորական թագաւորին ներկայացաւ միայն եօթը տարուց յետոյ (736)։ Այս անգամ պատերազմական արշաւանքը արդէն յատկապէս Ուրարտուի դէմ էր և այս անգամ Սարդուրին արդէն միայնակ, առանց դաշնակիցների էր ասորեստանցիների հանդէպ։ Թեգլաթ-պալասարը, ինչպէս երևում է, մեծ դժուարութիւնների չը հանդիպելով մտաւ Ուրարտու և

պաշարեց Վանը, որ և ամբողջ երկրի առաջնակարգ բերդն էր։ Մենուաը, Արգիստին, ինքը Սարդուրին, արհեստական ամրութիւններ աւելացնելով բնական ամրութիւնների վրայ, դարձրել էին Վանի ժայռը միանգամայն անմատչելի։ Բերդի մէջ հաւաքուած էր բաւականաչափ պաշար, ուստի միայն դաւաճանութիւնը կարող էր բաց անել դռները թշնամու առաջ։ Դաւաճանութիւն չեղաւ և Սարդուրին, ապահով նստած ժայռի գագաթին, ուր գտնուում էին նրա պալատը, աստուածների տաճարը և զօրանոցները, տեսնում էր թէ ինչպէս թշնամին ոչնչացնում էր ցածի քաղաքի հարուստ այգեստանները, քարուքանդ էր անում տները, պալատները...

Այս գործողութիւններով էլ Թեգլաթ-պալասարը չը կարողացաւ ազդել պաշարուածների վրայ, ուստի դնելով բերդի դռների դիմաց իր քարէ պատկերը, վերցրեց պաշարումը և վրէժ հանելու համար՝ արշաւանքներ տարածեց դէպի ամեն կողմ, կրակի և

սրի մատնելով ողջ երկիրը։ Բազմաթիւ քաղաքներ կործանուեցին և ասորական բանակը հարուստ աւարով ծանրաբեռնուած՝ վերադարձաւ իր երկիրը[1])։

Ահա ինչպէս է ինքը Թեգլաթ-պալասարը նկարագրում իր արշաւանքները դէպի Ուրարտու. «Շարդուրի[2]) ուրարտացին ինձմէ ապաստամբեալ յետս եկաց, Մատիւիլուի հետ դաշնաւորութիւն ըրաւ։ Կիստան ու Խալպի երկրաց մէջ, որ Կումմուխ քաղաքին մէկ վիճակն են, զանի զարկի մինչև ցեղծումն։ Անոր ամբողջ կարասին առի։ Զինուցս տարափէն զարհուրեցաւ, իւր կեանքը փրկելու համար՝ միակ միայնակ փախստական գնաց։ Իւր քաղաքն Տուրուսպայի[3]) մէջ զանի փակեցի, անոր բազմաթիւ պատե-

[1]) Ibid. p. 154—155.

[2]) Ասորական և ուրարտական արձանագրութիւնների մէջ u և o տառերը յաճախ խառն կերպով են կարդացուում. մէկը կարդում է Արգիստի, միւսը՝ Արգիշտի, Սարդուրի—Շարդուրի, Սամսի-Ռիմման—Շամշի-Ռիմման և այլն։

[3]) Տուսպա՝ ըստ Վանեան արձանագրութիւնների։

բազմողները նոյնին դրանց առջև սպանեցի։ Իմ արքայական պատկերս Տուրուսպա քաղաքին առջևը կանգնեցի։ Լայնատարած Ուրարտու երկրին մէջ գ70 կրկին ժամս ճանապարհի վերէն մինչև վար արշաւեցի. հաւասարազօր ոսոխ մը չկար։ Ուլլուբա երկիրը բոլոր բովանդակ ընդ լծով արկի, կտրեցի անցայ։ Կաստիրրա, Պարիսու, Տաշուխա, Մանտուուր, Շարդուրրիի քաղաքները՝ մինչև Բաբուտտա, Լուսիա, Կասսիա քաղաքները մինչև Սիկիբտա քաղաքն, Ասուրտա քաղաքն Ասորեստանի երկրին միացուցի։ Անոնց վրայ կողմնակալ մը դրի, Ուլլուբա երկրին մէջ տեղի բերդաքաղաքը, զոր Ուրարտու երկրէն աշխարհակալեցի, քաղաք մը շինեցի, անունն Ասուր-իկիշա կոչեցի. Բաբա-բի-լուլ կողմնակալութեան պաշտօնեաներս հոն դրի՝ իբր հոգաբարձու Ուսուրնա, Ուսարրա, Ինու, Սասսու, Լուբ, Լուքի քաղաքաց մինչև ի լերինս անդր։ Քուտա, Ուրրա, Արանա, Տաբա, Ուալլիա քաղաքներուն մինչև ի վեր ցեփրատ, կում-

մուխ, Կիլիմիր, Աբբիսա, Խարպիսին-նա քաղաքներուն վիճակաց, Ինգի երկրին, Անգանու, Բինդու քաղաքներուն՝ Ուրարտուի բերդաքաղաքաց, Կալլաբմա գեռոյն... տիրեցի, Ասորեստանի երկրին միացուցի»[1]։

Ուրարտուից խլած և Ասորեստանին միացրած այս բազմաթիւ երկիրները, ինչպէս երևում է, գանուում էին թագաւորութեան հարաւային և[2]), մասամբ և արևմտեան կողմերում։ Սակայն այս դեռ չէր նշանակում թէ Ուրարտուն իբրև քաղաքական մարմին ոչնչացել է։ Դեռ մնում էր նրա ազգային թագաւորը, մնում էր նրա մայրաքաղաքը, մնում էին հիւսիսային նահանգները, դէպի ուր այնուհետև, բնականաբար, պիտի ուղղէին իրանց ուշադրութիւնը Վանի թագաւորները։ Ուրարտացիների համացեղ ժողովուրդները, որոնք մինչև այդ յենուած էին ուրարտական ոյժի վրայ, կարողացել էին աւելի ևս տարածուել, յետ մղե-

[1]) Սանտալճեան, եր. 159—161։

[2]) Винклеръ, с. 65.

լով սեմական ցեղերը։ Այս բոլոր հանգամանքները դեռ բաւական կենսունակութիւն էին ներկայացնում և Ուրարտուի ձեռքում դարձեալ մնում էր Ասորեստանի դէմ մրցելու հնարաւորութիւնը։

Սարդուրի Բ-ը վախճանուեց մօտաւորապէս 730 թուին, երբ Ասորեստանում դեռ կենդանի էր նրա բախտաւոր հակառակորդը։ Հետեւելով իր նախնիքներին, Սարդուրին չը մոռացաւ ծառայել իր երկրի ներքին բարօրութեան։ Նրանից մնացած մի քանի արձանագրութիւններ վկայում են որ նա եղել է շինարար թագաւոր։ Արճէշ քաղաքի մօտ եղած արձանագրութիւնն ասում է թէ այդտեղ Սարդուրին անկել է այգիներ և կոչել է նրանց իր անունով։ Իսկ Բաղնոց գիւղի եկեղեցում մնացած արձանագրութիւնը յիշատակում է թէ թագաւորն այդտեղ կառուցել է փայտէ կամուրջ Արածանիի վրայ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

# ՌՈՒՍԱՍ Ա.

Սարգուրին յաջորդեց նրա որդի Ռուսաս կամ Ռուշա Ա., որ ասորական արձանագրութիւնների մէջ կոչւում է Ուբաա կամ Ուբշա (730—714)։ Եթէ մինչև այժմ մենք տեսանք Վանեան հարստութեան մէջ նշանաւոր նուաճողներ, այս մէկը, Ռուսաս, ներկայանում է մեզ արդէն իբրև նշանաւոր քաղաքագէտ։ Եւ պէտք է խոստովանել որ իրերի դրութիւնը աւելի մի խելացի քաղաքագէտի անհրաժեշտութիւնն էր առաջացնում քան մի երիւելի զօրավարի։ Դրութիւնն այնպէս

էր, որ գործել կարելի էր գլխաւորապէս խելքով և ոչ զէնքով։

Սառնալով իր հօրից մի տխուր ժառանգութիւն, այն է՝ քայքայուող մի պետութիւն, որ կորցրել էր Աբգիստիի ժամանակների մեծ հմայքը, Ռուսան սկզբից և եթ, մօտ տաս տարուայ ընթացքում, Ասորեստանի վերաբերմամբ ընդգրկեց ապատողական քաղաքականութիւն։ 727-ին մեռաւ Թեգլաթ-պալասարը, նրան կարճ ժամանակով յաջորդեց (729—722) Սալմանասար Ե, բայց նրան էլ Ռուսասը հանդիսատ թողեց։ Նա իր բռնած դիրքը չը լքեց և այն միջոցին, երբ 722-ին նորից յեղափոխութիւն ծագեց Ասորեստանում և նրա հետևանքով գահին տիրացաւ Սարգոնը (722—705)։

Բայց այս ապատողականութիւնը անգործութիւն չէր նշանակում։ Ռուսասը շարունակ գործում էր մեծ շրջահայեցութեամբ, զգուշութիւններով, չը մոռանալով որ թուլացած Ուրարտուի վրայ աչք ունի յանկարծակի ուժեղացած Ասորեստանը։ Նա փոր-

ձեց և զէնքի բախտը, բայց իր երկրի հիւսիսային սահմաններում, ուր ասորական կասկածամտութիւնը չէր կարող գըրգռուել։ Սևանի լճի հարաւային ափերում, Ալիշալուի արձանագրութիւնը պատմում է որ Ռուսասը Արարատեան դաշտի հիւսիսակողմում բարձրացած լեռնաշխարհում 23 երկիրներ նուաճեց և դրանցից մի քանիսի բնակիչներին, ըստ ուրարտական սովորութեան, տեղափոխեց Բիայնաւ։ Քաղաքական հանգամանքները ցոյց են տալիս Վանի թագաւորին, որ եթէ Ուրարտուն պիտի նորից ընդարձակուի իբրև պետութիւն, այդ կարելի պիտի լինի մանաւորապէս հիւսիսային երկիրների նուաճումով։ Ուստի նա, իր նախորդների ճանապարհը շարունակելով, իր իշխանութիւնը տարածեց նաև Սևանի լճի արևելեան և հարաւ-արևելեան ուղղութեամբ, գրաւելով Սիւնիքը։ Գուցէ հէնց նա էր, որ փորձեր արաւ այդ ուղղութեամբ առաջ շարժուելու և Արցախի լեռնանցքներով Կուրի հովիտը դուրս գալու համար։

Աւելացնենք այս գործունէութեան վրայ և այն, որ Ռուսասի շինարարական եռանդն էլ պակաս չէ եղել, ինչպէս վկայում են մի քանի արձանագրութիւններ։ Ամենից առաջ, ինչպէս հաւանական է կարծել, նա հոգ տարաւ Թեգլաթ-պալասարի ձեռքով կործանուած Վանի մասին։ Քաղաքը տեղափոխուեց այն քարաժայռի ստորոտը, որ այժմ կոչւում է Զրմփզրմփ դաղ[1])։ Բայց այս թագաւորի ամենանշանաւոր գործը, այնուամենայնիւ, կը մնայ նրա քաղաքապետական գործունէութիւնը, ուղղած Ասորեստանի դէմ։

Սարգոնի թագաւորութեան սկզբից ասորական մեծ պետութեան մէջ զանազան կոգմերում, ապստամբութիւններ ծագեցին։ Ռուսասը շատ բարեպատեհ համարեց այդ հանգամանքը և ձեռք առաւ այն միջոցների գործադրութիւնը, որոնց վրայ աշխատել էր 6 տարի։ Դեռ Արամէի ժամանակից մենք տեսանք մի քաղաքականութիւն,

[1]) «Հանդէս Ամսօր.» 1900 թ. էջ. 247։

որ յատուկ էր ուրարտացիներին՝ Ասորեստանի հանդէպ։ Դա զրացի ցեղակից ազգերի միութիւնն էր՝ ուրարտական թագաւորի առաջնորդութեամբ։ Ահա այս ուրարտական քաղաքականութեան զարգացումն էր, որ Ռուսաս Ա-ի նշանաւոր գործը դարձաւ։ Լաւ զգալով որ թուլացած Ուրարտուն չէ կարող միայնակ ընդհարուել Միջագետքի աշխարհակալ պետութեան հետ, վանի թագաւորը մեծ եռանդով աշխատում էր մի զինուած դաշնակցութեան առաջնորդը դառնալ և վրէժ հանել Ասորեստանից։ Սարգոնի դրժուար կացութիւնը ներքին ապստամբութիւնների հանդէպ՝ զրգռեց Ռուսասի մէջ առնմայինռազմիկոգին։ Մենուասի և Արգիստիի կատարած շահատակութիւնների յիշատակով էր ապրում նրա շրջապատը — ասում է Մասպերօն, — և նրա զօրապետների մէջ մէկից աւելի էին այնպիսիները, որոնք սկսել էին իրանց ծառայութիւնը այնպիսի մի ժամանակ, երբ Արպադից և Կարխեմիշից մինչև Մեդերի երկիրը (Մա-

բաստան) հողերի մի երրորդ մասից աւելին, կախուած էին ուրարտական դինաստիայից, մինչդեռ այսօր միացուած էին Նինուէին»[1]։ Ռուսասը վրճռել էր յետ նուաճել այդ երկիրները։

Մենք արդէն գիտենք թէ Ասորեստանի համար որքան կարևոր նշանակութիւն ունէին Ուրմիայի լճի արևմտեան և հարաւային կողմերում գտնուող երկիրները զուտ ռազմագիտական տեսակէտից և թէ ինչպէս այդ երկիրներում գործած վանեան թագաւորները (Մենուա, Արգիստի) ծանր հարուածներ էին հասցնում ասորական Միջագետքին։ Ռուսասը դարձեալ այս երկիրների վրայ դրեց իր յոյսը։ Նա յաջողութիւն գտաւ, իր կողմը գրաւելով այդ երկիրների տէրերից մէկին։ Երկիրը կոչւում էր Զիկարտու։ Գիտնականները նրան գտնում են Ուրմիայի լճից դէպի հարաւ, ուր նա կազմում էր Մաննայի թագաւորութեան մի ինքնավար մասնիկը։ Մի փոքրիկ թագաւորութիւն, որ, սակայն, Մասպե-

[1]) Maspero, t. III p. 237.

բոլ կարծիքով, լաւ կազմակերպուած ու ասորական քաղաքակրթութիւնը իւրացրած էր[1]։ Նրա թագաւորը, Միտատի անունով, զուրկ չէր ռազմական տաղանդից։ Գլխաւոր գործը, որ սկսեց նա Ռուսասի հետ միասին, այն էր որ Մաննայի ընդարձակ երկիրն էլ միանայ իրանց հետ Ասորեստանի դէմ։ Սակայն։ Մաննայի թագաւոր Իրանզուն հաւատարիմ մնաց Ասորեստանին և հէնց այս պատճառով էլ նրա դէմ դարձան երկու դաշնակիցների գործողութիւնները։ Երկուսի ջանքերով էր որ 719 թ. մաննական երկու քաղաքներ—Շուանդախուլ և Դուրդուկկա ապստամբուեցին Իրանզուի դէմ և իրանց գոնները բաց արին Զիկարտուի թագաւորի առջև։

Սարգոնը, որի դէմ այդ միջոցին

[1]) Ibid. p. 238.—Վինկլերը կարծում է թէ Զիկարտուի ժողովուրդը հնդկաերոպական ծագում ունէր (Винклеръ, с. 68)։ Եւ եթէ ճիշտ է այս, այն ժամանակ պէտք է ընդունել որ ի դէմս այս փոքրիկ թագաւորութեան առաջին անգամ պատմութեան ասպարէզն էր դուրս գալիս իրանական արիացիների ցեղը։

մի քանի ապատամբութիւններ էին բորբոքուած, իսկոյն ըմբռնեց թէ որ

Սարգոն

կողմն է աւելի մեծ սպառնալիք ներկայացնում և իր ամբողջ բանակը նե-

տեց Մաննայի երկիրը։ Այստեղ նա քարուքանդ արաւ, այրեց, ոչնչացրեց երկու ապստամբուած քաղաքները և շրջակայքում եղած ուրիշ քաղաքները, իսկ բնակիչներին գերի տարաւ և բնակեցրեց հաթերի երկրում։ Ասորական թագաւորի յանկարծահաս, շեշտակի հարուածը պարտ ու պատշաճ տպաւորութիւնը գործեց. ոչ Ռուսասը և ոչ Միտատին չը համարձակուեցին միջամտել և օգնութիւն հասնել երկու քաղաքներին։ Հետեւեալ տարին Սարգոնը զբաղուած էր Կիլիկիայում, ուր թաբալ ցեղի գլխաւորը ապստամբուել էր նրա դէմ։ Իսկ միւս տարին, այն է՝ 717-ին, ասորական թագաւորի առջև ծառացած էր մի ուրիշ նշանաւոր վտանգ։ Ապստամբուել էր հեթիթների երկիրը։ Այստեղ չէր մոռացուած Ուրարտուի հետ ունեցած բարեկամութիւնը և Պիզիրիս թագաւորը, ինչպէս մի անգամ սուր էր հանել Սարգուրի թագաւորի հետ միասին ասորական արշաւանքի դէմ պաշտպանուելու համար, այնպէս էլ այժմ,

անշուշտ ղեկավարուելով Ռուսասի հրահանգներով, կազմակերպեց մի ամբողջ դաշնակցութիւն։ Նա համաձայնեցրեց Մուշկի երկրի տիրոջը, որ կոչւում էր Միտա, դառնալ այդ դաշնակցութեան հոգին։ Եւ այսպիսով պատրաստ էր հեթիթական ծագում ունեցող ազգերի զինակցութիւն նաև Ուրարտուի արևմտեան կողմերում։ Պիզերիսը, ապստամբուելով, յայտարարեց իրան անկախ։ Սակայն Սարգոնից չարաչար պարտութիւն կրեց, գերի ընկաւ և Կարխեմիշ մայրաքաղաքը, հռչակուած իր մեծ առևտրով և հարստութիւններով, ընդ միշտ միացուեց Ասորեստանին։ Սա մի մեծ անցք էր հին պատմութեան մէջ։ Ոչնչացաւ հեթիթական պետութիւնը, որ մէկից աւելի դարեր տիրապետող էր եղել Առաջաւոր Ասիայում։ Հեթիթները հեռանում էին պատմութեան ասպարէզից և յետ էին մղւում դէպի լեռները, ուր նրանց խմբակցութիւնները այնուհետև սկսեցին ձուլուել դանդաղ ցեղերի հետ։

Ռուսասը մինչև այստեղ հանդիսատես էր այն անցքերին, որոնք տեղի էին ունենում իր պետութեան հարաւ-արևելեան և հարաւ-արևմտեան կողմերում, առանց խառնուելու այդ անցքերին։ Հիւսիսային Սիրիայի դուրս գալը հեթիթների ձեռքից՝ նրան ստիպեց նորից գործողութիւնների վայր ընտրել Մաննայի երկիրը, Զիկարտուի Միտատտին էր դարձեալ, որ լուրջ կերպով աշխատում էր մաննացիներին ոտքի կանգնեցել։ Սակայն Իրանզուի, ապա և նրա որդի և յաջորդ Ազայի հաւատարմութիւնը դէպի ասորական գահը անխախտելի էր։ Հետաքրքրական է որ Ուրարտուի և Զիկարտուի դաշնակցութեան յարել էր և Ումիլդիշ երկրի արքայիկը։ Այս երկիրը, հաւանականաբար, Մաննայի մի վիճակն էր կազմում, իսկ նրա արքայիկն էր Բագդադատտի, որ, ինչպէս կարծւում է, Ազայի որդին էր։ 716 թուականին Մաննայի մէջ բռնկւում է ապստամբութիւն, որի գլխաւոր առաջնորդն էր, ինչպէս կարելի է ենթադրել, նոյն

Բագդադատին։ Ապստամբները հաւաքւում են Ուառուշ սարի վրայ, սպասնում են Ազային և Բագդադատին, որ այսպիսով հանդիսանում էր իր հօր սպանման մեղսակից և դառնում է Մաննայի տէրը։

Սարգոնը անմիջապէս վրայ հասաւ այս վտանգաւոր շարժումը ճնշելու։ «Ի ժամանակի — գրում է նա — յորում ճակատագիրն եկաւ հասաւ Մաննացի Իրանզուի վրայ, որ հնազանդ ծառայ մըն էր և իմ լուծս կը սիրէր, զիւր որդին Ազա անոր գահին վրայ նստուցած էր, ուրարտացի Ուրշա իւր կողմանէ Ումիլդիշ, Զիկարտու և Միսիանդի երկրաց ցեղերուն, առ կողմնակալս աւագս Մաննայի պատգամաւորներ խաւրեց և զանոնք անիրաւութեան յորդորեց։ Իրանց տեսան՝ Ազայի դիակը դժուարին Ուառուշ լեռան վրայ նետեցին։... Առ Ասուր տէր իմ՝ առ ի փրկել զՄաննա և առ ի փրկել զԱսարեստան ձեռքերս վերցուցի։ Ուառուշ լեռան վրայ՝ ուր որ Ազային դիակը նետած էին՝ Բագդադատ-

տին մորթագերծ և Մաննայի տեսիլ ըրի։ Զնորա եղբայրն Ուլլուսունու արքայական գահուն վրայ նստեցուցի»[1])։

Բայց սրանով չը վերջացաւ ապստամբական շարժումը։ Ընդհակառակն, Ուլլուսունուն չը գնաց դէպի ասորիները, այլ Ռուսասի ներշնչումներին ենթարկուեց։ Նրա օրինակին հետևեցին շատ ուրիշ երկիրներ, որոնք Թեգլաթ-պալասարի ձեռքով միացուած էին Ասորեստանին։ Այսպէս էին Կարալլու, Ալաբրիա, Նիկասամա, Բիտսագբատի, Բիխիրմամի, Կիլամբատի, Արմանգու, Խարխար, Էլլիպի։ Այս բոլոր երկիրները զէնք վերցրին՝ Ուրարտական միութեան յաղթանակ բերելու համար։ Եւ այսպէս, Ասորեստանի ամբողջ սահմանագլխի վրայ, Ելամից մինչև Տաւրոս, բոլոր ազգերը գլուխ էին բարձրացրել։ Միայն Սարգոնի ռազմական հանճարն էր, որ կարողացաւ այդ ընդհանուր խառնակութեան մէջ գտնել ամենից վտանգաւոր կէտերը և

[1]) Սանտալճեան, եր. 177, 168։

հարուածել այդ տեղերը առանձին առանձին։ Նախ և առաջ նա քարուքանդ արաւ Մաննայի երկիրը, ոչնչացրեց շատ քաղաքներ, Ուլլուսունուն փախաւ լեռները։ Ապա նրա ծանր հարուածներին ենթարկուեցին հարևան մանր երկիրները, որոնց անունները յիշեցինք վերևում։ Դրանցից որը կորցրեց իր անկախութիւնը և ասորական նահանգներին կցուեց, որը անբնակ դարձաւ, քանի որ ազգաբնակութեան մեծագոյն մասը գերի տարուեց։ Պարտուեց և Զիկարտուն, իսկ նրա Միտատտի թագաւորը փախաւ լեռները։ Սարգոնը թէև գիտէր որ իր ամենամեծ թշնամին Ռուսասն է, բայց նրա դէմ արշաւանք չը սկսեց, այլ յարձակուեց Մեդական երկրի (Մարաստան) վրայ և այդտեղ նորից վերահաստատեց ասորական գերիշխանութիւնը։

Այսպէս վերջացաւ 716 թուականը։ Մինչդեռ ձմեռուայ միջոցին ասորական բանակը քաշուել էր Միջագետք, Ռուսասը նոյն այդ ձմեռուանից օգուտ

էր քաղում Մաննայի երկրում իր ծրագիրը իրագործելու համար։ Գարունը բացուելուն պէս նա եկաց Մաննայի երկրում և այդտեղ Ուլլուսունուի թոյլտուութեամբ գրաւեց 22 բերդաքաղաք։ Միաժամանակ Սարգոնը լուր առաւ որ ապստամբութիւն է սկսուել Սիրիայում, իսկ Մուշկի թագաւոր Միտան յարձակուել է Կիլիկիայի վրայ։ Հարկաւոր էր միանգամից երեք պատերազմ մղել։ Բայց Սարգոնն իմացաւ ինչ անել։ Նա բանակը իր հետ պահեց և այս անգամ էլ հեռուեց իր տակտիկային—խորտակել թշնամիներին միմեանց ետեւից, առանձին-առանձին։ Ամենից մեծ վտանգ սպառնացողը Մաննան էր և Սարգոնը նորից մտաւ նրա սահմաններից։ Այսպէս է նա նկարագրում իր գործողութիւնները այդ երկրում.

«Ուլլուսունու Մաննային՝ որ իւր հօրն գահն ելած էր, Ուրարտացի Ուրշային վստահացաւ և իւր բերդաքաղաքներէն 22 իբրև պարգև անոր տուաւ։ Զայրացեալ սրտիւ՝ Ասորես-

տանի զօրաց գումարութիւնը մէկտեղ ժողովեցի, առիւծի նման մռնչեցի և այն երկիրներու տիրելու ձեռնի գործ դրի։ Մաննացի Ուլլուսունու իմ արշաւանաց մօտենալը տեսաւ. թողուց իւր քաղաքը և սարսափած՝ դժուարին լերանց ապաստաններուն մէջ ամրացաւ։ Ի վեր տուի իւր արքայական քաղաքին, Իգիբիայի, Արմիդայ իւր ամուր բերդաքաղաքներուն տիրեցի, հրով այրեցի, ապականեցի... Մաննացի Ուլլուսունու ըրած գործերս դըժուարամատոյց լերանց մէջ լսեց, թռչնոց նման թռաւ եկաւ, ոտքերուս փարուեցաւ։ Անոր անհամար յանցուածոց ներեցի, մոռցայ անոր չարագործութիւնը, ներումն շնորհեցի անոր. իրեն արքայական գահուն վրայ նստեցուցի, 22 բերդաքաղաքները՝ հանդերձ 2 ամուր քաղաքներով, զորոնք Ուրշային և Միտատտիին ձեռքէն առած էի, անոր տուի. անոր աւերեալ երկիրը նորոգեցի»[1]։

Կատարելով այս գործը, Սարգոնը

[1]) Անդ. եր. 177, 179։

ստիպուած եղաւ նորից արշաւել Միդիա և հարեան երկիրները, ուր նորից ապստամբութիւն էր ծագել։ Այնուհետև տարուայ միւս մասը Սարգոնը անցկացրեց Ասորեստանի արևմտեան երկրներում, միշտ զբաղուած ապստամբութիւններ ճնշելով։ Իսկ 714 թուականի գարնան նա ժամանակը հասած համարեց Ուրարտուի հետ վերջին հաշիւը տեսնելու։ Իր բանակով նա մտաւ դարձեալ Մաննա՝ այդ տեղի և ուրիշ երկիրների հարկերը հաւաքելու համար։ Այնուհետև նա Զիկարտուի վրայ գնաց, քանդեց և այրեց տասնեակ գիւղեր։ Միտատին յաղթուած էր, մենակ, անօգնական մնացած, լքուած իրայիններից։ Նա չընկաւ Սարգոնի ձեռքը, բայց և այդպէս, կորցրեց իր իշխանութիւնը, անհետացաւ ասպարէզից։

Այս յաջողութիւնը թելադրեց Սարգոնին Ռուսասին հանդիպելու միտքը։ Եւ նրանք, վերջապէս, հանդիպեցին իրար։ Ուրարտացի ճարպիկ և անխոնջ քաղաքագէտը զէնքով էր դուրս եկել

Ասորեստանի մեծ նուաճողի դէմ։ Ի՞նչ պիտի առաջանար այս հանդիպումից։

Ինչպէս երևում է, Ռուսասի հաւաքած զօրքը մեծաքանակ էր։ Ճակատի տեղ նոյն Ուաուշ լեռն էր, Մաննայի երկրում, ուր սպանուել էր Ազան։ Ռուսասը սարսափելի պարտութիւն կրեց, կորցրեց ամեն ինչ և իր հօր նման փախաւ մատակ ձիու վրայ հարևան Մուզասիր լեռնոտ երկիրը, որ Ուրարտուի դաշնակիցն ու ցեղակիցն էր և որի թագաւորն էր Ուրզանան։ Սարգոնը գնաց նրա ետևից և կատարեալ յաղթութիւն տարաւ այդտեղ էլ։ Դիմենք իր, Սարգոնի նկարագրութեան[1]).

«Ուրարտացի Ուրշային պատերազմողները՝ թուով անհամար՝ սպաննեցի. անոր արքայական սերունդէն 260 հոգի՝ որոնք ձիաւոր հեծեալ էին, գերի բռնեցի։ Նա՝ առ ի փրկել զանձն՝ մատակ ձիոյ մը վրայ նստաւ, իւր լեռանց վրայ փախաւ։ Ուաւս լեռնէն

[1]) Անդ, եր. 171—173։

5 կրկին ժամուց ճամբայ (մինչև) Զի-խարդուսսու երկիրն և Մաննայի լեռնային վիճակն Ումիլդիս՝ անկէ առի, Մաննացի Ուլլուսունուին տուի։ Ուս-



Մուզասիրի Ուրզանա թագաւորի կնիքը

քայա բերդաքաղաքին՝ որ Զարան երկրին կիրճին մէջն է, Մալլաւ երկրին, Դի-ըիգ-լի-բակ-սատու երկրին՝ անոնց 140 քաղաքներովը՝ տիրեցի։ Բիտ-Սանգիբուտի երկրին վիճակին Աստանիա քաղաքին, Դալա երկրին Տարուի և Տարմակիսա քաղաքներուն, Ուլխու քաղաքին՝ որ Կիս-պալ լերան ստորոտն է, 21 ամուր քաղաքաց և 140 քաղաքաց վիճակաց նոցա՝ որք Արզաբիա լերան վրայ էին, տիրեցի,

հրով այրեցի։ Ամուր քաղաքաց և ա-
նոնց վիճակաց 30 քաղաքներու՝ ո-
րոնք Արմա-դալ-լի երկրին մէջ էին,
Ուքիանդա լերան վրայ՝ տիրեցի. Ար-
բու քաղաքին՝ տեղի յորում Ուրշա
...(քաղաքաց) ամրոց Արաիդ երկրի վի-
ճակին առ եզերք ծովու, ... և Կա-
գուլա-նի-ա քաղաքներուն՝ որք ի վե-
րայ Արձի լերին... Եւ վիճակին Ար-
զաւնիա լերին շինեալ էին, Ուայաւս
լերան վիճակէ 5 բերդաքաղաքաց, և
Ուայաւս երկրին վիճակէն 30 քաղաք-
ներու տիրեցի, հրով այրեցի։ Յանգու
թագաւորէն Նա՛բի երկրին՝ իւր ամուր
քաղաքն Խուրուսկիայի մէջ արջառ և
ոչխարներ իբր անոր տուրքն ընդու-
նեցայ։ Մուձաձիրցի Ուրզանա, Ասուր
և Մարդուկ դից վրայ ըրած երդումն
առ ոտն հարած էր, և Ուբարատցի
Ուրշային յայտնած էր հպատակու-
թիւն։ Ասուր տէր իմ դիս քաջալերեց.
իմ 1 պատերազմիկ կառքով և 1000
ձիաւորներով և ոտանաւորներով,
բուռն ոտանաւորք ի պատերազմունս,
Սիակ Ար-դի՞-շի և Ուլաիաւ Ալլուբիա-

յի դժուարին լեռները կտրեցի անցայ. ճամբայ գտնուած տեղուանք ձիու վրայ հեծած, իսկ դժուարին տեղերն հետիոտս քալեցի։ Մուձաձիրացի Ուրզանա իմ արշաւանացս յառաջանալը լսեց, թռչնոյ պէս փախաւ, դժուարին լերան մը վրայ ելաւ։ Զ Մուձաձիր՝ Քաղդիա աստուածոյն կայանքը պատնէշով՝ պաշարեցի։ Ուրզանայի կինը, անոր ուստերքը, անոր դստերքը, 6170 բնակիչ, 690 ջորի, էշ, 100, 225 ոչխար առի տարի։... 34 տաղանդ, 18 մնաս ոսկի, 160 տաղանդ, 2 ½ մնաս արծաթ, անագապղինձ... պատուական քարեր... անհամար գոյնագոյն կերպասներ և զգեստներ..., ընդ..., տաղանդ, 3 մնաս ոսկի, 2 տաղանդ,... մնաս արծաթ,... բազում, անագապղինձ, երկաթ, անհամար... առեալ տարի։... Ասուր դիք... իրենց ընչից մնացորդը. յայնաժաւալ երկիրը... ամեն տեսակի. սիբիտու ըրի։ Անոնց թագաւորն Ուրշային՝ կոծ ու ողբ ... այն վիճակն Ասորեստանի միացուցի, և իմ պաշ-

տօնէիս՝ պալատան հազարապետին՝ ձեռքը զայն յանձնեցի։ Ասուր դից՝ տեառն իմոյ՝ շքեղութիւնն զՈւրշայ Ուրարտացին յերկիր կործանեց. իւր իսկ երկաթի դաշունիւ շախուի մը պէս իւր սիրտը զարկաւ, զինքն ի կենաց զրաւեց»։

Մի ուրիշ արձանագրութեան մէջ Սարգոնն ասում է. «Ուրարտուի վրայ՝ իւր բովանդակ տարածութեամբը՝ թշուառութիւն հոսուցի, հոն բնակող մարդիկը կոծ ու ողբի մէջ նետեցի»[1])։ Սակայն, ասորական այս մեծադղորդ ինքնապարծութեան դիմաց մենք ունենք իր, Ռուսասի մի արձանագրութիւնը, որ գտնուում է Ուրմիայի լճի հարաւ-արևմտեան կողմում, Սեղիկան քուրդ գիւղի մօտ։ «Ըստ արձանագրին—ասում է պրոֆ. Լէմանը—Ասորեստանցիք յառաջ վաղանցուկ յաջողութիւն մ' ունեցած են, յանկարծակի բերելով առած Մուցացիրը (Կիլիշինէն գալով) և Մուցացիրի Ուրգանա արքայն փախած ապաստանած

[1]) Անդ, եր. 181.

Ռուսասայ Ա. քով։ Վերջինս նորէն շինած է Մուցացիր քաղաքը. կրկին կարգադրած Խալդիսի զոհերն և զՈւրզանա վերսին թագաւոր դրած, Ռուսասի մինչև Ասուրի լեռները յաղթական յառաջ քալելէն ետքը»[1])։

Ասորական և Ուրարտական աղբիւրների մէջ եղած այս մեծ հակասութիւնը հազիւ թէ կարելի լինի պարզել այժմ բաւարար կերպով։ Եթէ ճիշտ են Սարգոնի հաւաստիացումները, այն ժամանակ պէտք է ընդունել որ Ռուսասի պարտութիւնն ու անձնասպանութիւնը տեղի են ունեցել նրա այդ արձանագրութիւնից շատ յետոյ, երբ Սարգոնը երկրորդ անգամ վերցրել է Մուզասիր քաղաքը, երկրորդ անգամ փախցրել է Ուրզանա թագաւորին։ Դժուար է, սակայն, ասել թէ դէպքերը այսպէս կրկնուել են։ Ցամենայն դէպս, պարզ է որ Ռուսասը Սարգոնի արժանաւոր ախոյեանն էր և պատերազմի դաշտում։ Բայց որ պարտութիւն կրողը վերջ ի

[1]) «Հանդէս Ամսօրեայ», 1900 թ. եր. 66։

վերջոյ Ուրարտուն էր, երևում է հէնց այն հանգամանքից, որ Վանի թագաւորութիւնը այնուհետև հանդէս է գալիս շատ թուլացած, իր առաջնակարգ դիրքը կորցրած։ Ռուսասի ջերմ հայրենասիրութեան և ասպետական զգացմունքի պատկերն է, որ Սարգոնը տալիս է իր հետևեալ տողերի մէջ.

«Ուրշա Ուրարտուի թագաւորն Մուսասիր քաղաքին կործանելը, իւր Խալդի աստուածոյն աւարի առնուիլը լսեց. իւր իսկ ձեռքովն իւր գօտւոյն երկաթի դաշունիւն ինք զինքն ի կենաց զրաւեց»։

714 թուականը, երբ տեղի ունեցաւ այս դրաման, նոր իրողութիւնների և քաղաքական դասաւորումների մի դարագլուխ է կազմում Արևմտեան Ասիայի պատմութեան մէջ։ Կարելի է ասել որ այդ ժամանակ վերջանում էր սեմական և հեթիթական ցեղերի մէջ դարերից ի վեր բորբոքուած պայքարը տիրապետութեան համար։ Յաղթանակը սեմացիներին էր պատկա-

նում և ալարոտեան ցեղը յետ էր մղում պատմութեան ասպարէզից, երկրորդական նշանակութիւն էր ստանում։ Ուրարտական դաշնակցութեան մէջ մտնող բազմաթիւ մանր թագաւորութիւնները անհետանում են, անյայտութեան մէջ կորչում։ Ինքը Ուրարտուն, սակայն, դեռ շարունակում է իր գոյութիւնը, յարմարուելով նոր ստեղծուած քաղաքական պայմաններին։

ԳԼՈՒԽ ԺԵ.

# Ա Ն Կ Ո Ւ Մ

Ուրարտական թագաւորութեան ամբողջ տևողութիւնը կարելի է հաշուել մօտ[1]) 280 տարի (860—580 Ք.ա.), Ռուսաս Ա.-ի մահը գալիս էր այնպիսի մի ժամանակ, երբ այդ ամբողջ շրջանի համարեա ճիշտ կէսն էր լրացել (146 տարի)։ Այս շրջանը Ուրարտական թագաւորութեան բարձրացման ժամանակն էր, որ վերջանում էր անկումով։ Այնուհետև գալիս էր երկ-

---

[1]) Ճիշտ թուականները պակասում են և կարելի է հարիւ տալ մօտաւորապէս, հետևելով ասորական տարեգրութիւններին։

բորդ կէսը, մօտ 134 տարուայ մի ժամանակամիջոց, երբ երկիրը հաշտուած է քաղաքական անկման ճակատագրի հետ և ապրում է այնպէս, ինչպէս հանգամանքներն են տրամադրում։

Այս երկրորդ շրջանում Վանում թագաւորել են, որքան կարելի է հեռևեցնել մեզ հասած աղքատ նիւթերից, եօթը հոգի. Արգիստի Բ, Ռուսա Ա-ի որդին, (714—685), Ռուսաս Բ., նրա որդին (685—675), Էրիմենա (675—670), Ռուսաս Գ., նրա որդին (670—645), Սարդուրի Գ. (645—620), Իրկուաս (620—600), Մենուաս Բ, նրա որդին (600—580) [1]։ Այս թագաւորներից ոմանք թողել են արձանագրութիւններ, որոնց մէջ յիշատակում են թէ ինչ շինութիւններ են կառուցել։ Կան դրանց մէջ և մի երկու դէպք, երբ քաղաքների նուաճման խօսք է լինում։

Մինչդեռ այսպէս էր Վանի լճի ափում, Ասորեստանը, Սարգոնի տա-

[1]) Sandalgian, p. XLVI.

դանդաւոր յաջորդների ղեկավարութեամբ, հասաւ քաղաքական ոյժի գագաթնակէտին և Առաջաւոր Ասիայի ամենամեծ պետութիւնը դարձաւ։ Եգիպտոսն անգամ, որ մի ժամանակ իր յաղթական բանակներով հասնում էր Եփրատին, ասորական նահանգ դարձաւ։ Եւ Միջագետքի հզօր նուաճողների արձանագրութիւնների մէջ մենք այլևս չենք տեսնում արշաւանքներ դէպի Ուրարտու։ Նրանց հարուածներին մի մի անգամ ենթարկւում են հարևան երկիրները, մանաւանդ Մաննան։ Այսպէս, Սարգոնի որդի Սանհէրիբը (Ս. Գրքի Սենեքերիմը) նկարագրում է իր արշաւանքը Վանի լճի հարաւային լեռներում։ «Նիբուր լերան ստորոտը բանակս դրի. քաջամարտիկ անձնապահերով և ճակատամարտիս անեղծանելի զօրքերով վայրենի եզան մը պէս անոնց ճակատ մատուցի։ Զորեր, ծործորներ, լերանց գառիվայրեր, լեռնային հզօր վտակներ անցայ իմ գահուս վրայ։ Այն տեղն որ դեսպակի հա-

մաբ կարի դժուարին էր, ոտիցս վրայ իջայ, այծքաղի մը նման, բարձրաբերձ կատարներուն վրայ անոնց դէմ ելայ։ Ուր որ ծունկերս հանգչեցնել պէտք էր, քարաժայռի մը վրայ կը նստէի, ծարաւիս դէմ լեռնային ցուրտ աղբերականց ջուրը կը խմէի։ Անտառուտ լեռներու բարձանց վրայ անոնց հետամուտ եղայ, անոնց վրայ պարտութիւն ածի» [1]։

Այսպիսի նեղութիւններ Ուրարտուի լեռներում կրելու պէտք չը կար։ Ռուսաս Ա.-ի օրինակը ցոյց էր տուել, որ աւելորդ և աւերիչ բան է այնքան ուժեղացած Ասորեստանին դիմադրելը։ Ուստի նրա յաջորդ Արգիստի Բ.-ը ձիաներ է ընծայ ուղարկում Սահնէրիբին, որ նշանակում է եթէ ոչ կատարեալ հպատակութեան, գոնէ բարեկամութեան ցոյց անել։ Ուրիշ ելք չէր մնում Ուրարտացուն։ Ասորական զօրքերը գրաւած ունէին Վանի լճի հարաւային կողմերի ամբողջ լեռնաստանը և ասորական պաշտօնեան Տուս-

[1]) Ծանտալճեան, եր. 188։

պա քաղաքի մօտերքում հաստատուած՝ հսկում էր Ուրարտուի վրայ և մանրամասն տեղեկութիւններ էր հաղորդում իր թագաւորին[1]։ Որ այդ ուրարտական նոր քաղաքականութիւնը միայն Արգիստի Բ-ին չէր յատուկ, այլ հաւասարապէս ամենախելացին էր համարւում և նրանից յետոյ, այդ երևում է Ասուրբանիպալ թագաւորի (668—638) մի արձանագրութիւնից, որի մէջ խօսք կայ ուրարտական Սարդուրի Գ թագաւորի մասին։ Ահա ինչ է նա ասում. «Շարդուրի՝ Ուրարտուի թագաւորն՝ որուն հարքն թագաւորք՝ իմ հօրս եղբայրութիւն յայտարարած էին, այն ատեն Շարդուրի այն նշանաւոր գործերը, զորոնք դիքն մեծամեծք ինձի սահմանած էին, լսեց։ Որդւոյ մը նման՝ իր հօրը «տէրութիւն» ծանոյց, և ըստ այնմ ծանոյց՝ «ողջոյն արքայի՝ տեառն իմում», և յարգութեամբ՝ հպատակութեամբ իւր ծանր

[1]) Ցայտնի է և այդ պաշտօնեայի անունը—Պահիր-Բէլ, որի նամակներից մի քանիսը, ուղղած Սանհէրիբին, հասել են մեզ։

ընծայն իմ առջևս տանել տուաւ»[1]։

Այս դարձուածներից, սակայն, չէ հետևում թէ Ուրարտուն կորցրել էր իր ինքնուրոյնութիւնը, դարձել էր Ասորեստանի մի մասնիկ։ Ուրարտուի անկախութիւնը վկայող մի փաստ ենք գտնում Աստուածաշունչի մէջ։ Սանհէրիբի դէմ ապստամբութիւն ծագեց երկրի մէջ և այդ շարժման գլուխն էին կանգնել նրա երկու որդիները, Ադրամէլիք և Սարասար։ Թագաւորն սպանուեց դրանց ձեռքով, բայց հայրասպանները չը կարողացան օգտուել այդ եղեռնագործութիւնից։ Նրանց դէմ դուրս եկաւ նրանց եղբայրը Բաբելոնի կառավարիչ Ասարհադդոնը, որ ջարդեց նրանց բանակը և իր ձեռքն առաւ Ասորեստանի թագը։ Իսկ հայրասպանները, Ասարհադդոնից ազատուելու համար, փախան Արարատ, ինչպէս պատմում է Ս. Գիրքը[2]։ Այստեղ, ուրեմն, իբրև մի անկախ երկրում նրանք ապաստան գտան։ Վինք-

[1]) Սանտալճեան, եր. 196։

[2]) Զորրորդ թագ. ԺԹ. 37, Եսայի մարգ. Լէ, 38։

լէրը նոյն իսկ կարծում է թէ նրանք յոյս ունէին այստեղ, Ուրարտուի մէջ, գտնել օգնութիւն Ասարհադդոնի դէմ[1]։

Երկու վաղեմի անհաշտ թշնամիներին իրար վերաբերմամբ բարեկամական դիրք բռնել հարկադրում էին և արտաքին քաղաքական հանգամանքները։ Արևելքից և հիւսիսից ահեղ շարժումներ էին գալիս, որոնք զգալ էին տալիս թէ հին աշխարհը պիտի անհետանայ, տեղի տալով նոր ժառանգների։ Այդ շարժումները կատարում էր պատմութեան ասպարէզում նոր երևան եկած արիական ցեղը։ Արևելքից շարժւում էին մարերը, որոնք իրանց ձեռքն էին գցել հին Մեդիան, իսկ հիւսիսից՝ կիմմերացիները—ուժեղ, անձնապաստան, թալան ու կռիւ սիրող թափառականներ, որոնք ամբողջ թափով յարձակուեցին հին քաղաքակիրթ աշխարհի վրայ։ Այս անաւոր շարժումների դիմաց Ասորեստանը չէր կարող կոյր մնալ և չը զգալ գոնէ այս անգամ թէ որքան մեծ

[1]) Винклеръ, с. 71.

է եղել Նաիրիի լեռնաստանի նշանակութիւնը հէնց իր պահպանութեան համար։ Դա մի ամուր և ապահով միջնաբերդ էր եղել հիւսիսային ազգերի դիմաց, բայց մի միջնաբերդ, որի խորտակման համար Ասորեստանը ոչինչ չէր խնայել։ Այժմ էր զգացուում դրութեան ամբողջ վտանգը։ Խորտակելով իր շուրջը եղած բոլոր մանր ու մեծ պետութիւնները, Ասորեստանն այժմ մեն-մենակ պիտի կանգնէր արշաւող ազգերի դիմաց։ Նա ինքն իր ձեռքով խողխողել էր այն բոլոր կազմակերպութիւնները, որոնք կարող էին օգտակար լինել վտանգի րոպէին։ Ուրարտուի հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանելը այսպիսով պետական ինքնապաշտպանութեան թելադրած մի անհրաժեշտութիւն էր։ Բայց ուշ էր այլ ևս երկու երկիրների համար էլ։

Արտաքին քաղաքականութեան մէջ խաղաղասէր և բարեացակամ ընթացք ընդդրկելուց յետոյ, երկրորդ դարեշրջանի Վանեան թագաւորներին մը-

նում էր իրանց ընդունակութիւնները գործադրել ներքին խաղաղ զարգացման ասպարէզում։ Եւ իրաւ, այստեղ մենք տեսնում ենք նշանաւոր առաջադիմութիւն նոյն իսկ առաջին դարեշրջանի համեմատութեամբ։

Ռուսաս Բ-ը առանձին հոգացողութեան տարկայ է դարձնում Զրմփ-Զրմփ դաղի դագաթը, ուր կառուցանւում է բերդ, տաճար և այլ շինութիւններ, որոնց աւերակները այժմ կոչւում են Թուփրաք-կալէ։ Դա Վանի բերդի մի երկրորդ, բայց աւելի փոքրիկ օրինակն էր. ժայռ, իբրև միջնաբերդ, և այգեստանների քաղաք նրա ստորոտում։ Այգեստաններ տնկելու համար հարկաւոր էր հեռուից ջուր բերել, ինչպէս արել էր Մենուասը։ Այս նպատակով Ռուսաս Բ-ը Վարագի կողմերում շինում է մի մեծ արհեստական լիճ, որին և տալիս է իր անունը (այժմ նա կոչւում է Քէշիշ-գեոլ, քահանայի լիճ)։ Լճի ջուրը հաւաքւում էր ձմեռը և գարնանը ձիւնից ու անձրևներից և ջրանցքով տա-

րուած էր ժայռի ստորոտները։ Այս նոր քաղաքին (Թուփրաք-կալէին) Ռուսասը տալիս է իր անունը, այն է՝ Ռուսասի քաղաք[1])։ Նրա յաջորդներից մանաւանդ Ռուսաս Գ-ը աշխատում են այդ ուղղութեամբ և Ռուսային դառնում է կուլտուրական մի գեղեցիկ կենտրոն։ Այսօր Թուփրաք-կալէի աւերակներից հանուած նիւթերը մի ընդարձակ հասկացողութիւն են տալիս թէ որքան բարձր աստիճանի էր հասնում ուրարտական քաղաքակրթութիւնը Վանեան պատմութեան երկրորդ շրջանում, որ սկսւում է Ռուսաս Ա-ի ողբերգական մահից։

[1]) «Հանդէս Ամսօր.» 1913 թ. եր. 406։

ԳԼՈՒԽ ԺԶ.

# ԱՒՐԱՐՏԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

Որպէս զի ամբողջացրած լինենք Ուրարտական քաղաքակրթական տիպը, այստեղ կը բերենք նրա այդ զարգացած կուլտուրայի մի քանի երեւոյթները։

Քարակոփութիւն։ — Ուրարտական շինութիւնները ամենից առաջ ցուցադրում են մի ժողովուրդ, որ, եգիպտացիների նման, իմացել է հպատակեցնել իրան քարային ահռելի զանգուածները, ժայռերը։ Վանի ժայռի ճակատը յղկել, նրա վրայ 400 տող արձանագրութիւն փորել — այս մի վկայութիւն է թէ Վանի քարտաշները

գիտէին նուաճել այդ կարծր և միապաղաղ նիւթը։ Եւ այդ նուաճողական ընդունակութեան գերագոյն սքանչելիքն է այն, որ Վանի և Զրմփզրմփ-դաղի ժայռերի մէջ փորուած են սենեակներ և դահլիճներ, սանդուղքներ, որոնք տանում են դէպի ստորին յարկերը և որոնցից մէկն, օրինակ, Թոփրաք-կալէի ժայռում, ունի 55 աստիճան[1])։ Այսպիսի շինութիւններ ուրարտացիները շատ էին սիրում և նրանք միայն Վանում չեն գտնուում, այլ ուրիշ տեղեր էլ են հանդիպում։ Այսպէս է, օրինակ, մի շատ նշանաւոր շինութիւն, ժայռի մէջ, Գալա կոչուած տեղում, Խարբերդի մօտ։ Պրոֆէսոր Լեմանն այսպէս է նկարագրում այդ ուրարտական մեծագործութիւնը, որին նա տալիս է «Դուռն Ռուսաս Բ-ի» անունը.

«Ինձի ծանօթ խալդիական ժայռի շէնքերու մէջ ասիկայ է որ կլոր կամար մ' ունի. միւս բոլոր մուտքերն Խալդիական ժայռի սենեակնե-

[1]) «Հանդ. Ամս.», 1899, եր. 284։

ըու ուղղանկիւն դուռ մ' ունին, եթէ երբէք կանոնաւոր կերպով շինուած են։ Ռուսաս Բ-ի շինութիւնն յայտնապէս ըստ այն նախատիպ օրինակաց ձեւուած է, որք արևմտեան երկիրներու մէջ, արտաքոյ կամ ի շրջակայս Խալդիական պետութեան, գործածական էին։ Ի վաղուց փնտռած նախատիպն պոնտական արքունի դամբանաց, իրենց աղեղնաձև կամարօքն, գտնուած կը թուի։ Ինչպէս խալդիական ժայռի շէնքերու մեծամասնութիւնն, նոյնպէս նաև սա կը կազմուի բազմաթիւ սենեկիկներէ։ Գլխաւոր սենեկէն, ուր կառաջնորդէ մեզ մուտքն, կանցնուի ուրիշ աւելի փոքր սենեկի մը մէջ յաջակողմն՝ ուղղանկիւն դռնով մը, զոր—ինձի ծանօթ միակ դէպքն է—կը զարդարեն զարդաքանդակներ։ Կրնայինք զանոնք հաւկթազարդի նմանեցնել, բայց հոս գործերնիս կիսաշրջանակներու հետ է, որը՝ ճարտարապետական ձևերու լեզուին քիչ հմուտ եղողի մը համար դժուարաւ նկարագրելի եղանակաւ



Ալարտակաց ահեղարիւց գրիչներեն (պեղումներ)

մը իրարու անցած և այս կերպով բազմապատիկ շղթայիւք դրան երկու կողմերն իրարու մօտ են, իսկ դրան վերին կողմը իրարու խառնուած կընթանան»[1]։

Քարակոփութեան արհեստին այնքան կատարելութեամբ տիրացած ուրարտացիների համար դժուար չը պիտի լինէր կառուցանել այնպիսի շինութիւններ, որոնք յայտնի են կիկլոպեան անունով։ Քարի ահագին կտորներ, իրանց թանձրութեամբ և մեծութեամբ ժայռի ամբողջ հատուածներ ներկայացնող կտորներ գործ ածել՝ պատեր բարձրացնելու համար— այս արհեստը ոչ միայն խիզախ ձեռներէցութեան ոգի էր պահանջում, այլ և ահագին նիւթական միջոցներ, քանի որ այդ անհեթեթ բեկորները շարժելու, տեղը դնելու համար հար-

[1]) «Բազմավէպ» 1908 թ., եր. 488.—Կենդանի ժայռերի մէջ ամբողջ շինութիւններ փորելու արուեստը Ցեաց Հայաստանում և Ուրարտացիներից շատ ու շատ յետոյ։ Այս արուեստի մի գեղեցիկ յուշարձան է Գեղարդի վանքը, շինուած ԺԳ. դարում։

կաւոր էր բանուոր ձեռքերի մեծ քանակութիւն։ Ուրարտացիները իրանց կիկլոպեան պատերը շինում էին կամ տաշած կամ անտաշ, կամ թէ հազիւ տաշած ու ձևաւորուած քարերից։ Սրանք դարսւում էին իրար վրայ մեծ վարպետութեամբ, շատ յաճախ առանց կրային մածուցիկ զանգուածի։ Այս տեսակ վիթխարի պատերի նմուշներ տալիս է Մենուասի ջրմուղը (Շամիրամ-սուս), կիկլոպեան պարիսպներով էին շրջապատւում և ուրարտական բերդերը ժայռերի վրայ։

Անդրկովկասի սահմաններում ուսումնասիրութիւններ կատարած ռուս հնագէտները (Իվանովսկի, Նիկոլսկի) երևան են հանել որ համարեա իւրաքանչիւր սեպաձև արձանագրութեան մօտ գտնում են շատ հին, անշուշտ ուրարտական բերդեր, մեծագոյն մասամբ մանր ամրոցներ, որոնց բնորոշ յատկութիւնն է կիկլոպեան պարիսպը։

Որմնադրութեան արհեստը նրբութեան և կատարելութեան էր հաս-

ցրած։ Թոփրաք-կալէի տաճարը, չը նայած որ կործանուած է մինչև հիմքը, «շքեղ», «հրաշալի» անուններով



Ուրարտական բերդ Զբլդիր լճի ափին

է կնքուում եւրոպացի այցելուների կողմից։

Ուրարտացի քարտաշները գիտէին

և գեղեցիկ զարդարանքներ շինել գոյնզգոյն քարերի դասաւորումով։ Սա մի տեսակ մոզաիք էր։ Թոփրաք-Կալէի տաճարի յատակը ծածկուած էր այդպիսի մոզաիքանման բանուածքներով, որոնք բաղկացած էին համակենտրոն շրջանակներից, միմեանց ագուցուած՝ ընտիր ճաշակով[1])։

Մի ուրիշ մեծագործութիւն էլ, որ ներկայացնում է ուրարտական քարակոփութիւնը, այն քարէ հսկայական կոթողներն են, որոնց վրայ Վանի թագաւորները քանդակել էին տալիս իրանց գործերը պատմող արձանագրութիւնները։ Դրանք քարի միապաղաղ կտորներ են, յղկուած, սովորաբար տափակ, վերևը կիսաբոլորակ։ Հսկայական է Արգիստիի կոթողը, որ գտնուում է Վանի ս. Կարապետ եկեղեցու բակում։ Կոթողներից պակաս չէին և այն քարէ պատուանդանները, որոնց փորուածքի մէջ մտցուում էին կոթողները։ Որպէս զի կարողանային պահել

[1]) Քարերի գոյներից զարդարանքներ կազմելը Ասց և հայկական ճարտարապետութեան մէջ։



Զուարթնոցի արձանագրությունը

այդ հակայական կոթողները, պատուանդանները պիտի լինէին նոյնպէս շատ խոշոր ու հաստ, իսկ նրանց տեղափոխելու համար իւրաքանչիւր կողմի վրայ թողնւում էր հանգուցատեղի, որին կապւում էին պարանները։ Այսպէս է, օրինակ, Հասան-Կալէի մօտ գտնուող խոշոր պատուանդանը, որ նկարագրել է Լեմանը[1]։

Քարի այդ ճարպիկ վարպետները կարողանում էին աւելի քնքոյշ ու նուրբ գործերի համար էլ բանեցնել այդ կարծր նիւթը։ Վանի բերդում կայ քարէ արձանի մի մնացորդ, որ, տարաբախտաբար, ամբողջութեան մասին շատ քիչ հասկացողութիւն է տալիս։ Արձանից մնացածը իրանն է միայն, առանց գլխի։ Հաւանական է համարւում որ ուրարտական արուեստի գործ լինի այդ կտորը։ Գտնուած են և այնպիսի գործեր, որոնք ցոյց են տալիս թէ ուրարտացի վարպետները գիտէին քարի և մետաղի մշակութիւնը միաց-

[1]) «Բազմավէպ» 1908 եր. 550.

նել արուեստի մէջ։ Օրինակ, քարի մէջ խոր փորուած է ծառի ճիւղ բռնած մի մարդու պատկերը և փորուածքը լցուած է մետաղով [1])։

Ջրանցքաշինութիւն։ Ուրարտական կուլտուրայի այս նշանաւոր ճիւղը, որ միաժամանակ մի մեծ յուշարձան է թէ որքան այդ ժողովուրդը անձնատուր եղած էր երկրի մշակման, մանրամասն նկարագրութիւնների կարօտութիւն չունի։ Ջրանցքաշինութեան ամենամեծ գործը Մենուասի «պիլին» է, որ գոյութիւն ունի և այսօր։ Նրա նկարագրութիւնը մենք բերինք վերեւում, այդ նշանաւոր թագաւորի պատմութեան մէջ։ Այսպիսի գործի ընդունակ մի ժողովուրդ, իհարկէ, չէր թողնի իր երկիրը առանց ոռոգման, ուր որ հնարաւոր էր արհեստական ջրանցքներ շինելը։ Եւ անշուշտ, շատ են երկրի զանազան կողմերում շինուած, այժմ բոլորովին մոռացուած կամ անհետացած ջրանցքները։

[1]) Lehmann—Haupt — «Materialien Zur älteren Geschichte Armeniens», p. 81.

Ոռոգման գործին կարօտ էր մանաւանդ Արարատեան դաշտը։ Առանց արհեստական ջրանցքների այս սքանչելի հողը չէր կարող զարմացնել իր արգաւանդութեամբ։ Ուրարտուն, անկասկած, ամենայայն չափերով շահագործում էր այս երկրի հարստութիւնները, և ջրանցքների սիստեմն այստեղ, անշուշտ, շատ պիտի զարգացած լինէր։ Այժմ էլ նկատւում են այդ հին ջրաբաշխական աշխատանքների հետքեր Երևան քաղաքի մօտ։ Այս քաղաքի և Էջմիածնի մէջ ընկած ընդարձակ հողերը ջրելու համար օգտւում են Զանգու (Հրազդան) գետից։ Սակայն այդ գետը խոր ընկած է, ժայռոտ ափերի մէջ սեղմուած։ Եւ ահա այ ափի բազալտեայ ժայռոտ բարձրութիւնների մէջ փորուած են երկու տուննել, որոնք այժմ կոչւում են «Դալմաներ» և որոնց միջով Զանգուից վերցրած ջրմուղները ոռոգում են՝ վերինը—Երևանի այգիները (Դալմա), իսկ ներքևինը (110 սաժէն երկարութեամբ)—Էջմիածնի և Երևանի մէջ

եղած հողերը։ Այդ տոհնեներները համարում են Ուրարտացիների գործեր։ Այս ենթադրությունը միանգամայն հաւանական է դարձնում Ռուսաս Բ-ի արձանագրությունը, որ Զուարթնոց եկեղեցում է գտնւում և որի մէջ թագաւորն ասում է թէ ինքը Իլդարունի գետից ջրմուղ է բերել և այգիներ տնկել։ Այդ Իլդարունին այժմեան Զանգուն պիտի լինի[1]։ Ջրմուղները (պիլի) հանուել են և Արաքսից և այս մասին վկայում է Արաքսի ափին, դէպի Սարդարաբադի դաշտը տանող ջրմուղի սկսուածքում ժայռի վրայ փորուած արձանագրությունը [2]։

Մետաղագործություն։ Ոսկին, արծաթը, բրոնզը, երկաթը ուրարտական մետաղագործության նիւթերն էին։ Այստեղ էլ նշանակելի է այն բարձր զարգացումը, որին հասել էր արուեստը։ Թուիրաք-Կալէի պեղումները տուել են ոսկէ մի կոլոր մե-

[1]) Մեսրոպ եպիսկոպոս—«Էջմիածնի դաշտի ոռոգումը», («Արարատ» ամսագիր 1912, եր. 238—239)։
[2]) Անդ, եր. 240.

դալ, վզից կախ անելու սահմանուած. նրա վրայ քանդակուած է մի շատ նուրբ, ուղղակի գեղարուեստական նկար, որ ներկայացնում է երկու կնոջ.—մէկը նստած է բարձր մէջք ունեցող աթոռի վրայ, իսկ միւսը բազկատարած կանգնած է նրա առջև։ Կանգնած կինը հագած ունի երկար զարդարուն զգեստ։ Նստածը, անտարակոյս, մի աստուածուհի է։ Բայց երկուսն էլ հետաքրքրական են մանաւանդ այն կողմից, որ ներկայացնում են ուրարտական կանանց տիպեր։

Կանացի պատկեր է ներկայացնում և մի պղնձի ձուլուածք, որ ունէր կրօնական մեծ նշանակութիւն։ Եգիպտոսում, Ասորեստանում, յետոյ նաև Պարսկաստանում աստուածութեան ամենաբարձր նշանակը (սիմբոլը) արեգակի թեւաւորուած սկաւառակն էր, որի հետ ներկայացուում էր և գլխաւոր աստուածը (ինչպէս, օրինակ, Ասորեստանում՝ Ասսուրը, Պարսկաստանում Ահուրամազդան)։ Ուրարտուն էլ ունէր այդ նշանակը, բայց նրա հետ

ներկայացուողը կին էր և ոչ տղամարդ։ Ի՞նչ է այս ցոյց տալիս։ Արդեօք ան, որ ուրարտական գլխաւոր աստուածը (Խալդին կամ նրա երկու ընկերներից մէկը) իգական սեռին էր պատկանում։—Առ այժմ այս հարցին որոշակի պատասխանել չէ կարելի։ Բայց մի ուրիշ կարևոր հանգամանք է ներկայացնում այդ կանացի պատկերը։ «Շատ կորացած քթի և այտոսկրի դրոշմուածը—ասում է պրոֆէսոր Լեմանը—կը յիշեցնեն ինձ ծանօթ հարաւային Կովկասի բոլոր տիպերէն գլխաւորապէս վրական տիպարը։ Եւ եթէ զանազան պատճառներով մտածուեցաւ վրաց և խալդեաց խնամութեան մը մասին, հոս ևս նկատելու արժանի պարագայ մ'է այն, որ երկայն ու գլխի երկու կողմէն ուսերու վրայ ծածանող խոպոպիքներն... դեռ ցայսօր բնորոշիչ առանձնայատկութիւն մ'են վրացի կանանց հերազարդին [1])»։

Ուրարտացի տղամարդկանց գծագրութիւնն էլ հասել է մեզ։ Դարձեալ

[1]) «Բազմավէպ» 1909 եր. 10.

Թոփրաք-Կալէի աւերակների միջից է որ հանուել է մի տղամարդու պղնձէ արձան, որ մի շատ սիրուն գործ է, բայց, տարաբախտաբար, ոչ ամբողջութեամբ պահուած։ Մի քանի նշան-



Ուրարտ. վահան նկարներով

ներից երևում է որ իրանը ծածկուած է եղել ոսկով։ Գլուխը շինուած է սպիտակ քարից, իսկ աչքերը և վզազարդի

ծակերը, ինչպէս երևում է, լցուած են եղել թանկագին քարերով։

Բրոնզեայ իրերի վրայ եղած քանդակները զարմացնում են իրանց նրբութեամբ և ճաշակով։ Նրանց մէջ ամենանշանաւորներն են Ռուսաս Բ-ի



Ռուսաս Բ-ի վահանը

և Ռուսաս Գ-ի բրոնզէ վահանները, որոնք, ըստ ուրարտական սովորութեան, կախուած են եղել տաճարում։ Ռուսաս Բ-ի վահանը ծածկուած է

քայլող առիւծների և ցուլերի նկարներով[1]։ Արտակարգ գեղեցկութեամբ աչքի է ընկնում և մի բրոնզէ բարձր աշտանակ, որ հաստատուած է աղեղնաձև բարձր երեք ոտների վրայ։ Ոտները վերջանում են ցուլի կճղակների ձևով, իսկ իւրաքանչիւր կողմի վրայ հաստատուած է մի բրոնզէ արձանիկ, որ Ասորեստանն է յիշեցնում—մարդու գլուխ ունեցող թևաւոր ցուլեր։ Ուրարտուն այդ ձևը Միջագետքից է փոխառել, բայց իր սեփական ինքնուրոյնութիւնն էլ է ցոյց տուել։ Զանազան կենդանիներից ձևեր կազմելը ուրարտացի արուեստագէտին տուել է միջոց սիրուն առարկաներ յօրինելու։ Այսպէս է, օրինակ, արծուառիւծը, այսինքն թևաւոր մի առիւծ՝ արծուի գլխով. աչքերի ծակերն են մնացել, որոնք, անշուշտ, ուրիշ մի նիւթով են եղել լցուած[2]։ Կայ և մի թևաւոր ցուլ, որի առաջին ոտների վրայ բարձրանում է մարդու իրան. թևերը խաչուած

[1]) Линчъ, т. II, с. 80.
[2]) Lehmann Haupt, p. 97.

են կրծքի վրայ, իսկ երեսը չը կայ, շինուած է եղել ուրիշ նիւթից [1]։ Երկու արձանիկներն էլ իրանց գլուխների վրայ ունին յաւելուածներ, որոնց մէջ մտցուում էին պղնձից շինած սիւներ։ Ասել է՝ արձանիկները պատուան-

Թեւաւոր ցուլ

դանի դեր էին կատարում։ Պղնձագործութեան յուշարձանների մէջ յիշատակենք և գահոյքի մի ծանր ու հաստ

[1]) Линчъ, II, с. 81.

ոտ, որի զանազան տեղերում թողած ծակոտինները, անշուշտ, թանկագին քարերի համար էին։

Արծաթագործութիւնը ծաղկած էր միւս արհեստների նման։ Ուրարտական ոսկերիչներին յայտնի էր ծծմբարծաթը, որի միջոցով կարելի է սև բանուածքներ անել սպիտակ արծաթի վրայ։ Ներկայումս այդ արհեստը Եւրոպայում յայտնի է Տուլայի[1]) արծաթ անունով։ Բայց նոյն արհեստը այսօր աւելի ճոխացած է Վանում։ «Սոյնպիսի Տուլայ գործեր— ասում է Լեմանը—նաև ցայսօր յատկապէս Վանայ մէջ մեծ բազմութեամբ և կարգէ դուրս նրբութեամբ կը պատրաստուին։ Վանայ մէջ կարելի է ոսկերիչներն, խանութ առ խանութ, իրենց աշխատած միջոց դիտել։ Մեր գտածն կը ցուցնէ թէ հոս ամենահին ընիկ գործի մը շարունակութիւնն է և թէ նա Կովկասի վրայէն Ռուսաստան անցնելով՝ նոր հայրենիք մը գտած է[2])»։

---

[1]) Քաղաք Ռուսաստանում։

[2]) «Բազմավէպ», 1909, եր. 11.

Արծաթի և ոսկու վրայ նկարելու արուեստի յիշատակարաններ համարւում են և հիւսիսային Կովկասում, Մայկոպի մօտ և այլ տեղեր գտնուած մի քանի իրեր, որոնք, ինչպէս ենթադրում են, ուրարտական գործեր պիտի լինեն։ Այդ գիւտերից մէկը արծաթէ աման է, ըստ երևոյթին, հին շրջանի մի գործ, և երկու ոսկէ պատեաններ, ծածկուած զարդանկարներով[1])։

Երկաթի մշակութիւնը նոյնպէս հետքեր է պահել Թոփրաք-Կալէի աւերակների մէջ։ Բայց այդ մետաղի գործածութիւնը անշուշտ աւելի շատ էր տարածուած և կեանքի մէջ բազմաթիւ պիտոյքների էր ծառայում հմուտ վարպետների ձեռքով, քանի որ ենթադրութիւն կայ թէ երկաթի գիւտը տեղի է ունեցել հէնց Հայաստանում։

Կաւագործութիւն։ Այս արուեստը ամենից առաջ կարևորութիւն ներկայացնում էր այն կողմից, որ տալիս էր նիւթ գրութիւնների համար։

[1]) Тураевъ, т. II, с. 52.

կաւէ տախտակներն էին ուրարտացիների, ինչպէս և նրանց ժամանակակից միւս ազգերի թուղթը։ Թոփրաք-Կալէի աւերակներից հանուած են մի քանի այդպիսի տախտակներ, որոնք ծածկուած են կամ սեպագրութիւններով կամ մեհենադրոշմ նշաններով (հիերոգլիֆ)։ Վերջին տեսակի տախտակները, անշուշտ, ուղարկուած են Վանի թագաւորներին հեթիթական հարևան երկիրներից, ուր գրութեան ձևը մեհենադրոշմն էր։ Իսկ սեպագրութիւնները ներկայացնում են նամակներ[1]), առօրեայ յարաբերութիւնների վաւերագրեր։ Վերջիններիս թուին է պատկանում մի դաշնագիր, որից կախուած է բաբելոնական ձևով մի կնիք։ Այս գիւտը մի վկայութիւն է, որ Ուրարտուի մէջ էլ տիրում էին իրաւական այնպիսի կարգեր, որոնք արդէն ծանօթ են Միջագետքի կուլտուրայի պատմութիւնից և որոնք կար-

[1]) Մնացել է Մուսասիրի Ուրշանա թագաւորի նամակը, ուղղած Ռուսաս Ա. թագաւորի պալատի հազարապետին («Հանդ. Ամս.» 1913, եր. 402).

գաւորում էին մարդկանց յարաբերութիւնները դրամական գործառնութիւնների, առևտրի և արդիւնաբերութեան մէջ։ Տարաբախտաբար, դեռ շատ քիչ են եղել որոնումներ և այս մի քանի հատ տախտակները դեռ բաւական չեն Ուրարտուի քաղաքային կեանքի մշակած կարգերը այնպէս մանրամասն լուսաբանելու համար, ինչպէս այդ հնարաւոր է եղել կատարել, հիմնուելով Նոյնպիսի տախտակների վրայ, Բաբիլոնի և Միջագետքի վերաբերմամբ։

Կաւագործութեան մի հարուստ ցուցահանդէս Բէլք և Լեման գիտնականներին հայթայթել է Թոփրաք-Կալէի պալատի մառանը, ուր սովորական մանր ու մեծ պտուկների, սափորների, կժերի հետ միասին երևան եկան 20—25 մեծամեծ կարասներ, իւրաքանչիւրը 500—600 լիտր հեղուկի տարողութեամբ։ Կարասների վրայ նկարուած էին ամաններ և ցոյց տուած թէ այդ ամանով քանի հարիւր չափ է բովանդակում իր մէջ կարասը։ «Մեզի յաջողեցաւ այս կարասներէն եր-

կուքը գրեթէ անվնաս դուրս հանել,— պատմում է Լեմանը — ասոնք իրենց ձևովն և մեծութեամբ շատ կը նմանին Անդրկովկասու մէջ դեռ մինչև այսօր գործածուած գինուոյ կարասներուն, մանաւանդ վրացուոցին»[1]։ Շատ կարասների գօտիները ներկայացնում են գեղարուեստական զարդարանքներ։ Ուշագրաւ են մանաւանդ այն զարդարանքները, որոնք կազմուած են կենդանիներից։ Այսպէս մի կարասի վրայ կայ այսպիսի մի արձանագործութիւն. հորիզոնական դիրքով ընկած է մի կենդանի, ըստ երևոյթին արջառ կամ եղջերու, առանց, սակայն, եղջիւրների։ Վերևից վար այդ կենդանու վրայ ընկած է մի գազան, երևի, անբաշ մի առիւծ և ուտում է կենդանուն, որ իր որսն է։ Բաւական տպաւորիչ է թէ ինքը, լափող գազանը և թէ նրա ահեղ ճիրանների տակ կծկուած զոհը։ Պատահում են և ուրիշ գազանների ամբողջական արձաններ կամ անդրի-

[1]) «Բազմավէպ», 1909, եր. 70։

ներ՝ կարասի փողի կամ փորի վրայ[1]։

Ընդհանրապէս, ուրարտական ամբողջ կուլտուրան ներկայացնում է իր մէջ երեք տարբ։ Մի կողմից նա մօտենում է Միկենեան կուլտուրային[2]) և այս հանգամանքը ցոյց է տալիս որ Ուրարտացիները արևմուտքից էին եկել։ Միկենեան կիկլոպական արուեստը, որ արտայայտւում էր ժայռաշինութեան և որմնադրութեան մէջ, տարածուած էր արևմուտքում մինչև Իտալիա և արևելքում մինչև Փոքր Ասիա։ Ուրարտացիները այդ տարածման շրջանի մէջ էին մտցնում և Հայաստանը։ Նոյն տարրն է երևում և ուրարտական կաւագործութեան ու պատկերաշինութեան մէջ։ Այս արևմտեան տարրը ուրարտացիները բերել էին իրանց հետ։ Հայաստանի բարձրաւանդակում նրանք ենթարկուեցին ատո-

[1]) Lemann Haupt, p. 114—115։

[2]) Միկենք—քաղաք Յունաստանում։ Այստեղից էր Տրոյեայի պատերազմի հերոսներից մէկը—Ագամեմնոն թագաւորը։ Միկենեան կոչւում է առհասարակ հնագոյն կամ հերոսական Յունաստանի ամբողջ քաղաքակրթութիւնը։

ական ազդեցութեան, որ և կազմում է երկրորդ տարրը նրանց քաղաքակրթութեան մէջ։ Իսկ երրորդն արդէն այն ինքնուրոյնութիւնն է, որ մշակեցին ուրարտացիները իրանց նոր հայրենիքում։

Եզրակացութիւն։ Որքան հետզհետէ շատանում են հնագիտական գիւտերը, այնքան աւելի ընդարձակւում են տեղեկութիւնները Ուրարտուի կուլտուրական ճոխութիւնների մասին։ Դա մի ծաղկած թագաւորութիւն էր իր անկումից առաջ։ Միայն քաղաքական ոյժը չէր աճում նրա մէջ Մենուասի, Արգիստիի օրերով. առաջնակարգ, մեծ պետութեան արժան թափով առաջանում էր և արուեստների զարգացումը, իսկ երկրի հարստութիւնները աւելի և աւելի բազմանում էին։ Վերը մենք պատմեցինք թէ ինչպէս Սարգոնը գրաւեց Մուզասիր մայրաքաղաքը և կողոպտեց Խալդի տաճարն և Ուրզանա թագաւորի ինչքը։ Այդտեղ էլ մենք բերինք մի կտոր Սարգոնի արձանագրութիւնից, որի մէջ մէկ-մէկ յիշատակւում է ա-

ւարի քանակութիւնը։ Այդ ցուցակը, սակայն, լրիւ չէ։ Նոր գտնուած է մի ուրիշ արձանագրութիւն, որի մէջ այդ աւարի նկարագրութիւնը բռնում է 56 տող։

Պատերազմական աւարը ամենից առաջ ցոյց է տալիս երկրի հարստութիւնն ու ռազմական կազմակերպութիւնը։ Ահա Սարգոնի աւարը ըստ այդ նորագիւտ մանրամասնութիւնների։ Թագաւորի պալատից վերցուած է 34 տաղանդ 18 մնաս ոսկի, 167 տաղ. 27 մնաս արծաթ, բրոնզ և թանկագին քարեր, գաւազաններ փղոսկրից և եբեղոսի փայտից ոսկի պատեաններով, արքայական իշխանութեան նշաններ, զանազան անունով անօթներ, զէնքեր թանկագին նիւթերից, 13 բրոնզէ աւազաններ, 130 բրոնզէ առարկայ տեղային գործ, 130 գունագեղ զգեստներ և վուշէ շապիկներ Ուրարտուից և Կիլիկուից։ Իսկ Խալդի տաճարում, բացի ոսկուց, արծաթից, բրոնզից և պղնձից, 6 ոսկի խոշոր վահան, որոնք կպցրած էին պատերին և շողշողուն փայլ ունէին.

նրանց մէջ կային այնպիսիները, որոնց վրայ շան գլուխ էր նկարուած և դրանց կշիռն էր 5 տաղ. 12 մնաս ոսկի, 12 հատ արծաթի վահան վիշապների գլուխներով, ոսկի կողպէքներ, բանալիներ, սրեր, 96 նիզակներ, 33 արծաթէ կառքեր, 394 արծաթէ անօթներ՝ ասորական, ուրարտական և Կիլիխուի գործ, Բողբարդու աստուածուհու կնիքը, 25212 բրոնզէ վահաններ, 1514 բրոնզէ նիզակներ, 305412 բրոնզէ սրեր, 607 աւազաններ բրոնզից՝ լուացումների համար, մի ահագին ջրաման, որ տանում էր իր մէջ 80 չափ ջուր և որ գործ էին ածում Ուրարտուի թագաւորները՝ գինի ձօնելու համար Խալդին, պահապան աստուածների 4 բրոնզէ արձաններ, Սարդուրիի քարէ արձանը, Արգիստիի արձանը, աստղերով թագդրած, կշիռը 60 տաղանդ, Ռուսասի արձանը, որի վրայ կար հետևեալ արձանագրութիւնը. «Երկու ձիով և մի ձիավարով իմ ձեռքերը նուաճեցին Ուրարտուի թագաւորութիւնը»[1]։

[1]) Тураевъ, с. 53.

Եւ երբ այսպիսի զարդարանքներ և հարստութիւններ գտնւում էին Մուզասիրում, որ մի երկրորդական փոքրիկ թագաւորութիւն էր Ուրարտուի մէջ, կարելի է մօտաւորապէս եզրակացնել թէ ինչ պիտի լինէին Վանի արքայական պալատները, տաճարները, ազնուական տները Մենուասի և Արգիստիի ժամանակ և թէ որքան բարեկեցիկ ու տնտեսապէս զարգացած պիտի լինէր առհասարակ երկրի կեանքը։

ԳԼՈՒԽ ԺԷ.

# ԿՈՐԾԱՆՈՒՄ

Արդէն դեռ Սարգոնի ժամանակ մենք տեսանք որ արևելքից և հիւսիսից առաջանում էին դեռ անծանօթ և բարբարոս նոր ազգութիւններ, որոնք շտապում էին տեղ բռնել համաշխարհային պատմութեան մէջ։ Սարգոնի յաջորդները Սանհէրիբ, Ասարհադդոն, Ասուրբանիպալ պահպանեցին այն համաշխարհային տիրապետութիւնը, որ նուաճել էր Սարգոնը իր անդադար պատերազմներով։ Բայց ասորական մեծ պետութեան ժամը հասել էր։ Ասուրբանիպալը (668—626) վերջին մեծ թագաւորն էր, որ բարձր էր

պահում իր պետութեան զինուորական մեծ ոյժը։ Բայց նա մի անհատ էր, որ իր զօրքի հետ այդպիսի գործ էր կատարում։ Մեռաւ այդ անհատը և Միջագետքի ահարկու բռնապետութիւնը իսկոյն երևան հանեց իր զառամութիւնը։

Մինչդեռ Ասորբանիպալը պատերազմներ էր մղում հարաւում և արևմուտքում, հիւսիս-արևելեան այն նահանգները, որոնք պատկանում էին Ասորեստանին, կազմակերպեցին մի նոր պետութիւն—Միդիան (Մարաստանը)։ Այդ կազմակերպումը հետեւանք էր այն հանգամանքի, որ հիւսիսից արշաւած արիական ցեղերի մի մասը հաստատուել էր Մաննայի երկրում և իր դիրքը ապահովելու համար Ասորեստանի դաշնակիցն էր դարձել ու անհաշտ թշնամի մարական ազգին։ Այդ արիական ցեղերը ընդհանրապէս կոչւում են կիմմերացիներ։ Նրանք ապրում էին հարաւային Ռուսաստանում, Ազովեան ծովի շուրջը։ Արևելքից, Ասիայի կողմից, Կասպից ծովի հիւսի-

սային տափարակներով առաջացած մի ուրիշ արիական ցեղ, որ կոչւում էր շակ կամ սակ, սկսեց նեղել կիմմերացիներին, որոնք թողին իրանց բնակութեան վայրերը և երկու մասի բաժանուեցին։ Մէկը, ուղղուելով դէպի արևմուտք, անցաւ Դունայ գետը, մտաւ Թրակիա և հալածելով այդտեղ բնակաւորուած արիական ցեղերը, նրանց ետևից անցաւ Բոսֆորով Փոքր Ասիա։ Միւս ճիւղը ուղղուեց դէպի հարաւ և անցնելով Կովկասեան գլխաւոր լեռնաշղթան Դարիալի կիրճով, մտաւ Անդրկովկաս։ Նրա ետևից նոյն ճանապարհով եկան սակերը, որոնք հաստատուեցին Կուրի հովտում[1])։

Ահա այս կիմմերական տեղափոխութիւնները մեծ իրարանցումներ գրգեցին այն ժամանակուայ քաղաքական աշխարհի մէջ։ Ուրարտուի սահմաններում կիմմերացիները անուանւում էին սպարդա, Մաննայի երկրում — աշկուզա, ուրիշ տեղերում՝ պար-

[1]) Հայաստանի Ուտի նահանգում մի ամբողջ գաւառ կոչուեց Շակաշէն (այժմեան Գանձակի գաւառը)։

զապէս կիմմերացի [1]։ Աշկուզանները, ինչպէս ասացինք, դաշնակից դարձան ասորեստանցիներին, որոնք տեսնում էին նրանց մէջ մի նոր բարբարոս ոյժ։ Ուրարտուի մէջ սպարդանները տիրացան շատ տեղերի և Սարդուրի Գ թագաւորը, դրանց դիմադրելու համար, կամովին հպատակուեց Ասուրբանիպալին, սակայն, ըստ երևոյթին, ոչինչ չը կարողացաւ շահել դրանով, քանի որ Ասորեստանը ոչինչ չը ձեռնարկեց այդ նոր ժողովուրդների դէմ։ Ասորական կուսակալները սահմանագլխի վրայ հետևում էին թէ ինչպէս այդ նոր ժողովուրդը պայքարում էր ուրարտացիների դէմ և յայտնում էին այդ մասին իրանց կառավարութեան։ Այսպէս թուլանում և փոքրանում էր Ուրարտուն. նրա թագաւորները գնալով աւելի ուժասպառ էին դառնում։

Ասուրբանիպալից յետոյ Նիւնէի գահը գրաւեցին դարձեալ երկու թագաւորներ, որոնք յիշատակութեան արժանի գործ չեն կատարել։ Մարաստա-

[1]) Винклеръ, с. 131.

նը, ուժեղանալով, իր համար նպատակ էր դրել Նինուէի նուաճումը և Ասորեստանի կործանումը։ Կիաքսար թագաւորի առաջին փորձը յաջողութիւն չունեցաւ։ Նա պաշարել էր Նինուէն, երբ կիմմերական ազգերի մի նոր հոսանք, որ աւերում էր ամբողջ Փոքր Ասիան, Անդրկովկասը, իր յորձանքները հասցրեց և Մարաստան։ Բարբարոսների այս նոր և աւելի ահեղ արշաւանքը սպառնում էր ոչնչացնել ամբողջ հին քաղաքակրթութիւնը։ Իր աւերիչ հոսանքները կիմմերական արշաւանքը տարաւ հասցրեց Եգիպտոսի դռներին, բայց ժամանակի փարաւոնը փող տուեց նրանց և յետ դարձրեց։ Անկարգ և անդիսցիպլին հորդուններից էին կազմուած կիմմերացիները։ Նրանք թալան էին որոնում և պատրաստ էին գնալ ամեն մէկի ետևից, ով խոստանում էր առատ աւար։ Այս ադէտալի արշաւանքներն են, որ նկարագրել է Երեմիա մարգարէն մի քանի տեղերում. «Զի ահաւասիկ ես ածից ի վերայ ձեր ազգ ի հեռաստա-

նէ, տունդ Իսրայէլի, ասէ Տէր, ազգ որ առաջին, ազգ որ յաւիտենից, ազգ որոյ ոչ լսեցիս զլեզուս նորա, և ոչ իմանայցես զխօսս նորա։ Կապարճք նորա իբրև զգերեզմանս բաց են. ամենեքին զօրաւորք։ Եւ կերիցեն զհունձս ձեր և զհաց, և կերիցեն զուստերս ձեր և զդստերս, և կերիցեն զոչխար և զարջառ ձեր, և կերիցեն զայգիս և զթզենիս ձեր և զձիթենիս. և կասեսցեն զամուր ամուր քաղաքս ձեր. և յորս դուքն պանծացեալ էք՝ որով սատակեսցեն»... «Ահաւադիկ զօր գայ ի հիւսիսոյ. ազգ մեծ, թագաւորք բազումք զարթիցեն ի ծագաց երկրէ, աղեղնաւորք և տիգաւորք, արք ժպիրհ և անողորմ. ձայն նորա իբրև զձայն ծովու յարուցելոյ, կառօք և երիվարօք ճակատեսցի, և լաստեսցի իբրև զհուր ի պատերազմ ի վերայ քո, դուստր Սիոնի։ Լուաք զլուր նոցա, և լքան ձեռք մեր, նեղութիւնք կալան զմեզ իբրև երկունք ծննդականի։ Մի ելանէք յանդրս, և ընդ ճանապարհս մի գնայք. զի սուր թշնամեաց շուրջ պատեալ է։

Դուստր ժողովրդեան իմոյ, քուրձ զգեցիր. մոխիր տարածեա՛, ա՛ռ զսուգ սիրելւոյ, և կոծեա՛ կոծ ողորմ. զի յանկարծակի եկեսցէ թշուառութիւն ի վերայ քո»[1]։ Մի խօսքով, Արևմտեան Ասիայում կատարւում էր մի հսկայական աղէտ, որի նմանները յետագայ դարերում բերին Չինգիզ-խանն ու Լենկթիմուրը։

Այս համատարած աւերանքի մէջ անվնաս մնաց Նինուէն։ Ուրարտուի վիճակի մասին տեղեկութիւններ չունինք։ Սակայն ասորական բախտը պետութեան փրկութիւն չէր բերում։ Հէնց որ կիմմերացիների արշաւանքները դադարեցին, Կիաքսարը դաշնակցութիւն կնքեց մի կողմից Եգիպտոսի, միւս կողմից Բաբիլոնի հետ, որ Ասորեստանի դարաւոր թշնամին էր։ Բաբիլոնում իրան անկախ թագաւոր յայտարարած Նաբոպոլասարը գրաւում է Միջագետքը, իսկ Կիաքսարը նորից պաշարում է Նինուէն։ Այս անգամ հռչակաւոր մայրաքաղաքը դիմադրել

[1]) Երեմ. Ե, 15—18, Զ, 22—27։

երկար չէ կարողանում. ասորական վերջին թագաւորը, Սին-շար-շիկուն, տեսնելով որ ամեն ինչ կորած է, փակուեց իր պալատի մէջ և հրդեհելով պալատը, իր ընտանիքի և գանձերի հետ կորաւ բոցերի մէջ,—ինչպէս պատմում է աւանդութիւնը։ Մարերը ներս թափուեցին և հիմնայատակ կործանեցին ամբողջ քաղաքը, այնպէս որ մի երկու հարիւր տարի անց՝ նոյն իսկ Ասորեստան անուն էլ չէր մնացել. նախկին փարթամ մեծ պետութիւնը Ադիաբին անյայտ անունն էր ստացել[1])։

Այս դէպքը փոփոխում էր Արևմտեան Ասիայի քարտէսը, փոփոխում էր պատմութեան ընթացքը։ Կործանւում էր սեմականների համաշխարհային տիրապետութիւնը, որ անցնում էր արիական ցեղի ձեռքը։ Ասորեստանը շատ ազգեր էր խորտակել, շատ ու շատ էր ծծել ժողովուրդների ա-

[1]) Նինուէի կործանման ճիշտ թուականը յայտնի չէ. Ոմանք ընդունում են 625 թուականը, ոմանք՝ 609, բայց աւելի հաւանական համարւում է 600 թուականը Ք. ա.

ըիւնը և գազանաբարոյ բռնակալու-
թեան ծանր լուծի տակ խեղդել մեծ
ու փոքր ազգերը։ Այժմ հերթը իրան
էր հասել և խորտակւում էր, առանց
ափսոսանք անգամ պատճառելու։ Նի-
նուէի կործանումը ծափահարութեան
արժանի մի դէպք էր համարում հրէա-
կան մարգարէներից մէկը, Նաումը,
որ ընկածի երեսին էր խփում նրա
արատներն ու կեղտերը։ «Ո՜ քաղաք
արեանց, ամենևին սուտ, լի անիրաւու-
թեամբ. որոյ զննեսցի որսդ։ Ձայն
հարուածոյ, ձայն շարժման անուոյ,
շաչիւն կառաց, շահատակիւն հեծելոց,
փայլիւն զինու, շողալ սուսերի, թա-
ւալգլոր խաղալ վիրաւորաց, և ոչ գոյր
չափ ազգաց նոցա, և տկարասցին ի
մարմինս իւրեանց ի բազում պոռնկու-
թենէ։ Պոռնիկ գեղապանծ, գլուխ կա-
խարդաց, որ վաճառէր զազգս ի պոռն-
կութեան իւրում, և զտոհմս կախարդա-
նօք իւրովք։ Ահաւասիկ ես ի վերայ
քո, ասէ Տէր Աստուած ամենակա-
րող, և յայտնեցից զյետուստ քո և
արկից զերեսօք քովք ու ցուցից ազ-

գաց զամօթ քո, և թագաւորութեանց զանարգանս քո։ Եւ ընկեցից ի վերայ քո զպղծութիւնս և զաղտեղութիւնս քո, և արարից զքեզ խայտառակ։ Եւ եղիցի ամենայն որ տեսանիցէ զքեզ՝ զիջանիցէ և ասիցէ. Եղո՞ւկ դու, Նինուէ, ո՞վ լիցէ որ հեծիցէ վասն քո, ուստի՞ խնդրեսցուք քեզ մխիթարութիւն... Թարախեցան վէրք քո, և չիք բժշկութիւն բեկման քում, ամենքին որ լուան զգոյժ քո՝ ծափս հարցեն ի վերայ բեկման քո, քանզի յո՞յր վերայ ոչ չոգաւ չարութիւն քո հանապազ»[1])։

Այսպէս էր ահեղ բռնակալութեան ձեռքում ճնշուած մի ազգի զգացմունքը այն րոպէին, երբ անհետանում էր այդ բռնակալութիւնը։ Ուրարտուն էլ մէկն էր Նինուէի հարուածների տակ փշրուած ազգերից։ Մենք չը գիտենք թէ նա ինչպէս վերաբերուեց խոշոր պատմական դրամային։ Նինուէի կործանումից յետոյ նրա թագաւորութիւնը, ինչպէս՝ հաւանական է թւում, գոյութիւն պահպանեց դարձեալ մի եր-

[1]) Նաում, Գ, 1—19.

կու տասնեակ տարի։ Բայց այդ ժամանակամիջոցը հոգեվարքի վերջին շրջանն էր։ Կիմմերացիներն անյայտացան ասպարէզից, բայց դա փրկութիւն չէր նրանց հարուածներից անչափ թուլացած ուրարտացիների համար։ Ասորական կայսրութեան տեղ Առաջաւոր Ասիայում բարձրացաւ Մարական մեծ պետութիւնը։ Ուրարտուն ենթարկուեց այդ նոր կայսրութեան իբրև մէկն այն բազմաթիւ ազգերից, որոնք բնակւում էին Մարաստանի արևմտեան կողմում մինչև Կիլիկիա։

ԳԼՈՒԽ ԺԸ.

# ՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Այստեղ իսկապէս վերջանում է Վանի թագաւորութեան պատմութիւնը։ Այդ անյայտացումը պատմական ասպարէզից վերջնական էր։

Սակայն թագաւորութիւնները մեռնում են, իսկ ազգերն ապրում են։ Եւ մեզ մնում է դեռ որոնել այն մեծագործ ժողովուրդը, հարցնել նրա ճակատագիրը՝ ազգային անկախութիւնը կորցնելուց յետոյ։

Այստեղ, պէտք է ասել, ժամանակը շատ անողոք է ուրարտացիների վերաբերմամբ։ Նա չափազանց աղքատ տեղեկութիւններ է պահպանել պատ-

մութեան այն շրջանի վերաբերմամբ, որ գալիս է եօթներորդ դարից, արիական ցեղերի յախուռն և կործանարար արշաւանքներից յետոյ։ Ուրարտացիները կամ խալդերը համարեա ոչ մի ազգային յիշատակութիւն չունին այդ ժամանակի մէջ։ Եւ նրանց ճակատագրի գոնէ աղօտ, ենթադրական մի պատկերը ուրուագծելու համար հարկաւոր է այժմ հետևել այն ազգին, որ երևան եկաւ ուրարտական երկրում։ Դա հայ ազգն է։

Դեռ 1880-ական թուականների սկզբում պրոֆէսօր Պատկանեանը, քննելով Վանի արձանագրութիւնների ընթերցումից ստացուած նիւթերը և համեմատելով նրանց այն պատմուածքների հետ, որ տալիս է Մովսէս Խորենացին հայ ազգի սկզբնաւորութեան մասին, յայտնեց այն կարծիքը թէ հայ ազգը բաղկացած է երկու տարբեր ցեղերից — հայ և արմէն։ Ինչպէս յայտնի է, առաջին անունը միայն հայերն են գործ ածում իբրև իրանց ազգային անուն, իսկ երկրորդը — բացառապէս

օտարազգիներն են գործ ածում իբրև դարձեալ նոյն ազգի անուն։ Պատկանեանը գտնում էր որ հայերը ապրելիս են եղել Վանի լճի աւազանում, իսկ արմէնները—Արաքսի հովտում[1])։

Այս միևնոյն ենթադրութիւնը հաստատելու համար էր, կարծես, որ մարդաբանական գիտութիւնը եկաւ կարծիք յայտնելու թէ հայերի մէջ, ինչպէս և մի քանի ուրիշ ազգերի մէջ, նկատւում են երկու՝ իրարից խիստ տարբերուող մարդաբանական տիպեր[2])։

Վերջին տարիներս այդ երկտարրութեան հիպոթեզը նոր ապացոյց էլ գտաւ լեզուագիտութեան մէջ։ Ինչպէս արդէն գիտենք, ակադեմիկոս Մառի մի շարք լեզուագիտական աշխատութիւնները գալիս են ապացուցելու որ հայ ժողովրդի լեզուն էլ երկու, իրարից տարբեր տարրերից է կազմուած. այդ տարբեր տարրերին Մառն էլ

[1]) Патканов—«Ванскія надписи» с. 88—89։—
[2]) Проф. Д. Анучинъ—«Арменія въ антропологическомъ и географическомъотношеніи» («Братская помощь пострадавшимъ въ Турціи армянамъ», М. 1898 с. 357)։

տուեց այն երկու անունները, որոնք հայ ժողովրդի անունն են, այն է՝ հայոց լեզու և արմէնական լեզու։

Երկուութեան այս թէորիան, որ արդէն բաւական ապացոյցներ ունի, գնալով, ըստ երևոյթին, հաստատ դիրք է գրաւում և հայոց պատմութեան վերաբերեալ մի քանի աշխատութիւնների մէջ արդէն ընդունուած են հայ և արմէն տարբեր ցեղեր, որոնք ձուլուել են իրար հետ և ստացել հայ անունը [1]։

Արդ՝ այս երկու տարբերից արմէնները, ինչպէս ցոյց են տալիս շատ պատմական յիշատակումներ, եկուորներ էին և պատկանում հնդկա-եւրոպական կամ արիական ազգերի ընտանիքին։ Մենք արդէն ծանօթ ենք այն ենթադրութեան, որ ասում է թէ ուրարտացիները Հայաստանի բարձրաւանդակը գաղթեցին Քրիստոսից ԺԱ—Թ դարերում, հարկադրուած լինելով տեղի տալ այն արիական ցեղերի ճնշման, որոնք անցել էին Եւրո-

[1] Kevork Aslan—«E'tudes Historiques sur le Peuple Arménien», Paris 1909 p. 52—54։

պայից Փոքր Ասիա և առաջանում էին դէպի արևելք, գրաւելով Փռիւգիան։ Այդ արիական ցեղերի մէջ էին, ինչպէս գիտենք, և արմէնները։

Եւ ահա եօթներորդ դարի վերջերում, երբ կիմմերո-սկիւթական արշաւանքները բոլորովին թուլացրել էին ուրարտացիներին, դարձեալ նոյն արմէնները, նոյն այդ արշաւանքներից ստիպուած, պոկուեցին իրանց բնակութեան տեղերից և առաջ մղուեցին նոր հայրենիք որոնելու համար։

Մի կողմ թողնելով այդ արիական ցեղի թափառումների հաւանական պատկերը, պիտի այժմից նկատենք որ այդ առաջխաղացումը պատերազմական մի արշաւանք չէր, այլ մի ժողովրդի տեղափոխութիւն, որ կատարուեց շատ դանդաղ։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ արմէն ժողովուրդը մեծ չէր և դեռ իր նախնական կազմակերպման շրջանի մէջ էր գտնւում։ Դեռ Փռիւգիայում և Կապադովկիայում բնակուած միջոցին նա գործի էր դրել իր կազմակերպչական

զարմանալի ընդունակութիւնը։ Զգտելով բազմացնել իր թիւը, նա մօտիկ յարաբերութիւնների և խաղաղ շփումների միջոցով ձուլում էր իր մէջ հարևան հեթիթական ցեղերը։ Այսպիսով նա Եփրատի աջ ափում ստեղծեց իր սեփական հայրենիքը, որ յետոյ կոչուեց Փոքր Արմէնիա (Փոքր Հայք)։

Անցնելով Եփրատը, արմէն ժողովուրդը նոյն դանդաղկոտութեամբ տարածուեց դէպի արևելք, հետզհետէ գրաւելով Արածանիի աւազանը և այդտեղից տարածուելով դէպի հիւսիս, Բարձր Հայքի լեռնադաշտը և դէպի հարաւ, մինչև Քրդիստանի լեռները։

Այս երկիրները, ինչպէս գիտենք, բնակեցրուած էին հեթիթական ազգին պատկանող մանր ցեղերով, որոնք մի ժամանակ միացած էին ուրարտական գահերէցութեան տակ։ Ինչպէս էր եկուորների յարաբերութիւնն այդ ցեղերի հետ։

Բնականաբար ենթադրւում է ինքն ըստ ինքեան, որ նորեկների հաստատուելը այդ հողի վրայ պիտի կատա-

բուէր նուաճման, զէնքի ոյժի միջոցով։ Դրական ցուցմունքներ այս մասին չեն մնացել, բայց առողջ դատողութիւնը չէ թոյլ տալիս ասել թէ տեղացիները հպատակուեցին առանց որ և է դիմադրութեան։ Այս հանգամանքը համարեա միանգամայն անժխտելի է դառնում ուրարտացիների (խալդերի) վերաբերմամբ։ Արածանիի վերին մասերում և Վանի լճի ափերին արմէնները, երևի, երկար ժամանակ աշխատեցին խալդերին ընկճելու համար։ Այս իրողութեան հեռաւոր արձագանգը պահել է յոյն մատենագիր Քսենոփոնը (Ե. դար Ք. ա,) իր «Կիրոպեդիա» անունով աշխատութեան մէջ, որ թէև պատմական մի վէպի արժէքունի ժամանակակից գիտութեան համար [1]), բայց անկասկած պահում է իր մէջ և այնպիսի փաստեր, որոնք պատմական ճշմարտութիւններ են յայտնի չափով [2])։ Ուրարտական հնու-

[1]) Th. Noeldeke—«Etudes historiques sur la Perse Ancienne». Paris 1896 p. 23.

[2]) Alfred Croiset—«Histore de la lirttérature Grecque», t. IV Paris 1900 p. 402.

թիւններն այնպիսի փայլուն յաջողութեամբ ուսումնասիրած պրոֆէսոր Լէմանը պատմական ճշմարտութիւն է համարում «Կիրոպեդիայի» այն կտորը, որի մէջ նկարագրուած են թշնամական գործողութիւնները հայերի (արմէնների) և խալդերի մէջ և թէ ինչպէս վերջիններս քաշուել էին լեռները [1]։

Կռիւներ, թշնամութիւն, ուրեմն, եղել են եկուորների և երկրում նըստածների մէջ։ Այստեղ էլ, Հայաստանում, կրկնւում էր այն, ինչ կատարւում էր ուրիշ տեղերում արիացիների գաղթի հետևանքով։ Տեղական այն ցեղերը, որոնք չէին ուզում հպատակուել, կորցնել իրանց ազատութիւնը, տեղի տուին և հեռացան դէպի հիւսիս, մասամբ դէպի հարաւ, ապաւինելով ամուր լեռնաստաններին։ Այսպէս, շատ հեթիթական ցեղեր սեղմուեցին Կովկասեան գլխաւոր լեռնաշղթային։ Բայց

[1]) «Հանդէս Ամս.» 1900 թ. եր. 247.—«Քսենոփոնտեայ Կիւրոսի խրատու պատմութիւնք», թարգ. Հ. Յ. Դաթրճեանի, Վիեննա, 1843, Գ. դպր. գլ. Բ.։

բոլորը չէին հեռանում և տեղական ազգաբնակութեան խոշորագոյն զանգուածները մնում էին իրանց տեղը և ձուլուում էին արիացիների հետ։ Հէնց Քսենեփոնի նկարագրածը շատ լաւ ցոյց է տալիս թէ կռիւը եղել է մանր տեսակի, լեռնային, դրացիական անհամաձայնութիւնների բղխող։ Իրանց իրաւունքները պաշտպանելու համար խալդերը անշուշտ շատ անգամ են լեռները բարձրացել և զէնք վերցրել եկուորների դէմ։ Բայց այս դիմադրութիւնը երկարատև չէր կարող լինել, մանաւանդ որ եկուորները ունէին իրանց ձեռքում կռուի այնպիսի միջոցներ, որոնք չէին կարող թշնամութեան խիստ, յարատև կերպարանք տալ։

Պէտք է նկատել որ ոչ արմէնները ոչ էլ խալդերը միանգամայն անկախ ազգեր չէին, նետուած գոյութեան կռուի դաշտը։ Երկիրը, ուր տեղի ունէր երկու ցեղերի շփումը, պատկանում էր Մարաստանին, իսկ յետոյ՝ Պարսկաստանին։ Եւ պայքարող կող-

մերի յաջողութիւնը մեծագոյն մասամբ կախուած պիտի լինէր այն վերաբերմունքից, որ ունէր մարա-պարսկական պետութիւնը դէպի իր առջև բացուած ցեղական պայքարը։

Այս կողմից հովանաւորուողի դրութեան մէջ գտնուում էին եկուորները, արմէնները։ Սկզբից և եթ, ենթարկուելով մարական տիրապետութեան, արմէնները իւրացրին իրանական կրօնն ու քաղաքակրթութիւնը և այդ հզօր ազդեցութիւնը Փոքր Ասիայի ցեղերի մէջ տարածելու միջնորդներ հանդիսացան։ Նրանց թագաւորները «սատրապի» համեստ տիտղոսն էին կրում, բայց իսկական վասսալ թագաւորներ էին [1]։ Նրանք օգնեցին Մարաստանի թագաւորին Ասորեստանի դէմ մղած պատերազմի ժամանակ [2]։ Իսկ երբ Մարաստանին յաջորդեց Պարսկաստանը, արմէնների սատրապները խնամիանում էին պարսից թագաւորների

[1]) Maspero, t. III p. 777։

[2]) A. Delattre—«Le Peuple et l'Empire des Mèdes» Bruxelles, 1883 p. 194։

հետ [1]) և այդպիսով մեծ հեղինակութիւն ձեռք բերում։ Այսպիսով եկուոր տարբը բաւականաչափ հովանաւորուած էր՝ տեղական տարբերը իրան ենթարկելու համար։ Սա նուաճում չէր, ոչ էլ ստրկացում կամ ուժով ճնշում։ Արմէնները տեղացիներին դէպի իրանց գրաւեցին խաղաղ դրացիական ձրգտումներով, երկուստեք համաձայնութեան, փոխադարձ իրաւունքների կիրառութեան պայմանով։ Եւ այս խաղաղ ճանապարհով, երկարատև աշխատանքի միջոցով էր որ արմէնները ձուլեցին իրանց մէջ ուրարտացիներին կամ խալդերին [2]), խառնուելով նրանց հետ, ենթարկուելով նրանց կուլտուրային, բայց պահպանելով իրանց լեզուն ու սովորութիւնները։ Զուլման այս եղանակը զուտ արմէնական չէր։ Նա յատուկ էր բոլոր արիական ցեղերին [3])։ Լեզուի այս պահպանութեան և

[1]) A. Boucher—«L'Anabase de Xenophon», Paris 1913 p. 208.

[2]) Պրոֆ. Հ. Դէլիցշը—«Համառօտ Պատմութիւն Հայոց», թարգմ. Հ. Գ. Գալէմքեարեան, Վիեննա, 1897, եր. 5։

[3]) Анучинъ Армяне и пр. (Бр. Пом. с. 358)։

տարածման մէջ էր արիական այս փոքրաթիւ հատուածի ամբողջ կենսունակութիւնը, ցեղի կազմակերպչական ուժեղ կարողութիւնը, որ հնարաւոր էր դարձրել սիստեմատիկ և անընդհատ ձուլումների միջոցով ստուարացնել իր քանակը [1]։

Ձուլման վերին աստիճանի հետաքրքրական գործողութիւնը, որ դարեր է տևել, կարելի է պարզել և ընդարձակել այն առատ նիւթերի միջոցով, որոնք մնացել են Մովսէս Խորենացու պատմութեան մէջ։ Այդ պատմութեան առաջին և երկրորդ մասերի նիւթը հիւսուած է առաջ ու առաջ բազմաթիւ և առատ ազգային աւանդութիւններից, զրոյցներից, առասպելներից [2], որոնց մէջ զուտ արմէնական իրողու-

[1]) Լեզուի միջոցով օտար ցեղեր ձուլելու ընդունակութիւն ցոյց տուին հայերը դրանից յետոյ էլ։ Ժամանակակից Սարաբոնի վկայութիւնն է որ այդ կերպով հայացուեցին մի շարք նահանգներ (Գուգարք, Սիւնիք, Արցախ և այլն)։

[2]) «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Ե. Ֆէթթէրի» թարգ. Հ. Ե. Տաշեանի, Վիեննա, 1895 եր. 26։

թիւնների հետ խառնուում են ուրարտական անցեալի հեռաւոր արձագանգները։

Այսպէս՝ Խորենացին ասում է[1]) թէ հին զրոյցները պատմում են թէ Սըլկունի նախարարութեան նախահայր Սլաքը Հայկից առաջ մեր աշխարհում եղած մարդկանցից էր։ Այս նշանակում է որ հին աւանդութեան անյայտ չէր որ երկրի նախկին բնակիչները, խալդերը կամ ուրարտացիները, չը զրկուեցին իրանց դասակարգային դիրքերից, չը հեռացուեցին կառավարութիւնից, պատուից ու իշխանութիւնից, այլ պահեցին իրանց հին իրաւունքները նոր կազմակերպուող պետութեան ազնուականութեան մէջ։ Այս ցուցմունքը պէտք է առիթ տար որոնելու մեր նախարարութիւնների ծագումը, համեմատելով նրանց տոհմանունները այն տեղական անկախութիւնների, թագաւորութիւնների հետ, որոնք յիշատակուած են Ասորեստանի և Ուրարտուի սեպաձև արձանագրու-

[1]) Գիրք Բ.ը

թիւնների մէջ։ Այս համեմատութիւնը ցոյց է տուել որ հայ նախաբարական 256 տոհմանունների մօտ 1/6 մասը կարելի է շատ մօտ համարել, նոյնացնել սեպագրութիւնների մէջ գտնուած անուններին [1])։ Եթէ այս ճիշտ է միանգամայն, մենք, ուրեմն, ունինք մի զօրաւոր փաստ պնդելու թէ եկուոր արմէնները հաւասարութեան, դաշնակցութեան սկզբունքներով միացան երկրում ապրողների հետ։ Երկրի աշխարհագրական կերպարանքից առաջացած հոգեբանութիւնը, այն է տեղական անկախութիւնների խիտ ցանցով ապրելու սիստեմը, հին Նաիրեան պետական կազմակերպութիւն էր և նրա վրայ էլ չափուեց ու ձևուեց նոր հայկական պետութիւնը։

Արևմտեան Ասիայում հանդէս եկած արիական ցեղերը կենսունակ, ուժեղ էին իրրև թարմ, երիտասարդ տարրեր, բայց կուլտուրական զարգաց-

[1]) Կ. Բասմաջեան—«Հայ նախաբարութիւնները բնեռաձև արձանագրութեանց մէջ» («Բանասէր». 1902, թ. 7—9)։

ման կողմից ցած էին այն քաղաքակիրթ ազգերից, որոնց հետ խառնուեցին, և որոնց ենթարկեցին իրանց իշխանութեան։ Ասել աւելորդ է որ այդ նորեկները պիտի ենթարկուէին իրանց նուաճած ազգերի կուլտուրայի խիստ ազդեցութեան։

Այս երևոյթը նկատուում է և Հայկական Բարձրաւանդակի վրայ արիական և ոչ-արիական տարրերի միաձուլման միջոցին։ Նախահայերի ազնուականութիւնը, որ խառնուում էր նորեկների հետ, ներկայացնում էր կուլտուրապէս աւելի շատ զարգացած դասակարգը, որ բերում էր իր հետ երկրի պատմութիւնը անգիր աւանդութիւնների ձևով։ Եւ այդ պատմութիւնը, այդ առասպելները դառնում են ընդհանուր ազգային, սեփականութիւն այդ նորակազմ ազգութեան, որ քաղաքական ասպարէզ էր դուրս գալիս՝ կութնած իր մի մասի անցեալի և կուլտուրայի վրայ։ Եւ այս ձուլումը, ուրարտական անցեալի այս ազգայնացումը ամենայն

հաւանականութեամբ տեղի է ունեցել Վանի լճի ափում, ուր այժմ էլ այնքան առատ և հարուստ է ժողովրդական բանահիւսութիւնը։

Այսպէս, զուտ տեղական, Վանեան է Հայկի առասպելը։ Դա մի անուանադիր (էպոնիմ) հերոս է, գուցէ և մի աստուածութիւն, որ Վանի լճի շրջանից դուրս չէ գնացել և մի ուրիշ տեղ չէ գործել [1])։ Եւ նրա կռիւը քաղդէա-ասորական Բէլ աստուծու դէմ ամբողջովին ուրարտական պատմութիւն է և անկասկած ներկայացնում է դարաւոր կռիւները Հայկական Բարձրաւանդակի և Միջագետքի մէջ, մի կռիւ, որի հնագոյն շրջանը չէր կարող ժողովրդական առասպել չը դառնալ, գուցէ մի մանիկ և նախահայկական պանթէոնի աստուածաբանական սիստեմի։

Այսպէս է և Արա Գեղեցիկի առասպելը։ Վերևում մենք բերինք ուրարտական աստուածների ամբողջ ցուցակը, որ փորագրուած է Մհերի

[1]) Патканов — „Ванскія надписи“ с. 89.

Դուռ ժայռի մեծ սեպագրութեան մէջ։ Այդ ցուցակի մէջ մենք պատահում ենք Արա անունով մի աստուծու [1])։ Եթէ այստեղ ընթերցումի սխալ չը կայ, մեզ կը մնայ յիշեցնել որ այդ գեղեցիկ տղամարդու վաւաշուտ տարփածու Շամիրամն էլ ասորական դիցուհի էր, և այնուհետև պարզ կը լինի որ Արայի զրոյցը մի կրօնական վէպ է ուրարտական պանթէոնից, որ անշուշտ պարունակում է իր մէջ երկու հակառակորդ ազգերի յարաբերութիւնները պատկերացնող մի այլաբանութիւն [2])։

Եթէ Արան դուրս է բերուել ուրարտական պանթէոնից՝ հայոց պատմութեան աւանդական շրջանի գործիչներից մէկը դառնալու համար, մենք ունինք նիւթ դատելու և այն մասին որ արմէնո-խալդական ձուլումից առաջացած ազգի պանթէոնի մէջ էլ մտել

[1]) Sandalgian, p. 206, 209։

[2]) Առաջին անգամ պրոֆ. Դելիցշը է ցոյց տուել Արայի զրոյցի կրօնական հանգամանքը («Հետազօտութիւն հայ Դիցաբանութեան», Վենետիկ 1897 եր. 78, 96)։

են ուրարտական աստուածներ։ Այս հանգամանքը, ինչպէս ցոյց է տուել հայ բանասէրներից մէկը[1]), կարելի է տեսնել Տորք Անգեղի առասպելի մէջ, որ պատմում է Խորենացին[2])։ Տորքը, ինչպէս երևում է, մի աստուածութիւն էր, որ պատկանում էր հեթիթական ցեղերի պանթէոնին։

Կրօնական-առասպելական աւանդութիւնների շրջանից դուրս մենք ունինք և իրական արժէք ունեցող պատմական փաստեր, որոնք նոյն ձուլման ապացոյցներն են։ Նիկոլսկին ուշադրութիւն է դարձնում Խորենացու պատմութեան այն գլխի վրայ, որ պատմում է հայ Արամ թագաւորի գործերը։ Դա ուրարտական քաջ Արամէն է, նոյնպէս երկիրը կազմակերպողի, նուաճողի, թագաւորութիւն հաստատողի, ազգային սկզբունքը քաղաքական նշանաբան դարձնողի դե-

---

[1]) Ն. Ադոնց—«Տորք աստուած հին հայոց» («Ցուշարձան», գրական ժողովածու Մխիթարեանների, Վիեննա 1911, եր. 389—394)։

[2]) Գ. Բ., Ը.։

րով [1]։ Ուրարտական սիրուած հերոսը նոյնպիսի պատկերով է և հայոց պատմութեան մէջ։ Նա, ուրեմն, ազգայնացուել էր և արմէն ժողովրդի կողմից։

Նոյն գիտնականը գտնում է նաև որ Արաքսի աւազանի սեպագրերը ցոյց են տալիս որ ուրարտական պատմութիւնը իր հեռաւոր արձագանգներն է պահել հայկական աւանդութիւնների մէջ, որոնք պատմուած են Խորենացու աշխատութեան մէջ (Ա, ԺԲ.)։ Այդտեղ յիշատակուած Մանաւազը ուրարտական Մենուասն է, Արմենակը՝ Արգիստի թագաւորն է։ Մանաւազի և Արմենակի գործողութիւնները, որոնք մանրամասնաբար պատմուած են աւանդութեան մէջ, միևնոյն պատկերն են ներկայացնում, ինչ Մենուասի և Արգիստիի գործողութիւնները, ըստ սեպագրերի, Արաքսի հովտում և նրա հիւսիսային լեռնաշխարհում։

Երկու տարբեր ցեղերի խաղաղ կե-

[1]) Никольскій «Клинооб. надписи Ванскихъ царей» („Древн. Востокъ„ с. 399—400)։

նակցութեան, հաշտ միաձուլման փաստերի կարգին պէտք է դասել, մեր կարծիքով, և այն, որ բազմաթիւ ուրարտական աշխարհագրական անուններ պահեցին իրանց գոյութիւնը հայոց գրականութեան մէջ[1]), իբրև սեփական, ազգային անուններ, որոնց բացատրութեան համար գոյութիւն ունէին ազգային անուանադիրներ (էպոնիմներ)։

Մնում է երկու ազգագրական տարրերի (արմէն—խալդ) շփման և կուլտուրական ձուլման մի մեծ յիշատակ ևս—լեզուն։ Սրա մասին մենք արդէն խօսել ենք վերևում։ Ցափեթագիտութիւնը, դեռ բոլորովին նոր հիմնուած մի ճիւղ լեզուագիտութեան մէջ, պէտք է ապասել որ դեռ շատ փաստերով պիտի հաստատէ երկու լեզուների ձուլման իրականութիւնը և ապացուցանէ Վանեան սեպագրութիւնների լե-

[1]) Г. Халатьянцъ—„О нѣкоторыхъ географическихъ названіяхъ Древней Арменіи въ связи съ данными Ванскихъ надписей („Древ. Восточ." т. II вып. II, М. 1901 с. 120—131).

զուի առնչութիւնը հայոց նախա-արիական լեզուի հետ։

Հաւանաբար այսպէս կազմուեց Արևմտեան Ասիայի մէջ մի նոր ժողովուրդ, որ այնուհետև դուրս եկաւ կատարելու իրան վիճակուած խոշոր պատմական դերը։ Բայց այս նոր ժողովուրդը այլ ևս Վանի լճի ափում չը հիմնեց իր պետութեան կենտրոնը, այլ անցաւ հիւսիսային մեծ դաշտը, Արաքսի հովիտը։ Այստեղ արդէն առանձնայատուկ էին այն կուլտուրական պայմանները, որոնց վրայ պիտի կառուցուէր մի նոր պետական շէնք։ Իսկ Վանը շարունակեց մնալ իբրև ազգային ոգու, ազգային ինքնամփոփ գոյութեան գլխաւոր յենարաններից մէկը, որից ներշնչումներ էր ստանում Արարատեան դաշտի պետութիւնը։

Նոր ժողովուրդը երկար ժամանակ, դարերով շփումներ ունէր քաղաքակիրթ աշխարհի հետ և նրան ծանօթ բոլոր ազգերը—յոյները, պարսիկները, հռոմայեցիները ճանաչում էին նրան ա ր մ է ն անունով։ Ինքն այդ ժողո-

վուրդը դեռ իր սեփական գրած պատմութիւնը չունէր և նրա կեանքի փաստերը մի մի անգամ արձանագրուում էին այդ ազգերի գրականութեան մէջ։

Բայց ահա նա էլ ստանում է իր սեփական գրականութիւնը, սկսում է խօսել իր մասին և մենք տեսնում ենք որ նա իրան ա ր մ է ն անունով չէ ճանաչում, այլ հ ա յ անունով։

Ինչից առաջացաւ այս անունը։ Գիտութիւնը դեռ միանգամայն բաւարար պատասխան չէ գտել, թէև բազմաթիւ փորձեր է արել և անում է։ Տիրապետող է այն կարծիքը թէ տեղային, ուրարտական կամ խալդական տարրի անունն է այդ, մի անուն, որ գուցէ բղխում է ընդհանուր ցեղային անունից (հաթ կամ հաթք)։ Պրոֆէսօր Ենսենը ենթադրում էր թէ այս ազգային անունը կազմուել էր դեռ այն ժամանակ, երբ արմէնները ձուլում էին իրանց մէջ հեթիթներին Կապադովկիայում և Կիլիկիայում։ Բայց թւում է որ երկու ազգերի մի կուլտուրական-լեզուական տիպի մէջ ձու-

լուելու գործում վերջնական և վճռական դեր կատարել է այն՝ առ այժմ անյայտ՝ ժամանակը, երբ արմէնները հաստատուեցին Ուրարտուի սրտում, այսինքն Վանի լճի արևելեան ափերին։

Այս ենթադրութեան ոյժ է տալիս հայ պատմական աւանդութիւնը, որ ժողովրդական վէպերից է ստեղծուել։ Այդ աւանդութիւնն ասում է թէ Կորդուաց լեռների հիւսիսային ստորոտներում, ուրեմն հէնց այն երկրում, որ կոչւում էր հնագոյն ժամանակներում Արարատ (Ուրարտու), կար մի գաւառ՝ Հայք[1]) (Վանի ժողովրդական բարբառով՝ Խայք) անունով։ Գուցէ այսպէս էլ կոչւում էր այդտեղի ժողովուրդը, որ ուժեղանալով, առաջնակարգ դիրք բռնելով ուրարտական ցեղերի մէջ, իր անունը հաղորդեց Վանի լճի շրջանում ապրող ժողովրդներին և այնտեղից էլ՝ ամբողջ արիա-հեթիթական կամ արիա-յաբեթական միաձոյլ ազգին։

Նորագոյն հետազօտութիւնները

[1]) Խորեն. Ա, ԺԱ։

ցոյց են տալիս որ Հայաստանում, արմէնների հաստատուելուց յետոյ, տարածուել և տիրել է «հէնիոխ» կամ «հանիոխ» անունով մի հեթիթական կամ յաբեթական ցեղ, որ խոր հետք է թողել հայ ազգի ցեղային հոգեբանութեան մէջ։ Այստեղից ինքն ըստ ինքեան հետևում է ենթադրութիւն որ «հայ» անունը առաջացել է այդ հէնիոխներից կամ հանոխներից [1])։

Այս բոլոր հաւանականութիւնների մէջ նշանակութիւնից զուրկ չէ և վրաց հին աւանդութիւնը, որ մնացել է «Քարթլիս-Ցխովրեբայի» մէջ։ Այդ աւանդութիւնը, բերելով կովկասեան կամ հեթիթական ութ ցեղերի անուններ, որոնց թւում և հայերին, ասում է թէ նրանք միևնոյն ծագումն ունին և նրանց նախահայրերը ութ եղբայրներ էին, Թորգոմի որդիները։ Հայոց նախահայրը այդ աւանդութեան մէջ այլ ևս Հայկ անունով չէ յայտնի, այլ Հաոս անունով, որ Թորգոմի աւագ

[1]) Н. Марръ—«Кавказскій Культурныхъ Міръ и Арменія» Пет. 1915, с. 28.

որդին է, նախապատիւ միւս եղբայրների մէջ, և որին հայրը բաժին տուեց Արարատ և Մասիս լեռների մէջ գտնուող երկիրը[1]), այսինքն ճիշտ այն տեղը, որ համապատասխանում է նախնական Ուրարտուին, այն է՝ Վանի լճի հարաւային կողմերից մինչև Արաքսի հովտի հարաւային լեռնաշղթան։ Այսպիսով վրացական աւանդութիւնը դեռ շատ հին ժամանակներից էր վկայում, որ վրացիները, ինչպէս և կովկասեան կոչուող միւս ազգերը, ազգակից են հայերին։

Այս բոլոր ապացոյցները բերում են բոլոր գիտնականների կողմից ընդունուած այն վերջնական եզրակացութեան թէ ուրարտական քաղաքակիրթ և ընդունակ ցեղը չը կորաւ անհետ, այլ մտաւ հայ ժողովրդի կազմի մէջ։

Լեզուագիտութիւնը վերին աստիճանի հետաքրքրական նիւթեր է տալիս թէ երկու ազգագրական տար-

[1]) M. Brosset—«Histoire de la Géorgie» Pet. 1849 t. I p. 16—17.

բերը—արիացիները և հեթիթականները կամ յաբեթականները—ինչ էին մէջ տեղ բերում՝ մի ընդհանուր ազգային կուլտուրա ստեղծելու համար։ Եկուոր արիացիները ուժեղ էին գլխաւորապէս իրանց զինուորական կազմակերպութեամբ։ Դրանք կռուողներ էին առաւելապէս։ Եւ հայոց լեզուի մէջ արիական են այն բառերը, որոնք արտայայտում են զօրք, զէնք և այլն, մինչդեռ տեղական կամ յաբեթական են հոգեկան որամադրութիւններ արտայայտող բառերը, մանաւանդ այնպիսիները, որոնք արտայայտում են երկրագործական գործիքներ, մեսաղներ, տնային անասուններ, մատաղ և այլն։ Այսպիսով արիացիները տեղացիներից իւրացրին երկրագործութիւն, արհեստներ, վաճառականութիւն, կրօնական պաշտամունք։

Այս բարձր կուլտուրայի արտայայտութիւն դառաւ այն երկտարը, խառն լեզուն, որ մեզանում յայտնի է «գրաբար» անունով։ Այդ հարուստ լեզուն, որ ազնուականութեան, կառավարող

խաւերի լեզուն էր, ըստ ենթադրութեան ակադեմիկոս Մառի, զարգացել է Հայաստանի հարաւ-արևելեան մասում [1]), այսինքն դարձեալ Վանի լճի աւազանում։

Եթէ այս ճիշտ է, ահա,ուրեմն, և մի անհուն հարստութիւն, որ մշակեց և հայութեան ու մարդկութեան ընծայեց նոյն այն գեղեցիկ աշխարհը, ուր ծփծփում են Վանի լճի կապուտակ ալիքները։

[1]) Кав. Культ. Міръ и Арменія, с. 29.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հօն

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Վան. . . . . 9
2. Խօսում են մեռած լեզուները . . 15
3. Վանեան սեպագիրները . . . 39

## ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

### Երկիրը եւ մարդիկ

Գլ. Ա. Սեպագիր աշխարհագրութիւն . 77
Գլ. Բ. Ժողովուրդը . . . . 102
Գլ. Գ. Քաղաքակրթութիւն . . . 117
Գլ. Դ. Կրօն . . . . . 126

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

### Նախավանեան շրջան

Գլ. Ե. Նաիրի և Միջագետք . . . 139
Գլ. Զ. Նաիրիի անկումը . . . 160
Գլ. Է. Ուրարտու . . . . 179
Գլ. Ը. Արամէ . . . . . 183

## ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

### Վանեան շրջան

Գլ. Թ. Սարգուրի Ա . . . . 208
Գլ. Ժ. Իսպուինի . . . . 219
Գլ. ԺԱ. Մենուաս Ա. . . . . 225
Գլ. ԺԲ. Արգիստի Ա. . . . . 245
Գլ. ԺԳ. Սարգուրի Բ. . . . 266
Գլ. ԺԴ. Ռուսաս Ա. . . . . 279
Գլ. ԺԵ. Անկում. . . . . 304
Գլ. ԺԶ. Ուրարտական կուլտուրա . . 314
Գլ. ԺԷ. Նոր ժողովուրդ . . . 354

## Հեղինակի այն աշխատութիւնները, որոնք յոյս են տեսել առանձին հրատարակութիւններով։

1. Արարատի Գլուխը Մարդասիրի, փոխ. Շուշի 1883
2. Ուխտաւորի Ցիշատակարանը Շուշի 1885
3. Հայ Գիւղացի (Ռուսահայ), Մարսէլ 1885
4. Նոր Ցաւ (Սկտյորդի), Շուշի 1886
5. Վէպ թէ Պատմութիւն, Շուշի 1887
6. Մայրեր, Շուշի 1888
7. Կոյրի Աղջիկը, Շուշի 1888
8. Պանդուխտ, Բագու 1888
9. Վահան Մամիկոնեան, Շուշի 1888
10. Կորածներ, Թիֆլիս 1889
11. Արնագին, Թիֆլիս 1890
12. Իմ Ցիշատակարանը, Շուշի 1890
13. Հաշիւ Ղար. Հայ. թեմ. Դպրանոցի հոգաբարձութեան. Շուշի 1890
14. Դաւիթ և Մհեր, Մոսկուա 1891
15. Վերջին Վէրքեր, Թիֆլիս 1891
16. Թաթախման Դիշերը, Շուշի 1892
17. Սպանուած Հայրը, Շուշի 1892
18. Ախտահանութիւն, Բագու 1893
19. Երևելի Մարդիկ, Բագու 1894
20. «Արօրի» Սեղանի Օրացոյց գրակոն յաւելուածներով 1894 թ. Բագու
21. «Արօրի» Ծոցի Օրացոյց 1894 թ. կենսագրականներով, Բագու
22. «Արօրի» Սեղանի Օրացոյց, 1895 Բագու
23. «Արօրի» Ծոցի Օրացոյց 1895 Բագու
24. «Արօրի» Սեղանի Օրացոյց 1896, Բագու

25. Նապաստակի և Ոզնու գրագը, (փոխ.) Թիֆ. 1897
26. Քնած Գեղեցկուհին (փոխ.) Թիֆ. 1897
27. Մէլիքի Աղջիկը, Թիֆլիս 1898
28. Կենդանիների Աշխարհում Լունկեվիչի (Թարգ.) Թիֆ. 1898
29. Գլադստոն, » 1899
30. Հայկական Տպագրութիւն, հատոր Ա. Թիֆ. 1901
31. » » հատոր Բ. » 1901
32. Ստեփանոս Նազարեանց հատոր Ա. » 1902
33. » » հատոր Բ. » 1902
34. Յովսէփ կաթող. Արղութեան Թիֆ. 1902
35. Գրիգոր Արծրունի, հատ Ա. » 1902
» » հատ. Բ. » 1903
36. Թաթախման Գիշերը 2 տպագր. » 1903
37. Կարմիր Գգակը, Բագու 1904
38. Այծարածը, Բագու 1904
39. Ս. Մեսրոպ Թիֆ. 1904
40. Ուսանողաց Գրականութիւնը, Վենետիկ 1904
41. Հայկական Տպագրութիւն, Հ. Ա., 2 տպագր. փոփոխ. Թիֆ. 1904
42. Մէլիքի Աղջիկը, 2 տպ. փոփոխ. Թիֆ. 1905
43. Գրիգոր Արծրունի հատ. Գ. Թիֆ. 1905
44. Երևանամեակ Հայ. Բարեգործ. Ընկերութեան Կովկասում Թիֆ. 1911
45. Հայ Գրքի Տօնը, Թիֆ. 1912
46. » » » 2 տպ. » 1913
47. Պատմութիւն Երևանի Հայոց Թեմ. Հոգ. Դպրոցի Թիֆ. 1914
48. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմ. Հոգ. Դպրոցի Թիֆ. 1915
49. Հայ Հայրենիքը, » 1915
50. Հայոց Հարցի Վաւերագրերը, Թիֆ. 1915
51. Վանի Թագաւորութիւնը Թիֆ. 1915

ՈՎՍԵՓ

9(47.925)
Կ-38

## ՀԵՂԻՆԱԿԻ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| 1. Պատմութիւն Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրոցի 1837—1912, ընդարձակ պատմական տեսութիւններով (585 մեծադիր երես) . . . . . | 2 | — |
| 2. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր Դպրոցի, 1838—1913, ընդարձակ պատմական տեսութիւններով (692 մեծադիր երես) . . . . | 3 | — |
| 3. Հայ Հայրենիքը (Հայաստանի գունատիպ քարտէզով) . . . | — | 60 |
| 4. Հայոց Հարցի վաւերագրերը (պատմութիւն և վաւերագրեր, 400 երես) . . . . . | 1 | — |
| 5. Վանի Թագաւորութիւնը (Մի դրուագ Հայաստանի Պատմութիւնից—2 քարտէզ, 22 նկար) | 1 | 25 |

Ծախւում են Թիֆլիսի գրավաճառանոցներում

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 25 ԿՈՊ.